Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ 76

ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 96

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր 98
Պաշտոնական դրամաշնորհներ 118
Այլ եկամուտներ 119

ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 123

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 123
Ընթացիկ ծախսեր 123
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ 126
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 128
Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ 128
Պաշտպանություն 155
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն 156
Տնտեսական հարաբերություններ 161
Շրջակա միջավայրի պաշտպանություն 209
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ 218
Առողջապահություն 225
Հանգիստ, մշակույթ և կրոն 247
Կրթություն 269
Սոցիալական պաշտպանություն 296
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր 322
Հույժ գաղտնի 322

ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ 323

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 328

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 329

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (գործառական դասակարգմամբ) 330

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (տնտեսագիտական դասակարգմամբ) 337

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 341

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 347

ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ 1409

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ 1507

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՄԲ) 3021

2015 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդյունաբերության ոլորտ

2015 թվականին իրականացվել են ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ներքո 8 ոլորտային ռազմավարությունների (կոնյակագործություն, գինեգործություն, ճշգրիտ ճարտարագիտություն, դեղագործություն ու բիոտեխնոլոգիաներ, ոսկեգործություն, ադամանդագործություն, ժամագործություն և թեթև արդյունաբերություն) գործողությունների ծրագրով նախատեսված աշխատանքները:

2015 թվականի պետական աջակցության ծրագրի շրջանակներում մասնակի սուբսիդավորվել են 16 ընկերության վարկերի տոկոսադրույքներ, բավարարվել է ստացած սերտիֆիկատների, կենսահամարժեքության փորձաքննության, որակի կառավարման համակարգերի ներդրման համար ծախսերի համաֆինանսավորման գծով 8 կազմակերպության 12 հայտ: Կայացել են «Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015» և «Yerevan Show» 5-րդ միջազգային ոսկերչական ցուցահանդեսները:

Արդյունաբերական նպատակներով օգտագործված քսայուղերի ակցիզային հարկի վերադարձման ուղղությամբ բավարարվել են 3 ընկերության 9 հայտեր: 200 մլն դրամը գերազանցող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված սարքավորումների ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման նպատակով հավանության է արժանացել 9 ներդրումային ծրագիր, որոնց արդյունքում սարքավորումների ձեռք բերման համար իրականացվելու է 9.94 մլրդ ՀՀ դրամի ներդրում:

Գործարար և ներդրումային միջավայրի բարեփոխումներ և ՓՄՁ զարգացմանն աջակցություն

Ստեղծվել է ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման և հարկային մարմին ներկայացվող դիմումների, տեղեկանքների, հայտարարությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման, ինչպես նաև հարկային և մաքսային ծառայությունների պաշտոնական ինտերնետային կայքերում դիմում-բողոքների առցանց ներկայացման հնարավորություն: Ինժեներական ենթակառուցվածքի օբյեկտների կառուցման համար հողամասերի տրամադրման ընթացակարգերի հստակեցման և հնարավորինս կարճ ժամկետների սահմանման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 12.11.2015թ. «ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N1344-Ն որոշումը: Ընթացակարգերի հստակեցմանը հաջորդել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 25.11.2015թ. N387-Ն որոշումը, որով 35 օրով կրճատվել են որոշակի հզորության էլեկտրական

էներգիայի միացման ժամկետները: Ներդրվել է շինարարական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգ: Սեփականության իրավունքի գրանցման ոլորտում «Մեկ պատուհանի կանգառ» սկզբունքի ներդրման նպատակով մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հանրային ռեգիստրների վարման միասնական սպասարկման կենտրոնների ներդրման հայեցակարգի» նախագիծը:

2015 թվականի ընթացքում ՓՄՁ պետական աջակցության 2015 թվականի ծրագրի շրջանակներում սկսնակ և գործող շուրջ 6000 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է 13194 աջակցություն, որի շուրջ 95%-ը՝ ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ համայնքներում: Մասնավորապես՝ 403 սկսնակ գործարարների տրամադրվել է ձեռներեցությանն աջակցություն, 407 ՓՄՁ սուբյեկտի՝ ուսուցողական աջակցություն, 11857 ՓՄՁ սուբյեկտի՝ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, 176 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների՝ վարկային երաշխավորություն, 259 ՓՄՁ սուբյեկտի՝ աջակցություն ՓՄՁ միջազգայնացման ուղղությամբ, ներառյալ Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում, 67 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է ոլորտային բիզնեսներին աջակցություն տեխնոլոգիական խորհրդատվությունների տրամադրման ուղղությամբ, 25 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է դրամաշնորհ՝ ոլորտային աջակցության ծրագրի շրջանակներում: Տեղական տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում 10 համայնքներում աջակցություն են ստացել 35 ՓՄՁ սուբյեկտներ: Նոր սերնդի ՀԴՄ-ների արժեքի փոխհատուցման ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել 611 ՓՄՁ սուբյեկտներ: Կազմակերպություններին և քաղաքացիներին տրամադրվել է 26 միավոր գյուղտեխնիկա:

Արտահանման արդյունավետ շուկաներ մուտքի հնարավորությունների ընդլայնում

<u>ԵԱՏՄ հետ համագործակցություն:</u> ՀՀ կառավարության կողմից 2015 թվականին ընդունվել է «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով բացթողնման համար թույլատրվող ապրանքների ցանկը սահմանելու մասին» որոշումը: Շարունակվում են աշխատանքները ԵԱՏՄ անդամ-պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև «Ազատ առևտրի գոտու մասին» ստորագրված համաձայնագրի շրջանակներում վիետնամական շուկա հայկական ալկոհոլային արտադրանքի ծավալների ավելացման նպաստավոր պայմանների ապահովման ուղղությամբ: Մեկնարկել են աշխատանքները երրորդ երկրների հետ ԵԱՏՄ անդամ-պետությունների արտադրանքի՝ արտոնյալ ռեժիմով արտահանումն ու ներմուծումն ազատականացնելու ուղղությամբ:

ԵՄ հետ համագործակցություն: 2015 թվականի հոկտեմբերի 16-ին Երևանում տեղի ունեցավ ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի հերթական՝ 14-րդ նիստը, իսկ նոյեմբերի 4-ին՝ ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի հերթական՝ 16-րդ նիստը: Շարունակվել է ԵՄ «Արտոնությունների ընդլայնված և համալրված համակարգ (GSP+)» արտոնյալ առևտրային ռեժիմի մոնիտորինգի գործընթացը, որի շրջանակներում պատրաստվել և ԵՄ կողմին է ներկայացվել ռեժիմից օգտվելու համար նախապայման հանդիսացող 27 միջազգային կոնվենցիաների իրականացման վերաբերյալ հայկական կողմի 2-րդ զեկույցը: 2015 թվականին եվրոպական կողմին է տրամադրվել Հայաստանին ԵՄ շուկայական տնտեսության կարգավիճակի շնորհման վերաբերյալ հայկական կողմի զեկույցն ու փաստաթղթերի փաթեթը:

Համագործակցություն այլ երկրների հետ: 2015 թվականի մայիսի 7-ին ՀՀ կառավարության և ԱՄՆ կառավարության միջև ստորագրվել է առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագիրը՝ հայ-ամերիկյան տնտեսական համագործակցության ամրապնդման և հետագա խորացման, կողմերի միջև ապրանքների և ծառայությունների առևտրի ընդլայնման ու դիվերսիֆիկացման, գործարար նախաձեռնությունների ակտիվացման նպատակով: Հիմնվել է Հայաստան-ԱՄՆ առևտրի և ներդրումների հարցերով խորհուրդ, և նոյեմբերին Երևանում կայացած անդրանիկ նիստի արդյունքում ընդունվել է գործողությունների համատեղ ծրագիր, նախանշվել են փոխադարձ առևտրի և ներդրումների խթանման հետագա քայլերը, համագործակցության ընդլայնման ուղղությունները:

Կատարվել են աշխատանքներ շուրջ 92 երկկողմ և 59 բազմակողմ համաձայնագրերի կնքման, փորձաքննության և վավերացման ուղղությամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանում

2015 թվականի ապրիլի 9-ից «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի դրույթների կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ստեղծվել են ոլորտի 71 սկսնակ ընկերություններ և 304 նոր աշխատատեղեր:

2016 թվականից SS ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի արդյունավետ վարումն ապահովելու նպատակով մշակվել և ընդունվել են անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտեր, աշխատանքներ են տարվել SS ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի տեղեկատվական համակարգի ստեղծման ուղղությամբ:

2015 թվականի մայիսի 26-ին «Մայքրոսոֆթ» ընկերության պատվիրակության՝ Հայաստան այցի շրջանակում ՀՀ կառավարությունում ստորագրվել են նոր համաձայնագրեր ՀՀ-ում

Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի հենքով «ամպային» և բջջային լուծումների տարածաշրջանային կենտրոնի հիմնման, Հայաստանում կիբեռանվտանգության կենտրոնի ստեղծմանն աջակցության, կրթական ոլորտում համագործակցության, մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված համատեղ ծրագրերի և այլ նախաձեռնությունների իրականացման շուրջ:

2015 թվականի հունիսի 19-ից 20-ը տեղի է ունեցել «Խելացի լուծումներ խելացի բիզնեսի համար» խորագրով 8-րդ ամենամյա «Դիջիթեք» բիզնես ֆորումը: Աշխատանքներ են իրականացվել միջազգային ամենամյա «Դիջիթեք Էքսպո 2015» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ցուցահանդեսի և Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հոկտեմբերին կայացած «Արմթեք 2015» բարձր տեխնոլոգիաների ոլորտի ամենամյա գլոբալ համաժողովի կազմակերպման ուղղությամբ:

Շարունակվել են իրականացվել Վենչուրային կապիտալի/սկսնակ ձեռնարկությունների աջակցման հիմնադրամի (ՀԲ վարկային ծրագիր), Հայաստանում «IBM»-ի նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի հիմնման, Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների, Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնի, «mLab ECA» մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի, Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիայի (ANEL) ծրագրերը և վերջիններիս շրջանակներում որակյալ տեխնոլոգիական մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը:

Տնտեսության ինովացիոն զարգացման հիմքերի ամրապնդում

«Հայաստան. կայուն տնտեսական զարգացման ռազմավարություն. ինովացիոն առաջընթացի ուղին» փաստաթղթի առաջին նախագիծը ներկայացվել է հունիսի 30-ին կայացած «Տնտեսական օրակարգ» համաժողովում: Փաստաթղթի վերաբերյալ նկատառումներ և առաջարկություններ ստանալու նպատակով այն ներկայացվել է ավելի քան 70 շահառուների (պետական մարմիններ, միջազգային կազմակերպություններ, մասնագիտական շրջանակներ): Փաստաթղթի լրամշակված նախագիծը ներկայացվել է նոյեմբերի 11-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» 25-րդ գիտաժողովին և նոյեմբերի 13-ին Դիլիջանում տեղի ունեցած Բիզնես ինովացիոն համաժողովին:

Փետրվարին համագործակցության համաձայնագիր է ստորագրվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՆՁԱԿ) և Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի միջև:

«Երիտասարդ նորարարների դպրոց» ծրագրի շրջանակում ՆՁԱԿ-ի կողմից կազմակերպվել է «Նորարարությունների առևտրայնացման մեխանիզմները «Սկոլկովո» ինովացիոն կենտրոնի

օրինակով» թեմայով սեմինար-քննարկում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել «Սկոլկովո» ինովացիոն կենտրոնի հետ ռուս-հայկական համաժողով անցկացնելու մասին: Կայացել է «Գիտություն և ինովացիա 2015» միջազգային երիտասարդական գիտաժողովը: Կնքվել են մի շարք համագործակցության պայմանագրեր: Գիտաժողովին հաջորդել է Հայաստանում առաջին «Նորարարությունների կառավարում» միջազգային երիտասարդական գիտական դպրոցը, որին մասնակցել են գիտնականներ, դասախոսներ և ուսանողներ ԱՊՀ երկրներից:

Երկու հայ գյուտարարի աջակցություն է ցուցաբերվել ներկայանալու ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) կողմից կազմակերպված «Ideas for a Change award» նորարարական գաղափարների ցուցահանդես-մրցույթին:

ՆՁԱԿ-ի, «Ռոսնանո» կորպորացիայի ենթակառուցվածքների կրթական ծրագրերի հիմնադրամի և Հայաստանի Ստանդարտների ազգային ինստիտուտի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր նորարարությունների նորմատիվ ապահովման բնագավառում համագործակցության և նորարարության ոլորտում ստանդարտացման միջպետական համակարգման կենտրոնի ստեղծման վերաբերյալ:

<u>Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման 2015 թվականի ծրագրի իրականացում:</u>

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում ներկայումս գործում են 23 տեղական և արտասահմանյան կազմակերպություններ: Կենտրոնի կիրառելի տարածքի զբաղվածությունը կազմում է 99%: 2015 թվականի մայիսին Գյումրիում բացվել են «Դ-Լինկ Ինտերնեյշնլ ՊՏԵ ԼՏԴ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության հետազոտական կենտրոնի նորակառույց շենքը և ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի մասնաճյուղը: Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ ուսանողների և մասնագետների համար, բիզնես աջակցություն և խորհրդատվություն է տրամադրվել ընկերություններին, թիմերին և անհատ ձեռներեցներին: Տեղի են ունեցել Գյումրու և Վանաձորի համաֆինանսավորվող դրամաշնորհային մրցույթներ, որոնց արդյունքում հաղթող են ճանաչվել 12 ծրագրեր Գյումրիից և 3 ծրագրեր Վանաձորից: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված թիմերի կողմից ընկերություններ են հիմնվել Գյումրիում և Վանաձորում:

Սկսվել են Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի շինարարական աշխատանքները: Ընտրվել են Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի բիզնեսի զարգացման խորհրդատուն և դասընթացների համակարգողը: Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնին հատկացված ժամանակավոր աշխատանքային տարածքում հիմնվել են ՏՀՏ (Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ) և

ճարտարագիտության ոլորտների ուղղվածությամբ ուսումնական լաբորատորիաներ: Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ աշակերտների, ուսանողների և մասնագետների համար, բիզնես աջակցություն և խորհրդատվություն է տրամադրվել թիմերին, սկսնակ և գործող ընկերություններին: Վանաձորի համաֆինանսավորվող դրամաշնորհների ծրագրի շրջանակներում դրամաշնորհ են ստացել 4 ընկերություններ: Դեկտեմբերի 12-ից 13-ը Վանաձորում տեղի է ունեցել «Հեքքթոն[ՅԱՆ] մանկություն 2015» նորարար գաղափարների և ծրագրավորման մրցույթը, որին մասնակցել են ավելի քան 70 թիմ, որոնցից 18-ը՝ Վանաձորից:

Զբոսաշրջություն

«Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2015 թվականի ծրագրի շրջանակներում հայկական զբոսաշրջային արդյունքի միջազգային և ներքին շուկաներում խթանման շրջանակներում տպագրվել է Ջերմուկ քաղաքի անգլերեն և իսպաներեն ֆոտոալբոմը 3000 օրինակով: Նկարահանվել է ՀՀ զբոսաշրջային գրավչությունը ներկայացնող 10 րոպե տևողությամբ հոլովակ: Ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել Գառնիի, Գորիսի, Դիլիջանի, Ծաղկաձորի և Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններին:

Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է 7 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներում: Կազմակերպվել է 5 ավանդական փառատոն:

Կազմակերպվել են օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների և պոտենցիալ ներդրողների Հայաստան ճանաչողական այցեր իսրայելցի, ռուս, ավստրիացի, գերմանացի ճամփորդական լրագրողների համար, որոնք տպագրել են բազմաթիվ հոդվածներ ՀՀ զբոսաշրջային արդյունքի վերաբերյալ: Կազմակերպվել է ռուսաստանյան խոշոր զբոսաշրջային գործակալությունների ցանցի և իտալական RAI պետական հեռուստառադիոընկերության ներկայացուցիչների ճանաչողական շրջայցը Հայաստան: Վերջինիս արդյունքում նկարահանվել է վավերագրական ֆիլմ:

Մարդկային ռեսուրսների զարգացում: Երևանի Զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնն անցկացրել է միջազգային դասընթաց, որին մասնակցել են զբոսավարներ Հայաստանից և Իրանից: Նոյեմբերի 6-ից մեկնարկել է սկսնակ զբոսավարների պատրաստման 6-ամսյա դասընթացը:

ՀՀ մրցունակ և շարունակական օդային փոխադրումների ծառայությունների մատուցման ծրագրի խթանման նպատակով ապահովվել է Հայաստանի պատվիրակությունների մասնակցությունը 3 համաժողովների («Եվրոպայի ուղիների զարգացում», Աբերդին, Մեծ

Բրիտանիա, «RoutesSilkRoad 2015», Թբիլիսի, «Համաշխարհային ուղիների զարգացում» Դուրբան, Հարավաֆրիկյան Հանրապետություն):

Միջազգային համագործակցության շրջանակներում Իրանի Թեհրան քաղաքում փետրվարի 11-14-ը կայացել է ՀՀ և ԻԻՀ միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության տեխնիկական հանձնաժողովի երրորդ նիստը: Քննարկվել են զբոսաշրջության բնագավառում երկկողմ համագործակցության հուշագրի նախագիծը և այլ հարցեր:

ՀՀ Նախագահի՝ Չինաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում 2015 թվականի մարտի 25-ին ստորագրվել է «ՀՀ կառավարության և ՉԺՀ կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը:

Մայիսի 26-30-ը Խորվաթիայի Ռովին քաղաքում հայկական պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) Գործադիր խորհրդի 100-րդ հոբելյանական նստաշրջանի աշխատանքներին, որի նախնական օրակարգում ներառված էր «Կոնֆլիկտային տարածքներում զբոսաշրջային քարոզչությունն արգելելու վերաբերյալ» հակաղարաբաղյան բանաձևի նախագծի վերաբերյալ ՄԱԿ ՁՀԿ Զբոսաշրջության էթիկայի համաշխարհային հանձնաժողովի կարծիքի քննարկումը: Հարցի շրջանակներում ադրբեջանական կողմը գրավոր ներկայացրել էր բանաձևի նախագիծ՝ պնդելով դրա ընդունումը ՄԱԿ ՁՀԿ Գործադիր խորհրդի կողմից և ներկայացումը ՄԱԿ ՁՀԿ Գլխավոր ասամբլեային: ՀՀ կառավարության ջանքերով ադրբեջանական կողմի ներկայացրած բանաձևի ընդունումը կանխվել է: ՄԱԿ ՁՀԿ Գործադիր խորհուրդը որոշել է հարցը չներկայացնել ՄԱԿ ՁՀԿ Գլխավոր ասամբլեայի քննարկմանը:

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի բարեփոխումներ

2015 թվականի դեկտեմբերին ստորագրվել է Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության և ՀՀ միջև օդային հաղորդակցությունների մասին միջկառավարական համաձայնագիրը: Երկու կողմերի ավիաընկերություններին փոխադարձաբար օդի 5-րդ ազատության իրավունք է տրամադրվել ուղևորափոխադրումների և 7-րդ ազատության իրավունք՝ բեռնափոխադրումների իրականացման համար:

2015 թվականի դեկտեմբերի 7-ին Եվրոպական Հանձնաժողովը հավանության է արժանացրել ԵՄ ավիացիոն նոր ռազմավարությունը, որը ներառում է նաև Հայաստանի հետ Ընդհանուր ավիացիոն գոտու մասին հանաձայնագրի բանակցման մանդատ ստանալու համար անհրաժեշտ փաթեթը:

Աշխատանքներ են իրականացվել Իտալիայի Հանրապետության, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Թագավորության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Նորվեգիայի Թագավորության, Իսրայելի Պետության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Սինգապուրի, Բուլղարիայի Հանրապետության, Հունաստանի Հանրապետության ավիացիոն իշխանությունների հետ օդային հաղորդակցության մասին համաձայնագրի լրամշակման, վերանայման կամ կնքնման ուղղությամբ:

Միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցություն

Համաշխարհային բանկ

Համաշխարհային բանկի հետ 2015 թվականի ընթացքում բանակցվել են թվով 6 վարկային և ստորագրվել են թվով 5 վարկային և 3 դրամաշնորհային համաձայնագրեր. Մասնավորապես.

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի ապրիլի 8-ին ստորագրվել և սեպտեմբերի 22-ին ուժի մեջ է մտել «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը 30 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով: Ծրագրի նպատակն է բարելավել համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքի որակը և հասանելիությունը:

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի ապրիլի 8-ին ստորագրվել է «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագիրը 52 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով, որի նպատակն է բարելավել ՀՀ-ում էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը և համակարգային կառավարումը, ինչպես նաև աջակցել ՀՀ-ին ապահովելու կայուն էլեկտրամատակարարում:

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի օգոստոսի 26-ին ստորագրվել է «Կենսական նշանակության ճանապարհների ցանցի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը 40 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով, որի նպատակն է ընտրված կենսական նշանակության ճանապարհները բարելավելու միջոցով բարելավել շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար ու հզորացնել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարողությունները՝ կենսական նշանակության ճանապարհային ցանցի կառավարման ուղղությամբ:

«Զարգացման քաղաքականության ֆինանսավորում» ծրագրի երրորդ փուլի (ԶՔՖ-3) շրջանակներում Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության միջև փոխհամաձայնեցված նախապայմանների կատարման ուղղությամբ տարվել են համապատասխան աշխատանքներ, որոնք հետագայում ամբողջությամբ ընդունելի և կատարված են համարվել ՀԲ-ի կողմից: Արդյունքում

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրվել է «Զարգացման քաղաքականության երրորդ վարկ» վարկային համաձայնագիրը 50 մլն ԱՄՆ դոլարի չափով, որը տրամադրվել է դեկտեմբերին: Ծրագրի երրորդ ֆինանսավորման նպատակն է օժանդակել ՀՀ կառավարության բարեփոխումների օրակարգին երկու հիմնական ուղղությամբ՝ հարկաբյուջետային, սոցիալական ու շրջակա միջավայրի կայունության խթանում և մրցունակության ամրապնդում:

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2016 թվականի փետրվարի 23-ին ստորագրվել է Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի վարկային համաձայնագիրը 55 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով: Ծրագրի նպատակն է ենթակառուցվածքային ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումը՝ ուղղված մեր երկրի մի շարք մարզերում տեղական տնտեսության զարգացմանը, զբոսաշրջային գրավչության բարձրացմանը, այդ թվում՝ մշակութային ժառանգության վերականգնմանը և զբոսաշրջային երթուղու զարգացմանը: Ներդրումները կուղղվեն հանրային ենթակառուցվածքների, ճանապարհների, ջրամատակարարման բարելավմանը, հասարակական տարածքների, պատմական շենքերի, թանգարանների վերականգնմանը և այլն:

Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև 2015 թվականի նոյեմբերի 13-ին ստորագրվել է «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի նախապատրաստման համար» դրամաշնորհի համաձայնագիր 660.000 ԱՄՆ դոլար գումարի չափով: Ծրագրի նպատակն է ուժեղացնել նորաստեղծ Հայաստանի Զարգացման Հիմնադրամի կարողությունները՝ զբոսաշրջության խթանման և զարգացման ծրագրեր մշակելու և իրականացնելու, ինչպես նաև «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի (ՏՏԵԶԾ)» համար տեխնիկատնտեսական ուսումնասիրության և մանրամասն նախագծերի մշակմանը մասնակցելու համար:

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի նոյեմբերի 18–ին ստորագրվել է «Պետական հատվածի արդիականացման երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագիրը 21 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով: Ծրագրի նպատակն է հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը:

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև (վերջինս հանդես է գալիս որպես Ռազմավարական կլիմայական հիմնադրամի Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագիրն իրականացնող գործակալություն) 2015 թվականի հունիսի 16-ին ստորագրվել է դրամաշնորհի համաձայնագիր, որով նախատեսվում է Հայաստանի

Հանրապետությանը տրամադրել 8.55 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով դրամաշնորհ՝ «Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագրի» իրականացման համար: Ծրագրի նպատակն է՝ պարզել, թե ծրագրի տեղամասի երկրաջերմային պաշարը բավարա՞ր է արդյոք էլեկտրաէներգիայի արտադրության համար, թե ոչ, և եթե այո, ապա մասնավոր հատվածին ներգրավել երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման գործում:

Հայաստանի Հանրապետության և Ռազմավարական կլիմայի հիմնադրամի՝ Ցածր եկամուտ ունեցող երկներում Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրից տարբեր դոնորների կողմից տրամադրված դրամաշնորհային միջոցների կառավարիչ հանդիսացող Համաշխարհային բանկի՝ ի դեմս Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի, միջև 2015 թվականի հունիսի 30-ին ստորագրվել է դրամաշնորհի համաձայնագիր, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 2 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով դրամաշնորհ՝ «Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստումը» ֆինանսավորելու նպատակով: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստան Հանրապետությանը իրականացվելիք արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի առաջարկվող ծրագրի նախապատրաստման հարցում:

<u>Արժույթի միջազգային հիմնադրամ</u>

2015 թվականին կայացած մի շարք հանդիպումների և խորհրդակցությունների ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության ընթացքը, այդ թվում՝ բազմիցս անդրադարձ է կատարվել ԱՄՀ կողմից Հայաստանին տրամադրվող «Երկարաձգվող ֆինանսավորման գործիք» (EFF) ծրագրի հերթական գնահատման արդյունքներին: Քննարկվել են ԱՄՀ կողմից Հայաստանին տրամադրվող «Երկարաձգվող ֆինանսավորման գործիք» ծրագրի շրջանակներում տնտեսության աջակցության հնարավորությունները: Բանակցային գործընթացների արդյունքում 2015 թվականին ներգրավվել են 16.3 մլն ԱՄՆ դոլարի չափով միջոցներ, որոնք հատկացվել են ՀՀ կենտրոնական բանկին:

<u>Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամ</u>

Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջև 2015 թվականի սեպտեմբերի 3-ին ստորագրվել է «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիր» վարկային համաձայնագիրը 25 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ: Ծրագրի հիմնական նպատակն է նվազեցնել աղքատության մակարդակը ՀՀ գյուղական տարածքներում՝ գյուղական ենթակառուցվածքների զարգացման միջոցով:

Ասիական զարգացման բանկ

2015 թվականի ընթացքում Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հետ տարվող աշխատանքների արդյունքում մշակվել է «Հայաստանի Հանրապետության 2016-2018թթ. երկրի գործառնությունների բիզնես պլանը», որն ընդգրկում է ԱԶԲ կողմից Հայաստանին տրամադրվող վարկերը և տեխնիկական աջակցությունը: Համաձայն բիզնես պլանի, 2016 թվականին հաստատված ծրագրով Հայաստանը հնարավորություն կունենա օգտագործել ԱԶԲ 105 մլն դոլար վարկը:

Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2015 թվականի հոկտեմբերի 13-ին ստորագրվել է «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Ծրագիր 2» (Ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագիրը 112.97 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ, որը գտնվում է վավերացման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի անցման փուլում: «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի» նպատակն է բարելավել ՀՀ քաղաքներում քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքները՝ ապահովելով ավելի արդյունավետ, ապահով և մատչելի տրանսպորտային ծառայություններ: Սույն բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է Արգավանդ-Շիրակ ճանապարհի, Բաբաջանյան-Աշտարակ և Դավիթաշեն-Աշտարակ մայրուղիների կառուցում:

Նախաձեռնվել են դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված ծրագրի մշակման աշխատանքները: Արդյունքում մշակվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը», որը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվել է 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 797-Ն որոշմամբ: Ծրագիրն ուղղված է ՀՀ տարածքի և Երևան քաղաքի սեյսմիկ ռիսկի նվազեցմանը: Ծրագրի ծախսերը 2015-2030թթ. համար գնահատվել են 617.0 մլն ԱՄՆ դոլար, որից 107.0 մլն դոլարը՝ 2015-2020թթ. համար:

Միևնույն ժամանակ, վերը նշված որոշման պահանջներից ելնելով, մշակվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրից բխող 2015-2020 թվականների միջոցառումների ծրագիրը», որով նախատեսվում է 2015-2020թթ. ընթացքում Ասիական զարգացման բանկի նույնանուն վարկային ծրագրի շրջանակներում ուժեղացնել և կառուցել թվով 46 դպրոցներ: Ծրագրերի իրականացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2015 թվականի հոկտեմբերի 19-ին ստորագրվել է «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր - արդյունքների վրա հիմնված փոխատվություն» (հատուկ գործառնություններ) վարկային

համաձայնագիրը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել վարկ՝ 88.5 մլն ԱՄՆ դոլարի չափով, որի առաջին տրանշը փոխանցվել է 2015 թվականի դեկտեմբերի վերջին:

Եվրասիական զարգացման բանկ և Կայունության ու զարգացման եվրասիական հիմնադրամ

2015 թվականին մշակվել և ապրիլին Եվրասիական Զարգացման Բանկի (ԵԶԲ) Կայունության ու զարգացման եվրասիական հիմնադրամ (ԿԶԵՀ) է ներկայացվել Հայաստանի տնտեսական աճի և արտահանող ճյուղերի խթանման ՀՀ կառավարության ծրագիրը, վերջինիս հիման վրա վարվել են բանակցություններ, որոնց արդյունքում կառուցվել է ԿԶԵՀ վարկի նախապայմանների մատրիցը: Վերոնշյալ մատրիցը համապատասխան մտադրությունների նամակի հետ համատեղ ուղարկվել է ԵԶԲ ԿԶԵՀ և հավանության է արժանացել: Ապահովվել է վարկի մատրիցով առաջին տրանշի համար նախատեսված միջոցառումների կատարումը, և դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվել ԿԶԵՀ: Արդյունքում, ԿԶԵՀ խորհրդի անդամների 2015 թվականի հոկտեմբերի 29-ին կայացած քվեարկությամբ հավանության է արժանացել 300 մլն ԱՄՆ դոլարի բյուջետային աջակցության ծրագիրը, և վարկի առաջին տրանշով նախատեսված 100 մլն ԱՄՆ դոլարը 2015 թվականի դեկտեմբերին հատկացվել է Հայաստանի Հանրապետությանը:

ԵԱԶԲ և ՀՃՀ հետ բանակցային գործընթացների արդյունքում 2015 թվականի ընթացքում մեկնարկել են ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր: Հիմնադրամի հետ հաջողված համագործակցության արդյունք են հանդիսացել «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն. 4-րդ փուլ» նախագծի ֆինանսավորման համար 150 մլն ԱՄՆ դոլարի կնքված համաձայնագիրը, որի շրջանակում աշխատանքները հաջող ընթացքի մեջ են, ինչպես նաև վավերացման փուլում գտնվող «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի համար նախատեսվող 40 մլն ԱՄՆ դոլարի ներդրումային վարկային համաձայնագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում ոռոգման համակարգերի արդիականացումը և ջրօգտագործողների միավորումների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը:

Առևտրի համաշխարհային կազմակերպություն

ԵԱՏՄ անդամակցությունից հետո ԱՀԿ պարտավորությունների վերաբանակցման նպատակով 2015 թվականի ապրիլի 25-ի ԵԱՏՀ խորհրդի որոշմամբ ձևավորվել է աշխատանքային խումբ, որի մեջ ներառված են ԵԱՏՄ անդամ երկրների ներկայացուցիչներ: Բանակցությունները փաստացի մեկնարկել են 2015 թվականի հունիս ամսից: Այժմ խումբը մշակում է բանակցությունների իրականացման հրահանգները:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

Ներկայումս ՎԶԵԲ-ը շարունակում է ընդլայնել օժանդակությունը Երևանում և այլ քաղաքներում էներգախնայողության ապահովման, Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման, ճանապարհաշինության և նոր ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Բանակցությունների արդյունքում մեկնարկել է հայ-վրացական սահմանի անցման կետերի արդիականացման ծրագիրը, և շարունակվում են աշխատանքները Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարման համակարգի ծրագրի մեկնարկի ապահովման և դրանում Գեղարքունիքի մարզը ներգրավելու ուղղությամբ: Քննարկումների արդյունքում ամբողջացվել է Գյումրի քաղաքի ճանապարհաշինության և լուսավորության ծրագիրը, որի իրականացումը նախատեսվում է սկսել 2016 թվականին:

Հայաստանի Հանրապետության և ՎԶԵԲ-ի միջև 2015 թվականի մայիսի 11-ին ստորագրվել է «Երևանի քաղաքային լուսավորության ծրագրի» վարկային համաձայնագիրը 4 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ: Վերջինս արդեն իսկ վավերացվել է և գտնվում է ուժի մեջ մտնելու ընթացակարգային փուլում: Ծրագրի ընդհանուր նպատակն է Երևան քաղաքում ունենալ էներգախնայող և անվտանգ արտաքին լուսավորության ցանց: Մասնավորապես, ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքի 28 փողոցներում հենասյուների փոխարինում, մալուխների ստորգետնյա անցկացում, էներգախնայող լամպերի օգտագործում, ինչպես նաև կառավարման ավտոմատացված համակարգի ներդնում:

Հայաստանի Հանրապետության և ՎԶԵԲ-ի միջև 2015 թվականի դեկտեմբերի 11-ին ստորագրվել է «Երևանի կոշտ թափոնների ծրագիր-փուլ 1» վարկային համաձայնագիրը 8 մլն եվրո արժողությամբ: Վարկային համաձայնագիրը գտնվում է վավերացման համար անհրաժեշտ ընթացակարգերի անցման փուլում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Նուբարաշենում նոր աղբավայրի կառուցում, վերջինիս համար մասնագիտացված տրանսպորտային միջոցների և սարքավորումների գնում, գոյություն ունեցող աղբավայրի տարածքում մակերեսի մեկուսացում: Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵՆԲ-ի և ԵՄ ՀՆԳ կողմից:

Եվրոպական ներդրումային բանկ

«Երևանի կոշտ թափոններ. փուլ 1» ծրագրի շրջանակներում ԵՆԲ-ի հետ 2015 թվականի հոկտեմբերի 16-ին ստորագրվել է 8 մլն եվրո արժողությամբ ֆինանսական պայմանագիրը: Ծրագիրը բարելավելու է Հայաստանի մայրաքաղաք Երևանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգը: Մասնավորապես՝ Նուբարաշենում գործող աղբավայրի հարևանությամբ կառուցվելու է նոր աղբավայր, որը հնարավորություն կտա նվազեցնելու գործող ոչ

սանիտարական աղբավայրի անբարենպաստ ազդեցությունը շրջակա միջավայրի, հանրային առողջության և կլիմայի վրա: Ծրագիրը համաֆինանսավորվում է ՎԶԵԲ-ի և ԵՄ ՀՆԳկողմից:

«Կովկասյան էլեկտրահաղորդակցման ցանց 1» ծրագրի շրջանակներում ՀՀ-ի և ԵՆԲ-ի միջև 2015 թվականի մարտի 16-ին ստորագրվել է 10 մլն եվրո արժողությամբ ֆինանսական պայմանագիր, որը գտնվում է ներպետական ընթացակարգերի ավարտական փուլում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել էլեկտրաէներգիայի վաճառքի և պահուստային էներգամատակարարման նոր հաղորդման գիծ Հայաստանի և Վրաստանի միջև՝ բարձր լարման հաստատուն հոսանքի ներդիրով կայանի կառուցման միջոցով, որի սկզբնական հզորությունը կազմելու է 350ՄՎտ՝ մինչև 1050ՄՎտ ընդլայնվելու հնարավորությամբ:

Գերմանական զարգացման բանկ (KFW)

2015 թվականի դեկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև ստորագրվել է 83 մլն եվրո արժողությամբ «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III» ծրագրի 2-րդ փուլի վարկային համաձայնագիրը: Ծրագրի շրջանակներում տրամադրվելիք վարկային միջոցներն օգտագործվելու են Դդմաշենում ենթակայանի կառուցման, էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ էլեկտրացանցերի վերականգնման ու վերակառուցման, սարքավորումների և մեքենաների շահագործման, ինչպես նաև ծրագրի նախապատրաստման և իրականացման ընթացքում մատուցվող խորհրդատվական ծառայությունների ֆինանսավորման նպատակով:

Կայացել են շարունակական քննարկումներ և խորհրդակցություններ Գերմանական զարգացման բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ: Խորհրդակցությունների ընթացքում քննարկվել են Կապս ջրամբարի նախագծային փուլի մեկնարկի հետ կապված հարցերը, համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրի երրորդ փուլի նախապատրաստման ընթացքը, ջրային տնտեսության համակարգում միասնական մասնավոր օպերատորի ներգրավման գործընթացում աջակցության տրամադրման հարցը:

Զարգացման ֆրանսիական գործակալություն

2015 թվականի ընթացքում տեղի են ունեցել երկարատև բանակցություններ Զարգացման ֆրանսիական գործակալության հետ Վեդու ջրամբարի ֆինանսավորման նպատակով 75 մլն եվրո վարկային միջոցներ ներգրավելու ուղղությամբ, որոնց արդյունքում 2016 թվականի հունվարի 26-ին համաձայնագիրը ստորագրվել է:

Չինաստանի Արտահանման-ներմուծման բանկ

2015 թվականի մարտի 25-ին ՀՀ Նախագահի՝ Չինաստան կատարած այցի ընթացքում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետությանը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից արտոնյալ վարկի տրամադրման մասին» շրջանակային համաձայնագիրը և վերջինից բխող՝ ՀՀ կառավարության և Չինաստանի Արտահանման-ներմուծման բանկի միջև «Հայաստանի մաքսային զննման տեխնոլոգիաների և սարքավորումների արդիականացման ծրագիր» արտոնյալ պայմաններով 156 մլն չինական յուան (մոտ 25.3 մլն ԱՄՆ դոլար) արժողությամբ վարկային համաձայնագիրը: Վարկային համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել մաքսային զննման շարժական ռենտգեն և այլ սարքավորումներ: Սարքավորումները կարող են օգտագործվել՝ ստուգելու և բացահայտելու այնպիսի սպառնալիքներ, ինչպիսիք են պայթուցիկ նյութերը, զենքը, դեղերը և այլ մաքսանենգ ապրանքներ: Սարքավորումներն առանձնանում են բարձր թափանցելիությամբ, հուսալիությամբ, գերազանց ճկունությամբ, ռադիոակտիվ անվտանգությամբ, բարձրորակ սկանավորված պատկերներով և տվյալների անվտանգությամբ:

Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցություն

Իրան–ԵԱՏՄ ազատ առևտրի համաձայնագիր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը ԵԱՏՄ անդամ երկրներից միակն է, որը ցամաքային սահման և երկար տարիների առևտրատնտեսական համագործակցության փորձ ունի Իրանի հետ, հայկական կողմը հանդես է եկել նախաձեռնությամբ՝ Իրան–ԵԱՏՄ ազատ առևտրի համաձայնագրի կնքման շուրջ բանակցություններ սկսելու վերաբերյալ: Հարցը բազմիցս տարբեր հարթակներում քննարկվել է՝ և՛ ԵԱՏՄ, և՛ Իրանի բարձրաստիճան պաշտոնատար անձանց շրջանակներում: Ներկայումս Իրանի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքման նպատակահարմարությունը քննարկելու նպատակով ստեղծվել է ԵԱՏՄ անդամ պետությունների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ:

«Տրանսպորտային միջոցի անձնագրի (ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի և այլ տիպի տեխնիկայի անձնագրի միասնական ձևերի ներդրման էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014թ. օգոստոսի 15-ի համաձայնագրին ՀՀ միանալու արձանագրության կնքման առաջարկություն: Արձանագրության ստորագրմամբ Հայաստանը միանում է համաձայնագրին, ինչը հնարավորություն կտա տրանսպորտային միջոցների ոլորտում առավել արդյունավետ համագործակցել ԵԱՏՄ անդամ երկրների հետ:

Դեղերի և բուժպրանքների շրջանառության միասնական սկզբունքների ու կանոնների մասին միութենական համաձայնագրերին Հայաստանի միանալու մասին արձանագրությունների ստորագրում: Արձանագրությունների ստորագրումն անհրաժեշտ է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին համապատասխան դեղամիջոցների և բուժպրանքների ընդհանուր շուկաների գործարկման համար:

Ի կատարումն Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի թիվ 25 հավելվածի, էլեկտրոնային թվային ստորագրությունների փոխադարձ ճանաչման մասին ՀՀ նախաձեռնություն: Էլեկտրոնային ձևաչափով իրականացվող գնումների գործընթացում թվային ստորագրությունների փոխադարձ ճանաչումն ապահովելու նպատակով ՀՀ հանդես է եկել համապատասխան նախաձեռնությամբ: Նախատեսվում է, որ 2016 թվականի առաջին կիսամյակում պետք է մշակվի և հաստատվի գնումների գործընթացում ԵԱՏՄ անդամ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի համապատասխան կազմակերպությունների թվային ստորագրությունների փոխադարձ ճանաչման ապահովման միջոցառումների ծրագիր: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ ԵԱՏՄ գնումների գործընթացում թվային ստորագրությունների փոխադարձ ճանաչման ամբողջական գործընթացի ապահովումը կպահանջի բավականին երկար ժամանակ, այժմ քննարկվում են հարցի՝ ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ պետությունների հետ երկկողմ լուծման հնարավորությունները:

Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի շինարարության աշխատանքների իրականացման շրջանակներում ներմուծվող ապրանքների մաքսավճարի արտոնությունների սահմանման գործընթաց: ՀՀ համապատասխան առաջարկությունը մշակվել և ներկայացվել է ԵԱՏՀ քննարկմանը:

Տեղական արտադրության խթանման նպատակով մշակվել և ընդունվել է «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման համար անհրաժեշտ պայմանները հաստատելու և լիազոր մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1118-Ն որոշումը:

Ավելացված արժեքի հարկի հետ վերադարձի հետ կապված՝ ԵԱՏՄ մայր օրենքում փոփոխություն կատարելու նախաձեռնություն: Արձանագրությամբ, որը բազմիցս քննարկվել է ԵԱՏՄ տարբեր հարթակներում, նախատեսված է կարգավորել ԱԱՀ-ի վերադարձի հետ կապված խնդիրները: Հարցի վերաբերյալ համապատասխան նյութերը մշակվել և 2015 թվականի դեկտեմբերի 21-ին ներկայացվել են Եվրասիական բարձրագույն խորհրդի նիստի քննարկմանը:

ԵԱՏՄ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափի վերաբաշխման առաջարկություն: ՀՀ հանդես է եկել դրույքաչափերի վերահաշվարկի նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով բարձրացնել ՀՀ դրույքաչափը, ինչը պետք է հանգեցներ բյուջեի եկամուտների աճի: Հարցի առնչությամբ կայացել են մի շարք քննարկումներ ԵԱՏՄ տարբեր մակարդակներում, իրականացվել է վերահաշվարկ, սակայն հարցն առայժմ լուծված չէ:

Ռուսաստանի Դաշնություն

ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև 2015 թվականի փետրվարի 5-ին ստորագրվել է «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգմանն ուղղված աշխատանքների ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագիրը 300 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ:

2015 թվականի ընթացքում ՌԴ ֆինանսների նախարարության հետ ստորագրվել է ՌԴ կողմից դրամաշնորհային միջոցներ տրամադրելու համաձայնագիրը՝ հետևյալ նպատակներով.

- Աջակցություն Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին ՀՀ միանալու Ճանապարհային քարտեզով նախատեսված միջոցառումների իրականացման համար 49 մլն ԱՄՆ դոլարի չափով,
- 25 մլն եվրո դրամաշնորհ՝ Եվրասիական միությանը միանալու մտադրության հետևանքով ԵՄ կողմից ՀՀ-ին նույն չափով դրամաշնորհի տրամադրումից հրաժարվելու հիմքով:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև տնտեսական համագործակցություն

ՀՀ-ԵՄ հարաբերությունների նոր իրավական հիմքի ձևավորում և Եվրասիական տնտեսական միության ու Եվրոպական միության հետ իրականացվող տնտեսական քաղաքականության ներդաշնակեցում

2015 թվականի սկզբին սկսվել են աշխատանքները ՀՀ-ԵՄ հարաբերությունների նոր իրավական հիմքի ստեղծման ուղղությամբ: Այս գործընթացում աշխատանքներ են տարվել փաստաթղթի առևտրատնտեսական մասի շրջանակի ճշգրտման ուղղությամբ: Որպես հնարավոր համագործակցության հիմնական ուղղություններ սահմանվել են արդեն իսկ բանակցված Ասոցացման համաձայնագրի դրույթները և հիմնական աշխատանքներն ուղղորդվել են՝

պահպանելու այն ոլորտների ու միջոցառումների շրջանակը, որոնք հնարավորինս կբացառեն հակասությունները ԵԱՏՄ շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորություններին:

Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրից բխող տնտեսական միջոցառումների իրականացում

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը հաջողությամբ ավարտել է ԵՀՔ ՀՀ-ԵՄ 2014-2015թթ. գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը: Գործողությունների ծրագրի իրականացումը նշանակալիորեն նպաստել է Հայաստանի օրենսդրության, նորմերի և ստանդարտների ներդաշնակեցմանը Եվրոպական միության չափանիշներին:

Գյուղատնտեսություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը՝ գյուղատնտեսությունը, 2010-2014 թվականների միջին տվյալներով ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի 18.7%-ը: 2015 թվականին գյուղատնտեսության հաշվին ապահովվել է երկրի համախառն ներքին արդյունքի 17.3%-ը: Ներկայումս ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսական համակարգ, որը ներառում է ավելի քան 340 հազար գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշռող մասը՝ 97.2%-ը բաժին է ընկնում բնակչության տնտեսություններին (գյուղացիական տնտեսություններին):

Ելնելով ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության խնդիրներից՝ 2015 թվականին շարունակվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի կատարելագործմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ապահովմանը, գյուղատնտեսության սպասարկմանը, ենթակառուցվածքների ու անտառային տնտեսության զարգացմանը:

Վերջին տարիներին ծրագրավորված աջակցություն է ցուցաբերվել տնտեսավարող սուբյեկտներին բարձրորակ սերմերի, տոհմային և մթերատու բարձր հատկանիշներ ունեցող

կենդանիների, հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի մատչելի գներով մատակարարման, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման և այլ ուղղություններով:

2015 թվականին շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման միտումը: 2015 թվականին ցանքատարածությունը կազմել է 351.8 հազ. հա, որը գերազանցել է 2014 թվականի մակարդակը 19.1 հազ. հա-ով: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը կազմել է 78.8%՝ նախորդ տարվա 74.4%-ի դիմաց:

Վերջին տարիներին որոշակիորեն բարձրացել է հացահատիկային տնտեսության և այգիների ինտենսիվացման մակարդակը: Դա պայմանավորված է սերմնաբուծության և սերմապահովության վիճակի նկատելի բարելավման, ինտենսիվ այգիների տարածքների ընդլայնման ծավալների ավելացման, խաղողի և պտղի իրացման, մասնավորապես՝ թարմ բուսաբուծական մթերքների արտահանման հնարավորությունների ընդլայնմամբ:

Գործող վերամշակող ընկերությունների գործունեության արդյունքում որոշակիորեն բարելավվել է գյուղատնտեսական մթերքների իրացման վիճակը: 2015 թվականին հնարավորություն է ստեղծվել գնելու գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկվող պտղի, բանջարեղենի և խաղողի ողջ քանակությունը: 2015 թվականին մթերվել և վերամշակվել է 280.9 հազ.տոննա պտուղ-բանջարեղեն և խաղող, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 48.8 հազ. տոննայով կամ 21.0%-ով:

Շնորհիվ գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակող կազմակերպությունների միջև պայմանագրային հարաբերությունների արմատավորման, չնայած վերամշակող ընկերությունների ֆինանսական սուղ հնարավորություններին, մթերումների դիմաց վճարումները 2015 թվականին իրականացվել են պտղի համար 97.6%-ով, իսկ խաղողի համար՝ 72.5%-ով: Մթերումների դիմաց վճարումները շարունակվում են կատարվել պայմանագրերով սահմանված ժամկետներում:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրները բխում են Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից և «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունից»: Այդ խնդիրներից առանձնանում են՝

- տնտեսավարման ձևերի, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացում,
- պարենային ապահովության մակարդակի բարձրացում, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացում,

- տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացում, ըստ նպատակահարմարության ներմուծվող պարենամթերքի փոխարինում և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության զարգացում,
- սննդամթերքի անվտանգության ապահովում,
- հողօգտագործման արդյունավետության բարձրացում,
- բուսաբուծության զարգացում, մասնավորապես՝ ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնում, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացում, սերմերի որակի հսկողության գործուն մեխանիզմների կիրառում, բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում,
- անասնաբուծության զարգացում, մասնավորապես՝ տոհմային գործի զարգացման և հոտի վերարտադրության համալիր միջոցառումների իրականացում, անասնաբուժության համակարգի բարելավում և անասնաբուժական միջոցառումների արդյունավետության բարձրացում, անասնապահության կերի բազայի զարգացում,
- գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացում և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացում,
- գյուղատնտեսական ռիսկերի մեղմացում,
- ագրարային ոլորտի վարկավորման համակարգի կատարելագործում,
- ագրարային ոլորտի խորհրդատվական համակարգի բարելավում,
- գյուղատնտեսության հաշվառման համակարգի կատարելագործում:

Վերը նշված խնդիրների լուծումը կնպաստի գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը:

2015 թվականին գյուղատնտեսության ոլորտում բյուջետային ծրագրերը շարունակվել են ուղղվել հետևյալ կոնկրետ նպատակների իրականացմանը.

- հողերի բերրիության պահպանում և բարձրացում,
- բույսերի վնասակար օրգանիզմների բազմացման, զարգացման ու տարածման հետազոտությունների և դրանց դեմ պայքարի աշխատանքների կազմակերպման միջոցով դրանց տարածման շրջանակների նվազեցում և հետագա կանխարգելում,
- գյուղատնտեսությունում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցով դրանց մատչելիության բարձրացում,

- գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների (հանքային պարարտանյութ, դիզելային վառելանյութ) մատչելիության բարձրացում,
- կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պահպանություն և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ պատվաստումների իրականացում, տոհմասելեկցիոն աշխատանքների կազմակերպում,
- պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացում,
- անտառային տնտեսության զարգացում, անտառպահպանության արդյունավետության բարձրացում՝ անտառվերականգնման աշխատանքների ծավալների մեծացում, անտառշինական նախագծերի կազմում, անտառային տարածքներում բույսերի պաշտպանության կենտրոնացված միջոցառումների իրականացում,
- գյուղատնտեսությունում կայունացման և հետագա զարգացման նախադրյալների ստեղծում:

Սոցիալական պաշտպանություն

2015 թվականն առանձնացավ սոցիալական պաշտպանության բնագավառում նորաստեղծ համակարգերի կառուցվածքային ու բովանդակային փորձարկմամբ, գործող համակարգերի կատարելագործմամբ ու ամրապնդմամբ: Չնայած համաշխարհային տնտեսության աննպաստ զարգացումներին, այնուամենայնիվ, հաջողվեց երկրում աղքատությունը նվազեցնել՝ 2013 թվականի 32%-ից 2014 թվականին հասցնելով 30%-ի, ինչում իրենց զգալի դերն ունեցան սոցիալական պաշտպանության ծրագրերը:

Կենսաթոշակային ոլորտում հիմնական թիրախը շարունակում է մնալ կենսաթոշակառուների շրջանում աղքատության նվազեցումը: Արմատապես փոխվել է զբաղվածության ոլորտում վարվող պետական քաղաքականությունը՝ հիմքում դնելով աշխատանք փնտրող անձանց աշխատանքով ապահովելու և աշխատանքի միջոցով եկամուտ ստանալու գաղափարախոսությունը:

Հաշմանդամության բնագավառում ջանքերը հիմնականում ուղղված են եղել սահմանված իրավունքների իրացմանը և հավասար հնարավորությունների ապահովմանը, երեխաների իրավունքների մասով՝ այլընտրանքային խնամքի ծառայությունների զարգացման միջոցով երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանը:

Շարունակվել են ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրման, դրանց որակական աճի ու ամրապնդման աշխատանքները:

Աշխատանք և զբաղվածություն

2015 թվականին շարունակվել են զբաղվածության ոլորտում իրականացվող օրենսդրական բարեփոխումները: Փոփոխություններ են կատարվել ինչպես «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում, այնպես էլ վերջինիս կիրակումն ապահովող՝ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N534-Ն որոշման մեջ, ինչը պայմանավորված է զբաղվածության ոլորտը կարգավորող օրենսդրության կիրարկման ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրների լուծման, աշխատաշուկայում անմրցունակ անձանց իրավունքների շրջանակն առավել հստակեցնելու անհրաժեշտությամբ: Փոփոխություններով ամբողջականացվել են զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի ցուցանիշները, ըստ տարածքային կենտրոնների՝ կանոնակարգվել է ծրագրերի բաշխման գործընթացը, պարզեցվել և բարելավվել են որոշ ծրագրերի իրականացման ընթացակարգերը, սահմանվել են ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված երկու նոր ծրագրի իրականացման մեխանիզմները՝ ուղղված անասնապահությամբ (տավարաբուծություն, ոչխարաբուծություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն) զբաղվելու համար աջակցության տրամադրմանը, ինչպես նաև վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպմանը:

Տավուշի մարզում գործազրկության միջին հանրապետականից բարձր մակարդակով, սահմանամերձ համայնքների մեծ թվաքանակով, վերջին շրջանում ակտիվացած ռազմական գործողությունների հետևանքով մարզի համայնքներին հասցված նյութական վնասներով պայմանավորված՝ ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 15-ի N 1202-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Տավուշի մարզում վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման փորձնական ծրագրի իրականացման կարգը, որը հնարավորություն է տվել մարզի 44 սահմանամերձ համայնքի շուրջ 400 գործազուրկի ընդգրկվելու վարձատրվող հասարակական աշխատանքներում:

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով ներդրված զբաղվածության քաղաքականության նոր մոդելի ներքո ներկայումս շարունակում է գործել զբաղվածության պետական կարգավորման 13 ակտիվ ծրագիր, որոնցից հինգը ներդրվել է 2014 թվականի երկրորդ կիսամյակում:

2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում հաշվառվել է աշխատանք փնտրող 89 հազար անձ, որոնց թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 22.6%-ով: Գործազուրկի կարգավիճակ ստացած անձանց թիվը կազմում է 76.7 հազար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 16.4%-ով: Կանանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվում կազմում է 69.2%: Գործազուրկների 3.3%-ը (2492 անձ) հաշմանդամություն

ունեցող անձինք են, իսկ 23.9%-ը (18372 անձ)՝ 16-29 տարեկան երիտասարդներ: Աշխատաշուկայում անմրցունակ անձի կարգավիճակ ստացած գործազուրկների թիվը կազմում է 66796: 2015 թվականին տարածքային կենտրոնները հավաքագրել են 7225 թափուր աշխատատեղ, որոնցից 346-ը նոր ստեղծվող են: Թափուր աշխատատեղի հայտ ներկայացրած գործատուների թիվը 3215 է: 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տարածքային կենտրոններում առկա թափուր աշխատատեղերի թիվը կազմում է 1770:

2015 թվականի զբաղվածության պետական ծրագրով նախատեսված էր ծրագրերում ընդգրկել 13938 անձ, փաստացի ընդգրկվել է 11107 անձ: Դիտարկվող ժամանակահատվածում տարածքային կենտրոնների միջնորդությամբ զբաղված է դարձել աշխատանք փնտրող 16598 անձ, որոնցից 6285-ն ապահովվել է սեզոնային, 398-ը՝ ժամանակավոր աշխատանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տարածքային կենտրոնների միջնորդությամբ զբաղված դարձած անձանց թիվն աճել է 9.4%-ով:

Մասնագիտական կողմնորոշման բնագավառում 2015 թվականին միջոցառումներ են իրականացվել երեք հիմնական ուղղությամբ՝ մեթոդաբանական ձեռնարկների մշակում, կադրերի վերապատրաստում և իրազեկում: 2015 թվականի ընթացքում վերապատրաստվել է մասնագիտական կողմնորոշման համակարգի 300 մասնագետ: Սեմինար-քննարկումների միջոցով իրականացվել են իրազեկման աշխատանքներ, որոնց մասնակցել է 300 անձ:

2015 թվականի հունիսի 22-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով լուծում է տրվել իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրներին, հստակեցվել են ՀՀ աշխատանքային օրենսդրության ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք տվող առանձին դրույթներ, ինչպես նաև առանձին դրույթներ համապատասխանեցվել են Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի և ԱՄԿ-ի կոնվենցիաների պահանջներին:

Մշակվել և ընդունվել է ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1106-Ն որոշումը, որով ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք է տրվել նաև գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների գիտական աշխատողներին:

Հստակեցումներ են կատարվել սոցիալական փաթեթի հատկացման գործընթացում:

Կանոնակարգվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող բյուջետային հիմնարկների աշխատողների՝ բարձրլեռնային վայրերում աշխատանքի համար լրացուցիչ վարձատրություն ստանալուն առնչվող խնդիրները:

2015 թվականի օգոստոսին ՀՀ կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև կնքվել է Հանրապետական նոր կոլեկտիվ պայմանագիրը, որի շրջանակներում շարունակվել է համագործակցությունը սոցիալական գործընկերության հանրապետական մակարդակում:

Կենսաթոշակային ապահովություն

ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսված՝ կենսաթոշակառուների շրջանում աղքատության նվազեցման շարունակական ծրագրեր իրականացնելու միջոցառումների շրջանակում 2015 թվականի հունվարի 1-ից բարձրացվեցին աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը՝ նախկին 14000 դրամի փոխարեն 16000 դրամ, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքները. առաջին տասը տարվա համար՝ 800 դրամ, տասը տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար՝ 500 դրամ (համապատասխանաբար՝ 700 դրամի և 450 դրամի փոխարեն): Արդյունքում՝ նախորդ տարվա համեմատությամբ միջին աշխատանքային կենսաթոշակի չափն ավելացավ 5000 դրամով (մոտ 14 տոկոսով)՝ կազմելով շուրջ 41000 դրամ:

2015 թվականի հունվարի 1-ից սահմանվեցին ծերության նպաստի չափը՝ 16000 դրամ (նախկին 14000 դրամի փոխարեն), հաշմանդամության նպաստի չափերը՝ 1-ին խմբի հաշմանդամի և հաշմանդամ երեխա ճանաչված անձի համար՝ 21500 դրամ (նախկին 19600 դրամի փոխարեն), 2-րդ խմբի հաշմանդամի համար՝ 19000 դրամ (նախկին 16800 դրամի փոխարեն), 3-րդ խմբի հաշմանդամի համար՝ 16000 դրամ (նախկին 14000 դրամի փոխարեն), կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը՝ 16000 դրամ (նախկին 14000 դրամի փոխարեն), իսկ երկու ծնողին կորցրած՝ 18 տարին չլրացած երեխայի (կամ առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակի) դեպքում՝ 80000 դրամ (նախկին 70000 դրամի փոխարեն):

Զինվորական կենսաթոշակների չափերը բարձրացվեցին 2015 թվականի հուլիսի 1-ից՝ զինվորական կեսնաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը սահմանվեց 16000 դրամ (14000 դրամի փոխարեն), իսկ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը՝ 1500 դրամ (1300 դրամի փոխարեն): Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի միջին չափը նախորդ տարվա համեմատ ավելացավ մոտ 15%-ով:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվառված է եղել 525391 կենսաթոշակառու և սոցիալական նպաստ ստացող, որից 463107-ը՝ աշխատանքային կենսաթոշակառու, 62284-ը՝ նպաստառու, 2318-ը՝ շարքային կազմի զինծառայության հետ կապված կենսաթոշակ ստացող (թիվը չի ներառում

ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության (ՆԳՆ), ՀՀ դատախազության, այլ համակարգերի կենսաթոշակառուներին), 171-ը՝ պետական պաշտոն զբաղեցրած անձինք:

Առանձին կատեգորիայի կենսաթոշակառուների (զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների) սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու նպատակով, 2015 թվականի հունվարի 1-ից Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին մինչ այդ նշանակված 2 կենսաթոշակից մեկի՝ զինվորական կենսաթոշակի փոխարեն նշանակվել է պարգևավճար, որի չափը նախկին կենսաթոշակի չափը գերազանցել է հիմնականում 40-50 տոկոսով: Արդյունքում՝ շուրջ 6300 անձանց զինվորական կենսաթոշակի փոխարեն վճարվել է դրա չափն էականորեն գերազանցող պարգևավճար: Միաժամանակ սահմանվեց, որ զոհված զինծառայողի ընտանիքի՝ աշխատանքային կենսաթոշակ ստացող անդամը պարգևավճարի իրավունք է ձեռք բերում՝ անկախ աշխատելու հանգամանքից: Այս դեպքում վերականգվել է շուրջ 76 շահառուի պարգևավճար ստանալու իրավունքը:

2015 թվականի մայիսի 1-ից կրկնապատկվել է Հայրենական մեծ պատերազմի վետերանների ամենամսյա պատվովճարի չափը՝ 25000 դրամից դառնալով 50000 դրամ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ 2015 թվականի ապրիլի 1-ից քառապատկվել է Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայի այլ վայրերում մինչև 1915 թվականը (ներառյալ) ծնված և Հայոց ցեղասպանությունը վերապրած հայերին տրվող ամենամսյա դրամական օգնության չափը՝ 25000 դրամից դառնալով 100000 դրամ:

Օրենսդրական փոփոխություններին զուգահեռ՝ կատարելագործվում են կենսաթոշակների և նպաստների նշանակման և վճարման գործընթացները: Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում և այլ պետական մարմինների կողմից վարվող տեղեկատվական համակարգերում առկա տեղեկությունների պարբերական համադրումներով և համապատասխան միջոցառումների ձեռնարկմամբ հնարավորինս կանխվում են ոչ իրավաչափ վճարումները և միջոցներ են ձեռնարկվում ավելի վճարված կենսաթոշակների գումարները ՀՀ պետական բյուջե վերադարձնելու համար:

Այս միջոցառումների և օրենսդրական փոփոխությունների շնորհիվ ձևավորված խնայողությունների հաշվին հնարավոր եղավ ոչ միայն ապահովել մեկ միլիարդ դրամից ավելի խնայողություն, այլև պարգևավճարների և պատվովճարների չափերի բարձրացումները ֆինանսավորել հատկացված բյուջետային ռեսուրսների շրջանակում:

Միաժամանակ, կատարվում են տարբեր տեղեկատվական համակարգերի (այդ թվում՝ այլ պետական մարմինների կողմից վարվող) միջև տվյալների առցանց փոխանակումն ապահովելու աշխատանքներ, ինչն էականորեն կբարելավի շահառուներին մատուցվող ծառայությունների որակը:

Սոցիալական աջակցություն

Պետական նպաստներ

2015 թվականին պետական նպաստների բնագավառում կատարված փոփոխությունները նույնպես նպատակ են ունեցել մեծացնել ծրագրերի հասցեականությունը՝ պահպանելով սոցիալական աջակցության տրամադրման սկզբունքները:

Շարունակվել են պետական նպաստների, այդ թվում՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում առցանց եղանակով ստացվող տվյալների շրջանակի ընդլայնման աշխատանքները: Նշվածն արտացոլվել է այդ համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, ինչպես նաև նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում:

Այսպես, եթե 2011 թվականի դեկտեմբերին ընտանեկան նպաստ էր ստանում շուրջ 84000 ընտանիք, ապա 2015 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում նպաստառու (ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող) ընտանիքների թիվը կազմել է շուրջ 106300:

2015 թվականին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված շուրջ 136000 ընտանիքից ընտանեկան կամ սոցիալական նպաստ է ստացել ամսական, միջին հաշվով, 105408-ը՝ հաշվառված ընտանիքների շուրջ 77.6%-ը, իսկ եռամսյակային հրատապ օգնություն, միջին հաշվով, 8598 ընտանիք կամ հաշվառվածների 6.3%-ը, նպաստի միջին չափը կազմել է 30350 դրամ: Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին տրվել է միանվագ դրամական օգնություն. երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 5181 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 10903 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան կապակցությամբ՝ 170 ընտանիքի:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ է տրվել ամսական շուրջ 13000 ընտանիքի: Հստակեցվել են մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստին առնչվող իրավակարգավորումները՝ նպատակ ունենալով նաև միասնականացնել երեխայի ծննդյան կապակցությամբ տրամադրվող նպաստների նշանակման և վճարման գործընթացների իրականացման գործիքակազմերը:

Ժողովրդագրական վիճակի բարելավման նպատակով 2015 թվականին շարունակվել են նախորդ տարի սկսված օրենսդրական փոփոխությունները՝ ուղղված երեխայի ծննդյան

կապակցությամբ տրամադրվող պետական աջակցության ձևերի ու ծավալների արդյունավետության բարձրացմանը:

Մասնավորապես, էական փոփոխություններ են կատարվել երեխայի ծննդյան միանվագ վճար նշանակելուն և վճարելուն առնչվող իրավահարաբերություններում: Արդյունքում՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակվում է նաև մահացած երեխա ծնվելու դեպքում, վերացվել է նպաստ նշանակելու համար ծնողի և նոր ծնված երեխայի՝ ՀՀ-ում նույն բնակության վայրում համատեղ հաշվառված լինելու պահանջը, պարզեցվել են նպաստ նշանակելու համար դիմում ներկայացնելու, նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու կարգերը: Հիմք ընդունելով դրամագլխի օգտագործման ուղղությունների, ինչպես նաև քաղաքացիների դիմումների վերլուծությունները՝ ընդլայնվել են ընտանեկան դրամագլխի միջոցներն օգտագործելու ուղղությունները՝ դրանք կարող են օգտագործվել հաշվետիրոջ ծնողին կամ որդեգրողին գյուղատնտեսության ոլորտում տրամադրված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում բնակարան կամ բնակելի տուն, կամ այլ անշարժ գույք գնելու համար:

<u>Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների փոխհատուցում</u>

2014 թվականի ապրիլի 23-ի ՀՀ կառավարության N 460-Ն որոշման համաձայն՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման իրավունք է տրվել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, «0»-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝ մինչև 1931թ. դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ծնված անդամներին (վճարվել է 3516 ավանդատուի), ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակից անձանց (վճարվել է 294 ավանդատուի), մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում՝ բնակչության պետական ռեգիստրում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված անձանց (վճարվել է 4441 ավանդատուի):

<u>Սոցիալական բնակարաններ</u>

Մինչև 2015թ. սեպտեմբերի 10-ը շարունակվել է ՀՀ կառավարության 2014թ. օգոստոսի 1-ի N 894-Ն որոշման համաձայն բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող սոցիալապես

անապահով և հատուկ խմբերին դասված անձանց կացարաններ տրամադրելու գործընթացը, որից հետո նշված որոշումն ուժը կորցրած է ճանաչվել, և այս գործընթացը շարունակվել է ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման պահանջներին համապատասխան: Տարվա ընթացքում կացարաններ են տրամադրվել սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված 6 անձի:

Ինտեգրված սոցիալական ծառայություններ

2015 թվականին շարունակվել է մեկ պատուհանի սկզբունքով գործող 19 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՀՍԾՏԿ) աշխատանքը, որոնք տեղակայվել են վերանորոգված, համապատասխան տեղեկատվական համակարգերով զինված շենքերում: Անհրաժեշտ աշխատանքներ են տարվում (համապատասխան տարածքներ ամրացնելու, անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ հատկացնելու, նախագծանախահաշվային, վերանորոգման և այլն) ևս շուրջ 15 ՀՍԾՏԿ-ներ տեղակայելու ուղղությամբ: ՀՍԾՏԿ-ն դիմումներն ընդունում է միասնական ընդունարանում, ունի փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման իրավական հիմքի ապահովման նպատակով 2015 թվականին ընդունվել են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող՝ ՀՀ կառավարության շուրջ երկու տասնյակ որոշում և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամաններ:

Շարունակվում են ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ մեթոդաբնությունն ամբողջականացնելու աշխատանքները:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցեր

Հաշմանդամության բնագավառում իրականացրած քաղաքականությունն ու պետական նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքում լիակատար ներառմանը՝ հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ ապահովելու միջոցով:

Շարունակվում են հաշմանդամության սահմանման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված մոդելի ներդրման աշխատանքները:

Բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի, դրա արդյունքում կայացրած որոշումների օբյեկտիվությունը և որոշման նկատմամբ վստահությունը, ինչպես նաև դրանց

հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով, համապատասխան իրավական ակտերով, բժշկասոցիալական փորձաքննության գործընթացին մասնակցելու հնարավորություն են ստանում ինչպես ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այնպես էլ փորձաքննություն անցնող անձի ընտրած բուժող բժիշկը կամ այլ բժիշկ-մասնագետներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման ուղղությամբ միջոլորտային համագործակցությունն ամրապնդելու և վերականգնողական անհատական ծրագրում ընդգրկված՝ հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների արդյունավետությունը և հասցեականությունը գնահատելու և բարձրացնելու նպատակով մշակվել և 2015 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրի կազմման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 1535-Ն որոշումը:

2015 թվականին իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ, սայլակներ, լսողական սարքեր և այլ վերականգնողական պարագաներ: Շարունակվել է տեսողությունը կորցրած անձանց համար հատուկ տառատեսակներով գրքերի և տետրերի տպագրման և «Խոսող գրքերի» ձայնագրության ծրագիրը:

«Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնում բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման ծառայություն է ստացել 818 անձ:

Համաֆինանսավորման միջոցով պետական աջակցություն է ցուցաբերվել «Փրկություն» հասարակական կազմակերպությանը՝ մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող 50 դեռահասի և երիտասարդի սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար:

2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառվել է հաշմանդամություն ունեցող 200084 անձ, որից 7903-ը՝ հաշմանդամ երեխա: 2015 թվականին առողջապահական կազմակերպություններն առաջին անգամ բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու նպատակով ուղեգրել են 17593 անձի, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 46-ով: Նրանց 4.2%-ի համար սահմանվել է հաշմանդամության 1-ին խումբ, 23.1%-ի համար՝ 2-րդ խումբ, 66.3%-ի համար՝ 3-րդ խումբ, իսկ 6.4%-ի համար՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ: Առաջին անգամ հաշմանդամ է ճանաչվել 15667 անձ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 14-ով: Առաջնակի մերժումների տոկոսը կազմել է 10.9%, որը նախորդ տարվա համեմատ աճել է 0.3 տոկոսային կետով: Վերափորձաքննվել է 55580 անձ (նախորդ տարվա

համեմատ նվազել է 713-ով), որոնց 2.9%-ը վերափորձաքննությամբ հաշմանդամ չի ճանաչվել, որը նախորդ տարվա համեմատ աճել է 0.2 տոկոսային կետով:

2015 թվականին շարունակվել են տարեցների սոցիալական պաշտպանության բարելավման աշխատանքները:

1210 կենսաթոշակառու շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ է ստանում 5 տուն-ինտերնատում, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 120 անձ շուրջօրյա խնամքի ծառայություններ է ստանում 2015 թվականի հուլիսի 1-ից գործող՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց «Ձորակ» խնամքի կենտրոնում, իսկ հանրապետության բոլոր տուն-ինտերնատներում (5 պետական և 4 ոչ պետական), անկախ իրավական-կազմակերպական ձևից, խնամվում է 1350 կենսաթոշակառու:

Ավարտվել է Երևանի N 1 տուն-ինտերնատի՝ անկողնային հիվանդների նոր բաժանմունքի շինարարությունը: Բոլոր տուն-ինտերնատներում տարվա ընթացքում կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Երևան քաղաքում տնային պայմաններում սպասարկվում է 1500 միայնակ տարեց ու հաշմանդամ քաղաքացի: Տնային պայմաններում և ցերեկային խնամքի կենտրոններում, անկախ կազմակերպաիրավական ձևից, սոցիալական սպասարկման ծառայություններ է ստանում շուրջ 6000 կենսաթոշակառու:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 30 անձ սոցիալ-հոգեբանական վերականգնման ծառայություններ է ստանում Վարդենիսի հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում:

Սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ են պատվիրակվել «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ին և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին, համապատասխանաբար՝ 4200 և 55 շահառուի համար:

Համաֆինանսավորվել է հայ-դանիական «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ ժամանակավոր կացարանում անօթևան մարդկանց շուրջօրյա խնամքի տրամադրման ծրագիրը, որի շրջանակներում ապաստան և սնունդ է տրամադրվում շուրջ 100 անօթևան մարդու:

<u>Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր</u>

2015 թվականին շարունակվել է «Հայաստանի հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագրով» նախատեսված միջոցառումների իրականացումը: Մասնավորապես՝ կատարվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավման և սոցիալական պաշտպանության երաշխիքների

ապահովման, նրանց մատուցվող այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացման, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում մատուցվող ծառայությունների որակի բարելավման աշխատանքներ: Այդ նպատակով մշակվել են մի շարք օրենսդրական նախագծեր (ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի որոշումներ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամաններ):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող՝ երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատությունում (մանկատներում) իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 660 երեխայի խնամքը, այդ թվում՝ շուրջ 450 երեխայի խնամքը՝ երեք հատուկ (մասնագիտացված) հաստատությունում: Թեև երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում շարունակում է նվազել խնամվող երեխաների թիվը, այդուհանդերձ սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով պայմանավորված՝ ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը հատուկ (մասնագիտացված) հաստատություններում:

Երեխաների խնամքի և պաշտպանության 8 գիշերօթիկ հաստատությունում մինչև 2015 թվականի հուլիս ամիսը խնամվել է սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ շուրջ 700 երեխա, որոնց խնամքը տարանջատվում է կրթությունից: Բարեփոխումներով պայմանավորված՝ 2015 թվականի հուլիս ամսից Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունը վերակազմակերպվել է «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնի: Ներկայումս 7 հաստատությունում շուրջօրյա խնամք է ստանում 630 երեխա:

Երեխաների սոցիալական հոգածության ցերեկային 3 կենտրոնները ծառայություններ են տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, 6-18 տարեկան շուրջ 270 երեխայի և նրանց ընտանիքներին: «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության՝ երեխաների 4 ցերեկային կենտրոնում (Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ) ծառայություններ են մատուցվել դժվար իրավիճակում հայտնված 254 երեխայի:

«Երևանի երեխաների «Զատիկ» սոցիալական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, 3-18 տարեկան շուրջ 15 երեխայի տրամադրել է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք:

Առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 20 երեխա խնամվել է խնամատար ընտանիքներում:

Հաստատություններից երեխաներին կենսաբանական ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում և կանխարգելում) միջոցառման շրջանակում ՀՀ Լոռու մարզում, 2014 թվականից՝

նաև ՀՀ Շիրակի մարզում, կենսաբանական ընտանիք է վերադարձել 40 երեխա, կանխարգելվել է 60 երեխայի մուտքը հաստատություններ: Միջոցառման շրջանակում ընտանիքներին տրամադրվել է բնաիրային օգնության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ և կոշիկ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:

«Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի շրջանակներում «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի 18-23 տարեկան 12 շրջանավարտի տրամադրվել է միանվագ դրամական օգնություն, իրականացվել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ, ուսուցում, վերապատրաստում, բժշկական և իրավաբանական օգնության տրամադրման աջակցություն:

Տարվել են նաև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման, թրաֆիքինգի կանխարգելման և դրա զոհերին աջակցելու աշխատանքներ:

Ժողովրդագրություն

2015 թվականին կատարած աշխատանքները բխել են ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և դրա իրականացումն ապահովող միջոցառումների դրույթներից՝ հաշվի առնելով անցած տարիներին հանրապետությունում արձանագրված ժողովրդագրական զարգացումները:

ՀՀ ժողովրդագրական իրավիճակը բնութագրող ցուցանիշները շարունակում են մնալ մտահոգիչ և խնդրահարույց: 2015 թվականին ժողովրդագրական զարգացման հիմնական ցուցանիշները դրսևորել են տարբեր միտումներ: Այսպես, նշված ժամանակահատվածում հանրապետության մշտական բնակչությունը նվազել է 12.0 հազարով, գրանցվել է 41815 ծնունդ, որը 1216 ծնունդով պակաս է 2014 թվականին գրանցված ցուցանիշից: Ծնունդների թվի նվազմանը զուգահեռ՝ բնակչության բնական աճի մյուս բաղադրիչները դրսևորել են հետևյալ միտումները՝ արձանագրվել է մահացության 27835 դեպք (աճ 121-ով), ամուսնության 17603 դեպք (նվազում 1309-ով), ամուսնալուծության 3669 դեպք (նվազում 827-ով):

Հաշվի առնելով ժողովրդագրական ոչ բարենպաստ զարգացումները՝ մշակվել է «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2016-2018թթ. ազգային ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որում ներառված միջոցառումները միտված են լինելու՝

- ծնունդների նյութական խրախուսմանը,
- մահացության, այդ թվում՝ մանկական և մայրական մահացության, կրճատմանը,

- բնակարանի կարիք ունեցող անձանց բնակարանով ապահովմանը՝ բնակարանով ապահովման պետական նպատակային ծրագրի (սոցիալական բնակարանային ֆոնդի) ներդրման և իրականացման միջոցով,
- տարիքային տարբեր խմբերին պատկանող հղի կամ մայրացած կանանց աջակցությանը,
- երիտասարդ և բազմազավակ ընտանիքների աջակցության ու զարգացման այլընտրանքային մոտեցումների ու տարբերակների ներդրմանը՝ ժողովրդագրական զարգացման ազգային հիմնադրամի ստեղծմամբ:

Ժողովրդագրական քաղաքականության համար գիտահետազոտական հենքի ապահովման նպատակով կատարվել է «Հայաստանի Հանրապետությունում ամուսնալուծությունների և դրանց հնարավոր պատճառների հետազոտություն» ուսումնասիրությունը:

Տարածքային կառավարում

Գնահատելով համայնքների վերաբերյալ տեղեկատվական բազայի կարևորությունը՝ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ մարզպետարանների միջոցով հավաքվել են համայնքների վերաբերյալ տեղեկությունները, ամփոփվել և մուտքագրվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից սպասարկվող Armdevinfo էլեկտրոնային ծրագիր: Իրականացված աշխատանքների արդյունքում յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ էլեկտրոնային բազան տեղադրվել է http://www.armdevinfo.am/ կայքում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ԵՄ-ի ֆինանսավորմամբ «Աջակցություն տարածքային կառավարման նախարարությանը տարածքային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում» ծրագիրը: Կատարված աշխատանքների արդյունքում տարածքային կառավարման և զարգացման վարչության աշխատակիցների կարողությունները զարգացնելու նպատակով անցկացվել են վերապատրաստումներ, ինչպես նաև մշակվել է տարածքային զարգացման նոր ռազմավարությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 38 արձանագրային որոշման պահանջների համաձայն՝ ՀՀ կառավարության հավանությանն են ներկայացվում յուրաքանչյուր մարզի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերը: Այս առումով հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացվել ՀՀ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման երկրորդ՝ 2015-2018 թվականների քառամյա ծրագրերը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ մարզերում մի շարք հրատապ խնդիրների լուծման նպատակով իրականացվել է շուրջ 300 ծրագիր, որից 94-ը՝ քաղաքային, 206-ը՝ գյուղական համայնքներում: Նշված ծրագրերի շրջանակներում իրականացվել են հիմնականում դպրոցաշինության, ճանապարհաշինության և հրատապ լուծում պահանջող այլ միջոցառումներ: Մասնավորապես՝ իրականացվել են շուրջ 28 դպրոցաշինության, 38 ճանապարհաշինության, 46 նախադպրոցական հաստատությունների վերանորոգման, 20 մշակութային, 39 ջրամատակարարման, 28 գազամատակարարման և այլ ծրագրեր:

Մշակվել են ՀՀ Գեղարքունիքի և ՀՀ Տավուշի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման 2016-2019 թվականների քառամյա ծրագրերը:

Վարչատարածքային բարեփոխումների իրականացման գործընթացի շրջանակներում 2015 թվականին մեկնարկեց համայնքների խոշորացման գործնական փուլը՝ մայիսի 17-ին ՀՀ Լոռու մարզի Թումանյան, ՀՀ Սյունիքի մարզի Տաթև, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքային փնջերում անցկացվեցին տեղական հանրաքվեներ, որոնց արդյունքները թույլ տվեցին ենթադրել, որ անհրաժեշտ է շարունակել համայնքների խոշորացման գորընթացը: Այդ առումով մշակվել են մի շարք իրավական ակտերի նախագծեր: Նախագծերի փաթեթը ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է 2015 թվականի նոյեմբերի 24-ին:

Վարչատարածքային բարեփոխումների գործընթացի ընթացքում իրականացվել և շարունակվելու է իրականացվել համագործակցությունը միջազգային տարբեր կազմակերպությունների հետ:

Առողջապահություն

<u>Բնակչության առողջության առաջնային պահպանում</u>

Որպես առաջնահերթություն շարունակվել է առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ոլորտի զարգացումը՝ որպես առողջապահության համակարգի բարեփոխումների հիմք և բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության առավել մատչելի հիմնական օղակի:

Շարունակվել է շեշտը դրվել ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի դերի բարձրացման, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացման, բնակչության համար բուժօգնության այդ մակարդակում բժշկական օգնություն ստանալու մատչելիության ապահովման ու որակի բարելավման, ԱԱՊ ծառայություններ մատուցողների կողմից որակյալ բուժօգնության տրամադրման խրախուսման և ըստ կատարողականի փոխհատուցման մեխանիզմների ներդրման վրա:

Արդյունքում իրականացվել է՝

- ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում անվճար բուժօգնության և ծառայությունների մատուցման գործընթացի շարունակականության ապահովում՝ այն բնակչության համար առավել մատչելի դարձնելու նպատակով,
- առաջնային օղակում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի վերահսկում և բարելավում,
- առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավում: Այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատում,
- բնակչի կողմից առողջության առաջնային ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության գործընթացի շարունակականության ապահովում և դրա հիման վրա ընտանեկան բժկշության անկախ պրակտիկաների ստեղծում:

Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով 2015 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի շրջանակում իրականացվող ՈՎՀ (Ոչ վարակիչ հիվանդությունների) սքրինինգային ծրագիրը, որի շրջանակում 35-ից 68 տարեկան ՀՀ բոլոր քաղաքացիները հնարավորություն ունեն անվճար հետազոտվելու սպասարկող առողջության առաջնային պահպանման բժշկական հաստատություններում՝ զարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման ու ախտորոշման, իսկ 30-ից 60 տարեկան բոլոր կանայք՝ արգանդի պարանոցի նախաքաղցկեղի վաղ ախտորոշման և քաղցկեղի կանխարգելման նպատակով:

Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, վաղ հայտնաբերման նպատակով 2015 թվականից սկսած սոցիալական փաթեթի շահառուները իրենց սպասարկող պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անցնում են տարեկան պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն, որը ներառում է արտահիվանդանոցային պայմաններում իրականացվող մի շարք բժշկական ծառայություններ:

2015 թվականին հանրապետությունում գործել են 5 ընտանեկան բժշկության անհատական և խմբային անկախ պրակտիկաներ, որոնք մատուցել են առողջության առաջնային պահպանման ծառայություններ պետական պատվերի շրջանակներում:

Շտապ բուժօգնության ծառայության բարելավում

Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում բնակչությանը ցուցաբերվող շտապ և անհետաձգելի բուժօգնության ծառայությունների մատչելիության, հասանելիության, որակի և արդյունավետության ապահովման նպատակով 2015 թվականին մշակվել և շրջանառության մեջ է դրվել Հայաստանի Հանրապետության բնակչության շտապ բժշկական օգնության և սպասարկման 2016-2020 թվականների ռազմավարության նախագիծը:

Կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում շտապ բժշկական օգնության ծառայության կողմից ցուցաբերվող շտապ և անհետաձգելի բժշկական օգնության ու սպասարկման կանոնակարգման նպատակով հաստատվել են շտապ բժշկական օգնության ծառայության կողմից ցուցաբերվող շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու վերաբերյալ թվով 15 գործելակարգեր:

Մոր և մանկան առողջության պահպանում

2015 թվականի ընթացքում շարունակվել է 2008 թվականին ներդրված ծննդօգնության պետական հավաստագրի ծրագիրը, որը Հայաստանի Հանրապետությունում հղիության ընթացքի և ծննդաբերության հետ կապված բժշկական օգնությունն ու սպասարկումը դարձրեց անվճար, պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, ինչը նպաստեց որակական ցուցանիշների բարելավմանը:

Նախածննդյան հսկողություն և հետազոտություն է ապահովվել շուրջ 75 հազ. հղիների նկատմամբ, ծննդալուծում է իրականացվել 42118 դեպքում, շուրջ 18000 բարձր ռիսկի խմբի հղի ստացել է ստացիոնար հետազոտություն և բուժում:

Ծննդօգնության ցուցանիշների բարելավումը հիմնականում պայմանավորված է եղել Ծննդօգնության պետական հավաստագրի և ուղեգրման համակարգի ներդրմամբ, ինչպես նաև պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման տրամադրման արտահիվանդանոցային և հիվանդանոցային չափորոշիչների կիրառման, մարզային բժշկական կենտրոնների արդիականացման, ապացուցահեն շուրջ 20 ուղեցույցի, գործելակարգերի ներդրման:

Արագ արձագանքման արտագնա ծառայության միջոցով 2015 թվականի ընթացքում անհետաձգելի մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնություն է տրամադրվել մարզերի ծննդօգնության հիմնարկներին՝ կատարելով 72 կանչի սպասարկում, որն էլ որոշակիորեն նպաստել է մայրական մահացության դեպքերի կրճատմանը:

Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, մասնավորապես արգանդի վզիկի քաղցկեղի կանխարգելման ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի հետ համատեղ 2015 թվականի ընթացքում իրականացվել է շուրջ 55000 ՊԱՊ թեստի հետազոտություն:

2015 թվականին ևս իրականացվել է ծննդօգնության հաստատությունների՝ նորածնային ծառայությունների սարքավորումներով հզորացման ծրագիրը. մարզային շուրջ 10 ծննդօգնության բժշկական հաստատություն «ՎԻՎԱ-ՍԵԼ ՄՏՍ» կազմակերպության օժանդակությամբ հագեցել են նորագույն սարքավորումներով:

Ընդլայնվել են բնածին ախտաբանությունների վաղ հայտնաբերմանն ուղղված նորածնային սքրինինգ ծրագրերը, հիպոթիրեոզի և ֆենիլկետոնուրիայի սքրինինգը տարածվել է հանրապետության ողջ տարածքում, լսողության նորածնային սքրինինգում ընդգրկվել են մարզային/տարածաշրջանային 6 ծննդատուն, իրականացվում է անհաս նորածինների ռետինոպաթիայի սքրինինգային ծրագիր քաղաքի ծննդօգնության 3-րդ մակարդակի բժշկական կազմակերպություններում և գործում է երեխաների կուրության կանխարգելման գերազանցության կենտրոն:

ՌԴ առողջապահության նախարարի հրավերով մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում աշխատող 20 մասնագետներ հրավիրվել են Մոսկվա՝ «Մանկական մահացության իջեցման ուղիները» ուսուցման և գործնական հմտությունների կատարելագործման շրջանակներում վերապատրաստում անցնելու համար:

Միջազգային փորձագետների, հասարակական կազմակերպությունների հետ համատեղ շարունակվել են «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները» հետազոտության արդյունքների քննարկումները և միջոցառումների պլանի մշակումը՝ ուղղված նորածինների սեռերի անհամամասնության նվազեցմանը:

Մարզային բժշկական կազմակերպություններում չիրականացվող մասնագիտացված բժշկական օգնությունը բնակչությանը հասանելի դարձնելու, տեղերում ցուցաբերվող բժշկական օգնության որակը բարձրացնելու, ինչպես նաև բուժման շարունակականությունն ապահովելու նպատակով Երևանում տեղակայված 3-րդ մակարդակի ծննդատները շարունակում են իրականացնել կազմակերպամեթոդական և բուժական օգնություն մարզային բժշկական կենտրոններին:

Որոշակի աշխատանք է կատարվել օրենսդրության բարելավման ուղղությամբ: Ընդունվել է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (15.05.15թ. ՀՕ-24-Ն):

Մշակվել և շրջանառության մեջ են դրվել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի մի շարք նախագծեր՝ ուղղված սուրագատ մոր և պտղի սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման հարցերի կարգավորմանը: Մշակվել և հաստատվել է «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագիրը»:

Հաստատվել է «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով շուրջ 200 անպտուղ զույգ հետազոտվել և բուժվել է պետական պատվերի շրջանակներում:

«Պտղի զարգացման արատների կանխարգելման, վաղ հայտնաբերման» ծրագրի շրջանակներում մշակվել և հաստատվել են «Պտղի զարգացման արատների կանխարգելման, վաղ հայտնաբերման և վարման» 5 գործելակերպային ուղեցույցներ առաջնային օղակի մանկաբարձ-գինեկոլոգների համար:

Մշակվել և ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «2016 թվականի ընթացքում սահմանամերձ առանձին գյուղական համայնքների մի խումբ բնակիչների համար վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը պետության կողմից երաշխավորված կարգով իրականացնելու մասին» N 1528-Ն որոշումը, ինչը թույլ կտա սահմանամերձ գյուղական համայնքներում մատչելի դարձնել արհեստական բեղմնավորման ծառայությունները:

Երեխաների առողջության պահպանման ոլորտում իրականացվել են աշխատանքներ, որոնց արդյունքում վերջին տարիների ընթացքում գրանցվել է մինչև 5 տարեկան երեխաների մահացության զգալի կրճատում: Ընդ որում, համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տվյալների, եթե ցուցանիշը 1990-2011թթ. ընթացքում կրճատվել էր 42%-ով, ապա միայն վերջին 3 տարվա ընթացքում այն կրճատվել է 25%-ով՝ 2014 թվականին կազմելով 10.3‰: Նույն միտումն է դրսևորվել նաև մանկական (0-1 տարեկան) մահացության առումով, որը 2014 թվականին կազմել է 8.8‰՝ 1000 կենդանածնի հաշվարկով:

Շարունակաբար իրականացվել է «Երեխայի առողջության պետական հավաստագրի» ծրագիրը, որի շրջանակներում 2015 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ապահովվել է 43198 0-7 տարեկան երեխայի անվճար բուժօգնություն:

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1105–Ն որոշմամբ հաստատվել է «Մանկական սնունդը և հարակից ապրանքներն անվճար կամ ցածր գներով տրամադրելու կարգը»,

համաձայն որի կանոնակարգվել է անվճար կամ ցածր գներով մանկական կաթնախառնուրդների տրամադրման գործընթացը այն բացառիկ դեպքերում, երբ կրծքով կերակրումը հնարավոր չէ օբյեկտիվ պատճառներով, բժշկական ցուցումներից ելնելով կամ երեխայի մոտ առկա է սնուցման ծանր խանգարում և վերջիններիս պարագայում մանկական կաթնախառնուրդների կամ հատուկ սննդային խառնուրդների տրամադրումը իրականացվում է երեխայի լավագույն շահի պահանջից ելնելով:

ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1353–Ն որոշմամբ հաստատվել է «Մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու նպատակով կրծքով կերակրման խրախուսման ազգային ծրագիրը» և այդ ծրագրի իրականացման 2016-2020 թվականների գործողությունների ժամանակացույցը, որով սահմանվել են հստակ միջոցառումներ՝ ուղղված կրծքով կերակրման քարոզչությանը, տեղեկատվության հավաքմանն ու վերլուծությանը, կրծքով կերակրման խրախուսման վերաբերյալ բուժաշխատողների կրթմանը, առողջապահական կազմակերպություններում նորածիններին բարյացակամ ծառայությունների տրամադրմանը, կերակրող մայրերի և նրանց երեխաների համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, հանրային իրազեկվածության բարձրացմանը և միջգերատեսչական համագործակցության ապահովմանը:

ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-իN 1330–Ն որոշմամբ սահմանվել է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը», որը բխելով համընդհանուր ներառական կրթությանն անցնելու երկրի որդեգրած քաղաքականությունից՝ միտված է ապահովել երեխայի առավելագույն մասնակցությունը կրթական գործընթացին՝ միաժամանակ սահմանելով այն վիճակներն ու հիվանդությունները, որոնց առկայությունն իրավունք է վերապահում կրթական գործընթացն իրականացնել տնային պայմաններում:

Մեկնարկել է «Վերահսկի՛ր դիաբետը, ապրի՛ր լիարժեք կյանքով» միջոցառումների 2015-2019թթ. ծրագիրը, որի շրջանակներում դիաբետով հիվանդ երեխաները 5 տարիների ընթացքում կապահովվեն ինսուլինային անալոգներով, որոնք իրենց որակական հատկանիշներով առավելագույնս մոտ են առողջ մարդու օրգանիզմում արտադրվող ինսուլինին, ինսուլինի ներարկման համար նախատեսված գրիչներով, կստեղծվեն դիաբետի 4 կենտրոններ, որոնք կվերանորոգվեն և կապահովվեն համապատասխան գույքով, սարքավորումներով ու կրթական նյութերով: Ծրագրի շրջանակներում արդեն իսկ իրականացվել են մասնագիտական վերապատրաստումներ և բացվել դիաբետի 2 կենտրոն:

Մասնագիտական գիտելիքների և հմտությունների բարձրացման նպատակով երեխաների առողջության պահպանման ոլորտում ներգրավված 30 մասնագետ վերապատրաստվել է Ռուսաստանի Դաշնության առաջատար կլինիկաներում, Հայ Օգնության Ֆոնդի աջակցությամբ իրականացվել է մարզային 10 ներզատաբանների վերապատրաստում մանկական էնդոկրինոլոգիայի գծով «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի մանկական էնդոկրինոլոգիայի կլինիկայի բազայի վրա:

2015 թվականի մայիսից մինչև 2016 թվականի հունվար ամիսը ՀՀ Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում առողջության առաջնային պահպանման կազմակերպություններում երեխաների առողջության հսկողություն և սպասարկում իրականացնող բուժաշխատողների համար անց են կացվել դասընթացներ «Վաղ տարիքի երեխաների առողջություն և սնուցում» թեմայով՝ ՄՀԻՎ (Մանկական հիվանդությունների ինտեգրացված վարում) ռազմավարության հիվանդանոցային բաղադրիչի ներդրմամբ:

Ընդլայնվել են բնածին ախտաբանությունների վաղ հայտնաբերմանն ուղղված նորածնային սքրինինգ ծրագրերը, ընդ որում սքրինինգների արդյունքում երեխաներին տրամադրվել է բուժօգնություն՝ պետական պատվերի շրջանակներում, իսկ ֆենիլկետոնուրիայով երեխաներին՝ նաև հատուկ սնունդ:

Վաղ հասակի երեխաների աճի և զարգացման մոնիտորինգի համակարգի ներդրման նպատակով իրականացվել է անհրաժեշտ կրթական նյութերի մշակում և ՀՀ մարզերի ու Երևանի ԱԱՊ հաստատությունների համապատասխան 1200 մասնագետների վերապատրաստում:

«Վաղ հասակի երեխաների սնուցում» հանրային իրազեկման ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության պատվերով՝

- նկարահանվել և 2015 թվականի նոյեմբերի 11-ից յուրաքանչյուր շաբաթ եթեր է հեռարձակվում հաղորդումների շարք՝ հղիների, կերակրող մայրերի և վաղ հասակի երեխաների սնուցման վերաբերյալ,
- տպագրվել են վաղ հասակի երեխաների սնուցման վերաբերյալ «Հարց ու պատասխան» բուկլետներ մայրիկների համար (45000 տպաքանակով) և վաղ հասակի երեխաների սնուցման ճաշացանկերի և բաղադրատոմսերի գրքույկ՝ սեղանի օրացույցի ձևաչափով (16000 տպաքանակով), որոնք կբաշխվեն ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների կողմից հաշվառման վերցրած նորածինների մայրերին:

Շարունակաբար իրագործվել և ընդլայնվել է «Կարևոր է կյանքի 1000 օրը» ՀՀ ԱՆ և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի համատեղ նախաձեռնությունը՝ ուղղված վաղ հասակի երեխաների

սնուցման և առողջության բարելավմանը, որի շրջանակներում այլ բազմաթիվ միջոցառումների հետ մեկտեղ ՀՀ մարզերում ստեղծվել և համապատասխան նյութերով հագեցվել են ծնողական կրթության 68 ռեսուրսային կենտրոն, վերապատրաստվել են ՀՀ Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի առողջության առաջնային պահպանման ոլորտում երեխաների առոջության հսկողություն և սպասարկում իրականացնող բոլոր բուժաշխատողները, իրականացվել են հանրային իրազեկման բազմաթիվ միջոցառումներ, վաղ հասակի երեխաների մայրերի/խնամողների կրթում:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Այս համակարգի անխափան գործունեության ապահովումը կենսական նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության առողջության պահպանման բնագավառում:

2015 թվականին շարունակվել են ոլորտի կառավարելիության, մատուցվող ծառայությունների որակի ու արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները, գործընթացը կանոնակարգող օրենսդրական փաստաթղթերի մշակման ու կիրարկման, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման համաճարակաբանական հսկողության, ռիսկի կառավարման, արագ արձագանքման, լաբորատոր գործունեության զարգացման, ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման աշխատանքները:

ՀՀ պետական սահմանի անցման կետերում ուժեղացվել է սանիտարակարանտինային հսկողությունը, որի ընթացքում իրականացվել են հանրապետություն ժամանող ուղևորների ջերմաչափում հեռաչափիչ ջերմացույցներով, բժշկական զննություն, հարցում:

Մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության նվազեցման նպատակով իրականացվել են մանկական խաղահրապարակների հողի լաբորատոր հետազոտություններ, ինչպես նաև երեխաների խնամքի և կրթական կազմակերպություններում՝ հելմինթոզների ախտորոշման զանգվածային լաբորատոր հետազոտություններ և դրան զուգահեռ արտաքին միջավայրի սանիտարական վիճակի ուսումնասիրություններ, որոնց արդյունքների հիման վրա կազմակերպվել են դեզինվազիայի միջոցառումներ:

Շարունակվել է բնակչությանը տրվող խմելու ջրի որակի, բաց ջրամբարների հանգստի գոտիներում ջրի որակի, հողի որակի մոնիթորինգը:

Մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովման նպատակով իրականացվել են շարունակական դիտարկումներ վարակիչ հիվանդությունների փոխանցողների պոպուլյացիաների նկատմամբ, որի արդյունքների հիման վրա մալարիային, ոչ մալարիային մոծակների և մլակների տարածագոտիները քարտեզագրվել են Աշխարհագրական տեղեկատվական համակարգի կիրառմամբ:

Իրականացվել են սոցիալ-հիգիենիկ զննումներ՝ հանքարդյունաբերական ձեռնարկությունների հարակից տարածքներում տեղակայված բնակավայրերի բնակիչների հիվանդացության ուսումնասիրության և տարբեր միջավայրերի աղտոտման աստիճանի համադրման ուղղությամբ:

Հանրապետությունում 2015 թվականին շարունակվել է կարմրուկի, կարմրախտի, բնածին կարմրախտային համախտանիշի դեպքի վրա հիմնված համաճարակաբանական հսկողության իրականացումը: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ կարմրուկի վիրուսը հանրապետությունում տարածում չի գտել, և տեղական դեպքեր չեն գրանցվել: ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ, խոզուկ) երկնվագ պատվաստումներում ընդգրկվածությունը նպատակային խմբերի շրջանում (1 և 7 տարեկաններ) կազմել է 97%:

Տարվա ընթացքում շարունակվել է պոլիոմիելիտի պատվաստումներում ընդգրկվածության մոնիթորինգը: Պոլիոմիելիտի երեք դեղաչափ պատվաստումներում ընդգրկվածությունը կազմել է 96%, որը համապատասխանում է ծրագրի նպատակներին ու միջազգային չափանիշներին: ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 23-ի N 2597-Ա հրամանի համաձայն ուժեղացվել է ՍԹԿ (Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա) համաճարակաբանական հսկողությունը՝ կապված Ուկրաինայում գրանցված պոլիոմիելիտի բռնկման հետ: 2015 թվականի հունիսին պոլիոմիելիտի ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային սերտիֆիկացման հանձնաժողովի գնահատմամբ Հայաստանը պահպանում է «պոլիոմիելիտից ազատ» երկրի կարգավիճակը և շարունակում է դասվել ցածր ռիսկային երկրների շարքին:

Մալարիայի կրկին արմատավորման կանխարգելման նպատակով միջոցառումների իրականացումը համակարգվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի նիստի՝ «Հայաստանի Հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու 2011-2015 թվականների պետական ծրագրին և Հայաստանի Հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու 2011-2015 թվականների միջոցառումների ցանկին» հավանություն տալու N 23 արձանագրային որոշմամբ, որի շրջանակներում Հայաստանի Հանրապետության սահմանի անցման կետերով մալարիայի առումով անապահով երկրներից

ժամանած անձանց նկատմամբ կազմակերպվել է բժշկական հսկողություն, իրականացվել են սեմինար պարապմունքներ զբոսաշրջային գործունեություն իրականացնող կազմակերպությունների, միգրացիոն պետական ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման բնագավառում 2015 թվականին գործադրվել է կրծքագեղձի քաղցկեղի պասիվ դետքային համաճարակաբանական հսկողության համակարգ՝ ՀՀ-ում այդ հիվանդություններին առնչվող փաստացի տվյալների ապահովման, դրանց հիման վրա հանրային առողջապահական գերակայությունների որոշման, կանխարգելիչ ծրագրերի մշակման նպատակով:

Դեղագործական գործունեության կազմակերպում, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովում

Մշակվել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և մի շարք հարակից այլ օրենքների նախագծերի փաթեթը (գտնվում է ԱԺ երկրորդ ընթերցման փուլում), որոնցում առաջին հերթին հստակեցված և լրացված է հիմնական հասկացությունների բաժինը, սահմանված են դեղերի շրջանառության պետական կառավարման բնագավառում իրավասու մարմինների գործառույթները, ամրագրված են դեղերի մատչելիության ապահովման դրույթներ, դեղերի որակի, արդյունավետության և անվտանգության համար էական միջազգայնորեն ընդունված ստանդարտներ՝ լաբորատորային, կլինիկական, արտադրական, բաշխման, պահպանման գործունեությունների կանոնները:

Ընթացքի մեջ է նաև Եվրասիական տնտեսական միության դեղերի և բժշկական նշանակության արտադրանքի շրջանառության կարգավորման փաստաթղթերի մշակումը:

Կեղծ և ոչ պիտանի դեղերի մուտքը հանրապետություն կանխելու նպատակով մշակվել և ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի N 581 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 308-Ն որոշումը, որով կարգավորվում է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից ներմուծվող դեղերի հավաստագրման գործընթացը:

Դեղերի ներմուծման փորձաքննության բարեփոխումների և լաբորատոր կարողությունների հզորացման արդյունքում ավելացել են ներմուծվող խմբաքանակներում անորակ դեղերի և դեղանյութերի հայտնաբերման դեպքերը. 2014 թվականին հայտնաբերվել է 13, իսկ 2015 թվականին՝ 32 դեպք:

Շրջանառության մեջ է դրվել ՀՀ վարչապետի 2014 թվականի օգոստոսի 1-ի «Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 722-Ա որոշման համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում կեղծ դեղերի կանխարգելում» ծրագրի նախագիծը, որը քննարկման փուլում է:

2015 թվականի մայիսի 26-ին և 27-ին Երևանում կազմակերպվել է «Եվրասիական տարածաշրջանում կեղծ դեղերի դեմ պայքարի արդի մոտեցումները» խորագրով համաժողով՝ մաքսային ծառայության, իրավապահ մարմինների և դեղագործական ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ: Համաժողովի շրջանակներում մի շարք դեղագործական ընկերությունների հետ ստորագրվել է նաև կեղծ դեղերի դեմ պայքարում համագործակցության հուշագիր:

2012 թվականի սեպտեմբերի 20-ին Հայաստանի կողմից ստորագրված «Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան» վավերացվել է Ազգային ժողովի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 14-ին:

ՀՀ կառավարությունը լուրջ ձեռքբերումներ է գրանցել շաքարային դիաբետով հիվանդների դեղապահովման խնդիրների բարելավման հարցում՝ անմիջապես դեղ արտադրող կազմակերպությունների հետ կնքելով հնգամյա պայմանագրեր, որի արդյունքում բարձրացել է վերոնշյալ դեղերով ապահովվածության մակարդակը: Մասնավորապես՝ պետության կողմից կենտրոնացված կարգով ձեռք են բերվել անհրաժեշտ քանակությամբ ինսուլիններ շաքարային դիաբետով տառապող հիվանդներին դեղերով ապահովելու խնդիրներն առանց ընդհատումների կազմակերպելու նպատակով, որի արդյունքում ապահովվածության մակարդակը կազմում է 100%: Նաև ձեռք է բերվել և ՀՀ-ում հաշվառված երկրորդ տիպի շաքարային դիաբետով տառապող հիվանդներին հատկացվել «Դիաբետոն ՄՌ» դեղը, որով ապահովվածության մակարդակը 2015 թվականին բարձրացել է շուրջ 80%՝ նախորդ տարիների շուրջ 30%-ի փոխարեն, և նախատեսվում է 2016 թվականին ապահովվածության մակարդակը հասցնել 100%-ի:

2015 թվականին 0-18 տարիքային խմբում հաշվառված 450 շաքարային դիաբետով հիվանդ երեխաների անվճար տրամադրվել է շվեյցարական արտադրության, արյան մեջ գլյուկոզայի որոշման համար նախատեսված սարքերի թեստ-երիզներ:

2015 թվականի ընթացքում 0-22 տարեկան տարիքային խմբի շուրջ 700 հաշվառված ինսուլինակախյալ երեխաների և երիտասարդների կյանքի որակը բարձրացնելու, ինչպես նաև բուժման արդյունավետությունը և նրանց առողջական վիճակը բարելավելու նպատակով մեկնարկել է «Հաղթահարենք դիաբետը միասին» ծրագիրը, որը գործում է ՀՀ առողջապահության նախարարության և «Էլայ Լիլի» ամերիկյան դեղագործական կազմակերպության միջև: Ծրագրի շրջանակներում 2015-2019 թվականների ընթացքում ՀՀ-ում և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում հաշվառված վերոնշյալ տարիքային խմբերին անվճար տրամադրվել են ինսուլինային անալոգներ՝ «Ինսուլին լիզպրո» և «Ինսուլին մարդու իզոֆան» դեղերը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ի տարբերություն մարդկային ինսուլինի, որը կիռավում է ներկայում նաև

ՀՀ-ում, ինսուլինային անալոգները ունեն մի շարք առավելություններ, որոնք շատ կարևոր են հատկապես երեխաների, դեռահասների և երիտասարդների պարագայում:

Հումանիտար ծրագրի շրջանակներում «Էլայ Լիլի» ընկերության կողմից շաքարային դիաբետով հիվանդ երեխաներին և երիտասարդներին անվճար կտրամադրվեն նաև ինսուլինային գրիչ-ներարկիչներ:

Ներկայումս Հայաստանում գործում է դիաբետի 2 դպրոց, ներկայացված ծրագրով նախատեսվում է ստեղծել դիաբետի ուսուցման 4 կենտրոն, այդ թվում՝ մարզերում, որոնք վերանորոգվել են, կահավորվել, և տեղադրվել են նորագույն սարքավորումներ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է դիաբետով հիվանդ երեխաների ռեգիստրի ստեղծում, ինչը կնպաստի հստակ տվյալների կենտրոնացված հավաքմանը, որը հնարավոր կդարձնի նաև անհրաժեշտ դեղերի պահանջի ու անհրաժեշտ ծախսերի հստակեցմանը:

«Հաղթահարենք դիաբետը միասին» ծրագրի իրականացումը կնպաստի մատուցվող բժշկական ծառայությունների որակի և հիվանդների կյանքի որակի բարելավմանը:

Հատատվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 18–ի «Հայաստանի Հանրապետության կարիքների համար անհրաժեշտ ֆենիլ ալանին չպարունակող մանկական կերերի գնման գործընթացը կազմակերպելու մասին» թիվ 669-Ա որոշումը՝ «ԿՈՍՄՈՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից 2015 թվականի ընթացքում ֆենիլ ալանին չպարունակող մանկական կերերի ձեռքբերման նպատակով: 2015 թվականին ֆենիլ ալանին չպարունակող մանկական կերերի ապահովածության մակարդակը կազմում է 100%:

Յուրաքանչյուր ամիս ՀՀ առողջապահության նախարարության մասնագիտական խմբի կողմից իրականացվում է դեղերի մանրածախ գների մշտադիտարկում, և տեղեկատվությունը տեղադրվում է ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից կենտրոնացված կարգով ձեռք է բերվել թվով 33 անվանում դեղ:

Կրթություն և գիտություն

Հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից կարևորվում է երեխաների վաղ ընդգրկումը կրթական ծրագրերում: Նախադպրոցական կրթության հասանելիության ընդլայնման նպատակով «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում իրականացվել են նախադպրոցական կրթության նոր նախակրթարանների հիմնման աշխատանքներ ՀՀ Կոտայքի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում: Նոր միկրոծրագրեր իրականացնելու նպատակով ուսումնասիրվել է մարզերից ստացված տեղեկատվությունը, վերլուծվել են համայնքներում

նախադպրոցական ծառայությունների առկայության ցուցանիշները, նախադպրոցական ծառայություններում ընդգրկված և չընդգրկված երեխաների թվաքանակը, նախակրթարանների ստեղծման կարիքները և առաջնահերթությունները: Նշյալ մարզերի շուրջ 33 հաստատություններում իրականացվել են շինարարական աշխատանքներ: Նախակրթարանների հիմնումը հնարավորություն կտա ընդգրկելու մոտ 1450 երեխա:

Մշակվել է Նախադպրոցական կրթության զարգացման 2016-2025 թվականների ռազմավարական ծրագիրը, որի ակնկալվող արդյունքն է որակյալ և մատչելի նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների՝ նախադպրոցական կրթության մեջ ընդգրկմանը, նախադպրոցական ավագ տարիքի երեխաների (հինգից մինչև վեց տարեկանների)՝ տարրական կրթությանն արդյունավետ նախապատրաստվածությանը, երեխաների համար տարրական դպրոցում ուսումը շարունակելու համար հավասար մեկնարկային պայմանների ապահովմանը:

Մշակվել է և դրվել հանրային քննարկման «ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ սահմանվել են կրթության զարգացման նպատակները, գերակայությունները և գործողությունների շրջանակը, որոնք կապահովեն կրթության կայուն զարգացման առավել նպատակասլացություն և արդյունավետություն:

Աշխատանքներ են իրականացվել հանրակրթության որակի և մատչելիության բարձրացման ուղղությամբ: «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաների համար էլեկտրոնային կրթական նյութերի ստեղծման նպատակով հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Մակադամիան ԱՌ» ՓԲԸ-ն: Էլեկտրոնային կրթական նյութերը հասանելի են «http://esource.armedu.am/» հասցեով և 2016 թվականի հունվարից հասանելի են ՀՀ բոլոր դպրոցներին:

2015 թվականից սկսած ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության և «Երկրապահ կամավորական միություն» հասարակական կազմակերպության միջև՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, ՀՀ բոլոր դպրոցներում ձևավորվել են «Պատանի երկրապահ» ակումբներ: Նախաձեռնության նպատակը վաղ տարիքից դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիրակությունն է, ազգային գաղափարախոսության և արժեքների պահպանումը, հայապահպան մտածելակերպի ձևավորումը: Ակումբները կկազմակերպեն տարբեր միջոցառումներ՝ հայրենիք, ազգային մշակույթ, մշակութային բազմազանություն, հայկական մշակույթի դերը տարածաշրջանի և համաշխարհային

մշակույթի զարգացման գործում, ավանդույթներ, հայկական էպոս, հայկական բնաշխարհ, բնապահպանություն, արվեստ, հայոց լեզու, գիր, գրականություն և այլ թեմաներով:

Դպրոցներում ռոբոտատեխնիկայի զարգացման նպատակով հանրապետության 47 հանրակրթական ուսումնական հաստատություններում ստեղծվել են ռոբոտատեխնիկայի խմբակներ:

2015-2016 ուսումնական տարվանից ՀՀ ևս 100 հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-րդ դասարաններում ներդրվել է «Ազգային երգ ու պար» առարկան (50-ը՝ Երևանում, 50-ը՝ մարզերում): Հաստատվել է նաև «Ազգային երգ ու պար» առարկայի 6-րդ դասարանի ծրագիրը: 2016-2017 ուսումնական տարվանից սկսած հանրապետության 2 մարզերի բոլոր դպրոցներում կներդրվի «Ազգային երգ ու պար» առարկան:

107 ավագ դպրոցների տրամադրվել է նոր գույք:

2015 թվականին մշակվել է կրթության գերազանցության ազգային ծրագրի նախագիծը, որը գտնվում է հանրային քննարկման փուլում: Քննարկումների արդյունքում կատարված առաջարկությունների հիման վրա ծրագիրը կամբողջացվի ներդրման նպատակով:

2015 թվականին կարևորվել են ազգային փոքրամասնությունների համար դպրոցներում ուսումնական բազայի բարելավման և կադրերի մասնագիտական զարգացման գործընթացները: Հանրակրթական դպրոցներում ազգային փոքրամասնությունների կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել են հանրակրթական դպրոցների ասորերեն դասավանդող 7 ուսուցիչների 18-ժամյա վերապատրաստման դասընթացներ: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին վերահրատարակվել են «Եզդիերեն Այբբենարան», «Եզդիերեն» 2, «Եզդիերեն» 8, «Եզդիերեն» 12 և «Եզդիերեն» 1-12 ծրագրերը, «Քրդերեն» 8, «Քրդերեն» 9 և «Քրդերեն քերականություն» 5-9 դասագրքերը: Հրատարակիչները դասագրքերը տրամադրել են շահառուներին:

Հայաստանի Հանրապետությունում շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնության անցկացման նպատակով մշակվել է ՀՀ շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնության և կազմակերպման կանոնակարգը: «Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի» հետ համատեղ ստեղծվել է ՀՀ շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնության անցկացման կազմկոմիտե: 2015 թվականի հոկտեմբերի 6-12-ը Երևանում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ «Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի», «Հայաստանի շախմատի ֆեդերացիայի», «Հայաստանի շախմատի ակադեմիայի» և «Հայաստանի երիտասարդական հիմնադրամի» հետ համատեղ անցկացրել է շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնությունը: Շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնությանը

մասնակցել են եվրոպական 9 երկրների 18 համալսարանների 25 թիմեր՝ ընդհանուր թվով 82 պատվիրակ: Թիմային պայքարում առաջին տեղը գրավել է Ռուսաստանի Ուրալի պետական համալսարանի թիմը, երկրորդ տեղը՝ Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի թիմը և երրորդ տեղը՝ Լեհաստանի Վարշավայի պետական համալսարանի թիմը:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրակա-նացվող բարեփոխումներն ուղղված են եղել ոլորտի զարգացմանը, կրթության որակի շարունակական բարելավմանն ու ապահովմանը, քաղաքացիների՝ կրթություն ստանալու համար հավասար պայմանների և իրավունքների ապահովմանը, ինչպես նաև կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել և հաստատվել է «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգը», որի համաձայն անցկացվել են պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների՝ պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունները: Քննություններին մասնակցելու թույլտվություն է ստացել 25 շրջանավարտ, որից 17-ը ստացել է պետական նմուշի դիպլոմ:

Սահմանված կարգով անցկացվել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրման գործընթացը: Հաստատվել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրված անձանց ցուցակը: Հավաստագրմանը մասնակցել են 58 անձ, որոնցից 55-ը ստացել է ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր):

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության շարունակական զարգացումն ապահովելու նպատակով աշխատանքներ են իրականացվել Բոլոնիայի գործընթացի սկզբունքների շարունակական ներդրման ուղղությամբ:

2015 թվականի մայիսի 14-15-ը տեղի է ունեցել Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովը և Բոլոնիայի գործընթացի քաղաքականության 4-րդ ֆորումը, որին մասնակցել են Բոլոնիայի գործընթացի անդամ 48 երկրների և մոտ 25 այլ երկրների պատվիրակություններ՝ կրթության նախարարների գլխավորությամբ, ինչպես նաև շուրջ 40 միջազգային կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Կրթական ոլորտի

հանրաճանաչ միջազգային փորձագետներն իրենց գրառումներում Երևանյան նախարարական գագաթաժողովը գնահատել են բարձր՝ ընդգծելով նրա պատմական նշանակությունը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի զարգացման տեսանկյունից: Գագաթաժողովի ընթացքում ընդունվել է Երևանյան կոմունիկեն, որի հիմնական առանձնահատկություններն են բուհերի ուսանողների աշխատանքային իրավունքի խնդիրները և ուսանողական շարժունության ներառականությունը:

Իրականացվել է արվեստի բուհերում ուսանող-դասախոս հարաբերակցության գործակցի վերանայումը: Ելնելով արդի կրթական պահանջներից՝ ՀՀ արվեստի բուհերում ուսանող-դասախոս հարաբերակցության գործակիցը սահմանվել է 1:1.5, իսկ մյուս բուհերում այն պահպանվել է՝ 1:6:

2015 թվականին իրականացվել է սոցիալական խոցելի խմբերին ուղղված՝ ուսման վարձի փոխհատուցման մեխանիզմների վերանայման գործընթացը: Համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին կարգի պահանջների՝ պետության կողմից շարունակվում է իրականացվել սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցում՝ 50-100 տոկոսի չափով:

2015 թվականին ընդլայնվեց սոցիալապես անապահով ուսանողների շրջանակը՝ ընդգրկելով նաև առաջին կուրսեցիներին: Բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանում սովորող 719 առաջին կուրսեցիների պետության կողմից հատկացվել է ուսման վարձավճարի 50-100 տոկոսի չափով փոխհատուցում, որը կազմել է 496.7 մլն դրամ: Հատկանշական է, որ 2014-2015 ուսումնական տարվա համեմատությամբ տեղի է ունեցել ուսման վարձի փոխհատուցման էական աճ գումարային տեսքով. եթե 2014-2015 ուսումնական տարում բակալավրի կրթական աստիճանում փոխհատուցվել էր 1030 ուսանողի ուսման վարձը՝ 223.8 մլն դրամի չափով, ապա 2015-2016 ուսումնական տարում նույն կրթական աստիճանում ընդգրկվել է 1379 ուսանող՝ 306.9 մլն դրամ ուսման վարձի փոխհատուցման չափով: 2014-2015 ուսումնական տարում մագիստրոսի կրթական աստիճանում փոխհատուցվել է 40, իսկ 2015-2016 ուսումնական տարում՝ 52 ուսանողների ուսման վարձը:

Շարունակվել է պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող ՀՀ պետական բուհերի՝ հիմնադրամների վերակազմակերպման գործընթացը: Ներկայումս 16 պետական բուհերից 5-ն ունեն հիմնադրամի կարգավիճակ:

Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունները ներկայացրել են մասնագիտությունների ցանկից բխող համապատասխան կրթական աստիճաններով՝ ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերը, որոնք քննարկվելուց և

ամփոփվելուց հետո ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի N 647-Ա/Ք հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկը»:

2015 թվականին իրականացվել է դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման համակարգի ընդլայնման գործընթացը: ՀՀ Վայոց ձորի, Սյունիքի և Արարատի մարզերի բոլոր հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին տրամադրվել է դպրոցական նախաճաշ՝ յուրաքանչյուր երեխային օրական 140 դրամ հաշվարկով: Ծրագրում ընդգրկված է 22056 աշակերտ, որից 2386-ը՝ ՀՀ Վայոց ձորի մարզից, 6052-ը՝ ՀՀ Սյունիքի մարզից, 13618-ը՝ ՀՀ Արարատի մարզից:

2016 թվականին Պարենի Համաշխարհային Ծրագրի և Երեխաների սնուցման համաշխարհային հիմնադրամի աջակցությամբ Հայաստանում նախատեսվում է կազմակերպել Երեխաների սնուցման 18-րդ ամենամյա համաշխարհային ֆորումը, որը կնպաստի մեր համագործակցության խորացմանն ու սերտացմանը, ինչպես նաև «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի հետագա ընդլայմանն ու զարգացմանը:

Սպորտ և երիտասարդության հարցեր

Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության բնագավառներում ՀՀ կառավարության կառավարության ուշադրության կենտրոնում են գտնվում հետևյալ խնդիրները՝ զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական՝ համայնքային, տարածաշրջանային, մարզային և հանրապետական միջոցառումների, փառատոնների անցկացում, հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների հետագա բարելավում, հաշմանդամ մարզիկներին աջակցություն, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության մարզիկների մասնակցության աջակցություն, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի արմատավորման քարոզմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման գործընթացի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումներ կատարելու, Եվրախորհրդի ծրագրերին, սպորտի եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին, խնդիրներին ծանոթացնելու նպատակով հանրապետական, մարզային, համայնքային սեմինար-խորհրդակցությունների անցկացում, բնակչության, մասնավորապես, ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում:

2015 թվականին ՀՀ կառավարության կողմից ավելացվել են պատանիների, երիտասարդների աշխարհի ու Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրների պարգևատրման գումարները, ավելացվել է պարգևատրում՝ եվրոպական խաղերի մրցանակակիրների և համաշխարհային ուսանողական խաղերի՝ օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված մարզաձևերի մրցանակակիրների համար, ավելացվել է հաշմանդամ մարզիկների պատանիների և երիտասարդների Եվրոպայի ու աշխարհի առաջնությունների մրցանակակիրների պարգևատրումը:

Ընդունվել է 2015 թվականի օգոստոսի 13-ի ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության և նախկին Խորհրդային Միության հավաքական թիմերի կազմերում՝ օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի, շախմատի և սամբոյի աշխարհի առաջնություններում չեմպիոն դարձած մարզիկների պատվովճարի վճարման կարգը և չափերը հաստատելու մասին» N 925-Ն որոշումը: Վերջինիս համաձայն վարձատրություն են ստանում ՀՀ հավաքական այն թիմերի մարզիչները, որոնք մեդալներ են նվաճում Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում, Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում օլիմպիական խաղերին, և ովքեր անցկացնում են ուսումնամարզական հավաքներ և կենտրոնացված մարզումներ:

2015 թվականի մարտի 10-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչներն ու կարգը հաստատելու մասին և N 587-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ» N 238-Ն որոշումը:

Բարձրագույն սպորտի մեծ նվաճումների բնագավառում կառավարության 2015 թվականին իրականացրած քաղաքականությունն ուղղված է եղել սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը, մարզիչ-մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը, օլիմպիական շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեությանն աջակցմանը, մարզաձևերի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն ու զարգացմանը, միջազգային, այդ թվում՝ սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, մարզաձևերի հավաքական թիմերի գիտամեթոդական աշխատանքների ապահովմանը, միջպետական մարզական հարաբերությունների զարգացմանը:

2015 թվականին անցկացվել են Հայաստանի Հանրապետության 93 առաջնություններ, որոնց մասնակցել են 9500 մարզիկներ: Աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցումներին նախապատրաստվելու նպատակով մարզաձևերի

Հայաստանի Հանրապետության հավաքականներում ընդգրկված 2900 մարզիկների համար կազմակերպվել են 127 ուսումնամարզական հավաքներ: Տարբեր մարզաձևերից Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի 1900 մարզիկներ մասնակցել են 147 աշխարհի և Եվրոպայի առաջնությունների և միջազգային այլ մրցաշարերի:

Մասսայական սպորտի ոլորտում կառավարության կողմից իրականացվող ծրագրերը բխում են Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից սահմանած մրցանակների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պրոպագանդման, Սպորտի եվրոպական խարտիայի պահանջներն ապահովելու, Եվրոպայի խորհրդի սպորտի զարգացման կոմիտեի որոշումները կատարելու անհրաժեշտությունից ու նախադպրոցական և ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությունն ապահովելու խնդիրներից: Ծրագրի հիմքում դրված են ոլորտի գերակայություններ հանդիսացող տարիքային ու սոցիալական տարբեր խմբերի, անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացման, ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման, առողջ ապրելակերպի արմատավորման, անհատի ներդաշնակ զարգացման, հայրենիքի պաշտպանության գործին ֆիզիկապես կոփված երիտասարդների պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը: 2015 թվականին մասայական սպորտի ոլորտում իրականցված ծրագրերից է Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը, որն անցկացվում է չորս տարիքային խմբերով. 1-ին տարիքային խումբ՝ 6-8 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ, 2-րդ տարիքային խումբ՝ 9-11 տարեկան, 3-րդ տարիքային խումբ՝ 12-14 տարեկան, 4-րդ տարիքային խումբ՝ 15-16 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ: Մրցույթն անցկացվել է 3 փուլով. 1-ին և 2-րդ փուլերը՝ նախնական, 3-րդ փուլը՝ եզրափակիչ: Մրցույթին մասնակցել են 2065 մարզական ընտանիքներ, իսկ եզրափակիչ փուլին՝ 144 ընտանիքներ՝ թվով 432 մարդ, և 19 հաշմանդամություն ունեցող ընտանիքներ՝ թվով 48 մարդ:

Հաջորդ ծրագիրը այս ոլորտում ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական» մրցույթն է, որին մասնակցել են ՀՀ մարզերի և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի 232 նախադպրոցական հաստատություններ՝ 2784 երեխա:

ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթին մասնակցել են լսողական, տեսողական և հենաշարժողական խնդիրներ ունեցող 165 հաշմանդամներ: Մասնակիցները մրցել են մրցույթի ծրագրում ընդգրված շախմատ, սեղանի թենիս, դարթս, լող՝ 50 մետր, շաշկի, բասկետբոլ մարզաձևերում: Հաղթողներն ու մրցանակակիրները պարգևատրվել են ՀՀ Նախագահի հավաստագրերով և դրամական մրցանակներով, իսկ թիմային հաշվարկով 1-3-րդ տեղերը զբաղեցրած մարզերի և Երևան քաղաքի թիմերը՝ գավաթներով:

«Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր» մրցույթն իրականացվել է ՀՀ 38 տարածաշրջաններում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում: Խաղերի ծրագրում ընդգրկված են 6 մրցաձևեր: Միջոցառմանը ընդհանուր թվով մասնակցել են 31245 ավագ տարիքի դպրոցահասակ աշակերտներ: ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում «Մարզական փառատոն» միջոցառումն իրականացվել է ՀՀ 48 քաղաքային համայնքներում և ԼՂՀ-ի Ստեփանակերտ քաղաքում: Ծրագրում ընդգրկված են 7 մրցաձևեր: «Մարզական փառատոն» միջոցառմանը մասնակցել է 24125 մարդ:

«Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով տրամադրվում է պետական աջակցություն «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպություն», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություններին: 2015 թվականին ծրագրի շրջանակում իրականացվել է 7 միջոցառում, մասնակցել է 329 հաշմանդամություն ունեցող անձ:

«Մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացում» ծրագրով՝ մանկապատանեկան թիմերի, Երևան քաղաքի և մարզերի մարզադպրոցների ու ֆուտբոլի ակումբների մարզիչների համար անցկացված դասընթացներին մասնակցել է թվով 125 մարդ:

2015 թվականին կառավարության կողմից իրականացվող երիտասարդական քաղաքականության բնագավառում իրակացված ծրագրերից կարևորվում են «Երիտասարդական աշխատողի և աշխատանքի մասին հետազոտություն», «Երիտասարդական հեռուստահաղորդաշար», «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի երիտասարդական մայրաքաղաք մրցույթի քվեարկության մասին տեսահոլովակի պատրաստում», «Հանդիպում-քննարկում մարզաբնակ երիտասարդության շրջանում», «Հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային առցանց (օնլայն) ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի պահպանում և զարգացում», «Երիտասարդների ձեռնարկատիրական գործունեությունը խթանող սեմինար-դասընթաց», «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամիջոցների, ալկոհոլի և ծխախոտի օգտագործման դեմ պայքարի վերաբերյալ երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում», «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի», «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի»» ծրագրերը, «100 գաղափար Հայաստանի համար» միջոցառման հայտերի ուսումնասիրությունը և մրցույթի անցկացումը:

Երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով 2015 թվականի ընթացքում հասարակական կազմակերպություններին տրամադրվել է 41 դրամաշնորհ: 11 դրամաշնորհ տրամադրվել է Հայաստանի 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաք հռչակված Ստեփանավան քաղաքի հասարակական կազմակերպություններին՝ Ստեփանավանում ծրագրեր իրականացնելու նպատակով: 2 դրամաշնորհ տրամադրվել է Հայաստանի 2015 թվականի երիտասարդական փոխմայրաքաղաք հռչակված Չարենցավան քաղաքի հասարակական կազմակերպություններին՝ Չարենցավանում ծրագրեր իրականացնելու նպատակով: Վճարվել է Եվրոպայի խորհրդի «Երիտասարդական քարտի միջոցով երիտասարդության շարժունակություն» ընդլայնված մասնակի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարը, տրամադրվել է 37 ուղևորության դրամաշնորհ:

Էներգետիկա և բնական պաշարներ

Տարածաշրջանային ինտեգրում

Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման աշխատանքների իրականացում: 2014 թվականի հոկտեմբեր ամսին ՀՀ վարչապետի՝ Իրան կատարած այցի և 2014 թվականի դեկտեմբերի 15-16-ը Թեհրանում կայացած հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 12-րդ նիստի շրջանակներում տեղի ունեցած քննարկումների և ձեռք բերած պայմանավորվածությունների արդյունքում 2015 թվականի սեպտեմբեր ամսից վերսկսվել են ծրագրի ֆինանսավորումը և շինարարության համար անհրաժեշտ ապրանքների ու սարքավորումների մատակարարումները: Մասնավորապես՝ Հայաստան են ներկրվել «Նորավան» ենթակայանի հոսանքի և ունակային լարման տրանսֆորմատորները:

Շարունակվել են էլեկտրահաղորդման օդային գծի հենարանների տեղակայման համար անհրաժեշտ հողակտորների ձեռք բերման աշխատանքները: Ընդհանուր նախատեսված թվով 743 հողակտորներից ձեռք են բերվել 614-ը: 54 համայնքներում ձեռք են բերվել 473 հենարանների կառուցման շինարարության թույլտվություններ: Ենթակայանի տարածքում ավարտվել են պարսպի հիմքի գեոդեզիական և հարթեցման աշխատանքները, իրականացվել են հիմքի բետոնապատման նախապատրաստական և ենթակայանի տարածքի հարթեցման աշխատանքներ:

400 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանի կառուցումը նախատեսվում է ավարտել 24 ամսում:

Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ծրագրի մեկնարկ. խորհրդատուի ընտրության մրցութային գործընթացի կազմակերպում: Ծրագրի առաջին

փուլի իրականացման նպատակով բանակցվել և կնքվել են 2014 թվականի դեկտեմբերի 9-ին KfW բանկի հետ՝ 75 մլն եվրոյի և 10.2 մլն եվրոյի, 2015 թվականի մարտի 16-ին՝ Եվրոպական Ներդրումային Բանկի հետ՝ 10 մլն եվրոյի վարկային համաձայնագրեր: Նախատեսվում է նաև դրամաշնորհային ներդրում՝ մինչև 10 մլն եվրոյի չափով, որը կհատկացվի Եվրամիության Հանձնաժողովի կողմից Հարևանության Ներդրումային Գործիքի (“NIF”) ներքո: Նշված միջոցների շրջանակներում նախատեսվում է Այրումում 500/400 կՎ բարձր լարման հաստատուն հոսանքի 350 ՄՎտ հզորությամբ փոխակերպիչ կայանի և կայանից մինչև վրացական սահման շուրջ 8 կմ երկարությամբ 500 կՎ օդային գծի կառուցումը:

KfW բանկի հետ բանակցվել և 2015 թվականի դեկտեմբերի 11-ին կնքվել է նաև 83 մլն եվրո արժողությամբ վարկային և ծրագրային համաձայնագիր, որի շրջանակներում նախատեսվում է կառուցել Դդմաշենում 400/220 կՎ մեկ ավտոտրանսֆորմատորով նոր 400/220կՎ ենթակայան և Դդմաշենից մինչև Այրում ենթակայան երկշղթա հենարաններով 400 կՎ միաշղթա օդային գիծ՝ ապահովելով 350 ՄՎտ հզորությամբ էլեկտրաէներգիայի փոխանակում: Նշված միջոցների շրջանակներում նախատեսվում է նաև իրականացնել 220 կՎ Լոռի և 110 կՎ Թումանյան 1 և 2 գծերի վերակառուցումը:

Հաշվետու տարում իրականացվել է ծրագրի խորհրդատուի ընտրության մրցութային գործընթաց, և կնքվել է երկու փուլերի համար խորհրդատվական պայմանագիր: Ձեռք են բերվել Այրումի և Դդմաշենի ենթակայանների կառուցման համար անհրաժեշտ հողատարածքները: 2016 թվականին նախատեսվում է իրականացնել ծրագրի գլխավոր կապալառուի ընտրության միջազգային մրցութային գործընթաց, կնքել պայմանագրեր և մեկնարկել ծրագրի իրականացումը: Աշխատանքների ավարտը նախատեսվում է 2018 թվականի վերջին:

Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքների իրականացում: 2015 թվականի փետրվարի 5-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել 2015 թվականի մայիսի 12-ին: Հայկական կողմի լիազորված կազմակերպության իրավասությունները վերապահվել են «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին, ՌԴ-ի կողմից, որպես լիազորված կազմակերպություն, նշանակվել է ՌԴ ատոմային էներգետիկայի Ռոսատոմ պետական կորպորացիայի «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ն:

Ստորագրվել են «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և ՌԴ ատոմային էներգետիկայի «Ռոսատոմ» պետական կորպորացիայի «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի միջև Ծրագրի իրականացման շրջանակային պայմանագիրը և ՀՀ ֆինանսների նախարարության ու «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև՝ Ծրագրի իրականացման ենթավարկային համաձայնագիրը:

Մեկնարկել են ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի առաջին փուլի աշխատանքները՝ համաձայն 2014թ. մարտի 27-ի ՀՀ կառավարության 12-րդ նիստի արձանագրությամբ հավանության արժանացած ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի:

Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների զննման և մնացորդային ռեսուրսի գնահատման աշխատանքների իրականացում: Մեկնարկել են ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման համակարգերի և սարքավորումների համալիր զննման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2016 թվականի սեպտեմբերին: Առաջին փուլի՝ համակարգերի, սարքավորումների և շինությունների համալիր զննման աշխատանքների ավարտից հետո կիրականացվի արդյունքների տեխնիկական աուդիտ:

Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի շրջանակում երկրաջերմային ծրագրի նախապատրաստական աշխատանքների իրականացում: 2015 թվականին իրականացվել են Քարքարի երկրաջերմային տեղանքում առաջնային էներգակրի պարամետրերի որոշման համար հորատանցքերի հորատման նախապատրաստական աշխատանքներ: «Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատումներ» և «Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ» հաշվետվությունները հրապարակվել են համապատասխանաբար 2015 թվականի հունվարի 1-ին և 2015 թվականի մարտի 10-ին:

2015 թվականի հուլիսի 21-ին ՀՀ Նախագահի թիվ ՆՀ-471-Ն հրամանագրով վավերացվել է Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի հունիսի 16-ին ստորագրված համաձայնագիրը՝ 8.55 միլիոն ԱՄՆ դոլար դրամաշնորհի շրջանակներում «Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագիրը» իրականացնելու վերաբերյալ: Այնուհետև մեկնարկել են մերձատար ճանապարհի և հորատման հարթակի շինարարական աշխատանքները, որոնք ընթանում են ըստ ընդունված ժամանակացույցի:

ARM WGS-84 գեոդեզիական կոորդինատային համակարգի 100 տոկոս ներդնում: ARM WGS-84 գեոդեզիական կոորդինատային համակարգին համապատասխանեցվել է 452 ընդերքօգտագործման իրավունք: Հաշվետու ժամանակահատվածում ARM WGS-84 գեոդեզիական կոորդինատային համակարգով տրամադրվել են 18 երկրաբանական ուսումնասիրության իրավունքներ և 9 օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքներ:

Ջրային տնտեսություն

2015 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները ջրային տնտեսության համակարգում կառուցվածքային փոփոխությունների, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման և փոխարինման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, կոյուղու մաքրման կայանների շահագործման հանձնման, ինչպես նաև այլ ուղղություններով: Ջրային տնտեսության ոլորտում 2015 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

1. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացման նպատակով դեռևս 2014 թվականին ընդունվել են ՀՀ կառավարության «Պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N883-Ն և «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» ու «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձևը և ժամկետը սահմանելու մասին» N888-Ն (ի փոփոխություն ՀՀ կառավարության 15.10.2015թ. N 1233-Ն որոշում) որոշումները: Ջրամատակարար կազմակերպությունների կողմից սպասարկվող գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացը կազմակերպելու նպատակով 2015 թվականին ՀՀ կառավարության 19.02.2015թ. N140-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, ինչպես նաև ընդունվել է «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությանը և ֆինանսավորման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 13.08.2015թ. N38 արձանագրային որոշումը: Հայտարարվել է վարձակալի ընտրության նախաորակավորման հայտարարություն: Նախատեսվում է մրցույթն ավարտել 2016 թվականի մայիս ամսին, 2016 թվականի սեպտեմբեր ամսին հաղթող կազմակերպության հետ կնքել պայմանագիր:

2. Հիմնվելով կատարված բարեփոխումների ձեռքբերումների վրա և ընդլայնելով բարեփոխումների շրջանակները՝ այս գործընթացներով ՀՀ կառավարության հավանությանն արժանացած խմելու ջրի ռազմավարության «երկրորդ սերնդի» բարեփոխումների սկիզբն է դրվում:

ՀՀ ջրային օրենսգիրքը, դրան առնչվող իրավական ակտերը և ջրային ոլորտի ռազմավարությունը միմյանց հետ ներդաշնակեցնելու համար մշակվել են «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքները:

3. Մշակվել են ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման և կառավարման բարեփոխումների ծրագիրը, սակագնային ռազմավարությունը, ինչպես նաև կայուն ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ազգային ռազմավարությունը:

4. Ոռոգում ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառ» և «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 37 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է 131.4 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարում:

Ոռոգման համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև վերահսկողությունն ուժեղացնելու նկատառումներով ընդունվել է ՀՀ կառավարության 22.05.2015թ. N 422-Ն որոշումը, որով ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործադիր մարմին է ճանաչվել ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն:

ՋՕԸ-երի սպասարկման տարածքներում կադաստրային ոռոգելի հողատարածքները կազմել են շուրջ 200 հազ. հա, որից 2015 թվականին փաստացի ոռոգվել է 131.4 հազ. հա, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 500 հա-ով:

2015 թվականի ոռոգման շրջանում ջրի պաշարների և ջրապահանջարկի, ինչպես նաև ջրօգտագործողների արձագանքների վերլուծությունը փաստում է, որ ջրօգտագործողների կողմից հայտերով ներկայացված ջրապահանջը հիմնականում բավարարվել է:

ՀՀ կառավարության 30.04.2015թ. N19 արձանագրային որոշման համաձայն, «Սևան-Հրազդանյան-ջրառ» և «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ներն առանց հասույթ ձևավորելու, ոռոգելի աղակալված հողերի լվացման և խոնավալիցք հաղորդելու, ինչպես նաև գետերի վարարումների հետևանքով հեղեղումները կանխելու նպատակով ինքնահոս համակարգերով անվճար մատակարարել է շուրջ 61.0 մլն մ^3 ոռոգման ջուր՝ հանրապետության շուրջ 80 հազ. հա հողատարածքների համար, այդ թվում՝ 40 հազ. հա Արարատյան դաշտում և 40 հազ. հա՝ մնացած տարածքներում:

ՀՀ կառավարության 30.01.2015թ. N182-Ն որոշմամբ «Ոռոգման համակարգերի հիմնանորոգում» ծրագրով հատկացվել է 800 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվել են պոմպակայանների, խորքային հորերի, ջրանցքների, խողովակաշարերի վերանորգման և վերականգնման աշխատանքներ:

5. Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի և ՀՀ կառավարության համաֆինանսավորման շրջանակներում Արփա-Սևան թունելի անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացման համար 2015 թվականի ընթացքում կատարվել են՝ վտանգավոր հատվածներում նոր ժամանակավոր ամրակապերի տեղադրում՝ 186.956 տ, երեսարկի կառուցում՝ 304.79 գծմ, ցեմենտային և ստուգիչ լցամղում՝ 3234.13 քմ: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել լուծել թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցը:

6. Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց 2015 թվականին գանձվել է շուրջ 21.81 մլրդ դրամ՝ 2014 թվականի 21.28 մլրդ դրամի փոխարեն, կամ ավել է գանձվել 530 մլն դրամ:

7. Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2015 թվականին կազմել է 96.14 %, իսկ ոռոգման ոլորտում՝ 81.27 %: Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 17.58 մլրդ դրամ՝ 2014 թվականի 17.17 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 410 մլն դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 4.23 մլրդ դրամ:

Հաշվի առնելով 2015 թվականի սակավաջրության և եղանակային անբարենպաստ գործոնները՝ համակարգն ունեցել է էլեկտրաէներգիայի գերածախս: 2015 թվականին էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 226 մլն կվտ/ժամ՝ 2014 թվականի 171.2 մլն կվտ/ժամի դիմաց կամ ավել է ծախսվել 54.8 մլն կվտ/ժամ: Նշվածի համար կարևոր հանգամանք է հանդիսացել նաև Սևանա լճից 2015 թվականին 2014 թվականի համեմատ 100 մլն մ^3 քիչ ջրի բացթողումը, ինչի պարագայում դեֆիցիտը լրացվել է Մխչյան-2 և Ռանչպար-2 պոմպականներով շուրջ 50 մլն մ^3 լրացուցիչ ջրի արտադրությամբ:

Խմելու ջրամատակարար կազմակերպությունների մասով ապահովվել է ջրի որակի համապատասխանությունը գործող ստանդարտներին:

2015 թվականի ընթացքում «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի են ունեցել ջրամատակարարման տևողության ավելացումներ՝ ապահովելով ՀՀ կառավարության գերակա խնդիրներով դրված պահանջը:

2015 թվականին Սևանա լճից օրենքով սահմանված կարգով բաց է թողնվել 167.743 մլն մ^3 ջուր, ինչը նախորդ հինգ տարիների միջին ցուցանիշից ցածր է 50 մլն մ^3-ով: Սևանա լիճ է

տեղափոխվել 109.455 մլն մ^3 ջրաքանակ: Սևանա լճի մակարդակը 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1900.19 մ՝ 2015 թվականի ընթացքում բարձրանալով 6 սմ-ով:

Կատարվել են ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ, շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը: Համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ տեղադրված է 862737 հատ ջրաչափական սարք, որը 2015 թվականի համեմատությամբ ավել է 34363 հազարով: Ջրաչափությունը կազմում է 93.2%:

Ոռոգման ջրի հաշվառումն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով 2015 թվականի ընթացքում ոռոգման համակարգերի հանգուցային 83 կետերում տեղադրվել են ժամանակակից ջրաչափեր, որոնց շահագործումը հնարավորություն է տալիս ջրաքանակների հոսքի նկատմամբ իրականացնել ամենօրյա առցանց հսկողություն: Ջրակորուստների կրճատման ուղղությամբ իրականացվող միջոցառումներից են եղել նաև Ջրային տնտեսության պետական կոմիտեի մասնագետների կողմից իրականացվող գիշերային և ցերեկային ստուգումներն ու ջրաչափումները:

2015 թվականի ընթացքում կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են շուրջ 1830 կմ խմելու, կոյուղու և ոռոգման խողովակաշարեր, ջրանցքներ և ջրատարներ:

8. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի» շրջանակներում Ջերմուկ և Դիլիջան քաղաքներում շահագործման են հանձնվել կեղտաջրերի մաքրման կայաններ:

9. Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստման ուղղությամբ, այդ թվում՝ առաջնահերթ 4 ջրամբարաշինական ծրագրերի մասով (Վեդի, Կապս, Եղվարդ, Մաստարա) իրականացվել են համապատասխան աշխատանքներ.

- Վեդու ջրամբարը նախատեսված է Արարատյան հարթավայրի 4.0 հազ. հա հողակտորները ոռոգելու համար, որոնցից 2.8 հազ. հա՝ մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս ոռոգման եղանակի, ինչի արդյունքում տարեկան կխնայվի շուրջ 12.0 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա: Վեդու ջրամբարի պատվարի և ոռոգման համակարգի կառուցման մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները կավարտվեն 2016 թվականի ապրիլին: Ավարտվել է Զարգացման Ֆրանսիական գործակալության և ՀՀ ֆինանսների նախարարության միջև 75 մլն Եվրո արժողությամբ վարկային համաձայնագրի բանակցային փուլը:
- Կապսի կիսակառույց ջրամբարը գտնվում է ՀՀ Շիրակի մարզում՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս 22 կմ հեռավորության վրա գտնվող Ախուրյանի գետահովտում: Տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության արդյունքների համաձայն նախատեսվում է Կապսի ջրամբարի

կառուցում՝ 55 մ պատվարի բարձրությամբ: 25 մլն մ^3 ծավալով Կապսի ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների մանրամասն նախագծման, շինարարության և շինտեխնիկական վերահսկողության ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են 60.0 մլն եվրո, ճնշումային խողովակաշարի, ոռոգման ներտնտեսային ցանցի և նոր տեխնոլոգիաների տեղադրման մանրամասն նախագծման, շինարարության և շինտեխնիկական վերահսկողության ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են 70.0 մլն Եվրո: Կապսի ջրամբարի կառուցման 1-ին փուլով նախատեսվում է ոռոգելի դարձնել 12325 հա հողատարածք, իսկ 2-րդ փուլով՝ ևս 2200 հա: Մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները նախատեսվում է սկսել 2016 թվականին: Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կկազմի շուրջ 4 տարի:

- Եղվարդի անավարտ ջրամբարը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, առաջարկվող ջրամբարի տարբերակը կունենա 90.0 մլն մ^3 ընդհանուր ծավալ, իսկ պատվարների բարձրությունը կլինի 32մ և 14մ: Ջրամբարի վերակառուցումը թույլ կտա ապահովել շուրջ 12.2 հազ.հա հողատարածքների հուսալի ոռոգում, մեխանիկական ոռոգումը կփոխարինվի ինքնահոս եղանակի, և ներկայումս շահագործվող թվով ինը պոմպակայանները դուրս կգան հետագա շահագործումից՝ արդյունքում տարեկան խնայելով 28.6 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա, ինչպես նաև սակավաջուր Սևջուր գետի սպասարկման տակ գտնվող 5.5 հազ հա հողատարածքներում կբարձրանա ջրապահովվածության մակարդակը: Եղվարդի անավարտ ջրամբարի վերակառուցման նպատակով 2014 թվականի հունիսից սկսվել են իրագործելիության նախնական ուսումնասիրությունները, որոնք ավարտվել են 2015 թվականի հունիսին, և սկսվել են իրագործելիության ուսումնասիրության հիմնական աշխատանքները, որոնք կտևեն 12 ամիս, որից հետո՝ 2016 թվականին, կսկսվեն նախագծման աշխատանքները: Ճապոնական միջազգային համագործակցության գործակալությունն ընթացիկ տարվա գարնանից սկսել է Եղվարդի ոռոգման ծրագրի լիարժեք լայնածավալ կիրառելիության ուսումնասիրությունը: Նախատեսվում է ջրամբարի կառուցման աշխատանքները սկսել 2018 թվականին, որի շինարարության ընդհանուր տևողությունը պլանավորված է 5 տարի:

- Մաստարայի ջրամբարը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում՝ Սելավ Մաստարա գետահովտում: Ջրամբարը նախատեսվում է լցնել Սելավ Մաստարա և Ախուրյան գետերի գարնան վարարային հոսքով: Ջրամբարը նախատեսվում է կառուցել 10.2 մլն մ^3 ընդհանուր ծավալով, օգտակար ծավալը՝ 8.2 մլն մ^3, իսկ պատվարի բարձրությունը 30մ: Ջրամբարը կբարձրացնի 3794 հա ոռոգվող հողատարածքների ջրապահովման մակարդակը, մեխանիկական ոռոգումից անցում կկատարվի ինքնահոս համակարգի, որի արդյունքում տարեկան կտնտեսվի 2.1 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա, ինչպես նաև լրացուցիչ կոռոգվեն ներկայումս չմշակվող 590 հա

հողատարածքները: Մաստարայի ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունների համար Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Տարածաշրջանի Կարողությունների Զարգացման Հավատարմագրային Հիմնադրամի (ECAPDEV) կողմից հատկացվել է դրամաշնորհ: Միաժամանակ նախապատրաստվում է ծրագրի հայեցակարգը՝ նույն հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացնելու համար:

10. Ոռոգման ոլորտում Համաշխարհային բանկի հետ իրականացվում են էլեկտրաէներգիայի ծախսի նվազեցման միջոցով մատակարարվող ոռոգման ջրի ինքնարժեքի նվազեցմանն ուղղված համապատասխան ծրագրեր, մասնավորապես՝

- Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցմամբ նախատեսվում է ինքնահոս եղանակով ապահովել ՀՀ Արարատի մարզի 12 համայնքների հողատարածքների ոռոգումը՝ համակարգի սպասարկման տարածքում ոռոգվող հողատարածքները 854 հա-ից հասցնելով 1232 հա-ի: ՀՀ Արարատի մարզում 12 համայնքների հողատարածքները ոռոգելու համար տարեկան ծախսվում է շուրջ 12 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա, որի ծախսը կազմում է մոտ 0.5 մլրդ դրամ: Նոր ծրագրով նախատեսվում է Ազատ գետի հոսքով Ազատի ջրամբարից շուրջ 9 կմ վերև կառուցել ջրընդունիչ կառույց և մոտեցնող խողովակաշար, որով ոռոգման համար անհրաժեշտ ջրաքանակը կուղղվի Քաղցրաշենի պոմպակայանի ջրթող ավազան՝ գործող մեխանիկականի փոխարեն ինքնահոս եղանակով ոռոգման ջուր մատակարարելով ջրօգտագործողներին.
- Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգը կփոխարինի Ազատ գետից և ջրամբարից ջուր մղող պոմպակայաններից 3-ին (Ազատի քառաստճան, Հացավանի և Գեղադիրի) ինքնահոս ջրամատակարարմամբ՝ Գեղարդալճի ջրամբարից: Հիմնական աշխատանքներն են՝ պատվարի բարձրության ավելացում՝ ծավալն ավելացնելով 2.5 մլն մ^3-ից մինչև 3.4 մլն մ^3, և 33 կմ ճնշումային խողովակաշարի կառուցում: Մեխանիկականից ինքնահոսի փոխարինման արդյունքում կխնայվի 10.88 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա, իսկ ինքնահոս ոռոգվող տարածքը կկազմի 1450 հա, որից նոր ոռոգելի հողատարածքը՝ 575 հա: Համակարգի շինարարական աշխատանքները սկսվել են:
- Բաղրամյան-Նոյակերտ ինքնահոս ոռոգման համակարգը ջուր կստանա Տկիանի ջրանցքից: Ինքնահոս համակարգի կառուցմամբ հնարավորություն կընձեռվի շահագործումից հանել Նոյակերտ 1, 2, Բաղրամյան 1 պոմկայանները, ոռոգել շուրջ 570 հա հողատարածք: Ներկայումս ոռոգվում է 40 հա: Ինքնահոս համակարգի նախագծման աշխատանքներն ավարտվել են: Ներկայումս ընթանում է Համաշխարհային բանկի կողմից ինքնահոս համակարգերի իշխման տակ ընկած ներքին ցանցերի վերակառուցման տնտեսական նպատակահարմարության գնահատման գործընթացը: Շինարարական աշխատանքների մեկնարկը նախատեսվում է 2016 թվականին:

- Մեղրու ինքնահոսի կառուցման շինարարական աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

11. Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, ընթացիկ նորոգման, պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման ծրագրերի շրջանակներում իրականացվել են՝

- Շուրջ 155 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, ինչպես նաև 29.2 կմ ընդհանուր երկարությամբ դրենաժային ցանցի վերականգնման, նորոգման և մաքրման աշխատանքներ.
- Արարատյան հարթավայրում տեղադրված 450 դիտողական հորատանցքերում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2015 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, ապահովվել է էներգախնայողությունը, բարելավվել է ջրի և ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը:

Տրանսպորտ և կապ

<u>Տրանսպորտի ոլորտ</u>

Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության նպատակով կատարվել են Ճանապարհային քարտեզով նախատեսված տրանսպորտի բնագավառի բոլոր միջոցառումները: Հայաստանի Հանրապետությունը միացել է ԵԱՏՄ-ի շրջանակներում «կաբոտաժային» փոխադրումների փուլային ազատականացման ծրագրին:

Հայաստանի Հանրապետությունում ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացը կանոնակարգելու և ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի օրենսդրական բացերը լրացնելու նպատակով մշակվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ:

ՀՀ բեռնափոխադրող ընկերություններին տրամադրվել է 175 ՏՆԵԿ (Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանս) թույլտվություններ, որի արդյունքում պետական բյուջե մուտք է եղել 3.5 մլն դրամ: Միջպետական 22 երթուղիների սպասարկման համար հայտարարվել է մրցույթ, իսկ երթուղիների սպասարկման համար 27 օտարերկրյա փոխադրողներին տրվել են 81 թույլտվություններ:

Ճանապարհաշինության ոլորտ

2015 թվականին մշակվել է ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման հայեցակարգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման 2015-2025 թվականների ֆինանսավորման ռազմավարությունը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 873-Ն որոշմամբ:

Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների պահպանման ծրագրի շրջանակներում իրականացվել են 5.9 մլրդ դրամի աշխատանքներ, այդ թվում՝

- Ճանապարհների՝ 3464.5 կմ ձմեռային և 2978.9 կմ ամառային պահպանման աշխատանքներ,
- 1720 կմ երկարությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների առանձին հատվածների ծածկի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն,
- ավարտվել է ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների ցանցի տեսաձայնագրությունը,
- իրականացվել է ավտոմոբիլային ճանապարհների անհարթության գործակցի որոշում:

Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում շուրջ 3.2 մլրդ դրամի հաշվին իրականացվել են 43.09 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ շահագործման է հանձնվել 3.2 կմ երկարությամբ Վազաշեն-Պառավաքար շրջանցիկ ճանապարհը: Տնտեսվել է շուրջ 235.1 մլն դրամ, որից 151 մլն դրամն ուղղվել է Արտաշատի մուտքի ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներին:

Վարդենիս-Մարտակերտ մայրուղու հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամին տրամադրվել է 5.24 մլրդ դրամ:

Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում 2015 թվականին կնքվել է Դիլիջանի թունելի հիմնանորոգման պայմանագիրը՝ 1.0 մլրդ դրամ ընդհանուր արժեքով: 2015 թվականին իրականացվել են 197.5 մլն դրամի աշխատանքներ: Մնացած աշխատանքները նախատեսվում է ավարտել 2016-2017թթ:

«Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավում» ՀԲ-ի վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել շուրջ 97 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ: Ծրագրի իրականացման ընթացքում առաջացած շուրջ 1 մլրդ դրամ տնտեսման հաշվին կհիմնանորոգեն ևս 38 կմ երկարությամբ լրացուցիչ ճանապարհահատվածներ: Ընդհանուր առմամբ 2015-2016թթ. 13.4 մլրդ դրամ գումարով կվերանորոգվեն 135 կմ ընդհանուր

երկարությամբ ճանապարհահատվածներ: Աշխատանքները պետք է ավարտվեին 2016 թվականին, սակայն աշխատանքներն ընթացել են արագ և կնքված 16 պայմանագրերից 2015 թվականին ամբողջությամբ ավարտվել են թվով 11 պայմանագրերով նախատեսված աշխատանքները՝ 12.4 մլրդ դրամ արժեքով, և 5 պայմանագրերով նախատեսված աշխատանքների գրեթե 90 տոկոսը:

Մշակվել, քննարկվել և ՀՀ ԱԺ-ի կողմից հավանության է արժանացել Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման լրացուցիչ ֆինանսավորման» վարկային ծրագիրը՝ շուրջ 40 մլն դոլար արժեքով:

Հյուսիս հարավ ճանապարհային միջանցքի ծրագրի շրջանակներում 2015 թվականի դեկտեմբերի 29-ին բացվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 1-ի՝ շուրջ 31 կմ երկարությամբ Երևան-Արտաշատ և Երևան-Աշտարակ ճանապարհահատվածի երկկողմանի երթևեկությունը:

Տրանշ 2-ով (Աշտարակ-Թալին) իրականացվել են հնագիտական պեղումներ, հողային և ենթակառուցվածքների, ինչպես նաև հիմքի նախապատրաստման աշխատանքներ՝ շուրջ 5.6 մլրդ դրամ արժեքով:

Տրանշ 3-ի շրջանակներում իրականացված մրցույթների արդյունքում կառուցվելիք Լանջիկ-Գյումրի 27.5 կմ հատվածի շինարարության տեխնիկական վերահսկող կազմակերպություն է ընտրվել Իտալական կոնսորցիումը, իսկ չինական «Սինոհիդրո Քորփորեյշն» ընկերությունը կիրականացնի կառուցման աշխատանքները:

Տրանշ 3-ի Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների համար հայտարարվել է միջազգային մրցույթ, արդյունքներն ամփոփվել են, պայմանագիրը կնքման փուլում է:

Տրանշ 4-ի՝ Ագարակից դեպի Քաջարան 20.5 կմ երկարությամբ ճանապարհահատվածի նախագծային և վերակառուցման աշխատանքների իրականացման համար Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հետ կնքվել է համաձայնագիր, որով Հայաստանի Հանրապետությանը կտրամադրվի 150 մլն ԱՄՆ դոլար վարկ:

Իրականացվել են 9 ուղեանցերի և 1 կամրջի վերակառուցման, կառուցման և վերականգնման աշխատանքների նախագծերը: Շինարարական աշխատանքները կսկսվեն 2016 թվականի մարտին:

Իրականացվում են նաև Արտաշատ-Մեղրի 304 կմ երկարությամբ ճանապարհահատվածի նախնական նախագծման, տեխնիկատնտեսական ուսումնասիրության, ինչպես նաև Տրանշ 4-ի վարկային փաթեթի հայտը ԱԶԲ ներկայացնելու նախապատրաստական աշխատանքները:

Երկաթուղու բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում կնքվել է կոնցեսիոն պայմանագրի փոփոխության երրորդ համաձայնագիրը: «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ-ի կողմից հաշվետու ժամանակաշրջանում փաստացի իրականացվել են շուրջ 6.6 մլրդ դրամի ներդրումային ծախսեր:

2015 թվականին նախորդ տարվա համեմատ երկաթուղային բեռնափոխադրումների ծավալը նվազել է շուրջ 17.3%-ով և կազմել 2528.0 հազար տոննա, այդ թվում՝ ներհանրապետական փոխադրումների ծավալը՝ 18.1%-ով՝ կազմելով 1249.0 հազար տոննա, ներկրվող բեռների ծավալը նվազել է 21.1%-ով՝ կազմելով 962.5 հազար տոննա: Նույն ժամանակաշրջանում բեռնաշրջանառության ծավալը նվազել է 19.9%-ով՝ կազմելով 637.8 մլն տ/կմ:

Պատրաստվել և իրանական կողմին ստորագրման է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև երկաթուղու շինարարության երկկողմ Փոխըմբռնման Հուշագիր՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության տրանսպորտի ենթակառուցվածքների շինարարության և զարգացման ընկերության միջև», որը 2016 թվականի հունվարին ստորագրվել է:

Կապի բնագավառ

Սահմանված ժամկետում իրականացվել են թվայնացման գործընթացի բոլոր դրույթները: 2015 թվականի վերջին թվային ազդանշանը հասանելի էր ՀՀ ողջ տարածքում:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից 48.733 հատ DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերը ձեռք են բերվել և հանձնվել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ դրանք անհատույց սոցիալապես անապահով խմբերին հանձնելու համար:

2015 թվականին զգալիորեն աճել է տարբեր տեխնոլոգիաներով ինտերնետից օգտվողների (բաժանորդների) թիվը, որը 2013 թվականին կազմել է 45.35%, 2014 թվականին՝ 50.03%, իսկ 2015 թվականի նախնական տվյալներով՝ 55.29%:

Զգալիորեն աճել է միջազգային ԱյՓի տարանցման ծառայության հոսքերի թողունակությունը, որը 2013 թվականին կազմել է 75050 ՄԲիթ/վրկ, 2014 թվականին՝ 87897 ՄԲիթ/վրկ, իսկ 2015 թվականի նախնական տվյալներով՝ 170000 ՄԲիթ/վրկ:

Միջազգային ԱյՓի տարանցման ծառայության (1 ՄԲիթ/վրկ) միջին սակագնի նվազեցումը բերել է ծառայությունների մատչելիության՝ կազմելով 4500 դրամ: Միջոցառումների իրականացման արդյունքում նախատեսվում է 2016 թվականին ինտերնետից օգտվողների թիվը հասցնել 60%-ի:

«Գլոբալ տնտեսական ֆորում-2015» զեկույցում ներկայացված համաշխարհային ցանցային պատրաստվածության բնագավառում ՀՀ դիրքը 2015 թվականի դրությամբ 2014 թվականի համեմատ բարելավել է 7 կետով՝ զբաղեցնելով 58-րդ տեղը:

Պետական եկամուտների քաղաքականություն

2015 թվականին մշակվել է ՀՀ հարկային օրենսգրքի նախագիծը: Վերջինիս մշակման աշխատանքների շրջանակներում մեծ ուշադրություն է հատկացվել հատկապես միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությանն ու բազմակողմանի վերլուծությունների իրականացմանը՝ նպատակ ունենալով մշակել երկարաժամկետ հատվածի համար նախատեսված այնպիսի փաստաթուղթ, որը հնարավորություն կընձեռի ապահովել նպաստավոր ու կանխատեսելի հարկային միջավայր, երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ, պետական բյուջեի հարկային եկամուտների աճ, ինչպես նաև հասարակության տարբեր սոցիալական խմբերի եկամուտների արդարացի վերաբաշխում: Հարկային օրենսգրքի նախագիծը քննարկվել է 2015 թվականի հոկտեմբերի 8-ին կայացած՝ ՀՀ կառավարության նիստում և հավանության է արժանացել: Հարկային օրենսգրքի նախագիծը ակտիվորեն քննարկվել է հարկային խորհրդում, որոնցում ներգրավվել են մասնագիտական-հասարակական կազմակերպությունների ու գործարար միջավայրի ներկայացուցիչները: 2016 թվականի ապրիլ ամսին նախագծի վերջնական տարբերակը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

Հարկային օրենսդրության փոփոխություններով ստեղծվել է համապատասխան իրավական հիմք՝ 2018 թվականի հունվարի 1-ից պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվառման արմատապես նոր՝ միասնական գանձապետական հաշվի համակարգի ներդրման համար: Այս համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի ներկայումս հարկային պարտավորությունների հաշվառման նպատակով կիրառվող մի քանի տասնյակ գանձապետական հաշիվների փոխարեն կիրառել ընդամենը մեկ՝ միասնական գանձապետական հաշիվ: Համակարգի ներդրման արդյունքում կվերանա միասնական գանձապետական հաշվի վրա գերավճարներ կուտակելու հնարավորությունը, մեկ հարկատեսակից մեկ այլ հարկատեսակին հաշվանցում կատարելու և դրանից բխող անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտությունը, կկրճատվեն հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկների քանակն ու հարկ վճարողների և հարկային մարմինների շփումները: Նշված առավելություններին զուգահեռ՝ համակարգի ներդրմամբ կավտոմատացվեն նաև հարկային մարմնի մի շարք ներքին գործընթացներ:

Գործարար միջավայրի բարելավման և երկրում տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացման նպատակով մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են մի շարք օրենքներ, որոնցով սահմանվել է, որ՝

1) ՀՀ կառավարության հավանությանն արժանացած արտահանման ծրագիր իրականացնող և այդ ծրագրում ընդգրկված՝ ՀՀ ռեզիդենտ հարկ վճարողների խմբի մեջ մտնող հարկ վճարողների համար շահութահարկի գումարը հաշվարկվում է շահութահարկի 5 կամ 2 տոկոս դրույքաչափով, եթե հաշվետու տարվա ընթացքում արտահանումների ծավալը կազմում է առնվազն համապատասխանաբար 40 կամ 50 մլրդ դրամ,

2) ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող և այդ ծրագրում ընդգրկված՝ ՀՀ ռեզիդենտ հարկ վճարողների շահութահարկի գումարը հաշվարկվում է 5 տոկոս դրույքաչափով, եթե վերջիններս գործունեություն են իրականացնում շինարարության կամ շինմոնտաժային ոլորտում և բացառապես ՀՀ տարածքից դուրս: Միաժամանակ, նշյալ արտոնությունից օգտվող հարկ վճարողների կողմից վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է 13 տոկոս դրույքաչափով,

3) 2016 թվականի հունվարի 1-ից ամբողջությամբ անցում է կատարվել հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման էլեկտրոնային համակարգին, ինչը էականորեն կկրճատի հարկային հաշվառման վրա ծախսվող ժամանակն ու կարևոր ներդրում կլինի ստվերային տնտեսության դեմ պայքարի գործում:

Ակտիվորեն աշխատանքներ են իրականացվել Եվրասիական տնտեսական միության նոր մաքսային օրենսգրքի նախագծի մշակման շրջանակներում, այդ թվում՝ մայիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում Եվրասիական տնտեսական հանձնաժողովում կայացած՝ փորձագետների նիստերի շրջանակներում:

Շարունակվել են Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ պայմանավորված անհրաժեշտ ենթաօրենսդրական բազայի ձևավորման աշխատանքները: Մասնավորապես, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել և շրջանառվել են թվով 32 իրավական ակտերի նախագծեր, որոնցից 19-ը ընդունվել են ՀՀ կառավարության կողմից:

Պետական գնումների ոլորտ

ՀՀ կառավարության 30.01.15թ. թիվ 105-Ն որոշմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող հիմնական՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգը ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ (այսուհետև՝ կարգ): Կարգը քննարկվել է ԵՄ

SIGMA ծրագրի և «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի փորձագետների հետ: Կարգով կանոնակարգվել են արձանագրված հետևյալ հիմնական խնդիրները.

- Ներդրվել է հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնումների կատարման դեպքում մասնակիցներին մրցակցային եղանակով որոշելու մեխանիզմ.

- Հնարավոր չարաշահման դեպքերի կանխարգելման և գնման ընթացակարգերին մասնակցելու գրավչության աստիճանի բարձրացման նպատակով սահմանափակվել են պայմանագրերի ժամկետները երկարաձգելու, գնման պահանջի դադարման հիմքով գնման գործընթացները չկայացած հայտարարելու, մասնակիցների ներկայացրած հայտերը ոչ բովանդակային գնահատելու պատվիրատուների իրավասությունները.

- Շինարարական աշխատանքների ձեռքբերման ընթացակարգերի համար ներդրվել է շահերի բախման համակարգ, որի արդյունքում նախագծային փաստաթղթերի մշակման և որակի նկատմամբ հսկողության գործառույթների իրականացումը վերապահվել է տվյալ բնագավառում պետության քաղաքականությունը մշակող լիազոր մարմիններին, իսկ շինարարական աշխատանքների կատարման պատվիրատուների լիազորությունները վերապահվել են այն մարմիններին, որոնց տնօրինության տակ են գտնվում կապալի օբյեկտները:

Միաժամանակ, շինարարական աշխատանքների գնման դեպքում բացառվել է մասնակիցների կողմից նախահաշիվներում առանձին տեսակի աշխատանքների միավոր գները ինքնուրույն սահմանելու հնարավորությունը, իսկ կատարողականների դիմաց վճարումները այլևս իրականացվում են նախահաշվային գնի նկատմամբ արձանագրված խնայողության տոկոսային հարաբերակցությունը բազմապատկելով փորձաքննություն անցած նախահաշվով նախատեսված աշխատանքի միավոր արժեքով:

- Սահմանվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի համակարգում գործող պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար գնումները կենտրոնացված կարգով՝ վերադաս մարմնի աշխատակազմերում կազմակերպելու մեխանիզմ՝ կազմակերպություններին թողնելով գնման հայտերը հաստատելու, հայտերը գնահատելու, հաղթողին որոշելու, պայմանագրի արդյունքն ընդունելու և վճարումներ կատարելու գործառույթը: Այս մեխանիզմի ներդրումը հնարավորինս կապահովի բավարար արդյունավետություն՝ կապված նմանատիպ կազմակերպություններում համապատասխան կարողությունների բացակայության, ինչպես նաև գնումները տնտեսապես շահավետ պայմաններով և էլեկտրոնային ձևով իրականացնելու հանգամանքի հետ:

- Միջնորդավորված գնումների ծավալը նվազեցնելու նպատակով ներդրվել է շրջանակային համաձայնագրերով գնումների կատարման յուրաքանչյուր դեպքում մասնակիցների նկատմամբ

մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների կիրառման համակարգ, ի տարբերություն նախորդի, երբ մասնակիցը ներկայացնում էր միայն գնային առաջարկ:

- Ապրանքների գնման դեպքում ներդրվել է ապրանքների մատակարարման պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտը որոշակի ժամանակահատվածը մեկ պայմանագրով սահմանված գների նվազեցման մեխանիզմ, եթե շուկայում տեղի է ունեցել տվյալ ապրանքի գնի նվազեցում:

- Մասնակիցների հնարավոր հակամրցակցային համաձայնության գալու և/կամ չարաշահման դեպքերը կանխարգելելու նպատակով սահմանվել է, որ հայտի ապահովումը չներկայացնելու կամ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացվելու դեպքում տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ առանց այդ թերությունը շտկելու հնարավորության:

- Գնման գործընթացների առավել թափանցիկ և հրապարակային հիմունքներով կազմակերպումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ նախատեսվել է հայտերի բացման նիստի արձանագրությունների, ինչպես նաև բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման մասին պատվիրատուի ներկայացրած տեղեկատվության հրապարակում www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

- Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակիցներին ներառելու գործընթացի ժամկետները կանոնակարգելու նպատակով սահմանվել են Գնումների աջակցման կենտրոնի կողմից մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը ուսումնասիրելու ժամկետներ:

ՀՀ կառավարության 05.12.13թ. թիվ 1370-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների արդյունքում՝

- 2015 թվականի ապրիլի 1-ից պետական մարմինների կարիքների համար նաև պարզեցված ընթացակարգով, իսկ քաղաքային համայնքների կարիքների համար՝ բաց ու պարզեցված ընթացակարգերով և շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումներն իրականացվում են էլեկտրոնային ձևով: Մինչ նշված ժամկետը էլեկտրոնային եղանակով իրականացվում էին միայն պետական մարմինների կարիքների համար բաց ընթացակարգով և շրջանակային համաձայնագրերի միջոցով կատարվող գնումները,

- 2015 թվականի հունիսի 13-ից էլեկտրոնային եղանակով են իրականացվում նաև հիշյալ պատվիրատուների կողմից գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգով կատարվող գնումները:

Միաժամանակ ձեռնարկվել են միջոցներ պետական կառավարման մարմինների և քաղաքային համայնքների կարիքների համար անհետաձգելության հիմքով պայմանավորված առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի կազմակերպումը նույնպես էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով իրականացնելու ուղղությամբ: Այս կապակցությամբ մշակվել և 2016 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է համապատասխան որոշում, որի արդյունքում 2016 թվականի մայիսի 1-ից նշված մարմինների կողմից հրատպության հիմքով պայմանավորված մեկ անձից գնումները նույնպես իրականացվելու են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Մշակվել են նաև էլեկտրոնային գնումների համակարգի երեք նոր (պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվությունների պատրաստման) մոդուլներ և իրականացվել է դրանց՝ պիլոտային եղանակով շահագործման գործընթացը:: 2016 թվականի ապրիլից, ըստ նախապես սահմանված ժամանակացույցի, սկսվել է ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից էլեկտրոնային գնումների համակարգի գնումների պլանավորման, գնման պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվությունների պատրաստման մոդուլների համակարգի շահագործումը:

Գնման գործընթացների նկատմամբ պետական կառավարման մարմինների և քաղաքային համայնքների ղեկավարների կողմից պատշաճ հսկողություն իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ պարտադիր է դարձել 20 մլն ՀՀ դրամը գերազանցող գնումների դեպքում գնման գործընթացները, ներառյալ պայմանագրերի կատարումը, պատվիրատուների ներքին աուդիտի ստորաբաժանումների միջոցով աուդիտի ենթարկելու պահանջը: Մինչ այդ գործող կարգի համաձայն աուդիտն իրականացվում էր ընտրանքային կարգով:

ՀՀ պետական կառավարման մարմինների թվով շուրջ 180 գնումների համակարգողների համար ՀՀ ֆինանսների նախարարության «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 2015 թվականի մարտ-ապրիլ ամիսներին կազմակերպվել են սեմինար-քննարկումներ, որոնց ընթացքում նշված մասնագետներին են ներկայացվել ՀՀ կառավարության 30.01.15թ. թիվ 105-Ն որոշման մեջ կատարված հիմնական փոփոխություններն ու դրանց կիրառման մեխանիզմները:

ՀՀ ֆինանսների նախարարի՝

- 01.04.2015թ. թիվ 181-Ն հրամանով հաստատվել է պետության համար պարտավորություններ առաջացնող գնման գործարքների հաշվառման կարգը, որը համապատասխանեցվել է ՀՀ կառավարության 30.01.2015թ. թիվ 105-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգին,

- 27.04.2015թ. թիվ 251-Ն հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. թիվ 1169-Ն հրամանում, որի համաձայն գնահատվում են պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջները՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների պահպանման տեսանկյունից, որոնց արդյունքները հրապարակվում են www.gnumner.am կայքում:

ՀՀ կառավարության 12.02.2015թ. թիվ 99-Ն որոշմամբ հաստատվել են գնումների համակարգողների որակավորման շնորհման և գնումների որակավորված մասնագետների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգերը: Նշված որոշմամբ սահմանվել են գնումների համակարգողի որակավորման շնորհման նպատակով քննությունների կազմակերպման ու անցկացման և գնումների որակավորված մասնագետների շարունակական մասնագիտական վերապատրաստման մեխանիզմները:

Նշված որոշման հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարի 27.04.2015թ. թիվ 247-Ա հրամանով հաստատվել են նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պատվիրատուների գնումների համակարգողների շարունակական վերապատրաստման ծրագրերն ու թեմաները:

ՀՀ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, վերջիններիս ենթակայությամբ գործող հիմնարկների, ՊՈԱԿ-ների ու ՓԲԸ-ների շուրջ 630 գնումների համակարգողների համար կազմակերպվել են որակավորման քննություններ, որոնք հաջողությամբ հանձնել են 364 գնումների համակարգողներ:

2015 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին ուսումնասիրվել են ՀՀ ֆինանսների նախարարություն հաշվառման նպատակով ներկայացված թվով 23187 պայմանագրեր և հաշվետվություններ, որոնցից 3439 պայմանագրերում արձանագրվել են անհամապատասխանություններ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների նկատմամբ, իսկ թվով 43 պայմանագրեր՝ շուրջ 347 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, չեն հաշվառվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

Պետական ներքին ֆինանսական հսկողության ոլորտ

ՀՀ պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգի կայացմանն օժանդակող՝ Եվրոպական Միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող Թվինինգ ծրագրի շրջանակում 2015 թվականի ընթացքում աշխատանքներ են տարվել պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգի կառավարչական հաշվետվողականության վրա հիմնված՝ «Ֆինանսական կառավարում և հսկողություն» բաղադրիչի ներդրման ուղղությամբ:

2014 թվականին Եվրոպական Միության կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակում գնահատվել են պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված՝ 2011-2014թթ. իրականացված միջոցառումները: Գնահատման արդյունքներով մշակվել, շահագրգիռ մարմինների, միջազգային գործընկերների և հասարակական կազմակերպությունների հետ քննարկվել և ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրության 15-րդ կետով հավանության է արժանացել պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների վերանայված ռազմավարությունը, պետական ֆինանսների կառավարման ոլորտում առկա խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները, պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2016-2020 թվականներին իրականացվելիք գործողությունների ծրագիրը:

Մշակվել և ՀՀ ֆինանսների նախարարի 27.01.2015թ. N 26-Ն հրամանով նոր խմբագրությամբ հաստատվել է հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը, որի արդյունքում պարտադիր է դարձել յուրաքանչյուր վերապատրաստման ծրագրի ավարտից հետո այդ դասընթացների վերաբերյալ թեստի հանձնումը: Թեստը հաջողությամբ չհանձնելու դեպքում ներքին աուդիտորը զրկվում է որակավորումից: 2015 թվականի ընթացքում կազմակերպվել են ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման թվով 14 դասընթաց, որոնց մասնակցել են 183 որակավորված ներքին աուդիտորներ: Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին մասնակցած որակավորված ներքին աուդիտորների համար կազմակերպվել և անցկացվել է թվով 15 թեստ, որը հաջողությամբ հանձնել են թվով 175 աուդիտորներ:

ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 128-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման գործընթացը սահմանող կարգում: Մասնավորապես պարզեցվել է ներքին աուդիտորների որակավորում ստանալու գործընթացը: 2015 թվականին կազմակերպված որակավորման քննություններին մասնակցել է թվով 147 անձ, որոնցից 88-ին շնորհվել է ներքին աուդիտորի որակավորում:

Մշակվել և ՀՀ ֆինանսների նախարարի 10.12.2015թ. N 856-Ն հրամանով հաստատվել են լիազոր մարմին ներկայացվող՝ ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվության ձևը և լրացման կարգը, որը ՀՀ ֆինանսների նախարարությանը հնարավորություն կընձեռի իրականացնել ներքին աուդիտի ստորաբաժանումների գործունեության արտաքին գնահատում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ

2015 թվականի տարեկան տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տնտեսության զարգացման միտումները շարունակվում են, սակայն նախորդ տարվա համեմատ՝ ավելի դանդաղ տեմպերով: Տարվա առաջին կեսին տնտեսական աճը դրսևորեց արագացման միտումներ, սակայն տարեվերջին այն էապես դանդաղեց և տարեկան աճը կազմեց 3.0%՝ կրելով հիմնական գործընկեր երկրների տնտեսական անբարենպաստ զարգացումների, մետաղների միջազգային գների նվազման, Ռուսաստանից ներհոսող դրամական փոխանցումների կրճատման արդյունքում իրական տնօրինվող եկամտի նվազման, ինչպես նաև տնտեսությունում վարկավորման մակարդակի նվազման ազդեցությունը, որոնք էապես հակազդվեցին իրականացված հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականությամբ: Նշված զարգացումների արդյունքում արձանագրվել է ընթացիկ հաշվի բարելավում՝ պայմանավորված հիմնականում ներմուծման էական կրճատմամբ:

2015 թվականին միջին գնաճը կազմել է 3.7%: Արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների անվանական շուրջ 2.0% աճ, ծախսերի գծով՝ 14.1% աճ: Ամբողջական պահանջարկի խթանման և մասնավոր ներդրումների թույլ ակտիվության բացասական հետևանքները մեղմելու նպատակով 2015 թվականի ընթացքում իրականացվել է ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականություն:

Համախառն առաջարկ

2015 թվականին արտաքին աշխարհից եկող ոչ բարենպաստ տնտեսական զարգացումների՝ գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության և հումքային ապրանքների գների նվազման պայմաններում, տնտեսությունը շարունակում է աճել, ընդ որում՝ հիմնականում արտահանելի ճյուղերի հաշվին: Նախորդ տարվա նկատմամբ գրանցվել է ՀՆԱ-ի 3.0% աճ, ինչը զիջում է նախորդ տարվա ցուցանիշը 0.5 տոկոսային կետով: Ընդ որում ՀՆԱ-ի աճին նպաստել են գյուղատնտեսությունը (2.1 տոկոսային կետ), արդյունաբերությունը (1.0 տոկոսային կետ) և ծառայությունների (0.8 տոկոսային կետ) աճերը, իսկ շինարարությունը (0.4 տոկոսային կետ) բացասաբար է նպաստել տնտեսական աճին: Գործընկեր երկրների տնտեսություններից եկող բացասական զարգացումներն իրենց արտացոլումն են գտել հիմնականում իրական տնօրինվող եկամտի նվազման վրա՝ նպաստելով ծառայությունների նախորդ տարվա համեմատ ցածր աճի ձևավորմանը: Ընդ որում առևտուրը, որը ներառված է ծառայություններում, նվազել է:

Գծապատկեր 1. 2014-2015 թվականներին տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների նպաստումները ՀՆԱ-ի իրական աճին, տոկոսային կետ:





Արդյունաբերություն[1]***:*** 2015 թվականին արդյունաբերությունն աճել է պայմանավորված հանքագործական արդյունաբերությամբ: Արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալի 5.2% աճ: Չնայած միջազգային շուկայում մետաղների գների նվազման միտումին[2]՝ արդյունաբերությանը հիմնականում նպաստել է հանքագործական արդյունաբերության 50.4% աճը, որը պայմանավորված է Թեղուտի հանքավայրի շահագործմամբ:

Մշակող արդյունաբերությունը նվազել է՝ հիմնականում կրելով արտաքին տնտեսական զարգացումների ազդեցությունը: Մշակող արդյունաբերությունը նվազել է 5.6%-ով, ինչը պայմանավորված է եղել հիմնականում սննդամթերքի (9%), հիմնային մետաղների (15%) և խմիչքների (19.7%) արտադրության ծավալների նվազմամբ: Մշակող արդյունաբերությանը բացասաբար նպաստող ենթաճյուղերի ցուցանիշները պայմանավորված են ինչպես գործընկեր երկրների (հիմնականում Ռուսաստանի) տնտեսական զարգացումների արդյունքում արտաքին պահանջարկի նվազմամբ, այնպես էլ դրամական փոխանցումների անկման հետևանքով իրական տնօրինվող եկամտի նվազմամբ: Մշակող արդյունաբերությանն էական դրական նպաստում է ունեցել ծխախոտային արտադրատեսակների արտադրության 49.1% աճը, որը պայմանավորված է ծխախոտի արտահանման ծավալների աճով:

Էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման ճյուղերն աճի ցուցանիշներ են արձանագրել: Էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման ճյուղերում արձանագրվել է համապատասխանաբար 6.7% և 10.1% աճ: Էլեկտրաէներգիայի աճը պայմանավորված է եղել էլեկտրաէներգիայի արտահանման 7% աճով և ներմուծման 15.6% նվազմամբ: Արդյունքում՝ էլեկտրաէներգիայի զուտ արտահանումն աճել է 11.2%-ով: Էլեկտրաէներգիայի արտադրության աճը հիմնականում ապահովվել

[1] Այսուհետ ներկայացված են ճյուղերի համախառն թողարկումների ցուցանիշները:
[2] Պղնձի գները նվազել են 19,7%-ով, աղբյուրը՝ http://www.imf.org/external/np/res/commod/index.aspx

է ՀԱԷԿ-ի և ՀԷԿ-երի կողմից արտադրության ծավալների համապատասխանաբար 13.1% և 10.7% աճերի հաշվին, իսկ ՋԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիան նվազել է 14.8%-ով:

Գյուղատնտեսություն: Գյուղատնտեսությունը երկնիշ աճի ցուցանիշ է արձանագրել՝ պայմանավորված թե՛ էքստենսիվ, թե՛ ինտենսիվ գործոններով: 2015 թվականին գյուղատնտեսության համախառն թողարկումն աճել է իրական արտահայտությամբ 11.5%-ով: Գյուղատնտեսության աճը հիմնականում պայմանավորված է եղել բուսաբուծության 15.2% աճով, որն ուղեկցվել է ցանքատարածությունների 5.7% աճով և բնակլիմայական բարենպաստ պայմաններով: Բուսաբուծության աճին ամենամեծ նպաստումն են ունեցել պտուղ, հատապտղի և բանջարեղենի՝ համապատասխանաբար 35% և 10% աճերը: Անասնաբուծությունը և ձկնորսությունը նույնպես նպաստել են գյուղատնտեսությանը՝ աճելով համապատասխանաբար 6.1%-ով և 6.4%-ով: Անասնաբուծության ճյուղի աճը պայմանավորված է եղել հիմնականում մսի արտադրության 7.8% աճով: Կաթի և ձվի արտադրությունները նույնպես աճել են՝ համապատասխանաբար 4.0%-ով և 2.8%-ով: Գյուղատնտեսության աճն ուղեկցվել է նաև ոլորտում ներդրումների (կապիտալ շինարարության) 61.9% աճով:

Շինարարություն: Չնայած 2015 թվականին 2014 թվականի համեմատ շինարարության ճյուղի ավելացված արժեքի շուրջ 4% նվազմանը, իրականացված շինարարության ծավալները մի փոքր աճել են՝ պայմանավորված միջանկյալ սպառման աճով: Շինարարության ծավալների աճը տեղի է ունեցել հիմնականում միջազգային վարկային միջոցների հաշվին: 2015 թվականին ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալները նախորդ տարվա նկատմամբ աճել են 0.3%-ով: Ճյուղի աճին հիմնականում նպաստել է միջազգային վարկային միջոցների (20.5%) և մարդասիրական օգնության միջոցների (73.0%) հաշվին իրականացված շինարարության ծավալների աճը: Շինարարության աճի վրա բացասական ազդեցություն է ունեցել հիմնականում համայնքների միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների 56.2%-ով նվազումը: Շինարարության ծավալների դանդաղ աճը ուղեկցվել է նաև ոլորտի վարկավորման ծավալների նվազմամբ[3]:

Շինարարության աճին, ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2015 թվականին հիմնականում նպաստել են մշակույթ, զվարճություններ, հանգիստ (2.6 անգամ), անշարժ գույքի հետ կապված (10.1%), առողջապահություն, բնակչության սոցիալական սպասարկում (3.4 անգամ) և գյուղատնտեսության (61.91%) գործունեության տեսակների մասով իրականացված շինարարության ծավալները:

[3] 2015 թվականի դեկտեմբերին 2014 թվականի դեկտեմբերի նկատմամբ շինարարության վարկավորման ծավալները նվազել են շուրջ 14%ով:

Ըստ տնտեսական գործունեության տեսակների 2015 թվականին շինարարությանը բացասաբար են նպաստել հիմնականում մշակող արդյունաբերության հետ կապված գործունեությանը (72.7%), տրանսպորտին (21.4%), կրթությանը (33.3%) և հանքագործական արդյունաբերությանն (55.9%) ուղղվող շինարարության ծավալների նվազումները:

Ծառայություններ և առևտուր: Ծառայությունների աճը՝ դանդաղել, իսկ առևտրի ծավալները նվազել են՝ կրելով հիմնականում բնակչության տնօրինվող եկամուտների և վարկավորման ծավալների նվազման ազդեցությունը: 2015 թվականի ընթացքում մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա նկատմամբ աճել է 2.7%-ով, ինչին հիմնականում նպաստել է մշակույթ, զվարճություններ և հանգիստ գործունեության հետ կապված մատուցված ծառայությունների 68.1% աճը: Տրանսպորտի ոլորտում մատուցված ծառայությունների ծավալների 19.9% նվազումը բացասական նպաստում է ունեցել ոլորտի աճին, ինչը պայմանավորված է ցամաքային տրանսպորտի ենթաոլորտում մատուցված ծառայությունների 14.9% նվազմամբ:

2015 թվականին առևտրի շրջանառությունը նվազել է 8%-ով, ինչը պայմանավորված է եղել մանրածախ, մեծածախ և ավտոմեքենաների առևտրի շրջանառության ծավալների համապատասխանաբար 10.1%, 4.2% և 9.8% նվազմամբ:

Առևտրի նվազումը և ծառայությունների դանդաղ աճը հիմնականում արտերկրից ստացված դրամական փոխանցումների զուտ ներհոսքի կտրուկ նվազման արդյունքում բնակչության իրական տնօրինվող եկամուտների կրճատման, ինչպես նաև վարկավորման իրական ծավալների նվազման հետևանք են[4]:

Տրանսպորտ և կապ: 2015 թվականին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալն աճի, իսկ ուղևորափոխադրումների ծավալը՝ նվազման միտում է դրսևորել:

Ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալն աճել է հիմնականում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցներով իրականացված փոխադրումների հաշվին: Արձանագրվել է 2014 թվականի համեմատ բեռնափոխադրումների ծավալի 8.8% աճ, ինչը պայմանավորված է եղել ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների 27.5% աճով՝ հիմնականում ներհանրապետական բեռնափոխադրումների աճի հաշվին: Ընդհանուր օգտագործման տրանսպորտի մյուս տեսակներով բեռնափոխադրումների նվազում է արձանագրվել. երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումները նվազել են 17.2%-ով, որը պայմանավորված է հիմնականում ներհանրապետական բեռնափոխադրումների 17.4% նվազմամբ, օդային

[4] 2015 թվականի դեկտեմբերին 2014 թվականի դեկտեմբերի նկատմամբ առևտրի վարկավորման ծավալները նվազել են շուրջ 10%-ով:

տրանսպորտով[5] և մայրուղային խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումները նույնպես նվազել են՝ համապատասխանաբար 1.9%-ով և 3.9%-ով:

Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը նվազել է հիմնականում ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներով իրականացված փոխադրումների կրճատման արդյունքում: 2015 թվականին ուղևորափոխադրումների ծավալը նվազել է 7.5%-ով: Ուղևորափոխադրումները նվազել են հիմնականում ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների 8.2% նվազման հետևանքով: Երկաթուղային և օդային տրանսպորտով ուղևորափոխադրումները նույնպես նվազել են՝ համապատասխանաբար 7.7%-ով և 7.9%-ով:

2015 թվականին կապի ծառայությունները նվազման միտում են դրսևորել: Հեռուստառադիոծրագրերի կազմման և հեռարձակման, հեռահաղորդակցության գործունեությունից ստացված հասույթը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 6.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել հեռահաղորդակցման ծառայությունների 6.7%-ով կրճատմամբ, ինչն էլ պատճառ է բջջային հեռահաղորդակցման ծառայությունների՝ և՛ անվական, և՛ իրական արտահայտությամբ 8.8% նվազման:

Համախառն պահանջարկ

2015 թվականի տնտեսական աճն ուղեկցվել է ներքին պահանջարկի նվազմամբ և զուտ արտահանման բարելավմամբ:

Սպառում: Վերջնական սպառումը նվազել է՝ պայմանավորված մասնավոր հատվածի սպառման ծախսերի նվազմամբ, որի ազդեցությունը տնտեսության վրա մեղմվել է խթանող հարկաբյուջետային քաղաքականության միջոցով: 2015 թվականին վերջնական սպառումը նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ նվազել է 6.5%-ով: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2015 թվականին կազմել են համապատասխանաբար 15.1% և 84.9%, ընդ որում՝ խթանող հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում պետական սպառումը նախորդ տարվա համեմատ իրական արտահայտությամբ աճել է շուրջ 3.1%-ով, իսկ ներհոսող դրամական փոխանցումների նվազմամբ պայմանավորված մասնավոր հատվածի տնօրինվող եկամտի նվազման և վարկավորման ծավալների իրական նվազման հետևանքով մասնավոր սպառումն իրական արտահայտությամբ նվազել է 7.9%-ով:

Ներդրումներ: Կապիտալ ներդրումները նվազել են՝ պայմանավորված մասնավոր ներդրումների նվազմամբ: 2015 թվականին կապիտալ ներդրումները նախորդ տարվա նկատմամբ

[5] Այն իր մեջ ներառում է նաև այլ երկրների ավիաընկերությունների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:

իրական արտահայտությամբ նվազել են 5.1%-ով՝ պայմանավորված մասնավոր ներդրումների շուրջ 8.9% իրական նվազմամբ: Մասնավոր ներդրումների նվազմանը նպաստել են շինարարության նվազումը, տնտեսության իրական հատվածի վարկավորման ծավալների իրական նվազումը և օտարերկրյա ուղղակի ներդրումների նվազումը: Մասնավոր ներդրումների թույլ ակտիվության բացասական հետևանքները մեղմելու նպատակով իրականացվել է խթանող հարկաբյուջետային քաղաքականություն, որի արդյունքում 2015 թվականին պետական ներդրումներն իրական արտահայտությամբ աճել են 15.7%-ով:

Ներդրումների փոփոխությանը դրականորեն է նպաստել ծառայությունների և գյուղատնտեսության ճյուղում կատարված ներդրումների աճը, բացասական նպաստում է ունեցել արդյունաբերության ճյուղում կատարված ներդրումների նվազումը[6]:

Զուտ արտահանում: Զուտ արտահանումը բարելավվել է՝ հիմնականում պայմանավորված ներմուծման նվազմամբ: 2015 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական դրամային ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 4.9%-ով՝ հիմնականում արտահանվող որոշ ապրանքատեսակների, որոշ երկրների նկատմամբ գնային մրցունակության բարելավման և հանքարդյունահանման ոլորտում նախկինում կատարված ներդումներով պայմանավորված նոր հանքավայրերի շահագործման շնորհիվ: Մյուս կողմից, ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ նվազել է 16.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել բնակչության տնօրինվող եկամտի իրական նվազմամբ և տնտեսական ակտիվության ցածր մակարդակով:

Գներ և սակագներ: 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում 12-ամսյա գնաճն աստիճանաբար աճել է՝ մոտենալով նպատակային ցուցանիշի տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանին՝ կազմելով 5.5%: Տարվա երկրորդ կեսից 12-ամսյա գնաճը սկսել է նվազել՝ ձևավորելով ցածր գնաճային միջավայր՝ դեկտեմբերին արձանագրելով 0.1% գնանկում: Առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ԿԲ-ն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 10.5%-ի մակարդակում, սակայն իրականացրել է մակրոպրուդենցիալ մի շարք միջոցառումներ[7]: Հաշվի առնելով տարվա երկրորդ կեսից առկա ցածր գնաճային միջավայրը և արտաքին ու ներքին հատվածից ոչ գնաճային ազդեցությունները՝ ՀՀ ԿԲ-ն աստիճանաբար իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ տարեվերջում սահմանելով 8.75%:

---

[6] Ներդրումների ճյուղային կառուցվածքի ցուցանիշները վերաբերում են ներդրումների կապիտալ շինարարությանն ուղղվող մասին: Ավելի մանրամասն տե՛ս «Շինարարություն» հատվածում:

[7] ՀՀ-ում գործող բանկերի կողմից միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված 2 տարի և ավելի ժամկետայնությամբ միջոցները ենթակա են 0-ական կամ նվազեցված դրույքաչափով պահուստավորման: Մակրոպրուդենցիալ միջոցառումների շրջանակներում մեղմացվել են արտաքին վարկանիշերի առկայության դեպքում ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների և արտահանմամբ զբաղվող վարկառուների արտարժութային վարկերի համար սահմանվող ռիսկի կշիռները:

ՀՀ սպառողական շուկայում արձանագրված 0.1% 12-ամսյա գնանկումը առավելապես պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտ) ապրանքախմբում արձանագրված 3.7% գնանկումով (բացասական նպաստումը գնաճին՝ 1.8 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների խմբում արձանագրված 3.4% գնաճով (դրական նպաստումը գնաճին՝ 0.7 տոկոսային կետ) և բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրված 3.2% սակագների հավելաճով (դրական նպաստումը գնաճին՝ 0.98 տոկոսային կետ): 2015 թվականի դեկտեմբերին էլեկտրաէներգիայի վաճառքի ծառայությունների սակագնի հավելաճի ազդեցությունը ՍԳԻ վրա կազմել է 0.7 տոկոսային կետ:

2015 թվականի միջին գնաճը կազմել է 3.7%, որը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 3.0% աճով (նպաստումը գնաճին՝ 1.5 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 5.6% աճով (նպաստումը գնաճին՝ 1.2 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 3.0% աճով (նպաստումը գնաճին՝ 1 տոկոսային կետ):

Աշխատանքի շուկա: Իրական և անվանական աշխատավարձերն աճել են՝ գերազանցելով վերջին տարիներին դրսևորած միտումները: 2015 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը 2014 թվականի նկատմամբ աճել է 7.8%-ով՝ կազմելով 184647 դրամ[8]: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական և ոչ պետական հատվածներում աճել է 8.8%-ով և 6.6%-ով՝ կազմելով համապատասխանաբար՝ 164889 և 212195 դրամ: Իրական աշխատավարձը 2014 թվականի համեմատ աճել է 3.9%-ով, իսկ իրական արտադրողականությունը՝ 8.9%-ով: Արդյունքում տնտեսությունում կրճատվել է միավոր աշխատուժի ծախսը՝ նպաստելով տնտեսության մրցունակության բարձրացմանը:

Գործազրկության մակարդակը 2015 թվականին աճի միտում է ցուցաբերել՝ աճելով 0.9 տոկոսային կետով և կազմելով 18.5%, որն ուղեկցվել է տնտեսական աճի տեմպի դանդաղեցմամբ:

Արտաքին հատված

2015 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կրճատվել է՝ բարելավելով նախորդ տարիների համապատասխան ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված էր համախառն ազգային տնօրինվող եկամտի իրական նվազման հետևանքով ներմուծման նշանակալի անկմամբ: Այնուհանդերձ, 2015 թվականին ձևավորվել է տնտեսության արտաքին հատվածը բնութագրող մյուս ցուցանիշների վատթարացում. տարեսկզբից նվազել են Հայաստան ներհոսող տրանսֆերտները և

[8] 2015թ. միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշները ներկայացված են աճողական կարգով: Ներառված չեն փոքր և գերփոքր կազմակերպությունների ցուցանիշները:

գործոնային եկամուտները, որին զուգընթաց կրճատվել են նաև արտահանման ծավալները՝ հակազդելով ընթացիկ հաշվի բարելավմանը: Մյուս կողմից, Հայաստան ներհոսող տրանսֆերտների և գործոնային եկամուտների կրճատումը համախառն ազգային տնօրինվող եկամտի նվազման պատճառ է դարձել, որն էլ հանգեցնել է ներմուծվող ապրանքների սպառման անկմանը՝ արդյունքում բարելավելով ընթացիկ հաշիվը:

2015 թվականն առանձնացել է ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի զգալի բարելավմամբ՝ արտահանման նվազման համեմատ ներմուծման առաջանցիկ կրճատման հաշվին (համապատասխանաբար՝ 5.4%-ով և 20.3%-ով): Դրա հետ մեկտեղ տարվա ընթացքում արձանագրվել է սկզբնական և երկրորդային եկամուտների կրճատում (համապատասխանաբար 25.5%-ով և 29.5%-ով): Արդյունքում նշված գործոնները նպաստել են ընթացիկ հաշվի պակասուրդի[9] կրճատմանը մինչև ՀՆԱ-ի 2.6%-ը՝ նախորդ տարվա ցուցանիշը բարելավելով 4.6 տոկոսային կետով (տե՛ս Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Ընթացիկ հաշվի դինամիկան և բաղադրատարրերը (մլն ԱՄՆ դոլար)



2015 թվականին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը նախորդ տարվա համեմատ կրճատվել է մոտ 902 մլն ԱՄՆ դոլարով և կազմել է ՀՆԱ-ի 10.9%-ը (նախորդ տարի՝ 17.7%)՝ նպաստելով ընթացիկ հաշվի բարելավմանը:

[9] 2012 թվականից ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշի հաշվարկման հիմքում ընկած են ԱՀՀ-2008 (2008թ. Ազգային հաշիվների համակարգի) ներդրմամբ պայմանավորված՝ ՀՆԱ-ի վերանայված ցուցանիշները:

Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում (միջին հակումը) 2015 թվականին կազմել է 29.7% (նախորդ տարի՝ 28.5%): Ապրանքների և ծառայությունների ներմուծման միջին հակումը 2015 թվականին կազմել է 41.3%՝ նախորդ տարվա 47%-ի դիմաց:

Արտաքին առևտուր (դոլարային արտահայտությամբ)[10]*:* 2015 թվականին կրճատվել են և՛ արտաքին առևտրաշրջանառությունը, և՛ առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը: 2015 թվականին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (տե՛ս Գծապատկեր 3) կազմել է 1767.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նկատմամբ բարելավվելով 38.6%-ով (հիմնականում պայմանավորված ներմուծման կրճատմամբ)[11]:

Գծապատկեր 3. Առևտրային հաշվեկշռի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



Արտաքին ապրանքաշրջանառությունը 2015 թվականին կազմել է 4740.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով շուրջ 20.6%-ով: Հաշվետու տարում դոլարային արտահայտությամբ նվազել են արտահանման և ներմուծման ծավալները. արտահանումը նվազել է 3.9%-ով՝ կազմելով 1486.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 26.5%-ով և կազմել է 3254 մլն ԱՄՆ դոլար:

Ներմուծման ծավալները կտրուկ կրճատվել են, ընդ որում՝ ներմուծման անկումը տեղի է ունեցել գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով: 2015 թվականին ներմուծման նվազումը հիմնականում պայմանավորվել է արտահանման խնդիրներով և ներքին պահանջարկի կրճատմամբ:

[10] Արտանահումը ՖՕԲ, ներմուծումը՝ ՍԻՖ գներով:

[11] Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը՝ արտահանումը և ներմուծումը հաշվարկած ՖՕԲ գներով, 2015 թվականին կազմել է 1266 մլն ԱՄՆ դոլար:

Մասնավորապես՝ նվազման 4.2 տոկոսային կետը պայմանավորվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբով, որոնք միջանկյալ սպառման բնույթ ունեն (ներմուծվում են վերամշակման և հետագայում արտահանման նպատակով) և հաշվի առնելով ադամանդի արտահանման դժվարություններն արտաքին շուկաներում (խմբի արտահանումը կրճատվել է 10.6%-ով, այդ թվում՝ ադամանդի արտահանումը՝ 34.4%-ով)՝ կրճատվել է նաև համապատասխան հումքի ներմուծումը: Հաջորդ նշանակալի ազդեցությունը թողել է ներմուծման կառուցվածքում ամենամեծ՝ 19.8% կշիռ ունեցող «Հանքահումքային արտադրանք» ապրանքախումբը, որը ներմուծման նվազմանը ամենաբարձր՝ 4.8 տոկոսային կետ նպաստումն է ունեցել, ինչը հիմնականում պայմանավորված էր ներքին պահանջարկի կրճատմամբ՝ կապված բարենպաստ եղանակային պայմաններով (ձմռան տաք ամիսներով) և բնակչության էներգակիրների (այդ թվում՝ գազի) սպառման կրճատմամբ: Ներմուծման նվազմանը համապատասխանաբար 3.9 և 3.4 տոկոսային կետերով նպաստել է նաև «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «Վերգետնյա օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի նվազումը, ինչը հիմնականում բազային էֆեկտ ունի՝ պայմանավորված ինչպես 2014 թվականի տերեվերջի արտարժութային շուկայում տեղի ունեցած իրադարձություններով, այնպես էլ ԵԱՏՄ-ին միանալու հետ կապված՝ բնակչության կողմից ավտոմեքենաների և սարքավորումների մաքսատուրքի և գների աճի սպասումների արդյունքում 2014 թվականի ընթացքում այդ ապրանքների մեծ ծավալով ներկրմամբ: Մյուս բոլոր ապրանքախմբերը՝ բացառությամբ «Սարքեր և ապարատների» (դրական նպաստում), ներմուծման կրճատմանը փոքր նպաստումներ են ցուցաբերել:

Տարվա ընթացքում արձանագրվել է ներդրումային բնույթի[12] ապրանքների ներմուծման 28.3% անկում՝ մոտ 5 տոկոսային կետով բացասաբար նպաստելով ներմուծմանը: Հումքային ապրանքների (այդ թվում՝ բնական գազի և նավթի) ներմուծման մոտ 23% նվազումը ներմուծմանը բացասաբար է նպաստել շուրջ 10 տոկոսային կետով, իսկ սպառողական բնույթի ապրանքների ներմուծման մոտ 15% անկումը՝ շուրջ 2.6 տոկոսային կետով:

Արտահանման կրճատումը հիմնականում պայմանավորվել է արտաքին պահանջարկի նվազմամբ, ինչպես նաև մետաղների միջազգային գների նվազման և դրամի իրական արժևորման հետևանքով արտահանվող ապրանքների մրցունակության անկմամբ: 2015 թվականի արդյունքներով արտահանման անկմանը (3.9%) նշանակալի նպաստում են ունեցել «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (4.7 տոկոսային կետ) և «Պատրաստի սննդի

[12] ՀՀ արտաքին արևտրի ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգումը ՀՀ ՖՆ գնահատականներն են, որտեղ որպես ներդրումային բնույթի դիտարկվել են «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքային խմբերը:

արտադրանք» (2.0 տոկոսային կետ) ապրանքախմբերը՝ կրելով հիմնական գործընկեր երկրների տնտեսական անբարենպաստ զարգացումների ազդեցությունը: Մյուս կողմից արտահանման անկմանը հակազդել են հիմնականում «Հանքահումքային արտադրանք» (5 տոկոսային կետ) և «Մանածագործական իրեր» (2 տոկոսային կետ) ապրանքախմբերը: Հայրենական ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկի նվազումը մասամբ պայմանավորված է դոլարի նկատմամբ գործընկեր երկրների ազգային արժույթների ավելի խորը արժեզրկմամբ, ինչը հանգեցրել է ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի արժևորմանը և դրա հետևանքով արտահանվող ապրանքների մրցունակության անկմանը:

Նորմալացված առևտրային հաշվեկշիռ[13]*:* Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը, որը հիմնականում պայմանավորված դոլարային արտահայտությամբ արտահանման առաջանցիկ աճով (ներմուծման առաջանցիկ անկմամբ)[14]՝ հետճգնաժամային տարիներին բարելավվել է՝ 2015 թվականին կազմելով -0.37 և շարունակելով վերջին տարիներին ձևավորված բարելավման միտումը (տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը



Ներմուծման ծածկման գործակիցը գտնվում է իր պատմական առավելագույն մակարդակին՝ հիմնականում պայմանավորված ներմուծման կտրուկ անկմամբ: 2015 թվականի ընթացքում ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ աճել է 11.4 տոկոսային կետով՝

[13] Նշված ցուցանիշը հաշվարկվում է որպես առևտրային հաշվեկշռի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն և ցույց է տալիս թե միավոր արտաքին ապրանքաշրջանառության մեջ որքան զուտ արտահանված ապրանք կա:
[14] 2010-2015 թվականներին արտահանման միջին աճը կազմել է 14.3%՝ ներմուծման 0.6% աճի պայմաններում:

արտահանման հաշվին ֆինանսավորվել է ապրանքների և ծառայությունների ներմուծման 72.1%-ը (տե՛ս Գծապատկեր 5):

Գծապատկեր 5.Ներմուծման ծածկման գործակիցը, տոկոսներով



Ներճյուղային առևտուր[15]*:* 2015 թվականի ՀՀ ներճյուղային առևտրի մակարդակի վերլուծությունը վկայում է «Պատրաստի սննդի արտադրանք», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», ինչպես նաև «Հանքահումքային արտադրանք», «Կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր», «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Արվեստի ստեղծագործություններ» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերի գծով երկկողմանի արտաքին առևտրի մասին (տե՛ս Գծապատկեր 6): Ընդ որում, նշված առաջին երեք խմբերի երկկողմանի արտաքին առևտուրը վերջին տարիներին համեմատաբար կայուն է:

[15] Ներճյուղային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և՛ ներմուծում, և՛ արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներճյուղային առևտրի գործակիցն իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: «0» նշանակում է լրիվ միակողմանի, իսկ «1»՝ լրիվ երկկողմանի առևտուր:

Գծապատկեր 6. 2015 թվականի ներճյուղային առևտուրը



Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական մնացորդով: «Արվեստի ստեղծագործություններ» և «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (լրիվ երկկողմանի առևտուր) ապրանքախմբերի դրական առևտրային մնացորդները վկայում են մեր երկրի կողմից այդ ապրանքատեսակների գծով արտաքին աշխարհի պահանջարկը բավարարելու մասին:

Մնացած ապրանքախմբերի գծով տեղի է ունեցել մեծամասամբ միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):

Բացահայտված համեմատական առավելության գործակից[16]*:* Բացահայտված համեմատական առավելության գործակցի վերլուծությունը վկայում է որոշ ապրանքատեսակների գծով համաշխարհային շուկայում Հայաստանի համեմատական առավելության մասին (տե՛ս Գծապատկեր 7): Նշված ապրանքատեսակներից են Հայաստանից արտահանվող հետևյալ ապրանքները. ոգելից խմիչքներ և ծխախոտ («Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախումբ), անմշակ ոսկի («Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»), պղնձե ոլորված լարեր, հաղորդալարեր և պղնձյա գամեր («Ոչ թանկարժեք մետաղներ և

[16] Բացահայտված համեմատական առավելության գործակիցը որոշվում է որպես երկու կշիռների հարաբերակցություն. ՀՀ արտահանման մեջ յուրաքանչյուր ապրանքախմբի կշիռը հարաբերած է համաշխարհային տնտեսության արտահանման մեջ համապատասխան ապրանքախմբի կշռին, և եթե այդ հարաբերակցությունը մեծ է 1-ից, ապա նշանակում է, որ տվյալ ապրանքախմբով երկիրն ունի բացահայտված համեմատական առավելություն: Գծապատկերում ներկայացված են UN Comtrade տվյալների բազայի 2014 թվականի տվյալներով տրված գնահատականները, քանի որ Միջազգային առևտրի վիճակագրության 2015 թվականի տվյալները դեռևս բացակայում են (2016թ. ապրիլի 1-ի դրությամբ):

դրանցից պատրաստված իրեր»), բնական մեղր («Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք»), քար՝ մշակած հուշարձանների կամ շինարարության համար և ապրանքներ քարից («Իրեր քարից, գիպսից, ցեմենտից»), կարբիդ («Հանքահումքային արտադրանք») և այլ ապրանքատեսակներ:

Գծապատկեր 7. Բացահայտված համեմատական առավելության գործակից



Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: Հիմնական գործընկեր երկրների կազմը գրեթե չի փոփոխվել, մինչդեռ ըստ աշխարհագրական կառուցվածքի արտաքին առևտրի կշիռները փոխվել են հօգուտ ԱՊՀ երկրների: 2015 թվականի արտաքին առևտրաշրջանառության 29.1%-ը բաժին է ընկել ԱՊՀ, 25.7%-ը՝ ԵՄ և 45.2%-ը այլ երկրներին՝ նախորդ տարվա համապատասխանաբար 28.8%, 26.8% և 44.4%-ի դիմաց:

2015 թվականին ԱՊՀ երկրների նպաստումը եղել է բացասական հետևյալ չափերով. ՀՀ արտահանմանը 5.8, և ՀՀ ներմուծմանը 5.7 տոկոսային կետերով: ԵՄ երկրները նույնպես բացասական են նպաստել, համապատասխանաբար՝ 1.6 արտահանման և 8 տոկոսային կետ ներմուծման ծավալներին: Մնացած երկրների նպաստումը 2015 թվականի ներմուծման կրճատմանը կազմել է 12.7 տոկոսային կետ, մինչդեռ դեպի այլ երկրներ արտահանման ծավալներն աճել են՝ նպաստելով ՀՀ արտահանման աճին (հակազդելով արտահանման նվազմանը) 3.5 տոկոսային կետով: Արդյունքում, արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքում այլ երկրներից ներմուծման կշիռը տարվա ընթացքում նվազել է 1.6 տոկոսային կետով (ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի), իսկ արտահաման կշիռն ավելացել է 5.5 տոկոսային կետով:

2015 թվականին ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկված էին. Չինաստանը (առևտրաշրջանառության 10.2%, նախորդ տարվա 9.8%-ի դիմաց), Գերմանիան (համապատասխանաբար՝ 7.3% և 7.4%), Իրանը (5.8% և 4.9%), Իտալիան (4.2% և 3.6%), Վրաստանը (3.9% և 2.6%), ԱՄՆ-ն (3.4% և 3.7%), Թուրքիան (2.9% և 3.9%), Կանադան (2.7% և 1.9%), Իրաքը (2.8% և 1.8%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (24.8% և 24%) և Ուկրաինան (2.8% և 3.6%): Վերջիններիս բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև 2015 թվականին կատարված ապրանքաշրջանառության մոտ 95 տոկոսը: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (89.5%-ով) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

Երկկողմանի փոխարժեք: ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ դրսևորել է հարաբերական կայուն վարքագիծ: 2015 թվականի դեկտեմբեր ամսին փոխարժեքը կազմել է 482.9 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց, որը նախորդ տարվա դեկտեմբերին ձևավորված միջին փոխարժեքի (463.5) նկատմամբ արժեզրկվել է 4%-ով: Իսկ տարեկան միջին փոխարժեքը կազմել է 477.9 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց. նախորդ տարվա միջինի (415.9) նկատմամբ գրանցվել է դրամի անվանական արժեքի 13% արժեզրկում (2014-ին՝ 1.5% արժեզրկում): Ըստ էության, փոխարժեքի նման վարքագիծը համաշխարհային տնտեսության և տարածաշրջանային զարգացումների արդյունք էր:

Գծապատկեր 8. ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի (կուտակային) փոփոխության դինամիկան (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, %)



2015 թվականին ՀՀ դրամի փոխարժեքը եվրոյի նկատմամբ նախորդ տարվա համեմատությամբ արժևորվել է 4.05%-ով, սակայն պետք է նշել, որ 2015 թվականի հունվար-

մայիսից մինչև հունվար-նոյեմբեր նկատվել է եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման տեմպերի դանդաղման միտում: Իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 2015 թվականի տարեսկզբի համեմատ թեև հիմնականում դրսևորել է արժևորման տեմպերի դանդաղման միտում, այնուամենայնիվ նախորդ տարվա համեմատությամբ այն դեռևս շարունակել է մնալ էականորեն արժևորված. 2015 թվականին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ՌԴ ռուբլու նկատմամբ նախորդ տարվա համեմատությամբ արժևորվել է 39.2%-ով:

Արդյունավետ փոխարժեք: Իրական արդյունավետ փոխարժեքը՝ չնայած արժևորման տեմպի հետևողական դանդաղմանը, այնուամենայնիվ, շարունակում է մնալ զգալի արժևորված՝ իր բացասական ազդեցությունը թողնելով հայրենական ապրանքների արտաքին մրցունակության վրա: Արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ ՀՀ ազգային արժույթը 2015 թվականին նախորդ տարվա համեմատ արժևորվել է 10.6%-ով (անվանական արդյունավետ փոխարժեք), ինչը նշանակում է, որ ՀՀ դրամը արժևորվել է (դրամի դիրքերը ուժեղացել են) հիմնական արժույթների միավորված գնի համեմատ, քանի որ վերոնշյալ «զամբյուղում» ընդգրկված մնացած երկրների արժույթները միջին հաշվով ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել են ավելի շատ (մոտ 23.6%-ով), քան ՀՀ դրամը (13%-ով): Հիմնականում պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով՝ իրական արդյունավետ փոխարժեքի 2015 թվականի միջին արժևորումը կազմել է 6.3% (տե՛ս Գծապատկեր 9):

Գծապատկեր 9. Իրական արդյունավետ փոխարժեքի (կուտակային) փոփոխության դինամիկան (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, %)



Ֆինանսական շուկա

Փողի բազան ընդլայնվել է ՀՀ ԿԲ զուտ արտաքին ակտիվների համալրման հաշվին, ինչը զուգորդվել է ՀՀ ԿԲ զուտ ներքին ակտիվների նվազմամբ: 2015 թվականի տարեվերջին փողի բազան կազմել է շուրջ 921.3 մլրդ դրամ՝ տարեսկզբի համեմատ աճելով 3.9%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվները աճել են 26.6%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները՝ նվազել 14.1%-ով:

Նույն ժամանակահատվածում փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկը աճել է 0.3%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է շուրջ 45%), իսկ պարտադիր պահուստները դրամով նվազել են 3.6%-ովև արտարժույթով աճել՝ 34.5%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է համապատասխանաբար 35% և 20%):

2015 թվականի տարեվերջին փողի զանգվածը կազմել է 1,855.7 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 10.8%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվների աճը կազմել է 44.2%, իսկ զուտ ներքին ակտիվների նվազումը՝ 1.5%:

Փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը նվազել է 0.8%-ով, դրամային ավանդները ապահովել են փողի զանգվածի աճի ընդամենը 2.7 տոկոսային կետը, իսկ արտարժութով ավանդները՝ 8.3 տոկոսային կետը[17]:

2015 թվականի ընթացքում դոլարայնացման մակարդակը շարունակել է աճել, բայց դանդաղ տեմպով, ի տարբերություն 2014 թվականին արձանագրված աճին: Արտարժութային ավանդներ/փողի զանգված հարաբերակցությունը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ աճել է 2.5 տոկոսային կետով, կազմելով՝ 53.6% (2014 թվականին աճը կազմել է 6 տոկոսային կետ, կազմելով 51.1%): Դոլարային ավանդների կշիռն ընդհանուր ավանդների մեջ կազմել է 65.9% (աճը՝ 1.4%):

Ֆինանսական շուկայում նկատվել է վարկավորման ծավալների զգալի նվազում և տոկոսադրույքների սպրեդի նվազում:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2015 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել են 11%-ով: ՀՀ դրամային ավանդների միջին ամսական տոկոսադրույքը 2015 թվականի դեկտեմբերին կազմել է 14.09%, 2014 թվականի 12.53%-ի համեմատ (մինչև մեկ տարի ժամկետով):

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները 2015 թվականին նախորդ տարվա նկատմամբ զգալիորեն նվազել են՝ կազմելով -3.2%[18] 2014 թվականի 21.7%-ի դիմաց (վարկավորման ընդհանուր կառուցվածքում գերակշռում են

[17] Նշենք, որ փողի ագրեգատներում ոչ ռեզիդենտների ավանդները չեն ընդգրկվում:
[18] Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

արտարժույթով վարկերը 65.7%): ՀՀ դրամով վարկավորման միջին ամսական տոկոսադրույքը 2015 թվականի դեկտեմբերին կազմել է 15.96%, 2014 թվականի նույն ամսում արձանագրված 16.21%-ի համեմատ (մինչև մեկ տարի ժամկետով):

Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով ՀՀ դրամով ներգրավված ավանդների և վարկերի միջին ամսական տոկոսադրույքների միջև սպրեդը 2015 թվականին 2014 թվականի նկատմամբ նվազել է 2.5 տոկոսային կետով և կազմել 3.4 տոկոսային կետ:

2015 թվականի ընթացքում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում նկատվել է միջին կշռված եկամտաբերության աճ (շուրջ 4.8 տոկոսային կետով): Այսպես, եթե 2014 թվականին տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 9.8%, ապա 2015 թվականին այն կազմել է 14.6%: Նույն ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 143.9 մլրդ դրամ, 2014 թվականի՝ 79.8 մլրդ դրամի դիմաց, իսկ միջին ժամկետայնությունը՝ 1939 օր, 2014 թվականի 2049-ի համեմատ:

2015 թվականին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 1.67 անգամ (2014թ-ին՝ 2.45), իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.97 (2014թ-ին՝ 0.96):

ՀՀ եվրոպարտատոմսերի շուկայում ևս նկատվել է միջին կշռված եկամտաբերության աճ: Միջազգային կապիտալի շուկայում 2013 թվականին 6.25% եկամտաբերությամբ թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունը 2015 թվականի տարեվերջին կազմել է 6.76%, 2014 թվականի տարեվերջին արձանագրված 6.21%-ի դիմաց: Իսկ 2015թվականին 7.50% եկամտաբերությամբ թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունը 2015 թվականի տարեվերջին կազմել է 7.58%: Եկամտաբերության աճը պայմանավորվել է նաև ԱՄՆ դոլարի այլ արժույթների նկատմամբ արժևորմամբ:

Աղյուսակ 1. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2015թ.

Ամիսներ	2015											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Առևտրային բանկերի վարկեր*	16.8	18.7	19.1	17.1	17.7	17.3	18.2	18.9	17.9	16.5	17.0	15.9
Առևտրային բանկերի ավանդներ*	12.1	13.9	15.2	13.3	15.3	14.8	14.4	12.3	14.1	15.2	15.1	14.1
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	9.50	10.50	10.50	10.50	10.50	10.50	10.50	10.25	10.25	10.25	9.75	8.75

* Հաշվարկված է մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

Հարկաբյուջետային հատված

Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը տնտեսության վրա եղել է առավելապես խթանող:

2015 թվականի արդյունքներով պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 23.1%-ը նախորդ տարվա 23.6%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ՀՆԱ-ի 21.2%-ը նախորդ տարվա 22%-ի դիմաց: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 2%, իսկ հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով՝ 0.4%: Ընդ որում, հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորվել է եկամտային հարկի և մաքսատուրքերի աճերով:

ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի ծախսերի ցուցանիշը 2015 թվականի արդյունքներով նախորդ տարվա նկատմամբ աճել է 2.4 տոկոսային կետով՝ կազմելով 27.9%: Ընթացիկ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 24.5%-ը նախորդ տարվա 22.7%-ի դիմաց, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 3.4%-ը՝ նախորդ տարվա 2.8%-ի դիմաց: Ընդ որում, ընթացիկ ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 12.5%-ով՝ պայմանավորված հիմնականում սոցիալական նպաստների և կենսաթոշակների, աշխատավարձի, ապրանքների ու ծառայությունների և այլ ծախսերի աճով: Իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի աճը կազմել է 26%:

Պետական բյուջեի պակասուրդի աճը առավելապես պայմանավորված է եղել տարվա ընթացում դրսևորվող դանդաղ տնտեսական աճը խթանելու հարկաբյուջետային քաղաքականությամբ: Պետական բյուջեի պակասուրդը 2015 թվականին կազմել է ՀՆԱ-ի 4.8%-ը, նախորդ տարվա 1.9%-ի համեմատ: Պակասուրդի ֆինանսավորման գերակշիռ մասը կատարվել է արտաքին աղբյուրներից միջոցների ներգրավմամբ, ինչով էլ պայմանավորված արձանագրվել է պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի աճ 2014 թվականի համեմատ, շուրջ 5 տոկոսային կետով, կազմելով՝ 48.7%: 2015 թվականի արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 41.4%, նախորդ տարվա 37.1%-ի համեմատ:

Հարկաբյուջետային ազդակը: 2015 թվականին իրականացված հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա ունեցել է ընդլայնող ազդեցություն (2.78% ընդլայնող հարկաբյուջետային ազդակ), ընդ որում, եկամուտների 0.74% և ծախսերի՝ 2.04% ընդլայնող ազդեցությամբ պայմանավորված:

Գծապատկեր 10. Հարկաբյուջետային ազդակը 2009 թվականից



ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով, ելնելով 4.1% տնտեսական աճի կանխատեսումից, ծրագրվել էր ստանալ շուրջ 1191.5 մլրդ դրամ եկամուտներ, որից 1165.8 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից, 25.6 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով: «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ, ինչպես նաև հաշվի առնելով կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է շուրջ 57.2 մլրդ դրամով (4.8%-ով) և կազմել ավելի քան 1248.6 մլրդ դրամ, որից շուրջ 1210.5 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, 38.2 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների գծով: 2015 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1167.7 մլրդ դրամ, որոնք 93.5%-ով ապահովել են ճշտված ծրագրի կատարումը և 2%-ով կամ 23 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Հարկային եկամուտների և պետական տուրքերի տարեկան ծրագիրը կատարվել է 93.6%-ով, այլ եկամուտների ծրագիրը՝ 100.2%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհների կատարողականը կազմել է 78.3%: Նշենք, որ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները կազմել են շուրջ 36.1 մլրդ դրամ կամ կանխատեսված ցուցանիշի 100.1%-ը: Առանց արտաբյուջետային միջոցների՝ պետական բյուջեի եկամուտները կազմել են 1131.6 մլրդ դրամ՝ ապահովելով 93.3% կատարողական:

Գծապատկեր 10. ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի եկամուտները



2015 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 23.14%, որը 0.5 տոկոսային կետով զիջել է նախորդ տարվա ցուցանիշը[19]:

2014 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտների 2%-ով աճը հիմնականում պայմանավորված է պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների համապատասխանաբար 73.3% (12.6 մլրդ դրամ) և 10.4% (6.6 մլրդ դրամ) աճով: Հարկային եկամուտների գծով արձանագրվել է 1% կամ 10.6 մլրդ դրամով աճ: Պետական տուրքերը նվազել են 17.5%-ով կամ 6.9 մլրդ դրամով:

Գծապատկեր 11. ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճը, 2014=100%



[19] ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի ուղերձում ՀՆԱ-ի կանխատեսումը կատարված է ԱՀՀ 1993-ի մեթոդաբանությամբ, իսկ բյուջեի եկամուտներ/ՀՆԱ կանխատեսված ցուցանիշը կազմում է 24.48%: 2015 թվականին ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշը՝ հաշվարկված ԱՀՀ 2008-ի մեթոդաբանությամբ, կազմել է 5,047.5 մլրդ դրամ:

Այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների համեմատաբար բարձր աճի արդյունքում 2014 թվականի համեմատ 2015 թվականի պետական բյուջեի եկամուտներում 1.1 տոկոսային կետով ավելացել է պաշտոնական դրամաշնորհների, 0.5 տոկոսային կետով՝ այլ եկամուտների տեսակարար կշիռը, իսկ հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով նույն ցուցանիշը նվազել է 1.6 տոկոսային կետով:

Գծապատկեր 12. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



<u>Հարկային եկամուտներ և պետական տուրքեր</u>

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի եկամուտների 91.4%-ն ապահովվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնք կազմել են 1067.9 մլրդ դրամ և 93.6%-ով ապահովել ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված տարեկան ծրագիրը: Նշված գումարից 1035.5 մլրդ դրամը կազմել են հարկային եկամուտները, 32.4 մլրդ դրամը՝ պետական տուրքերը:

2015 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցության ցուցանիշը նախորդ տարվա համեմատ 0.8 տոկոսային կետով նվազել է՝ կազմելով 21.2%[20]: Հարկային սահունության գործակիցը 2015 թվականին կազմել է 0.1 (ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր տոկոսային կետին բաժին է ընկել հարկերի և տուրքերի 0.1 տոկոսային կետով աճ)՝ 2014 թվականի 1.0-ի դիմաց:

2014 թվականի համեմատ հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են 0.4%-ով կամ շուրջ 3.8 մլրդ դրամով: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ հարկային եկամուտներն աճել

[20] ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի ուղերձում հարկային եկամուտներ և պետական տուրքեր / ՀՆԱ կանխատեսված ցուցանիշը կազմում է 23.39%:

են 1%-ով կամ ավելի քան 10.6 մլրդ դրամով, մինչդեռ պետական տուրքերը նվազել են 17.5%-ով կամ շուրջ 6.9 մլրդ դրամով: Նախորդ տարվա համեմատ հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը ձևավորվել է եկամտային հարկի, մաքսատուրքի, նպատակային սոցիալական վճարների, շահութահարկի գծով մուտքերի աճի ու ավելացված արժեքի հարկի, պետական տուրքի, բնապահպանական և բնօգտագործման վճարների, շրջանառության հարկի, այլ հարկային եկամուտների, հաստատագրված վճարների և ակցիզային հարկի գծով մուտքերի նվազման արդյունքում:

Գծապատկեր 14. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը, 2014-2015թթ.



2015 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 39.7%-ն ապահովվել է *ավելացված արժեքի հարկի* հաշվին, որը կազմել է 423.9 մլրդ դրամ: Նշված գումարից 191 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 232.9 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն նվազել է 3.7%-ով կամ 16.4 մլրդ դրամով: ԱԱՀ-ի նվազման պատճառներ են հանդիսացել 26.5%-ի չափով ներմուծման ծավալների անկումը, ՀՆԱ-ի մեջ հարկունակ ճյուղերի տեսակարար կշռի նվազումը, ինչպես նաև կատարված օրենսդրական փոփոխությունները: Մասնավորապես.

2014 թվականի նոյեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-174-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2014 թվականի դեկտեմբերի 27-ից) սահմանվել է, որ ԱԱՀ-ից ազատված է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումների իրականացումը:

2014 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-186-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ՝

1. ՀՀ կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, ներմուծվող ապրանքների նկատմամբ ՀՀ մաքսային սահմանին ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետների հետաձգման՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6^1 հոդվածով սահմանված արտոնությունը կիրառվում է՝ անկախ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի մեծությունից,

2. 2015 թվականի հունվարի 1-ից այն անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրականացված՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների հարկվող շրջանառությունը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 100 միլիոն դրամը, ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու համար օրենքով սահմանված մնացած բոլոր պայմանները բավարարված համարվելու դեպքերում ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները կարող են հաշվանցել նաև առանց մատակարարներին կամ ծառայություն մատուցողներին վճարում կատարելու,

2015 թվականի մայիսի 7-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-38-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի 1-ից) բարձրացվել է ավելացված արժեքի հարկով չհարկվող շեմը՝ տարեկան 58.35 մլն դրամի փոխարեն սահմանելով տարեկան 115 մլն դրամ: Ընդ որում, 2015 թվականի մայիսի 7-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-41-Ն օրենքով սահմանվել է, որ ավելացված արժեքի հարկով չհարկվող նոր շեմը՝

ա. 2015 թվականի ընթացքում կիրառելի չէ այն հարկ վճարողների նկատմամբ, որոնց կողմից 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկվող շրջանառությունը գերազանցել է 58.35 մլն դրամը,

բ. կիրառելի չէ ոչ առևտրային կազմակերպությունների և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-ին հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում և 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված դեպքերում՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող հարկվող գործարքների նկատմամբ:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտների և պետական տուրքերի 9.7%-ն ապահովվել է *շահութահարկի* հաշվին՝ կազմելով 103.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 0.1%-ով կամ 62.5 մլն դրամով: Շահութահարկի աճի տեմպերի դանդաղումը հիմնականում պայմանավորված է ՀՆԱ-ի կառուցվածքում շահութահարկի հաշվարկման բազա հանդիսացող տնտեսության ճյուղերում արձանագրված անկման միտումներով:

2012 թվականի դեկտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-238-Ն օրենքով վերանայվել է հիմնական միջոցների գծով ամորտիզացիոն մասհանումների կատարման համակարգը: Մասնավորապես՝ սահմանվել է, որ 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռքբերված՝ մաշվածքի ենթակա, սեփականության իրավունքով հարկատուին պատկանող կամ երկարաժամկետ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) վերցված ոչ ընթացիկ ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) ամորտիզացիոն մասհանումների գումարը հաշվարկվում է՝ ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար սահմանված՝ ամորտիզացիոն տարեկան առավելագույն տոկոսադրույքից:

2015 թվականին *շրջանառության հարկի* գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 11.9 մլրդ դրամ (կազմելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 1.1%-ը), որը 24.2%-ով կամ 3.8 մլրդ դրամով զիջել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացված մուտքերի նվազմամբ: Շրջանառության հարկի գումարից 6.1 մլրդ դրամը մուտքագրվել է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից, 1.2 մլրդ դրամը՝ արտադրական գործունեությունից, 711 մլն դրամը՝ ռեզիդենտների կողմից ստացվող պասիվ եկամուտներից, 234.9 մլն դրամը՝ նոտարական գործունեությունից և 3.6 մլրդ դրամը՝ գործունեության այլ տեսակներից: Շրջանառության հարկի նվազումը պայմանավորված է «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով:

2014 թվականի հունիսի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-128-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2014 թվականի հոկտեմբերի 1-ից) առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար շրջանառության հարկի դրույքաչափը 3.5%-ի փոխարեն սահմանվել է 1 տոկոս, և զուգահեռաբար սահմանվել է կատարվող ձեռքբերումները փաստաթղթերով հիմնավորելու պարտադիր պահանջ:

2015 թվականի փետրվարի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-1-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի մարտի 5-ից) սահմանվել է, որ ապրանքներ ձեռք բերելու պարտադիր փաստաթղթավորման պահանջը չի տարածվում մինչև 2015 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում որևէ օրվա դրությամբ առկա ապրանքային մնացորդի վրա, որի մասին հարկ վճարողները մինչև 2015 թվականի հուլիսի 1-ն իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևի տեղեկանք:

2015 թվականի մայիսի 7-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-38-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի 1-ից) սահմանվել է, որ՝

1. Շրջանառության հարկ վճարող կարող են համարվել անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի, չի գերազանցել 115 մլն դրամը (նախկինում գործող 58.35 մլն դրամի փոխարեն):

2. Առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար շրջանառության հարկը հաշվարկում են հարկվող օբյեկտի նկատմամբ 5 տոկոս դրույքաչափով (նախկին 1 տոկոսի փոխարեն):

Միաժամանակ սահմանվել է, որ հաշվետու ժամանակաշրջանի համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում անմիջական վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների գծով կատարված ծախսերի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված երկկողմանի հաստատված (վավերացված) հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (ներառյալ՝ անուղղակի հարկերը), ինչպես նաև ՀՀ ներմուծված ապրանքների մասով ներմուծման հայտարարագրերում արտացոլված մաքսային արժեքի և հաշվարկված անուղղակի հարկերի հանրագումարի կամ ավելացված արժեքի հարկով հարկման բազայի ու հաշվարկված ավելացված արժեքի հարկի հանրագումարի 4 տոկոսը կազմող գումարի չափով: Եթե նշյալ նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հաշվարկված 1.5 տոկոսից, իսկ 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ 1 տոկոսից պակաս գումար, ապա առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների համար շրջանառության հարկը հաշվարկվում է հարկվող օբյեկտի նկատմամբ 1.5

տոկոս, իսկ 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ 1 տոկոս դրույքաչափով: Շրջանառության հարկի գումարից չնվազեցված մասը նվազեցվում է հետագա հաշվետու ժամանակաշրջանների համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հաշվարկվող շրջանառության հարկի գումարից:

3. Շրջանառության հարկ վճարողը դադարում է համարվել շրջանառության հարկ վճարող, եթե շրջանառության հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում թույլ է տվել հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման երրորդ դեպք,

4. Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով հաշվարկված շրջանառության հարկի գումարից օրենքով սահմանված ապրանքների ձեռք բերման ծախսերի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում շրջանառության հարկի գումարից չնվազեցվող և փոխանցվող գումարների մասով նվազեցումներն ավել կատարելու դեպքում գանձվում է դրա արդյունքում պակաս հաշվարկված շրջանառության հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 100 տոկոսի չափով: Միաժամանակ, սահմանվել է նաև, որ նշյալ չափով տուգանքը չի կիրառվում, եթե կատարվող վերահաշվարկների արդյունքում վճարման ենթակա շրջանառության հարկի գումարը չի գերազանցում շրջանառության հարկ վճարողի կողմից այդ գործունեության մասով հարկվող օբյեկտի նկատմամբ 1.5 տոկոս, իսկ 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ 1 տոկոս դրույքաչափով հաշվարկված հարկի գումարը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 311.7 մլրդ դրամ *եկամտային հարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 29.2%-ը: Եկամտային հարկից մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 7.8%-ով կամ 22.5 մլրդ դրամով, որը հիմնականում գրանցվել է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ եկամուտների գծով: Աճը մասամբ պայմանավորված է 2014 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ (ՀՕ-157-Ն, ընդունվել է 12.12.2013թ.), որով բարձրացվեցին պետական ծառայողների աշխատավարձերը: Եկամտային հարկի աճին նպաստել է նաև «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում 2014 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած փոփոխությունը (ՀՕ-205-Ն, ընդունվել է 01.12.2014թ.), որով նվազագույն ամսական աշխատավարձը 50000 դրամից դարձավ 55000 դրամ: Եկամտային հարկի աճը պայմանավորող մյուս բաղադրիչը պասիվ եկամուտներից մուտքերն են, որոնք աճել են 14.1%-ով կամ 1.3 մլրդ դրամով: Միաժամանակ, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից վճարված եկամտային հարկի գծով արձանագրվել է մուտքերի նվազում 6.2%-ի կամ 227.8 մլն դրամի չափով: Վերջինիս անկումը պայմանավորված է

հիմնականում ՀՆԱ-ի կառուցվածքում եկամտային հարկի հաշվարկման բազա հանդիսացող տնտեսության ճյուղերում արձանագրված անկման միտումներով:

2014 թվականի հունիսի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-133-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ անհատ ձեռնարկատեր և (կամ) նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի՝ անշարժ գույքի վարձակալությունից ստացված եկամուտների հանրագումարն ընթացիկ տարում 58.35 մլն դրամը գերազանցելու դեպքում գերազանցող մասից հարկ վճարողի կողմից տարեկան հաշվարկվում է եկամտային հարկ 10 տոկոս դրույքաչափով՝ հաշվի չառնելով օրենքով սահմանված նվազեցումները և հարկային գործակալի միջոցով հաշվարկված ու պահված հարկի գումարները, իսկ հարկային գործակալ չհանդիսացող անձանցից եկամուտներ ստանալու դեպքում՝ հաշվի չառնելով օրենքով սահմանված նվազեցումները և ֆիզիկական անձի կողմից գույքի վարձակալությունից ստացված եկամուտներից ինքնուրույնաբար հաշվարկված հարկի գումարները: Միաժամանակ, վերոգրյալով պայմանավորված՝ սահմանվել է նաև, որ ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում) անհատ ձեռնարկատեր և (կամ) նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի վարձակալության գործարքները:

2014 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-248-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող՝ սահմանված կարգով հավաստագրված հարկային գործակալը հավաստագրի գործողության ժամկետում աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է 10 տոկոս դրույքաչափով:

2015 թվականի մայիսի 7-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ այն հարկային գործակալը, որը ՀՀ ռեզիդենտների հետ կնքել է աշխատանքային պայմանագիր, և այդ պայմանագրի հիման վրա աշխատողն աշխատանք է կատարում բացառապես ՀՀ տարածքից դուրս, ապա «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1.2-րդ մասով նախատեսված ծրագրերի իրականացման շրջանակներում աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում է 13 տոկոս դրույքաչափով:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 4.6%-ն ապահովվել է *ակցիզային հարկի* հաշվին՝ կազմելով շուրջ 49 մլրդ դրամ: Մասնավորապես՝

հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 30.6 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 18.4 մլրդ դրամ: 2014 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերը նվազել են 3.1%-ով կամ 1.6 մլրդ դրամով: Ընդ որում, ներմուծվող ապրանքների գծով մուտքերում արձանագրվել է 5.2% անկում, իսկ տեղական արտադրության ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված մուտքերն աճել են 0.5%-ով: Մասնավորապես՝ անկում է գրանցվել ՀՀ ներմուծվող շարժիչային յուղերի, դիզելային վառելիքի, ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող որոշ ալկոհոլային խմիչքների համար վճարված ակցիզային հարկի գծով: Ակցիզային հարկի նվազման պատճառներից է հանդիսացել նաև 2014 թվականի հունիսի 28-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունը (ՀՕ-24-Ն, ընդունվել է 22.05.2014թ.), որով վերացվել է 25.0 մլն դրամից ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ և 4500 սմ^3 և ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաների ներմուծման համար սահմանված ակցիզային հարկը: Միևնույն ժամանակ, զգալի աճ է արձանագրվել ներմուծվող ծխախոտի համար վճարված ակցիզային հարկի գծով՝ 18.6% կամ 1.7 մլրդ դրամ:

Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ պայմանավորված՝ ՀՀ հարկային հարաբերությունների կարգավորումներում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. Վերանայվել են ԵՏՄ անդամ երկրներից ՀՀ ներմուծվող ապրանքների համար անուղղակի հարկերի հաշվարկման կարգը և ժամկետները: Մասնավորապես՝ սահմանվել է, որ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների մասով հաշվարկված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարները (բացառությամբ ակցիզային դրոշմանիշներով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարների) ՀՀ պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ: Ակցիզային դրոշմանիշներով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ներմուծման համար հաշվարկված ակցիզային հարկի գումարները ՀՀ պետական բյուջե են վճարվում «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ներմուծման օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում՝ որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ:

2. Եթե հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերում արտացոլված՝ ներմուծվող ապրանքների՝ ԱԱՀ-ով և (կամ) ակցիզային հարկով հարկման բազաները փոքր են հարկային մարմնի տեղեկատվական բազայում ներմուծման հաշվետու ժամանակաշրջանում առկա՝ նույն ապրանքների ներմուծման հարկման բազայի 80%-ից, ապա հարկային մարմնի ներկայացրած գրավոր ծանուցագրի հիման վրա, մինչև այդ ծանուցագրի

ներկայացման օրվան հաջորդող տասներորդ օրը ներառյալ, ներմուծողի կողմից վճարվում են ծանուցագրում նշված հարկման բազայի 80%-ի և իր կողմից հաշվարկված հարկման բազայի տարբերությունից հաշվարկվող հարկերը: Միաժամանակ սահմանվել է, որ ծանուցագրում նշված գումարի նկատմամբ հաշվարկվում են տույժեր՝ ծանուցագիրը ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրվանից սկսած: Միաժամանակ, ԵՏՄ-ին ՀՀ անդամակցությամբ պայմանավորված՝ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքով նախատեսված արտոնությունների կիրառության շարունակականությունն ապահովելու նպատակով 2015 թվականի փետրվարի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-5-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի մարտի 19-ին և կիրառվում է 2015 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա) ամբողջությամբ վերախմբագրվել է նշյալ օրենքը, որի շրջանակներում որոշակի փոփոխություններ են կատարվել նաև դրանով հաստատված՝ ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում:

Հաշվետու տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 5.8%-ն ապահովվել է *մաքսատուրքի* հաշվին՝ կազմելով շուրջ 61.5 մլրդ դրամ, որից 17.6 մլրդ դրամը կազմում է 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի գործողության արդյունքում ՀՀ ստացած զուտ մուտքը: Նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն աճել են 27%-ով կամ 13.1 մլրդ դրամով, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության՝ ԵՏՄ-ին անդամակցելու արդյունքում ԵՏՄ անդամ երկրներին համամասնորեն տրվող մաքսատուրքի գումարների հաշվեգրմամբ:

Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությամբ պայմանավորված՝ 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՕ-241-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 2-ին) ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 6-ի մաքսային օրենսգիրքը: «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով կարգավորում են այն հարաբերությունները, որոնք Մաքսային միության մաքսային օրենսգրքի և 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի համաձայն, կարող են կարգավորվել ազգային օրենսդրությամբ:

«Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի համաձայն (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 2-ից)՝ ԵՏՄ անդամ պետություններից ապրանքների ներմուծման համար մաքսատուրքեր չեն գանձվում, իսկ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ապրանքների ներմուծման համար գանձվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 16-ի թիվ 54 որոշմամբ հաստատված՝ միասնական մաքսային սակագներով հաշվարկված մաքսատուրքեր՝ բացառությամբ պայմանագրի 4-րդ հավելվածով նախատեսված ապրանքների, որոնց համար մաքսատուրքը վերոնշյալ պայմանագրով նախատեսված անցումային ժամանակահատվածում գանձվում է նույն պայմանագրի հավելվածով սահմանված դրուքաչափերով: Բացի այդ, վերոնշյալ պայմանագրի 2-րդ հավելվածի 1-ին կետով փոփոխություն է կատարվել 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելվածով հաստատված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ վճարների, հարկերի և տուրքերի) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության մեջ՝ սահմանելով, որ ներմուծման մաքսատուրքի գումարների բաշխման նորմատիվը ՀՀ համար կազմում է 1.13%: Անդամակցությունից հետո Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողնման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» համաձայնագիրը, որով սահմանված են ֆիզիկական անձանց կողմից միության սահմանով անձնական օգտագործման ապրանքների, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների տեղափոխման համար մաքսատուրքի և հարկերի միասնական դրույքաչափեր: Միաժամանակ, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածով սահմանվել է, որ Միության անդամ չհանդիսացող պետություններից ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների համար վճարվում են միասնական մաքսային վճարներ (բացառությամբ մաքսավճարի) հետևյալ միասնական դրույքաչափերով.

1. 0 տոկոս, եթե մեկ ամսվա ընթացքում տեղափոխվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 30 կիլոգրամը, իսկ մաքսային արժեքը չի գերազանցում 200 հազար դրամը,

2. 22.5 տոկոս, եթե մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 30 կիլոգրամը, իսկ մաքսային արժեքը գերազանցում է 200 հազար դրամը, սակայն չի գերազանցում 1000 եվրոյին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը,

3. 30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 30 կիլոգրամը գերազանցող յուրաքանչյուր կիլոգրամի համար Միության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված չափերը, եթե մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը գերազանցում է 30 կիլոգրամը, կամ եթե մաքսային արժեքը գերազանցում է 1000 եվրոյին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը:

2015 թվականին պետական բյուջե են մուտքագրվել 3.1 մլրդ դրամ *հաստատագրված վճարներ*՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 0.3%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է 36.1%-ով՝ հիմնականում պայմանավորված 2014 թվականի հունվարի 1-ից ծխախոտի արտադրանքի հարկումը հաստատագրված վճարներով հարկման համակարգից հարկման ընդհանուր համակարգ տեղափոխվելու, ինչպես նաև ԱԳԼՃԿ-ների կողմից բաշխիչ աշտարակ տեղադրելու և հարկման ընդհանուր դաշտ տեղափոխվելու հանգամանքով:

2015 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 31.3 մլրդ դրամ *բնապահպանական և բնօգտագործման վճարներ*՝ կազմելով հարկերի և տուրքերի 2.9%-ը: Նշված գումարից 8.6 մլրդ դրամը կազմել են բնապահպանական վճարները, 22.7 մլրդ դրամը՝ բնօգտագործման վճարները, որից 21.1 մլրդ դրամը կազմել է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթին: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական և բնօգտագործման վճարները նվազել են 11.1%-ով կամ 3.9 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու, ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների, օգտակար հանածոների արդյունահանման և ՀՀ-ում իրացվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող վճարների գծով մուտքերի համապատասխանաբար 35.4%-ով, 28%-ով, 35.5%-ով և 25.6%-ով նվազմամբ:

2015 թվականին ջրօգտագործման վճարները կազմել են 389.3 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 16.7%-ով կամ 77.9 մլն դրամով, որի հիմնական պատճառներից մեկը ձկնաբուծական և խեցգետնաբուծական գործունեություն իրականացնող վճարողների կողմից ջրօգտագործման ծավալների կրճատումն է:

Պինդ օգտակար հանածոների, բացառությամբ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար բնօգտագործման վճարից մուտքը կազմել է 991.5 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 35.5%-ով կամ 546.5 մլն դրամով: Նշված մուտքերի վրա ազդող բացասական գործոն է հանդիսացել ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների նվազումը:

Ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճարի մուտքերը կազմել են շուրջ 272.9 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 60.1%-ով կամ 102.4 մլն դրամով, որի հիմնական պատճառ է հանդիսացել ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման ծավալների աճը:

Ավտոմեքենաներից, գյուղմեքենաներից և լողամիջոցներից վնասակար նյութեր արտանետելու համար բնապահպանական վճարի մուտքերը կազմել են 683 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 12.9%-ով կամ 101.1 մլն դրամով:

Ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետման դիմաց բնապահպանական վճարի մուտքերը կազմել են 233.2 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 7%-ով կամ 17.7 մլն դրամով:

Շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման համար բնապահպանական վճարը կազմել է շուրջ 105.2 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.8%-ով կամ 5.8 մլն դրամով:

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց վճարված բնապահպանական վճարը կազմել է շուրջ 4.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 35.4%-ով կամ 2.6 մլրդ դրամով, որը պայմանավորված է այլ պետություններում հաշվառված, ՀՀ մուտք գործող ԱՏԳԱԱ 8703 ավտոտրանսպորտային միջոցների թողարկման ավելի հին տարեթիվ ունեցող ներմուծվող ավտոմեքենաների թվաքանակի նվազմամբ:

Շրջակա միջավայրին վնաս պատճառող՝ ՀՀ ներմուծվող ապրանքների համար վճարված բնապահպանական վճարը կազմել է 1.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 28%-ով կամ 666.5 մլն դրամով, որը պայմանավորված է շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման ծավալների կրճատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց բնապահպանական վճարի մուտքերը կազմել են 755.3 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 25.6%-ով կամ 260.3 մլն դրամով, որը պայմանավորված է «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ ՀՀ-ում արտադրվող ապրանքների իրացման շրջանառության նվազմամբ:

Կենսապաշարների օգտագործման վճարները կազմել են շուրջ 230.6 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 13.7%-ով կամ 36.8 մլն դրամով, որը պայմանավորված է ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 864-Ն որոշման հավելվածի 3-րդ մասով սահմանված՝ կենսապաշարների օգտագործման ծավալների նվազմամբ:

Արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիից ստացված մուտքերը 2015

թվականին կազմել են շուրջ 21.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.5%-ով կամ 310 մլն դրամով: Աճի պատճառ է հանդիսացել մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալների 14.8% աճը: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալների աճին զուգահեռ նվազել են Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա հայտարարված՝ հիմնական արտադրատեսակներ համարվող պղնձի, մոլիբդենի և ոսկու միջին տարեկան գները՝ համապատասխանաբար՝ 19.8, 41.8 և 8.4 տոկոսով:

2014 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-190-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ բնապահպանական և բնօգտագործման վճարներն (այդ թվում՝ ռոյալթիների կանխավճարների կատարումը) ուշացնելու համար վճարողներից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված գումարի 0.15%-ի չափով (նախկին 0.2%-ի փոխարեն): Միաժամանակ սահմանվել է, որ վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած վճարների չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը հաշվարկվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար՝ 0.15%-ի չափով, մինչև վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 10.9 մլրդ դրամ են կազմել *նպատակային սոցիալական վճարները*՝ նախորդ տարվա համեմատ աճելով 2.3 անգամ կամ 6.1 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ նպատակային սոցիալական վճարների գծով մուտքերը սկսել են գանձվել 2014 թվականի հուլիսի 1-ից՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 28.6 մլրդ դրամ *այլ հարկեր*՝ կազմելով հարկերի և տուրքերի 2.7%-ը: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշը նվազել է 11.3%-ով կամ 3.7 մլրդ դրամով: Այլ հարկերում 6.6 մլրդ դրամ են կազմել արտոնագրային վճարները՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.8%-ով կամ 119.2 մլն դրամով: Նվազման հիմնական պատճառ են հանդիսացել հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության (նվազել է 2.3%-ով կամ 79.6 մլն դրամով) և թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների համար (նվազել է 26.2%-ով կամ 75.1 մլն դրամով) վճարված արտոնագրային վճարների գծով մուտքերի նվազումը: Միաժամանակ, չնայած արտոնագրային վճարների գծով ընդհանուր մուտքերի նվազմանը, որոշ գործունեության տեսակների մասով արձանագրվել է աճ: Մասնավորապես՝ աճ է արձանագրվել ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) (աճել է 2%-ով կամ 14.8 մլն դրամով) և ատամնաբուժական (աճել է 0.6%-ով կամ 6.1 մլն դրամով) գործունեության համար սահմանված արտոնագրային վճարների գծով: Բացի այդ, 2015 թվականի հունիսի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Արտոնագրային վճարների

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն օրենքի համաձայն (ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի 1-ից) սահմանվել է, որ արտոնագրային վճար վճարող կարող են համարվել առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներ) վաճառասեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առքուվաճառքի գործունեություն իրականացնողները, որոնք ունեն տարեկան 115 մլն դրամ իրացման շրջանառություն: Հաշվետու տարում նշված գործունեության համար վճարվող արտոնագրային վճարները կազմել է շուրջ 17.8 մլն դրամ: Միաժամանակ, սահմանվել են նշյալ գործունեության մասով արտոնագրային վճարի դրույքաչափերը, մասնավորապես.

1. Երևան քաղաքում՝ մինչև 0.5մ^2 ներառյալ վաճառասեղանի կամ վաճառակետի դեպքում՝ 35000 դրամ, իսկ դրանից ավելիի դեպքում՝ 35000 դրամ գումարած 0.5մ^2 գերազանցող մինչև յուրաքանչյուր 0.1մ^2 համար 7000 դրամ,
2. մարզկենտրոններում՝ մինչև 0.5մ^2 ներառյալ վաճառասեղանի կամ վաճառակետի դեպքում՝ 25000 դրամ, իսկ դրանից ավելիի դեպքում՝ 25000 դրամ գումարած 0.5մ^2 գերազանցող մինչև յուրաքանչյուր 0.1մ^2 համար 5000 դրամ,
3. այլ քաղաքներում՝ մինչև 0.5մ^2 ներառյալ վաճառասեղանի կամ վաճառակետի դեպքում՝ 20000 դրամ, իսկ դրանից ավելիի դեպքում՝ 20000 դրամ գումարած 0.5մ^2 գերազանցող մինչև յուրաքանչյուր 0.1մ^2 համար 4000 դրամ,
4. այլ վայրերում՝ մինչև 0.5մ^2 ներառյալ վաճառասեղանի կամ վաճառակետի դեպքում՝ 15000 դրամ, իսկ դրանից ավելիի դեպքում՝ 15000 դրամ գումարած 0.5մ^2 գերազանցող մինչև յուրաքանչյուր 0.1մ^2 համար 3000 դրամ,
5. սահմանամերձ գյուղերում՝ 0:

2015 թվականին շուրջ 5.4 մլրդ դրամ են կազմել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 19.3%-ով կամ 1.3 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն 2014 թվականի 4-րդ եռամսյակի ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մի մասը և «Յուքոմ» ՍՊԸ-ն 2015 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները վճարել են 2014 թվականի 4-րդ եռամսյակում:

Ավելի քան 3.6 մլրդ դրամ է մուտքագրվել ճանապարհային վճարների գծով, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 1%-ով կամ 36.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված այլ պետություններում գրանցված մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկության համար (նվազել է 22.3%-ով կամ 16.3 մլն դրամով) և այլ պետություններում գրանցված

տրանսպորտային միջոցներով երթևեկության համար (նվազել է 0.6%-ով կամ 15.2 մլն դրամով) վճարվող ճանապարհային վճարների գծով մուտքերի նվազմամբ: 2014 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-191-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ ճանապարհային վճարներն ուշացնելու համար վճարողներից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված գումարի 0.15%-ի չափով (նախկին 0.25%-ի փոխարեն): Միաժամանակ սահմանվել է, որ վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած վճարների չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը հաշվարկվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար՝ 0.15%-ի չափով, մինչև վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

Հաշվետու ժամանակահատվածում 2.2 մլրդ դրամ են կազմել ՀՀ ֆինանսների նախարարության հարկային ծառայության համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի հարկային մուտքերը՝ 79.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է հարկային ընթացակարգով հայտնաբերվող խախտումների ծավալի աճով:

918.7 մլն դրամ են կազմել հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները՝ 35.7%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարում 742.1 մլն դրամ է մուտքագրվել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով՝ 7.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

395.7 մլն դրամ են կազմել դրոշմապիտակների իրացումից մուտքերը, որոնք 19.1%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված 2014 թվականի սեպտեմբերի 11-ից և հոկտեմբերի 30-ից ուժի մեջ մտած «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով (ՀՕ-20-Ն, ընդունվել է 19.05.2014թ., և ՀՕ-108-Ն, ընդունվել է 21.06.2014թ.), որոնց համաձայն ընդլայնվել է պիտակավորման ենթակա ապրանքների անվանացանկը:

Հաշվետու տարում 166.7 մլն դրամ է մուտքագրվել ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարների գծով:

2015 թվականին շուրջ 67.2 մլն դրամ են կազմել ռադիոհաճախականության թույլտվության տրամադրման վճարները:

Բացի վերոնշյալ օրենսդրական փոփոխություններից, հարկային եկամուտների մակարդակի վրա որոշակի ազդեցություն է ունեցել 2014 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը

հարկերից ազատելու մասին» ՀՕ-156-Ն օրենքը (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից), որով 2015 թվականի հունվարի 1-ից ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունն ազատվել է հիմնական հարկերից՝ ԱԱՀ-ից, շահութահարկից կամ եկամտային հարկից, շրջանառության հարկից, արտոնագրային վճարներից:

2015 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 32.4 մլրդ դրամ *պետական տուրքեր*՝ 6.7%-ով գերազանցելով ՀՀ կառավարության տարեկան ծրագրով կանխատեսված ցուցանիշը: Պետական տուրքի բոլոր տեսակները գրեթե ամբողջությամբ ապահովել կամ գերազանցել են ծրագրային ցուցանիշները, բացառությամբ պետական գրանցման և մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու համար վճարվող տուրքերի: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի մուտքերը նվազել են 17.5%-ով կամ շուրջ 6.9 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, պետական գրանցման և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող տուրքերի նվազմամբ:

2015 թվականին դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջե է վճարվել 1.7 մլրդ դրամ (որից 279.7 մլն դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները)՝ 48.7%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 3.8%-ով կամ 68.6 մլն դրամով, որը պայմանավորված է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճենների (կրկնօրինակների) քանակի նվազմամբ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են 47.7 մլն դրամ՝ 100.5%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը և 0.8%-ով զիջելով նախորդ տարվա փաստացի մուտքերը:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջե է վճարվել 1.9 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2014 թվականի համեմատ նշված տուրքերը նվազել են 6.9%-ով կամ 141.4 մլն դրամով: Մուտքերի նվազման հիմնական պատճառը հանդիսանում է այն, որ հաշվետու տարում ավելի քիչ թվով քաղաքացիներ են դիմել

հյուպատոսական ծառայություններ ստանալու համար, որը վերաբերում է առավելապես անձնագրային ոլորտի ծառայություններին: Բացի այդ, ՀՀ կառավարության 11.12.2014թ. № 1376-Ն որոշմամբ, որը գործում է 2015 թվականի հունվարի 1-ից, ԱՄՆ քաղաքացիների համար սահմանվել է առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ, ինչը նույնպես գանձվող պետական տուրքի նվազման պատճառ է հանդիսացել:

Պետական տուրքերի 11.4%-ը բյուջե է վճարվել պետական գրանցումների դիմաց՝ կազմելով 3.7 մլրդ դրամ, որը 98.9%-ով ապահովել է ծրագրային ցուցանիշը և 15.4%-ով զիջել նախորդ տարվա փաստացի մուտքերը: Նախորդ տարվա համեմատ պետական գրանցման համար գանձված տուրքերի նվազումը պայմանավորված է հիմնականում ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, կորցրած պետական համարանիշը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու, ջրային փոխադրամիջոցների գրանցման համար գանձված տուրքերի նվազմամբ, որոնք կազմել են 1.2 մլրդ դրամ կամ ծրագրվածի 100.2%-ը, և ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) ու կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար տուրքերի նվազմամբ, որոնք կազմել են 595.1 մլն դրամ կամ ծրագրվածի 100%-ը: Նշված մուտքերը համապատասխանաբար 23.1%-ով ու 22.3%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է ներմուծված և ՀՀ-ում առկա տրանսպորտային միջոցների գրանցման և օտարման հետ կապված գործարքների քանակի նվազմամբ:

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2015 թվականին պետական բյուջե է վճարվել 670 հազար դրամ, որը 39.1%-ով զիջում է նախատեսվածը և 41%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը՝ պայմանավորված մշակութային արժեքների արտահանման քանակի նվազմամբ: 2015 թվականին մշակութային արժեքների արտահանման համար տրամադրված վկայագրերի և դրանց կրկնօրինակների քանակը, որոնց դիմաց գանձվել է պետական տուրք, կազմել է 134՝ նախատեսված 220-ի և 2014 թվականի 227-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել շուրջ 510 մլն դրամ պետական տուրք՝ 100%-ով ապահովելով կանխատեսված և 17.6%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները, ինչը պայմանավորված է հայտատուների թվի ավելացմամբ:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2015 թվականին գանձվել է 5.1 մլրդ դրամ (պետական տուրքի մուտքերի 15.6%-ը)՝ 146%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը և 9.8%-ով զիջելով նախորդ տարվա փաստացի մուտքերը, որը հիմնականում պայմանավորված է նրանով, որ էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի զգալի մասը տրամադրվել է 2014 թվականին՝ կապված 2014 թվականի հունվարի 1-ից ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրերի տրամադրումը (փոխանակումը) դադարեցնելու հետ: 2015 թվականի հունիսի 22-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-83-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի 30-ից) սահմանվել է, որ օտարերկրյա քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի թույլտվություն ստանալու համար գործատուից գանձվում է պետական տուրք՝ բազային տուրքի 25-ապատիկի չափով:

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 28%-ը ստացվել է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար: Նշված տուրքերի գծով պետական բյուջե է մուտքագրվել 9.1 մլրդ դրամ՝ 99.6%-ով ապահովելով կանխատեսված և 2.6%-ով գերազանցելով նախորդ տարվա մուտքերը, որը հիմնականում պայմանավորված է տրանսպորտի բնագավառի լիցենզայի տրամադրման համար տուրքերի աճով: Նշված մուտքերը կազմել են շուրջ 409 մլն դրամ (կամ ծրագրվածի 100.2%-ը) և մոտ 2.6 անգամ կամ 249.7 մլն դրամով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է օրենսդրական փոփոխությունների արդյունքում լինցեզառուների թվաքանակի կտրուկ աճով, ինչպես նաև 8401 նոր նմուշի լիցենզիաների տրամադրմամբ:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-167-Ն (ուժի մեջ է մտել 2014 թվականի դեկտեմբերի 27-ից) օրենքով ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման համար կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից Երևան քաղաքում ներքաղաքային յուրաքանչյուր երթուղու տարեկան սպասարկման համար սահմանվել է պետական տուրք՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-171-Ն (ուժի մեջ է մտել 2014 թվականի դեկտեմբերի 27-ից) օրենքով վերանայվել է մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար սահմանված պետական տուրքը և սահմանվել է պետական տուրք՝

1) անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի մեկից չորս ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով,

2) անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի չորսից ավելի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով,

3) ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝

ա) Երևան քաղաքում՝ ամսական բազային տուրքի 12-ապատիկի չափով կամ եռամսյակային բազային տուրքի 34-ապատիկի չափով կամ տարեկան բազային տուրքի 120-ապատիկի չափով,

բ) այլ քաղաքներում՝ ամսական բազային տուրքի 8-ապատիկի չափով, կամ եռամսյակային բազային տուրքի 23-ապատիկի չափով, կամ տարեկան բազային տուրքի 80-ապատիկի չափով,

գ) այլ վայրերում՝ ամսական բազային տուրքի 5-ապատիկի չափով կամ եռամսյակային բազային տուրքի 13.5-ապատիկի չափով կամ տարեկան բազային տուրքի 45-ապատիկի չափով,

դ) սահմանամերձ գյուղերում՝ ամսական բազային տուրքի 4-ապատիկի չափով կամ եռամսյակային բազային տուրքի 9-ապատիկի չափով կամ տարեկան բազային տուրքի 30-ապատիկի չափով:

Լիցենզավորման դիմաց գանձված պետական տուրքի գումարներից 5.5 մլրդ դրամը ստացվել է վիճակախաղերի և շահումներով խաղերի բնագավառից, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 100%-ը և 0.7%-ով գերազանցել 2014 թվականի համապատասխան ցուցանիշը: 521.2 մլն դրամ է ստացվել պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման բնագավառից՝ կազմելով ծրագրի 100.1%-ը և 6.4%-ով զիջելով 2014 թվականի ցուցանիշը, որը պայմանավորված է ընդերքօգտագործման բնագավառում տնտեսվարող սուբյեկտների և լիցենզառուների թվի նվազմամբ: 610 մլն դրամ է ստացվել թորած ալկոհոլային խմիչքների և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրության լիցենզավորումից՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 100.1%-ը և նախորդ տարվա փաստացի ցուցանիշի 96.3%-ը: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 336.6 մլն դրամ կամ նախատեսվածի 100.1%-ը՝ 2.2%-ով զիջելով նախորդ տարվա մուտքերը: 310 մլն դրամ են կազմել քաղաքաշինության բնագավառում տրամադրված լիցենզիաներից գանձված պետական տուրքերը՝ ապահովելով ծրագրի 100.2%-ը և նախորդ տարվա ցուցանիշի 100.3%-ը: Հաշվետու տարում հեռահաղորդակցության բնագավառի լիցենզավորման գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 251.2 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100.1%ը և 17.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է 2014 թվականին վճարվելիք

տուրքերի մի մասը 2013 թվականին վճարելու հանգամանքով: Փոստային կապի բնագավառի լիցենզավորման գծով ստացվել է 58.4 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100.6%-ը և 38.9%-ով գերազանցել 2014 թվականի ցուցանիշը՝ պայմանավորված փոստային կապի բնագավառում լիցենզառուների թվաքանակի զգալի աճով: Մաքսային բնագավառում ԵԱՏՄ-ին անդամակցության հետ կապված մաքսային փոխադրողի գործունեության լիցենզավորման գծով պետական բյուջե է մուտքագրվել 30.2 մլն դրամ, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 99.3%-ը և նախորդ տարվա համեմատ նվազել 10.6%-ով՝ պայմանավորված մաքսային փոխադրողների թվի կրճատմամբ:

2015 թվականին օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվել են շուրջ 10.4 մլրդ դրամ պետական տուրքեր՝ ապահովելով 99.6% կատարողական և պետական տուրքի մուտքերի 32%-ը: Նախորդ տարվա համեմատ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերը նվազել են 35.7%-ով կամ 5.7 մլրդ դրամով, որը մեծ մասամբ պայմանավորված է նշված խմբում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ ՀՀ-ից օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար բյուջե մուտքագրված տուրքերի նվազմամբ: Հաշվետու տարում նշված մուտքերը կազմել են շուրջ 8.7 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով կանխատեսված և 38.8%-ով զիջելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը, որը պայմանավորված է փաստացի մեկնող ուղևորների քանակի նվազմամբ: Նախորդ տարվա համեմատ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերի նվազումը պայմանավորված է նաև «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-223-Ն (լրացումն ուժի մեջ է մտել 2014 թվականի դեկտեմբերի 31-ից) օրենքի գործողությամբ, որի համաձայն Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար պետական տուրքի վճարումից ազատվել են Գյումրու «Շիրակ» օդանավակայանի օդային ուղևորները:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-189-Ն (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) օրենքով սահմանվել է, որ պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով սահմանված ժամկետներում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները, ինչպես նաև պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման գծով արտոնություն ունեցող վճարողի կողմից պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը, ինչպես նաև նույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.15%-ի չափով (նախկին 0.5%-ի փոխարեն):

Միաժամանակ, սահմանվել է, որ նախատեսված տույժը կիրառվում է ժամանակին չվճարված (չգանձված) պետական տուրքի գումարի նկատմամբ՝ դրա վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

<u>Պաշտոնական դրամաշնորհներ</u>

2015 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 29.9 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 78.3%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել 8.3 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարման աստիճանով, որոնց շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 24.7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 88.3%-ը: Նշված գումարից 1.5 մլրդ դրամը ստացվել է ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում, որը կազմել է կանխատեսված ցուցանիշի 96%-ը: Դրա հիմնական մասը՝ 797.9 մլն դրամը, դոնորների կողմից հատկացվել է առողջապահական համակարգին:

Մյուս նպատակային ծրագրերի շրջանակներում ստացվել է կանխատեսված միջոցների 74.7%-ը՝ շուրջ 19.7 մլրդ դրամ: Մասնավորապես՝ ավելի քան 7.1 մլրդ դրամ (նախատեսվածի 108.5%-ը) հատկացվել է Եվրոպական միության, 6.6 մլրդ դրամ (նախատեսվածի 75.2%-ը)՝ Ռուսաստանի Դաշնության, 2.9 մլրդ դրամ (նախատեսվածի 103.5%-ը)՝ Համաշխարհային բանկի, 1.9 մլրդ դրամ (նախատեսվածի 66.6%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, 215.5 մլն դրամ (նախատեսվածի 99.4%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի 237.2 մլն դրամ (նախատեսվածի 104.1%-ը)՝ ԱՄՆ-ի, 421.2 մլն դրամ (նախատեսվածի 184.8%-ը)՝ Իրանի Իսլամական Հանրապետության, 34.0 մլն դրամ (նախատեսվածի 69.6%-ը)՝ Նիդերլանդների կառավարության, 13.8 մլն դրամ (նախատեսվածի 100.0%-ը)՝ Ֆրանսիայի կառավարության, 78.6 մլն դրամ (նախատեսվածի 100.0%-ը)՝ Ավստրիայի զարգացման գործակալության, 8.1 մլն դրամ (նախատեսվածի 102.8%-ը)՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի, 16.6 մլն դրամ (նախատեսվածի 72.7%-ը)՝ ՄԱԿ-ի ՇՄ ծրագրի և Դանիայի տեխնիկական համալսարանի համագործակցության կենտրոնի, 65.1 մլն դրամ (նախատեսվածի 8.0%-ը)՝ Դանիական Թագավորության կողմից: Նշենք նաև, որ 2015 թվականին Եվրոպական ներդրումային բանկի և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծագրերի շրջանակներում նախատեսված դրամաշնորհները չեն ստացվել:

2015 թվականին շուրջ 8.7 մլրդ դրամ է ստացվել Եվրամիության կողմից ոչ նպատակային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով ծրագրի 84.5%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից շուրջ 2.0 մլրդ դրամը ստացվել է ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա

Ասոցիացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին ՀՀ կառավարությանն աջակցության ծրագրի 2-րդ փուլի (2011թ.) շրջանակներում՝ նախատեսված 3.6 մլրդ դրամի դիմաց: Ավելի քան 3.6 մլրդ դրամ ստացվել է ԵՄ կողմից Հայաստանում արդարադատության բարեփոխումներին աջակցության ծրագրի 2-րդ փուլի (2012թ.) շրջանակներում՝ նախատեսված 4.1 մլրդ դրամի դիմաց: Նշված երկու ծրագրերի շրջանակներում միջոցների ոչ ամբողջ ծավալով տրամադրումը պայմանավորված է նրանով, որ Եվրամիության կողմից այդ համաձայնագրերի որոշ նախապայմաններ գնահատվել են մասնակի կատարված: Շուրջ 3.1 մլրդ դրամ է ստացվել ԵՄ կողմից «Աջակցություն ՀՀ գյուղատնտեսությանը և գյուղի զարգացմանը» 2013 թվականի ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի 1-ին հատկացման շրջանակներում, որը 2015 թվականին նախատեսված չի եղել: Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2014 թվականի դեկտեմբերի 8-ին: Եվրոպական կողմի հետ պայմանավորվածություն էր ձեռք բերվել համաձայնագրի 1-ին հատկացման գումարը համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո՝ 2014 թվականի դեկտեմբերին ստանալու վերաբերյալ: Այնուամենայնիվ, եվրոպական կողմի բյուջետային պլանավորմանն առնչվող տեխնիկական ընթացակարգերի խնդիրներով պայմանավորված՝ վերոնշյալ հատկացումը տրամադրվել է 2015 թվականին: 2015 թվականին չի ստացվել Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված՝ «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում»2009 թվականի ֆինանսավորման համաձայնագրի 4-րդ հատկացումը՝ 2.6 մլրդ դրամի (5 մլն եվրո) չափով Նված գումարից շուրջ 2 մլրդ դրամը (3.75 մլն եվրո) 2016 թվականի առաջին եռամսյակում արդեն իսկ ստացվել է: Ուշացումն ըստ եվրոպական կողմի նույնպես պայմանավորված է եղել որոշակի ներքին տեխնիկական ընթացակարգերի ձգձգմամբ:

Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերն աճել են 73.3%-ով կամ 12.6 մլրդ դրամով:

<u>Այլ եկամուտներ</u>

2015 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 70 մլրդ դրամ այլ եկամուտներ, որը կազմում է բյուջեի եկամուտների 6%-ը՝ նախորդ տարվա 5.5%-ի դիմաց: Այլ եկամուտների՝ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշն ապահովվել է 100.2%-ով: Այլ եկամուտներից 32.3 մլրդ դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների մուտքերը, որոնք ապահովվել են 98.3%-ով:

Հաշվետու տարում 16.3 մլն դրամ է մուտքագրվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից՝ 100%-ով ապահովելով կանխատեսված և 12.5%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության դիմաց 2015 թվականին ստացվել է 636.7 մլն դրամ կամ կանխատեսված մուտքերից 10.7%-ով ավելի: Մասնավորապես՝ 620.6 մլն դրամ է մուտքագրվել պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից, 462.5 հազ. դրամ՝ պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման, 1.3 մլն դրամ՝ պետական անտառների և անտառային հողերի օգտագործման դիմաց և 14.3 մլն դրամ՝ ՀՀ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղադրումից: Ծրագրի գերազանցումն արձանագրվել է պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից ստացված եկամուտներում, որոնց կատարողականը կազմել է 111%: Նախորդ տարվա համեմատ պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտները նվազել են 19.8%-ով կամ 157.5 մլն դրամով՝ հիմնականում պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտների 21.5% նվազման արդյունքում: Վերջինս հիմնականում պայմանավորված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի պարտավորությունների վճարման ժամանակացույցի համաձայն կատարված վճարումների նվազմամբ, որոնք 2015 թվականին կազմել են 316.9 մլն դրամ՝ 2014 թվականի 468.5 մլն դրամի դիմաց:

Հաշվետու տարում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվել են ավելի քան 9.8 մլրդ դրամ տոկոսավճարներ՝ 103.1%-ով ապահովելով ծրագիրը: 2015 թվականին ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքվել է թվով 112 ավանդային պայմանագիր՝ նախորդ տարվա 95 պայմանագրի և 568.6 մլրդ դրամի դիմաց: 2015 թվականի ընթացքում ավանդադրվել է 701 մլրդ դրամ գումար, որը նախորդ տարվա համեմատ ավելի է 132.4 մլրդ դրամով, իսկ ավանդադրված գումարից մարվել է 650 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ թե՛ ավանդային պայմանագրերի քանակի և թե՛ ավանդադրված գումարի տարբերությունը պայմանավորված է 2015 թվականին եվրապարտատոմսերի թողարկմամբ, որոնց տեղաբաշխումից ստացված միջոցների զգալի մասն ավանդադրվել է: 2015 թվականին ներդրված ավանդների միջին ժամկետայնությունը կազմել է 46 օր՝ նախորդ տարվա 52 օրվա դիմաց, իսկ ավանդադրվող միջին գումարը՝ 6.3 մլրդ դրամ: Ներդրված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 11.4%՝ նախորդ տարվա 7.4%-ի դիմաց: Հաշվետու տարում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների

տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացած տոկոսավճարների ծրագրային ցուցանիշի 3.1% գերազանցումը պայմանավորված է տոկոսադրույքների աճով: Նախորդ տարվա համեմատ նշված եկամուտների գծով արձանագրվել է 17.6% աճ:

Իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են շուրջ 1.2 մլրդ դրամ շահաբաժիններ՝ 100.3%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը և 38.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է պետական մասնակցությամբ ընկերությունների շահութաբերության աճով:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց 2015 թվականին նախատեսված տոկոսավճարներն ամբողջ ծավալով ստացվել են՝ կազմելով շուրջ 15.4 մլրդ դրամ, որից 15.2 մլրդ դրամը ստացվել է ռեզիդենտներին, 165.6 մլն դրամը՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց: Նախորդ տարվա համեմատ տրամադրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարներն աճել են 106.3%-ով կամ 7.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ «Երևան Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին տրամադրված վակի դիմաց տոկոսագումարների վճարումը սկսել է իրականացվել 2015 թվականի մարտից, որի արդյունքում 2015 թվականին ՀՀ պետական բյուջե է վճարվել 3.4 մլրդ դրամ: 2015 թվականին տոկոսավճարների աճը պայմանավորված է նաև տարվա ընթացքում նոր վարկային միջոցների տրամադրմամբ, ինչպես նաև LIBOR տոկոսադրույքի և փոխարժեքի բարձրացմամբ:

2015 թվականի ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 850.6 մլն դրամ ոչ պաշտոնական դրամաշնորհներ՝ ամբողջությամբ ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ ոչ պաշտոնական դրամաշնորհներից մուտքերը նվազել են 31.4%-ով կամ 389.6 մլն դրամով՝ պայմանավորված արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային մուտքերի նվազմամբ:

Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ՀՀ պետական բյուջե է գանձվել շուրջ 14.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 102.9%-ը: Մասնավորապես՝ ծրագրի նկատմամբ զգալի գերազանցում է արձանագրվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության, ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից կիրառված պատժամիջոցների արդյունքում ստացված մուտքերի գծով, որոնք կազմել են համապատասխանաբար 200 մլն դրամ (կանխատեսված ցուցանիշի 202%-ը), 215.1 մլն դրամ (կանխատեսված ցուցանիշի 192%-ը) և 117.5 մլն դրամ (կանխատեսված ցուցանիշի 587.5%-ը): 2014 թվականի համեմատ իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերն աճել են 9.2%-ով կամ 1.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՀՀ

բնապահպանության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կողմից արձանագրված իրավախախտումների համար գանձված գումարների աճով:

Հաշվետու տարում ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները կազմել են 23.4 մլրդ դրամ՝ 94.2%-ով ապահովելով ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարների ցուցանիշով, որոնք կազմել են 3.2 մլրդ դրամ կամ 77.2%, ինչը պայմանավորված է 2015 թվականին կատարված գործարքների թվի նվազմամբ: Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներից 19.6 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային մուտքերը, մասնավորապես՝ 7.4 մլրդ դրամ են կազմել «ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովում», 2.3 մլրդ դրամ՝ «ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումների, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներ և այլ վճարովի ծառայություններ» ծրագրերի շրջանակներում ստացված միջոցները: Նախորդ տարվա համեմատ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներն աճել են 9.3%-ով կամ շուրջ 2.0 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2015 թվականին պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովելու ծրագրի շրջանակներում ստացված միջոցներով, որոնք կազմել են ավելի քան 4.3 մլրդ դրամ:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ եկամուտների գծով պետական բյուջե է մուտքագրվել 4.1 մլրդ դրամ՝ 24.3%-ով գերազանցելով ծրագիրը և 58.5%-ով զիջելով նախորդ տարվա մուտքերը:

ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր 1,305.6 մլրդ դրամ ծախսերի կատարում: Տարվա ընթացքում, հաշվի առնելով «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները, ինչպես նաև օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի ծրագիրը կազմել է շուրջ 1,415.2 մլրդ դրամ՝ ավելանալով 109.6 մլրդ դրամով (8.4%-ով): Վերջինիս դիմաց փաստացի ծախսերը կազմել են 1,409.0 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ծրագրի՝ 99.6% կատարողական: Պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին 2015 թվականին կատարվել են 37.2 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 97.4%-ը:

2015 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 4.2% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 14.1%-ով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության աճին. այն կազմել է 27.9%՝ 2014 թվականի 25.5%-ի դիմաց[21]:

Տնտեսագիտական դասակարգում

Ընթացիկ ծախսեր

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 1,238.9 մլրդ դրամ, որը կազմում է տարեկան ծրագրի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 12.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների, աշխատանքի վարձատրության և ծառայությունների ու ապրանքների ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 11.4%-ը՝ շուրջ 141.0 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով

[21] ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի ուղերձում ծախսեր / ՀՆԱ կանխատեսված ցուցանիշը կազմում է 26.82%:

օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 99%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն ավելացել են 18.8%-ով՝ պայմանավորված պետական կառավարման համակարգում աշխատավարձերի բարձրացմամբ: 2014 թվականի հուլիսի 1-ից «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանվել է պետական պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքի վարձատրության միասնական համակարգ, իսկ 2014 և 2015 թվականների պետական բյուջեների մասին ՀՀ օրենքներով բարձրացվել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը՝ սահմանվելով 66,140.0 դրամ:

2015 թվականին ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 258.6 մլրդ դրամ կամ բյուջեի ընթացիկ ծախսերի 20.9%-ը: Նշված ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 98.6%-ով: Նախորդ տարվա համեմատ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերն ավելացել են 8.9%-ով՝ հիմնականում պայմանավորված պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման, ընթացիկ նորոգման ու պահպանման, ինչպես նաև շարունակական ծախսերի և նյութերի ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 6%-ը՝ շուրջ 74.1 մլրդ դրամ, ուղղվել է ՀՀ կառավարության պարտքի և մուրհակների սպասարկմանը, որն օգտագործվել է նախատեսված ծավալով: Մասնավորապես՝ ներքին տոկոսավճարները կազմել են 32.2 մլրդ դրամ, արտաքին տոկոսավճարները՝ 41.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է հիշյալ պարտավորությունների սպասարկման ծախսերի 20.2%-ով (12.4 մլրդ դրամով) աճ՝ պայմանավորված արտաքին տոկոսավճարների աճով: Արտաքին տոկոսավճարներն աճել են 46.6%-ով (13.3 մլրդ դրամով), իսկ ներքին տոկոսավճարների գծով արձանագրվել է անկում՝ 2.7%-ով (877.3 մլն դրամով): Ներքին տոկոսավճարների նվազումը պայմանավորված է 2015 թվականի փետրվար-մարտ ամիսներին պարտատոմսերի փոխանակման ծրագրի շրջանակում իրականացված 18.9 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի չնախատեսված հետգնմամբ, ինչպես նաև դեֆիցիտի ֆինանսավորման ծրագրի ճշգրտման արդյունքում 2015 թվականի ընթացքում տեղաբաշխվող և նույն տարում սպասարկվող պարտատոմսերի ծավալի կրճատմամբ՝ նվազեցնելով ընթացիկ տարվա սպասարկման բեռը: Արտաքին տոկոսավճարների աճը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով. Հայաստանի Հանրապետությունը մեկ շնչին ընկնող Համախառն Ազգային Եկամտի ցուցանիշով վերջին մի քանի տարիներին շարունակաբար գերազանցել է Զարգացման Միջազգային Ընկերակցության (ԶՄԸ) կողմից յուրաքանչյուր տարի այդ ցուցանիշի գծով սահմանվող շեմը և դիտարկվել է վարկունակ՝ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի պայմաններով վարկավորման տեսանկյունից: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԶՄԸ-ի հետ ստորագրված մի շարք վարկային համաձայնագրերի պահանջներին համապատասխան, վերանայվել են այդ

վարկերի տոկոսադրույքները, և սահմանվել է լրացուցիչ տոկոսադրույք՝ տարեկան 1.7%-ի չափով: Արտաքին պարտքի սպասարկման ծախսերի վրա ազդեցություն ունեցած գործոններից են նաև կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի ծավալի աճը, վարկերի սպասարկման գծով վճարումների փոխարկումների ժամանակ կիրառվող փոխարժեքների փոփոխությունը, ինչպես նաև 2015 թվականի մարտ ամսին արտարժութային պետական պարտատոմսերի գծով իրականացված գործառնությունները, մասնավորապես՝ 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով 10 տարի մարման ժամկետով 7.15% արժեկտրոնային եկատաբերությամբ նոր պարտատոմսերի թողարկումը:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 32.9 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով ընթացիկ ծախսերի 2.7%-ը, որից 28.3 մլրդ դրամը հատկացվել է պետական կազմակերպություններին, 4.6 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Հատկացված սուբսիդիաներից 10.8 մլրդ դրամը տրամադրվել է հանգստի, մշակույթի և կրոնի, 8.5 մլրդ դրամը՝ տնտեսական հարաբերությունների, 6.1 մլրդ դրամը՝ սոցիալական պաշտպանության, 4.3 մլրդ դրամը՝ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների, 1.8 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, 511.9 մլն դրամը՝ կրթության, 96.1 մլն դրամը՝ շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառների կազմակերպություններին, և ևս 798.0 մլն դրամ տրամադրվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Սուբսիդիաների 2015 թվականի ծրագիրը կատարվել է 99.6%-ով: 2014 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարն աճել է 16.2%-ով, ընդ որում, 19.2%-ով ավելացել են պետական հատվածին կատարված հատկացումները, 1.1%-ով՝ ոչ պետական հատվածին կատարված հատկացումները: Ըստ ոլորտների սուբսիդիաների աճին նպաստել է հիմնականում տնտեսական հարաբերությունների, բնակարանային շինարարության ու կոմունալ ծառայությունների և հանգստի, մշակույթի ու կրոնի բնագավառներին տրամադրված սուբսիդիաների աճը:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները կազմել են 152.9 մլրդ դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական և ընթացիկ ծախսերի 12.3%-ը: Մասնավորապես՝ 150.9 մլրդ դրամ է տրամադրվել պետական հատվածի այլ մակարդակներին, շուրջ 2 մլրդ դրամ՝ միջազգային կազմակերպություններին, 20.6 մլն դրամ՝ օտարերկրյա կառավարություններին: Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հատկացվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 44 մլրդ դրամ, որը 13%-ով կամ 5.1 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա մակարդակը: 11.2 մլրդ դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին՝ գրեթե ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Նշված միջոցներից 10.2 մլրդ դրամը կազմել են ընթացիկ սուբվենցիաները, 953.2 մլն դրամը՝ կապիտալ սուբվենցիաները: 2014 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված

դրամաշնորհներն աճել են 9.7%-ով՝ մեծ մասամբ պայմանավորված այլ ընթացիկ դրամաշնորհների աճով՝ կապված ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերի աճի հետ:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 31.6%-ը՝ 391 մլրդ դրամ են կազմել սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 99.6%-ով: Նշված հատկացումներից 123.4 մլրդ դրամն ուղղվել է նպաստների, 267.6 մլրդ դրամը՝ կենսաթոշակների ֆինանսավորմանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 98.9%-ով և 100%-ով: Նախորդ տարվա համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների ծախսերն աճել են 12.5%-ով կամ 43.3 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 2.3%-ով նպաստների աճը հիմնականում պայմանավորված է բյուջեից տրամադրվող այլ նպաստների և երեխաների կամ ընտանեկան նպաստների գծով ծախսերի աճով: Կենսաթոշակների գծով ծախսերը հաշվետու տարում աճել են 17.8%-ով՝ պայմանավորված հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի աճի հանգամանքով, ինչպես նաև 2014 թվականի հուլիսից կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հետ կապված ծախսերի աճով:

2015 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 15.2%-ը կամ 188.4 մլրդ դրամը կազմել են այլ ծախսերը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 101.3%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12%-ով՝ հիմնականում պայմանավորված պաշտպանության, էներգետիկայի և տրանսպորտի բնագավառներին հատկացված գումարների աճով:

<u>Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ</u>

2015 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են շուրջ 170.1 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 12.1%-ը և տարեկան ծրագրի 99.5%-ը: 2014 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշն աճել է 27.2%-ով, ընդ որում, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 26.0%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը նվազել են 27.5%-ով:

2015 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 172.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.5%-ը: Նշված գումարից շուրջ 128.0 մլրդ դրամը՝ նախատեսվածի 116.9%-ը, օգտագործվել է շենքերի և շինությունների ձեռքբերման, շինարարության և կապիտալ վերանորոգման, 36.8 մլրդ դրամը՝ նախատեսվածի 67.1%-ը, մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման, 7.3 մլրդ դրամը՝ նախատեսվածի 85.3%-ը, այլ հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով: 2014 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 26.0%-ով կամ 35.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման

ծախսերի աճով: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերից 111.7 մլրդ դրամը կատարվել է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում, որոնք կատարվել են 100.4%-ով և 65.5%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարվա ընթացքում ավելի քան 2.1 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 100% կատարում: Նշված գումարից 66.9 մլն դրամը ստացվել է հողի, շուրջ 2.1 մլրդ դրամը՝ այլ ակտիվների օտարումից:

Գործառական դասակարգում

<u>Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ</u>

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից 281.4 մլրդ դրամ տրամադրվել է *ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների* ծախսերին՝ ապահովելով ծրագրի 98.6% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: 2015 թվականի համեմատ ոլորտի ծախսերն աճել են 29.5%-ով կամ 64.1 մլրդ դրամով: Աճի հիմնական մասը բաժին է ընկել ավելացված արժեքի հարկի վերադարձի, պետական պարտքի սպասարկման, արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի և համայնքների բյուջեներին տրամադրվող տրանսֆերտների գծով ծախսերին:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 23 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 29.7%-ով՝ հիմնականում պայմանավորված տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, նախարարների և նախարարությունների աշխատակազմերի պահպանման ծախսերի աճով:

2015 թվականին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման համար նախատեսված միջոցները գրեթե ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով շուրջ 4.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 21.7%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հաշվետու տարում ՀՀ վերահսկիչ պալատի պահպանման նպատակով տրամադրվել է 914.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 95.3%-ը: Տվյալ ծախսերում առկա են տնտեսումներ, որոնց արդյունքում նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 2.2%-ով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 10.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99%-ը: Հատկացված միջոցներն ուղղվել են ՀՀ Նախագահի և կառավարության աշխատակազմերի, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ նախարարությունների պահպանման ծախսերը՝ նախարարների աշխատակազմերի մասով, 2015 թվականին կազմել են 1.8 մլրդ դրամ, իսկ նախարարությունների (ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ սփյուռքի նախարարության) աշխատակազմերի մասով՝ 2.7 մլրդ դրամ, և ապահովել համապատասխանաբար

97.6% և 97.8% կատարողական: Նշված ծրագրերում առկա են տնտեսումներ, իսկ նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են համապատասխանաբար 32.7%-ով և 123.3%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Վարչական օբյեկտների շինարարությանը տրամադրվել է շուրջ 4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Հատկացված միջոցների հաշվին շարունակվել են ՀՀ Նախագահի աշխատակազմի ավտոտնտեսության տարածքի շինարարական աշխատանքները:

Վարչական օբյեկտների հիմնանորոգմանը տրամադրվել է 795.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.7%-ը: 2015 թվականի ընթացքում շարունակվել են ՀՀ Նախագահի աշխատակազմի վարչական շենքի և երկրորդ մասնաշենքի վերականգնման աշխատանքները, իրականացվել են կցաշենքի, ջրամատակարարման և կոյուղու, ջեռուցման համակարգի հիմնանորոգման, համակարգչային և հեռախոսային մալուխների անցկացման աշխատանքներ, վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ, ինչպես նաև վարչական շենքի տանիքի մասնակի նորոգման, հսկիչ-անցագրային կետի և նախամուտքի վերանորոգման, ՀՀ Ազգային ժողովի գլխավոր մասնաշենքում մասնակի վերանորոգման աշխատանքներ, ՀՀ կառավարական N 1 շենքի հիմնանորոգման աշխատանքներ: Իրականացվել են նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության նոր համալիրի վերակառուցման և դրա նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Հաշվետու տարվա ընթացքում շուրջ 1.1 մլրդ դրամ սուբվենցիա է հատկացվել Երևանի քաղաքապետարանին՝ աշխատակազմի պահպանման նպատակով, որն ամբողջությամբ օգտագործվել է և 27.3%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 19.2 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է, իսկ նախորդ տարվա համեմատ գրեթե փոփոխություն չի կրել:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով տրամադրվել է 132.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը: Հատկացված միջոցներով ձեռք են բերվել 9 ավտոմեքենա և վարչական սարքավորումներ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 127 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.8%-ը: Հատկացված միջոցներով ՀՀ Նախագահի և մարզպետարանների աշխատակազմերի համար ձեռք են բերվել համակարգչային ծրագիր, սարքավորումներ, տնտեսական գույք և այլն:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում (նախարարությունների աշխատակազմերի մասով) օգտագործվել է 595 հազ. դրամ, որը կազմել է նախատեսված գումարի 22.9%-ը: Նշված գումարը տրամադրվել է ՀՀ քաղաքաշինության նախարարությանը, որով ձեռք է բերվել օդորակիչ, իսկ ՀՀ արդարադատության նախարարությանը արտասահմանյան գրականության ձեռքբերման համար նախատեսված միջոցները չեն օգտագործվել՝ համապատասխան պայմանագրեր չկնքվելու պատճառով:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների ծախսերը, որոնք կազմել են 123.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին իրականացվել են մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների (Government Success Index) 4 հետազոտություն (եռամսյակը մեկ անգամ), կյանքի որակի (Quality of Life Index) 1 հետազոտություն, համայնքային կարիքների գնահատման (Community Needs Assessment) 3 հետազոտություն: Այս հետազոտությունները հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության աշխատակազմի բարեփոխումների ռազմավարության մշակման համար և տալիս են օբյեկտիվ ու ճգրիտ տեղեկատվություն ոլորտների զարգացման մասին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.3%-ով՝ հիմնականում պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

ՀՀ արդարադատության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով 2015 թվականին տրամադրվել է 22 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 92%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.1%-ով՝ հիմնականում պայմանավորված թափուր աշխատատեղերի համալրմամբ:

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակին տրամադրվել է 9.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 70.3%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.4%-ով՝ հիմնականում պայմանավորված գրասենյակի զբաղեցրած տարածքի սպասարկման վարձավճարների ավելացմամբ: Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի գործունեության հիմնական նպատակը ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատմանը, ինչպես նաև հստակեցմանը և պարզեցմանն ուղղված աշխատանքների և ծրագրերի իրականացման ապահովումն է: Համաձայն ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհրդի կողմից

հաստատված աշխատանքային ծրագրի, 2015 թվականի ընթացքում կենտրոնի կողմից ուսումնասիրվել են հողային հարաբերությունների, անշարժ գույքի կադաստրի, քաղաքաշինության, ջրային տնտեսության կառավարման, էներգետիկայի և բնական պաշարների, գյուղատնտեսության, բնապահպանության, արդարադատության, իրավապահ մարմինների, սպորտի և երիտասարդության, կրթության ոլորտները կարգավորող իրավական ակտերն ու համապատասխան բիզնես գործընթացները և խորհրդի քննարկմանն են ներկայացվել առաջարկվող փոփոխությունների իրավական ակտերի փաթեթները: Փաթեթների ընդունմամբ ուժը կորցրած կճանաչվեն և կբարելավվեն բազմաթիվ իրավական ակտեր և կկրճատվեն բիզնես գործընթացներ՝ դյուրացնելով ընթացակարգերը, պարզեցնելով ու բարձրացնելով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը և, որ ամենակարևորն է, նպաստելով բիզնեսի և քաղաքացիների համար ծախսերի էական կրճատմանը: 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում ՕԿԱԿ-ը իրականացրել է Կարգավորման ազդեցության գնահատման ներդրման գործընթացը ՀՀ-ում:

ՀՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում իրականացվել են 196.3 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 89%-ը: Տվյալ միջոցները գոյանում են իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ապոստիլ դնելու վճարովի ծառայությունների մատուցումից: Փաստացի ծախսերի շեղումը ծրագրվածից պայմանավորված է նրանով, որ անվանացանկով նախատեսված որոշ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար պայմանագրեր չեն կնքվել, ինչի արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 25.5%-ով:

ՀՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին մատուցվող փորձագիտական ծառայությունների ծախսերը կազմել են 147 հազ. դրամ կամ ծրագրի 100%-ը: Տվյալ միջոցները ստացվում են նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու համար ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող թարգմանչի որակավորման ստուգման անցկացման ժամանակ թարգմանությունների ճշտությունը ստուգող փորձագետների փորձագիտական աշխատանքի դիմաց դիմորդների կողմից կատարվող վճարումների հաշվին և հատկացվում են փորձագետներին: 2014 թվականին տվյալ ծրագրի շրջանակներում կատարվել էին 1.6 մլն դրամի ծախսեր:

«Ավստրիայի զարգացման գործակալություն» ընկերության աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում կարգավորիչ գիլյոտին» դրամաշնորհային ծրագրի

շրջանակներում կենտրոնի պահպանման համար նախատեսված 107.6 մլն դրամ դրամաշնորհային միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասի ծրագրերին 2015 թվականին տրամադրվել է 94.4 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 95.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերն աճել են 57.9%-ով կամ 34.6 մլրդ դրամով՝ պայմանավորված ավելացված արժեքի հարկի վերադարձի, ինչպես նաև արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովման համար հաշվետու տարում տրամադրվել է 30.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են պետական պարտատոմսերի թողարկման, պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվությունների, հեռուստատեսային և ռադիո հաղորդումների, հայտարարությունների պատրաստման և տարածման (հեռարձակման) աշխատանքները: Նշենք, որ նախորդ տարի նշված ուղղությամբ միջոցներ չէին հատկացվել:

Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման ծախսերը կազմել են 833.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.1%-ով, որը պայմանավորված է ակցիզային դրոշմանիշերի պահանջարկով և պահեստավորված մնացորդի բացակայությամբ:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության մարմինների պահպանման ծրագրին տրամադրվել է շուրջ 16.2 մլրդ դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Միջոցներն ուղղվել են ՀՀ ֆինանսների նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.2%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հաշվետու տարում ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային սպասարկումն ապահովելու նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 106 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 37.4%-ով՝ հիմնականում պայմանավորված բանկերում գործառնական ծառայությունների ծախսերի կրճատմամբ:

Նախատեսված ողջ ծավալով օգտագործվել են ավելացված արժեքի հարկի վերադարձի համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 43.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 56.9%-ով:

Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման գծով նախատեսված շուրջ 45 մլն դրամը օգտագործվել է ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10 անգամ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2014 թվականին կատարողի կողմից պայմանագրով ստանձնված պարտավորությունները կատարվել էին ոչ պատշաճ, ինչով էլ պայմանավորված՝ վճարումները չէին կատարվել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) հատկացվել է 745.5 մլն դրամ, որն օգտագործվել է ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 60.2%-ով՝ պայմանավորված վարչական սարքավորումների ձեռքբերմամբ:

Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարգևավճարների տրամադրման նպատակով օգտագործվել է ավելի քան 1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել:

Եվրոպական միության Հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերը կատարվել են 96.3%-ով՝ կազմելով 3.2 մլրդ դրամ[22]:

Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերը կատարվել են 20.7%-ով՝ կազմելով 229.1 մլն դրամ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերն իրականացվել են 141.2%-ով՝ կազմելով 2.8 մլրդ դրամ:

Դրոշմապիտակների ձեռքբերման ծախսերն իրականացվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով շուրջ 3.7 մլրդ դրամ և նախորդ տավա համեմատ աճելով 3.4%-ով, որը պայմանավորված է պիտակավորման ենթակա ապրանքների անվանացանկի ընդլայնմամբ:

Բլումբերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների տեղադրման և սպասարկման վճարը կազմել է 21 մլն դրամ կամ 99.3%: Նախորդ տարի նշված նպատակով միջոցներ չէին հատկացվել:

[22] «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման ծրագիրն իրականացվում է ՀՀ-ում ՄԱԿ-ի գրասենյակի կողմից:

Հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը կազմել են 5.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 3.4%-ով:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային մարմիններից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերի տպագրությանը հատկացվել է 61.5 հազ. դրամ, որը 99%-ով զիջել է 2014 թվականի մակարդակը: Ծախսերի նվազումը պայմանավորված է կազմակերպությունների կողմից հարկային հաշիվները էլեկտրոնային եղանակով դուրս գրելու հանգամանքով, որի արդյունքում նվազել է տպագրված հարկային հաշիվների նկատմամբ պահանջը:

Արտաբյուջետային միջոցների հաշվին ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացմանը հատկացվել է 135.8 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը:

Չինական Արտահանման-ներմուծման բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ մաքսային զննման տեխնոլոգիաների և սարքավորումների արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերն իրականացվել են 80.5%-ով՝ կազմելով 10.3 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսված է Հայաստանի Հանրապետությանը մաքսային զննման շարժական ռենտգեն և այլ սարքավորումների տրամադրում: Նշյալ սարքավորումների առավելություններից է առանց մաքսային աշխատակցի անմիջական մասնակցության մաքսային պահեստներում հսկողություն սահմանելու հնարավորությունը, ինչը միանշանակ խթանում է սահմանային կետերում մաքսային զննման և հսկողության աշխատանքներին: 2015 թվականին վերոգրյալ սարքավորումներից ստացվել են՝

1. Nuctech MT1213LH – շարժական բեռնարկղ/փոխադրամիջոցի ստուգման համակարգ՝ 4 հատ: Վերջինս ստուգման առաջին համակարգն է, որը որպես ճառագայթային աղբյուր օգտագործում է էլեկտրոնային գծային արագացուցիչը (LINAC): Սարքավորումներից 2-ը ստացվել են 2015թ. նոյեմբերին, տեստավորվել և պատրաստ են շահագործման, իսկ մյուս 2-ը ներկրվել են 2015թ. դեկտեմբերին և ընթանում են սարքավորումների ապակոնսերվացման և կարգաբերման աշխատանքներ:

2. Nuctech BX1000DA – ֆիզիկական անձանց մակերեսային զննող ռենտգեն սարքավորում՝ 2 հատ, որոնք կարող են արագորեն և արդյունավետ կերպով հայտնաբերել հագուստի ներսում կամ տակ թաքցված մաքսանենգ ու վտանգավոր ապրանքները և, Nuctech BI2002 – ֆիզիկական անձանց խորը զննող ռենտգեն սարքավորում՝ 2 հատ, որոնք ամենահիդեալական լուծումն են մարմնի և արհեստական վերջույթների ներսում, հագուստի և կոշիկների մեջ թաքցվող ինչպես մետաղական, այնպես էլ ոչ մետաղական մաքսանենգ ապրանքների հայտնաբերման համար: Սարքավորումները ներկրվել են 2015 թվականի նոյեմբերին: Ներկայումս յուրաքանչյուր մոդելից մեկական տեղադրման աշխատանքներ են իրականացվում Զվարթնոց մաքսատանը և Մեղրու մաքսային կետում:

3. Nuctech CS1000T – թեթև մարդատար մեքենաները զննող ռենտգենյան սարքավորում՝ 2 հատ, որոնցից 1-ը ներկրվել է 2015 թվականի նոյեմբերի վերջին, և ընթանում են տեղադրման աշխատանքները Մեղրու մաքսային կետում, իսկ 2-րդը՝ 2015 թվականի դեկտեմբերին: Ներկայումս Ավտոտրանսպորտային միջոցների մաքսազերծման մասնագիտացված մաքսատանն ընթանում են տեղադրման աշխատանքներ:

4. Nuctech RF 6010 – բեռնատար գնացքների զննման համար նախատեսված ռենտգենյան սարքավորում՝ 1 հատ, որն օգտագործվում է երկաթուղային բեռների/տրանսպորտային միջոցների առցանց ստուգման համար՝ կիրառելով բարձր էներգիայի էլեկտրոնների գծային արագացուցիչը (LINAC)՝ որպես իր ռենտգենյան ճառագայթների աղբյուր: Այն ներկրվել է 2015 թվականի դեկտեմբերին: Ներկայումս ընթանում են ապակոնսերվացման աշխատանքները:

5. LCD էկրանային համակարգ, որը որպես կառավարման սարքավորում մեծ էկրանային ցուցադրման համակարգ՝ հիմնված Hikvision վիդեո պլատֆորմի վրա: 2015 թվականի դեկտեմբերին ստացվել և պահեստավորվել են մաքսային ստուգման կենտրոնացված համակարգի բաղադրամասերը (բացառությամբ էլեկտրոնային կողպեքների հիմնական խմբաքանակի): Էլեկտրոնային կողպեքներից ներկրվել են երկու տեսակ (50+50 քանակությամբ) փորձարկումների և տեստավորումների համար՝ վերջնական մոդելն ընտրելու նպատակով:

ՌԴ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող ԵՏՄ-ի անդամակցության շրջանակներում ՀՀ-ին տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերն իրականացվել են 81.1%-ով՝ կազմելով 5.8 մլրդ դրամ:

Հաշվետու տարում 13.9 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* դասի ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 99.6%-ը: Արտաքին հարաբերությունների ծախսերը 2014 թվականի համեմատ ավելացել են 5.4%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման, ինչպես նաև արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների ծախսերի աճով:

Արտաքին հարաբերությունների դասում շուրջ 8.6 մլրդ դրամ պետական բյուջեի հաշվին և 818.5 մլն դրամ՝ արտաբյուջետային միջոցների հաշվին ուղղվել է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանմանը, որոնք օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի հաշվին կատարված ծախսերն աճել են 8.5%-ով՝ պայմանավորված դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների պաշտոնային դրույքաչափերի և ծառայության հետ կապված ծախսերի փոխհատուցման չափի բարձրացմամբ, դիվանագիտական ներկայացուցչություններում 5 լրացուցիչ հաստիքների ավելացմամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ 2015 թվականի հունվարից Իրաքում և

Դանիայում ՀՀ դեսպանությունների պահպանման ծախսերի վճարումը, որը մինչ այդ կատարվում էր արտաբյուջետային միջոցներից, կատարվել է բյուջետային միջոցների հաշվին: Բացի այդ, միջոցներ են հատկացվել Ստրասբուրգում Մարդու իրավունքների դատարան գործուղված դատավորի փոխհատուցման և բնակվարձի ծախսերն ապահովելու համար: Արտաբյուջետային միջոցների հաշվին ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը նվազել են 36.5%-ով:

Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով ծախսերը կազմել են շուրջ 2 մլրդ դրամ (99.7%): Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է 101 միջազգային կազմակերպությունների և ԱՊՀ կառույցների: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների նպատակով հաշվետու տարում օգտագործվել է համապատասխանաբար 367.9 մլն դրամ և 644.1 մլն դրամ, որոնք կատարվել են 96.8%-ով և 99.8%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 120.3%-ով և 26.3%-ով:

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պահպանմանը տրամադրվել է 154.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 87.2%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.2%-ով՝ հիմնականում պայմանավորված գործուղման ծախսերի կրճատմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի պահպանման նպատակով տրամադրվել է 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.8%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ, ինչպես նաև 10 նոր լրացուցիչ կցորդի հաստիքի ավելացմամբ:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են դեսպանությունների շենքերի գնման ծախսերը, որոնք կազմել են 33.4 մլն դրամ: Գումարն ուղղվել է Բրյուսելում ՀՀ դեսպանության շենքի գնման նպատակով վերցված վարկի գծով 2015 թվականի չափաբաժնի մարմանը: Նշված ծախսերը 2014 թվականի համեմատ նվազել են 6.2%-ով՝ պայմանավորված ՀՀ կառավարության 2015 թվականի բյուջետային ուղերձում ներկայացված՝ եվրոյի փոխարժեքի նվազմամբ:

Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարման ծախսերը կազմել են 92 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.7% կատարողական: Ծրագիրը նախատեսված է ՀՀ տնտեսական,

քաղաքական և ֆինանսական ցուցանիշների գնահատման, գնահատականների հիման վրա վարկանիշի շնորհման նպատակով վարկանիշ շնորհող հեղինակավոր միջազգային ընկերությունների հետ արդյունավետ համագործակցության իրագործման համար: Ծրագրի նպատակն է միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ներքին ու արտաքին աղբյուրներից պետական բյուջեի պակասուրդի կայուն, հուսալի և ոչ ռիսկային ֆինանսավորման համար բարենպաստ պայմանների ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.9%-ով՝ պայմանավորված բյուջեի հաշվարկների հիմքում դրված ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճով:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարությանը տրամադրվել է 25 մլն դրամ (100%): 2014 թվականին նշված նպատակով միջոցներ չէին հատկացվել:

Հաշվետու տարում 731.9 մլն դրամ է տրամադրվել *աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների* դասի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 96.2%-ը: Դասի բոլոր ծրագրերում առկա են որոշակի շեղումներ ծրագրված հատկացումներից: 2014 թվականի համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 21.8%-ով՝ հիմնականում պայմանավորված քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման և տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի աճով: Վերջիններս կազմել են 301.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.6% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պահպանմանը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ 2015 թվականին պետական բյուջեով գնման ենթակա ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել նախատեսվածից ցածր գներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23%-ով, որը պայմանավորված է հիմնականում աշխատանքի վարձատրության և տեղեկատվական ծառայությունների ծախսերի աճով:

Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերը կազմել են 104 մլն դրամ կամ նախատեսվածի 91.5%-ը, որը պայմանավորված է կադրերի ռեզերվում նախատեսվածից պակաս թվով քաղաքացիական ծառայողների գրանցման հանգամանքով: Նշված ծախսերը 5.3%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը: Նշենք, որ 2014 թվականին այս ծրագրի շրջանակներում օգտագործված 98.7 մլն դրամից բացի ևս 58.2 մլն դրամ էր հատկացվել ՀՀ կառավարության պահուստային

ֆոնդից: 2015 թվականին քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվել է 131 քաղաքացիական ծառայող՝ նախատեսված 250-ի և նախորդ տարվա 264-ի դիմաց:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացումը ֆինանսավորելու նպատակով հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեից տրամադրվել է 316 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.6%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 25.1%-ով՝ պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում լիազոր ներկայացուցիչների պահպանման ծախսերի գծով 2015 թվականին նախատեսվել է 6.7 մլն դրամ, սակայն ծրագրի իրականացումը համարվել է ոչ նպատակահարմար, և նախատեսված միջոցները, ինչպես և նախորդ տարի, չեն օգտագործվել:

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող Սևծովյան ավազանի երկրների համատեղ գործողությունների 2007-2013թթ. դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերն իրականացվել են 74.1%-ով՝ կազմելով 10.4 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է որակի ապահովման համակարգի գնահատման և վերլուծության ծառայությունները չիրականացնելու հանգամանքով: Օգտագործված միջոցներն ուղղվել են հիմնականում աշխատավարձի, տեղեկատվական, ներկայացուցչական, գովազդային ծառայությունների և գործուղումների ֆինանսավորմանը:

«Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 2.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 40.1%-ով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման, պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, 2015 թվականի Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության և Գյումրու ու Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծախսերի աճով:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ կամ ծրագրի 98.5%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 24.9%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերը կազմել են 711.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.8%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են

25.6%-ով, ինչը նույնպես հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի խթանման ծառայությունների ծախսերը կազմել են 88.6 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը և 14.2%-ով գերազանցել 2014 թվականի ցուցանիշը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2015 թվականին նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի (ՏՏԶԱԽ) քարտուղարության վարձատրության հետ կապված ծախսերը: 2014 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի դրույթների կիրարկումն ապահովելու նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության N 312-Ն որոշումը, որի ուժի մեջ մտնելուց հետո՝ 2015 թվականի ապրիլի 9-ից վերստեղծվել են ոլորտի 79 սկսնակ ընկերություններ և 329 նոր աշխատատեղեր: Նշված ընկերությունները դիմել են հավաստագրման համար, որոնցից հավաստագրեր են ստացել 65 ընկերություն: 2015 թվականի ՏՏ ոլորտի հետազոտության արդյունքների համաձայն՝ ՏՏ ոլորտում ակտիվ աշխատում են ավելի քան 450 ընկերություններ (նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 14%), ոլորտում ներգրավված է մոտ 13000 մասնագետ, սպասարկող անձնակազմի հետ միասին՝ ավելի քան 15000, ոլորտի ընդհանուր շրջանառությունը կազմում է շուրջ 550 մլն ԱՄՆ դոլար, ոլորտի շրջանառության աճը կազմել է ավելի քան 17%: 2016 թվականից ՏՏ ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի արդյունավետ վարումն ապահովելու նպատակով մշակվել և ընդունվել են անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտեր: Աշխատանքներ են տարվել ՏՏ ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի տեղեկատվական համակարգի ստեղծման ուղղությամբ:

«Մայքրոսոֆթ» ընկերության պատվիրակության այցի շրջանակում ՀՀ կառավարությունում ընկերության հետ ստորագրվել են նոր համաձայնագրեր՝ ուղղված ՀՀ-ում Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի հենքով «ամպային» և բջջային լուծումների տարածաշրջանային կենտրոնի հիմնմանը, Հայաստանում կիբեռանվտանգության կենտրոնի ստեղծմանն աջակցությանը, կրթական ոլորտում համագործակցությանը, մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված համատեղ ծրագրերի և այլ նախաձեռնությունների իրականացմանը: Համաձայնագրերի շրջանակներում, ՀՀ կառավարության կարիքների համար համակարգչային լիցենզիոն ծրագրային ապահովումն իրականացնելու նպատակով, ՀՀ կառավարությունը ձեռք է բերել 3000 «Մայքրոսոֆթ» լիցենզիոն ծրագրային ապահովման փաթեթներ, որոնց գումարը վճարվելու է 3 տարիների ընթացքում: Տեղի է ունեցել Երևանի համաֆինանսավորվող դրամաշնորհային մրցույթի ամփոփումը, որի ընթացքում ներկայացված տեխնոլոգիական ոլորտի 23 ընկերությունների և թիմերի հայտերից հաղթող են ճանաչվել 7 ծրագրեր: Երևանում կայացած վենչուրային համաժողովի արդյունքում «Գաղափարից դեպի շուկա» դրամաշնորհային մրցույթի 26 ծրագրերից հաղթող են ճանաչվել 5 ծրագրեր՝

արժանանալով դրամական մրցանակների: Տեղի է ունեցել «Խելացի լուծումներ խելացի բիզնեսի համար» խորագրով 8-րդ ամենամյա «Դիջիթեք» բիզնես ֆորումը, որին մասնակցել և բիզնեսի արդյունավետության բարձրացմանն ուղղված իրենց տեխնոլոգիական լուծումներն են ներկայացրել 40 տեղական և արտասահմանյան կազմակերպություններ: Աշխատանքներ են իրականացվել «Երևան Էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում կայանալիք միջազգային ամենամյա «Դիջիթեք Էքսպո 2015» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ցուցահանդեսի (170 ընկերություն, 45000 այցելու) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կայանալիք «Արմթեք 2015» բարձր տեխնոլոգիաների ոլորտի ամենամյա գլոբալ համաժողովի (350 մասնակից) կազմակերպման ուղղությամբ: Իրականացվել է «Հայկական ՏՀՏ եվրոպական ավտոարշավ» ծրագիրը, որին մասնակցել են տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի 26 հայկական ընկերությունների 36 պատվիրակներ: ՏՀՏ ավտոարշավը ներառել է 18 երկրներ: Շարունակվել է Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնի, «mLab ECA» մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի, Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիայի (ANEL) ծրագրերի իրականացումը և վերջիններիս շրջանակներում որակյալ տեխնոլոգիական մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը:

Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագիրը մեկնարկել է 2015 թվականից, որին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 132.5 մլն դրամ՝ ապահովելով 88.3% կատարողական: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում նախատեսվածից ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ, ինչպես նաև տնտեսումներով: Շարունակում է իր գործունեությունն իրականացնել Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը, որում տեղակայված են 23 տեղական և արտասահմանյան կազմակերպություններ: Կենտրոնի առկա կիրառելի տարածքի զբաղվածությունը կազմում է 99%: Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի ուսումնական, հետազոտական և ինկուբացիոն լաբորատորիաներում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ, որոնց շրջանակում պատրաստվել և վերապատրաստվել են 1360 աշակերտներ, ուսանողներ և մասնագետներ, բիզնես աջակցություն ու խորհրդատվություն է տրամադրվել 160 թիմերի, ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի, կազմակերպվել են մի շարք աշխատաժողովներ, սեմինարներ, հանդիպումներ, շնորհանդեսներ: Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում տեղի են ունեցել Գյումրու համաֆինանսավորվող դրամաշնորհային մրցույթներ, որոնց արդյունքում հաղթող են ճանաչվել 12 ծրագրեր Գյումրիից: Արդեն իսկ հաղթող թիմերը հիմնել են ընկերություններ, որոնք իրենց գործունեությունն են ծավալում Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում: Կենտրոնում ստեղծվել են 120 նոր աշխատատեղեր:

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգման նպատակով Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակում հայտարարվել է շինարարական կազմակերպության ընտրության մրցույթ, սկսվել են կենտրոնի շինարարական աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2016 թվականի հունիսին: Կենտրոնին հատկացված ժամանակավոր աշխատանքային տարածքում հիմնվել են ՏՀՏ և ճարտարագիտության ոլորտների ուղղվածությամբ ուսումնական լաբորատորիաներ, պատրաստվել և վերապատրաստվել են 900 աշակերտներ, ուսանողներ և մասնագետներ, առնվազն 100 թիմերի, սկսնակ և գործող ընկերությունների տրամադրվել են բիզնես աջակցության ու խորհրդատվական ծառայություններ: Վանաձորի համաֆինանսավորվող դրամաշնորհների ծրագրի շրջանակում դրամաշնորհ են ստացել 4 ընկերություններ: Վանաձորում տեղի է ունեցել «Հեքըթոն[ՅԱՆ] մանկություն 2015» նորարար գաղափարների և ծրագրավորման մրցույթը, որին մասնակցել են ավելի քան 70 թիմ, որոնցից 18-ը՝ Վանաձորից:

Աշխատանքի միջազգային կազմակերպության և ՄաստերՔարդ հիմնադրամի Work4Youth ծրագրի ծախսերը կազմել են 6.4 մլն դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական:

2015 թվականին առաջին անգամ Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 149.5 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 54.3%-ը: Ծրագրի հիմքում ընկած է ՀՀ բնակչության, առողջության և սնուցման վերաբերյալ տվյալների հավաքումը, վերլուծությունը և ներկայացումը: Շեղումը պայմանավորված է «Այ-Սի-Էֆ ինթերնեյշնլ» ընկերության փորձագետի այցի ուշացման հետ կապված՝ մեկ ամսով դաշտային և մուտքագրման աշխատանքները հետաձգելու, գնումների պլանով նախատեսված որոշ գնման ընթացակարգեր չկայանալու, ինչպես նաև հայտարարված մրցույթների արդյունքում պայմանագրերն ավելի էժան կնքելու հանգամանքներով:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 1.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը: Մասնավորապես՝ 647.2 մլն դրամը տրամադրվել է տվյա դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, 4.8 մլն դրամը՝ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 98.6% և 99.8%: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են համապատասխանաբար 44.7%-ով և 6%-ով՝ հիմնականում պայմանավորված վարձակալված տարածքների ավելացմամբ, էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ, ինչպես նաև աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցությունը տրամադրվել է նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 156.5 մլն դրամ և 2.1%-ով գերազանցելով 2014 թվականի ցուցանիշը:

Պետական աջակցությունը «Սպասարկում» ՊՈԱԿ-ին կազմել է 377.2 մլն դրամ կամ ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.5%-ով՝ պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ:

2014 թվականի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասի ծախսերն աճել են 22.3%-ով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի աճով:

2015 թվականին *«Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք»* դասին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 10.7 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.2%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերի աճով:

Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար 2015 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 984.5 մլն դրամ հավելավճարներ՝ ապահովելով 100% կատարողական և 168.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված հավելավճարների չափի բարձրացմամբ: 2015 թվականի հունվարի 1-ից գիտությունների դոկտորի հավելավճարը սահմանվել է 50 հազ. դրամ՝ նախկին 20 հազ. դրամի փոխարեն, իսկ գիտությունների թեկնածուի հավելավճարը՝ 25 հազ. դրամ, նախկին 10 հազ. դրամի փոխարեն:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում 14.4 մլն դրամ տրամադրվել է ՀՀ սփյուռքի նախարարությանը, որի հաշվին պատվիրվել են սփյուռքին վերաբերող թվով 12 գիտական հետազոտություններ: Միջոցներն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերը կազմել են շուրջ 7.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 8.7%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտաժողովների թվի ավելացմամբ:

«Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման և գիտական ներուժի արդիականացման ծրագրի ծախսերը կազմել են 742.2 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.9%-ով՝ հիմնականում պայմանավորված գազի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 865.5 մլն դրամ: Ծրագրում ընդգրկված են Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը և ՀՀ ԳԱԱ մի շարք կազմակերպություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.2%-ով՝ հիմնականում պայմանավորված Մատենադարանի պահպանման և սպասարկման ծախսերի ավելացմամբ:

Ամբողջությամբ կատարվել են նաև «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին պետական աջակցության ծախսերը, որոնք կազմել են 290.3 մլն դրամ: «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամում ԱՐԵԱԼ գծային արագացուցչի ծրագրի շնորհիվ հնարավորություն ստեղծվեց հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ իրականացնել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, նյութագիտության, նանոէլեկտրոնիկայի և այլ բնագավառներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ արագացուցիչը գործարկվել է 2014 թվականի մայիսից, իսկ 2015 թվականին գործել է ամբողջությամբ:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների դասի ծախսերը 2015 թվականին կազմել են ավելի քան 1.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.7%-ը: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 16.1%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ծախսերի կրճատմամբ: Խմբի ծախսերի զգալի մասը՝ 1.2 մլրդ դրամ, տրամադրվել է նշված ծրագրին, որի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 94.9%-ով: Նախորդ տարվա համեմատ պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ծախսերը նվազել են 20.8%-ով՝ պայմանավորված ֆինանսավորվող թեմաների քանակի կրճատմամբ: Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների հատկացումներն իրականացվել են ամբողջությամբ, որոնք կազմել են 223.8 մլն դրամ և 23.6%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված նպատակային-ծրագրային հետազոտությունների քանակի աճով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 12.4 մլրդ դրամ՝ 9.1%-ով գերազանցելով ծրագիրը, որը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների դասի ծախսերն աճել են 27.4%-ով, ինչը հիմնականում

պայմանավորված է վերը նշված ծրագրի և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող մի շարք ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում 949.7 մլն դրամ է տրամադրվել այս դասում ընգրկված պետական կառավարման մարմինների՝ ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահպանմանը, որը կազմել է ծրագրի 96.1%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ դատախազությանը, ՀՀ արդարադատության և ՀՀ ֆինանսների նախարարություններին տրամադրվել է 414.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 96.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.8%-ով:

Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներն իրականացնելու համար ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը տրամադրվել է 32.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը և 19.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ: 2015 թվականին իրականացվել են թվով 330 պետական գույքի աճուրդով վաճառքի կազմակերպում և անցկացում՝ նախորդ տարվա 294-ի փոխարեն:

Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացման ծախսերը կազմել են 37 մլն դրամ, որոնք նույնպես նախատեսված ծավալով իրականացվել են և նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 137.1%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է 2014 թվականից հետաձգված մատակարարումների և աշխատանքների համար կատարված վճարումներով:

Ծրագրի նպատակն է կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը՝ քաղաքականության մշակման ոլորտում գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի արդյունավետությունն առավելագույնի հասցնելու և ներքին աշխատանքային հոսքերի և արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Քաղաքականության ձևավորման և ծառայությունների մատուցման ձևաչափում գերատեսչական կարողությունների զարգացում,
- Հանրային հատվածում մարդկային ռեսուրսների գործունեության արդյունավետության բարձրացում,

- Կատարողականի և թափանցիկության բարելավման նպատակով համակարգերի մշակում,
- Ժամանակին պահանջվող տեխնիկական աջակցություն,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

2015 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ, մասնավորապես՝ ձեռք են բերվել քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային կառավարման համակարգի համար սարքավորումներ և պետական կառավարման մարմինների համար համակարգչային սարքավորումներ:

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությանը հաշվետու տարում տրամադրվել է 858.8 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը և 31.5%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերը կազմել են 2.7 մլրդ դրամ կամ ծրագրի 74.8%-ը, որը պայմանավորված է հավաքված եկամուտների ցածր մակարդակով: Արդյունքում նշված ծախսերը 14.3%-ով զիջել են նաև նախորդ տարվա ցուցանիշը:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 39.6 մլն դրամ կամ նախատեսվածի 40.3%-ը: Ծրագրի ընդհանուր նպատակն է գյուղական աղքատության կրճատումը՝ Հայաստանում գյուղատնտեսական ոլորտի կայուն տնտեսական աճի միջոցով, գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության մեծացումը՝ ոռոգման համակարգերի ընդգրկումն ընդլայնելու և որակի բարելավման, համակարգը կառավարող մարմինների հզորացման և ֆերմերների արտադրանքի եկամտաբերությունն ավելացնելու հնարավորություններ ստեղծելու միջոցով: ՀՄՀ-Հայաստան ծրագրի փակման պլանի համաձայն «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի (ԱՖԾԿԿ ՊՀ) կազմում ձևավորված ծրագրի կառավարման խմբի միջոցով իրականացվում է ծրագրի շարունակության կառավարումը և վերահսկումը: Ծրագրով նախատեսված աշխատանքները կատարված են, և ծրագրից շեղումը հանդիսանում է ծախսերի խնայողություն:

Տվյալ դասում ընդգրկված՝ պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծախսերին տրամադրվել է 23.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 87.7%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները տրամադրվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին: Նշված ծրագրի շրջանակում ձեռք են բերվել ավտոմեքենաներ և դյուրակիր համակարգիչներ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի կարողությունների զարգացմանը տրամադրվել է շուրջ 537 մլն դրամ կամ նախատեսվածի 92.4%-ը: Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ձեռք են բերվել վարչական սարքավորումներ՝ 22.80 մլն դրամ արժեքով, աշխատանքները կատարվել են 42.8%-ով՝ ինչը պայմանավորված է կոմիտեի կողմից եկամուտների թերհավաքմամբ.
- Ոչ նյութական հիմնական միջոցների ձեռքբերում (ծրագրային փաթեթների ձեռքբերում և թարմացում), որի համար ծախսվել է 16.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.5%-ը.
- Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերման համար նախատեսված 11.6 մլն դրամի ծախսերը չեն կատարվել՝ պայմանավորված կոմիտեի կողմից պակաս հավաքված գումարներով.
- Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերի համայնքների սահմանների ամրացում և «WGS – 84» (ՎԻ ՋԻ ԷՍ-84) միասնական կոորդինատային համակարգում հիմքի ստեղծման աշխատանքներ: Այս նպատակով նախատեսված 57.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է, աշխատանքները կատարվել են 100%-ով.
- Գեոդեզիայի բնագավառում Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման աշխատանքներ, որոնք կատարվել են 100%-ով, ծախսերը կազմել են շուրջ 69 մլն դրամ.
- ՀՀ տարածքում WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում քվազիգեոիդի մոդելի ստեղծման, GPS դիտարկման և նիվելիրացման, տրանսֆորմացիոն նոր գործակիցներով կոորդինատների վերահաշվարկման և կատալոգների կազմման աշխատանքներ, որոնք կատարվել են 100%-ով, ծախսերը կազմել են 19.3 մլն դրամ.
- Պետական բարձունքային հենանիշերի և դրոշմանիշերի ուսումնասիրման ու թարմացման աշխատանքներ, որոնք կատարվել են 100%-ով, ծախսերը կազմել են 41.3 մլն դրամ.
- Տեղագրական քարտեզագրության բնագավառում նախատեսված աշխատանքներ, որոնք կատարվել են 100%-ով, ծախսերը կազմել են 71.5 մլն դրամ.
- Աշխարհագրական անվանումների բնագավառում նախատեսված աշխատանքներ, որոնք կատարվել են 98%-ով, ծախսերը կազմել են 9.8 մլն դրամ.
- Գյումրի քաղաքում բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի (1396.1հա) ստեղծման աշխատանքներ, որոնք կատարվել են 100%-ով, ծախսերը կազմել են 64.1 մլն դրամ.
- Թեմատիկ քարտեզագրության բնագավառում նախատեսված աշխատանքներ, որոնք կատարվել են 100%-ով, ծախսերը կազմել են շուրջ 10 մլն դրամ.

- Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և տեղագրական աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաների ստեղծման աշխատանքներ, որոնք կատարվել են 100%-ով, ծախսերը կազմել են 28.30 մլն դրամ.
- ՀՀ համայնքների կադաստրային քարտեզագրման աշխատանքներ, որոնք կատարվել են 100%-ով, ծախսերը կազմել են 111.8 մլն դրամ.
- Նախագծահետազոտական ծախսեր, որոնք կատարվել են 30%-ով՝ պայմանավորված կոմիտեի կողմից հավաքված եկամուտների ցածր մակարդակով.
- Ձեռք են բերվել վարչական սարքավորումներ, ոչ նյութական հիմնական միջոցներ, տրանսպորտային սարքավորումներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3.2 մլրդ դրամ՝ 136.9%-ով գերազանցելով ծրագրային հատկացումները: Բարձր կատարողականը պայմանավորված է 2014 թվականից հետաձգված մատակարարումների և աշխատանքների համար վճարումներով: Ծրագիրն ուղղված է էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստմանը օժանդակելուն, նպատակներն են՝ տնային տնտեսությունների, բիզնեսի և պետական կազմակերպությունների համար համացանցի, համակարգիչների և էլեկտրոնային ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը, գիտելիքահեն և տեխնոլոգիահեն հատվածի ծավալների ու տվյալ հատվածում զբաղվածության աճը, ինչպես նաև հասանելիությունը շուկաներին, ֆինանսներին, հմտություններին: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքների զարգացում,
- Ձեռնարկությունների ինովացիոն ենթակառուցվածքների խթանում,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

2015 թվականին իրականացվել են Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների հիմնանորոգման աշխատանքները և նրանց համար կահույքի ու այլ սարքավորումների ձեռք բերումը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի իրականացման համար ծախսվել է 1.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 110.5%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է 2014 թվականից հետաձգված մատակարարումների և աշխատանքների համար 2015 թվականին կատարված վճարումներով: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի եկամուտների վարչարարության համապարփակ արդիականացմանը: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՏՀՏ ենթակառուցվածքում հույժ կարևոր ներդրումները, որպեսզի հնարավորություն ընձեռվի արդիականացնել բիզնես գործընթացները, ընդլայնվի

էլեկտրոնային կառավարման կիրարկումը, այդ թվում՝ նաև հարկային հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը, ինչպես նաև առավել թիրախավորված, ռիսկի վրա հիմնված պարտավորությունների իրականացման ռազմավարության ներդրումը՝ հիմնվելով պարտավորությունների կամավոր իրականացման վրա: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինստիտուցիոնալ զարգացում և փոփոխության կառավարում,
- Գործընթացի արդիականացում և պարտավորությունների կատարման կառավարում,
- ՏՏ ենթակառուցվածքի և համակարգերի արդիականացում,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

Ծրագրի շրջանակներում 2015 թվականին ներդրվել է սերվերային երկու համակարգ՝ Երևանում և Դիլիջանում, որի արդյունքում ապահովվել է վերազինված, ISO27001 ստանդարտներին համապատասխան ՏՏ ենթահամակարգերի առկայությունը էլեկտրոնային համակարգերի արագ և արդյունավետ աշխատանքի համար: Ներդրվել է տպագրական համակարգ, որտեղ տպագրվում են ուսումնական նյութեր, ձեռնարկներ, իրազեկման նպատակով բուկլետներ, հարկային և մաքսային տեղեկատուներ և այլ նյութեր:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանրային հատվածի վերահսկողության (Վերահսկիչ պալատի) կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 166.4 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Կարողության գնահատում և ռազմավարության մշակում,
- Աուդիտի համապատասխան ստանդարտների և մեթոդների մշակում:

Ծրագիրն ավարտվել է, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են՝ պետական հատվածի արտաքին աուդիտի կողմից կարողության ստեղծման ռազմավարության ու գործողությունների ծրագրի ընդունման և աուդիտի ստանդարտացված մեթոդների մշակման ու կիրառման համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 120.8 մլն դրամ կամ նախատեսվածի 118.8%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նրանով, որ 2014 թվականից հետաձգված մատակարարումների և կատարված որոշ աշխատանքների դիմաց վճարումները կատարվել են 2015 թվականին: Ծրագրի նպատակն է հզորացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համապատասխան վարչությունների կարողությունները, որոնք պատասխանատու են ֆինանսական շուկայի զարգացման և փողերի լվացման դեմ պայքարի քաղաքականությունների համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինստիտուցիոնալ զարգացման առաջխաղացում,
- Ֆինանսական շուկայի զարգացում:

Ծրագիրն ավարտվել է, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են: Մասնավորապես՝

- Իրականացվել է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտի ՀՀ օրենսդրության և այդ ոլորտի միջազգային լավագույն փորձի համեմատություն, հայտնաբերված բացերի հիման վրա մշակվել է գործողությունների ծրագիր, ինչպես նաև խաղային գործի բնագավառում գործող կազմակերպությունների համար ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման ենթակա պարբերական հաշվետվական ձևերը: Օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված միջոցառումների նպատակն է խաղային գործի բնագավառում առկա ռիսկերը դարձնել տեսանելի և կառավարելի.
- Մշակվել և ներդրվել է ներկայումս գործող «Հարկատու-3» էլեկտրոնային կառավարման համակարգի հետ ինտեգրված լիցենզավորման գործընթացի վարման մոդուլը, որի արդյունքում ավտոմատացվել է ՀՀ ՖՆ կողմից լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների համար լիցենզիաների հայտերի ընդունման, լիցենզիաների տրման և հաշվառման գործընթացը: Աշխատանքներն ավարտված են: Վերջնական արդյունքում ՀՀ ՖՆ-ն ունի իր կողմից լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների լիցենզավորման գործընթացի կատարելագործված և ավտոմատացված համակարգ, որի գործարկման արդյունքում կնվազեն կոռուպցիոն ռիսկերը և ծախսվող ժամանակը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կառավարության կարգավորող բարեփոխումների գրասենյակի կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 243 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 111.4%-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2014 թվականից հետաձգված մատակարարումների և կատարված որոշ աշխատանքների դիմաց փաստացի վճարումները կատարվել են 2015 թվականին: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Կարգավորիչ բարեփոխումների ստորաբաժանման կարողությունների հզորացում,
- Մշտադիտարկման և գնահատման համակարգի մշակում և ներդրում:

Ծրագիրն ավարտվել է, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են՝ ՀՀ կառավարության կարգավորիչ բարեփոխումների ստորաբաժանման կարողությունները զագացնելու համար, որը պատասխանատու է գործարարների և քաղաքացիների գործունեության վրա ազդող իրավական նորմերի գույքագրման, վերանայման և անօգուտ կամ ավելորդ հանդիսացողների վերացման կամ պարզեցման միջոցով կարգավորիչ «գիլյոտինի» ծրագրի իրականացման համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի հանրային ֆինանսական կառավարման հզորացման դրամաշնորհային ծրագրի գծով ծախսվել է 373.8 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 301.7%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2014 թվականից հետաձգված մատակարարումների և կատարված որոշ աշխատանքների դիմաց փաստացի վճարումները կատարվել են 2015 թվականին: Ծրագրի նպատակն է քաղաքականության վրա հիմնված բյուջետավորման խորացումը և Հայաստանում պետական ներդրումների կառավարման համակարգի հզորացումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- Քաղաքականության վրա հիմնված բյուջետավորման և Հայաստանում հանրային ներդրումների կառավարման համակարգերի հզորացում,
- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և կառավարման բարելավում,
- Բիզնես գործընթացների ուսումնասիրություն:

Ծրագիրն ավարտվել է և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են: Մասնավորապես՝

- Մշակվել են կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ԿՖԿՏՀ) տեխնիկական և գործառութային պահանջները և տեխնիկական մասնագրերը, մրցութային փաստաթղթերը և նախահաշիվները՝ ներկայացնելով ԿՖԿՏՀ մրցույթի իրականացման փաստաթղթերի ամբողջական փաթեթը.
- Մշակվել է գնումների ինտեգրված էլեկտրոնային համակարգ, որը ներառում է գնումների պլանավորումը, գնման գործընթացի կազմակերպումը և անցկացումը, գնման պայմանագրերի կառավարումը և իրականացված գնումների վերաբերյալ հաշվետվությունների պատրաստումը՝ գնումների գործընթացների ամբողջական ավտոմատացման, գնումների արդյունավետությունը և թափանցիկությունը բարձրացնելու նպատակով: Իրականացվել է նաև պետական ֆինանսների կառավարման ոլորտի մասնագետների՝ էլեկտրոնային եղանակով թեստավորման համակարգի ավտոմատացումը.
- ՀՀ ֆինանսների նախարարությանը և այլ համապատասխան մարմիններին աջակցություն է ցուցաբերվել բյուջեի պատրաստման, այդ թվում՝ կապիտալ ներդրումների բյուջետավորման կատարելագործված ընթացակարգերի նախագծման և գործարկման հարցում: Իրականացվել է քաղաքականության վրա հիմնվող բյուջետավորման խորացում, որի շրջանակներում հիմնական գործողություններն են՝ նոր հաշվային պլանի ծրագրային սեգմենտի մշակումը և ծրագրի ծախսակազմումը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսաթոշակների մասին հանրային իրազեկման և գրագիտության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 76.3 մլն

դրամ կամ նախատեսվածի 100.9%-ը: Ծրագրի նպատակն է ուժեղացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև վերջինիս սոցիալական ապահովության պետական ծառայության կարողությունները՝ բարելավելու լայն հասարակության և հատուկ թիրախային խմբերի իրազեկումը կենսաթոշակային բարեփոխման մասին, և ֆինանսական գրագիտությունը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- Իրազեկման և ֆինանսական գրագիտության բարձրացման կարողությունների կատարելագործում,
- Դասախոսների վերապատրաստման շնորհիվ դասախոսների դյուրաշարժ խմբերի կազմավորում:

Ծրագրի ավարտը նախատեսված է 2016 թվականի հունիսին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքաշինական թույլտվությունների էլեկտրոնային մշակման և մեկ պատուհանից տրամադրման ծրագրի համար Ինստիտուցիոնալ զարգացման հիմնադրամի (ԻԶՀ) դրամաշնորհային ծրագրի միջոցներից օգտագործվել է 175.9 մլն դրամ կամ նախատեսվածի 116.5%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է 2014 թվականից հետաձգված մատակարարումների և աշխատանքների համար վճարումներով: Ծրագրի նպատակն է բարելավել բիզնես միջավայրը՝ կրճատելով քաղաքաշինական թույլատվությունների հետ կապված ընթացակարգերի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը և դրանց համար պահանջվող ժամանակը՝ այս ընթացակարգերի պարզեցման և ավտոմատացման միջոցով: Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- Մեկ պատուհանի միջոցով քաղաքաշինական թույլտվությունների արդիականացված մշակում,
- Տվյալների էլեկտրոնային մշակման և ծառայությունների մատուցման ներդրում:

Ծրագիրն ավարտվել է, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են՝ կրճատելով քաղաքաշինական թույլատվությունների հետ կապված ընթացակարգերի արժեքը և դրանց համար պահանջվող ժամանակը՝ այս ընթացակարգերի պարզեցման և ավտոմատացման միջոցով բիզնես միջավայրը բարելավելու համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի գյուղատնտեսական հաշվառման պիլոտային ծրագրի համար վիճակագրական կարողությունների զարգացման և իրականացման աջակցման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 24.3 մլն դրամ կամ նախատեսվածի 130.6%-ը: Տվյալ կատարողականը պայմանավորված է 2014 թվականից հետաձգված մատակարարումների և աշխատանքների համար վճարումներով: Ծրագիրն ավարտվել

է և հաշվառման պիլոտային ծրագրի համար նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 18.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 5.5%-ը: Ծրագրի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ գնումների պլանը հաստատվել է 2015 թվականի երրորդ եռամսյակում, և ծրագրով նախատեսված որոշ աշխատանքներ տեղափոխվել են 2016 թվական: Ծրագրի նպատակն է հզորացնել արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ձեռնակություններին տրամադրվող որակի կառավարման ծառայությունների կարողությունները:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Առևտրի խթանման և որակի համակարգերի արդյունավետության բարելավում,
- Ներդրումների և արտահանման խթանում,
- Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում,
- Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

2015 թվականին իրականացվել են ծրագրի մեկնարկի և գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երիտասարդների ներգրավվածության խթանման դրամաշնորհային ծրագրի միջոցներից օգտագործվել է 21.6 մլն դրամ կամ նախատեսվածի 10.2%-ը: Ծրագրի նպատակն է առաջնորդության և ապրուստի զարգացման հնարավորությունների ավելացման շնորհիվ թիրախային շրջաններում երիտասարդների խոցելի խմբերի սոցիալական և տնտեսական ներգրավվածության խթանումը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- Երիտասարդների առաջնորդության զարգացում,
- Երիտասարդների ապրուստի խթանում,
- Ծրագրի կառավարում:

Ծրագրի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագիրն իրականացնող անհատ խորհրդատուների հետ պայմանագրերը կնքվել են 2015 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում: Մինչ այդ հուլիս ամսին Համաշխարհային բանկին առաջարկվել է ծրագրի վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը՝ 2016 թվականի մարտի 31-ի փոխարեն, սակայն ՀԲ կողմից համաձայնություն չի ստացվել: Ըստ այդմ, ծրագրի միջոցառումների համար սահմանվել են կարճ ժամկետներ, իսկ մեկ միջոցառում (Փոքր բիզնեսի դրամաշնորհների տրամադրում) ընդհանրապես հանվել է գնումների պլանից, քանի որ այն չէր կարող ավարտվել մինչև ծրագրի համար սահմանված վերջնաժամկետը:

Ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացման, կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի հրապարակման աշխատանքներին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 16.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը: Տնտեսումը պայմանավորված է գործուղումների և այցերի կրճատմամբ:

2015 թվականին *պետական պարտքի* գծով գործառնությունների դասի ծախսերը կատարվել են 100%-ով և կազմել 74.1 մլրդ դրամ: Ընդհանուր առմամբ պետական պարտքի գծով գործառնությունների դասի ծախսերն աճել են 20.2%-ով կամ 12.4 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից և այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի և արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում 32.1 մլրդ դրամ տրամադրվել է պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկմանը, որի կատարողականը կազմել է 100%: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.5%-ով, ինչը պայմանավորված է 2015 թվականի փետրվար-մարտ ամիսներին պարտատոմսերի փոխանակման ծրագրի շրջանակում իրականացված 18.9 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի չնախատեսված հետգնմամբ, ինչպես նաև դեֆիցիտի ֆինանսավորման ծրագրի ճշգրտման արդյունքում 2015 թվականի ընթացքում տեղաբաշխվող և նույն տարում սպասարկվող պարտատոմսերի ծավալի կրճատմամբ՝ նվազեցնելով ընթացիկ տարվա սպասարկման բեռը:

Օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից և այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկմանը տրամադրվել է 18.7 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 62%-ով, որը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով: Հայաստանի Հանրապետությունը մեկ շնչին ընկնող Համախառն Ազգային Եկամտի ցուցանիշով վերջին մի քանի տարիներին շարունակաբար գերազանցել է Զարգացման Միջազգային Ընկերակցության (ԶՄԸ) կողմից յուրաքանչյուր տարի այդ ցուցանիշի գծով սահմանվող շեմը և դիտարկվել է վարկունակ՝ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի պայմաններով վարկավորման տեսանկյունից: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԶՄԸ-ի հետ ստորագրված մի շարք վարկային համաձայնագրերի պահանջներին համապատասխան, վերանայվել են այդ վարկերի տոկոսադրույքները, և սահմանվել է լրացուցիչ տոկոսադրույք՝ տարեկան 1.7%-ի չափով: Արտաքին պարտքի սպասարկման ծախսերի վրա ազդեցություն ունեցած գործոններից են նաև կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի ծավալի աճը, ինչպես նաև վարկերի

սպասարկման գծով վճարումների փոխարկումների ժամանակ կիրառվող փոխարժեքների փոփոխությունը:

Մուրհակների սպասարկմանը հաշվետու տարում տրամադրվել է 728.2 հազ դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: 49.4 մլն դրամ է տրամադրվել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ պարտավորությունների սպասարկմանը, որը կազմել է նախատեսվածի 94%-ը:

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը կազմել են 23.2 մլրդ դրամ (100%), որը նախորդ տարվա համեմատ աճել է 36.1%-ով՝ պայմանավորված թողարկված արտարժութային պետական պարտատոմսերի ծավալի աճով:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից *կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտների* ծախսերը կատարվել են 99.2%-ով՝ կազմելով 47.4 մլրդ դրամ: Նշված գումարից շուրջ 44.1 մլրդ դրամը տրամադրվել է համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով:

Տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվել է 2.3 մլրդ դրամ պետական աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը:

Նվազագույն աշխատավարձի և նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների գումարների վճարմամբ պայմանավորված առաջացող լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման նպատակով Երևան համայնքին տրամադրվել է 429.4 մլն դրամ սուբվենցիա՝ կազմելով նախատեսվածի 100%-ը:

Պետական աջակցությունը սահմանամերձ համայնքներին կազմել է 572.9 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 61.7%-ը: Նշված կատարողականը հիմնականում պայմանավորված է նախատեսվածից պակաս փաստացի պահանջով: Ծրագիրը նախատեսվել էր ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի 32 սահմանամերձ համայնքների գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման, բնակիչների բնական գազի և էլեկտրաէներգիայի ծախսերի մասնակի փոխհատուցման և ՀՀ Արարատի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի համայնքներին սպասարկող ջրօգտագործողների ընկերություններին դրամաշնորհների տրամադրման նպատակով:

Համապատասխանաբար 354 հազ. դրամ և 331 հազ. դրամ պետական աջակցություն է տրամադրվել ՀՀ Տավուշի մարզի Բարեկամավան և Դովեղ համայնքներին, որը կատարվել է նախատեսված ծավալով:

Նախորդ տարվա համեմատ կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներն աճել են 15.6%-ով կամ 6.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով

տրամադրվող դոտացիաների և Ազգային Ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման աճով:

Պաշտպանություն

2015 թվականին պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեից կատարվել են 198.5 մլրդ դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրի 95.7%-ը: Շեղումը պայմանավորված է Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորման համար նախատեսված 8.6 մլրդ դրամի միջոցները չօգտագործելու հանգամանքով, որի համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2016 թվականի փետրվարից: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերն աճել են 4.2%-ով՝ հիմնականում պայմանավորված ռազմական կարիքների բավարարման ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու տարում 191.2 մլրդ դրամ ուղղվել է ռազմական պաշտպանության ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 95.7%-ը: Նշված գումարից 190.8 մլրդ դրամը հատկացվել է ռազմական կարիքների բավարարմանը, որը կազմել է ծրագրի 100%-ը: ՀՀ ռազմական կցորդների պահպանմանը տրամադրվել է 353.2 մլն դրամ՝ նույնպես կազմելով ծրագրի 100%-ը: ՀԱՊԿ-ում ՀՀ զինված ուժերի ներկայացուցչի ծախսերը կազմել են 39 մլն դրամ կամ ծրագրի 94.2%-ը: 2014 թվականի համեմատ ռազմական պաշտպանության ծախսերն ավելացել են 4.2%-ով:

Արտաքին ռազմական օգնությանը տրամադրվել է 158.4 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 100%-ը: Այս դասում ներառված՝ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում պաշտպանության հարցերով պետական խորհրդականի պահպանման ծախսերը կազմել են 53.3 մլն դրամ: ՆԱՏՕ-ում (ռազմավարական հրամանատարությունների) ռազմական համագործակցության վարչությունում Հայաստանի Հանրապետության փոխգործակցության սպայի պահպանման ծախսերը կազմել են 43 մլն դրամ: ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում Հայաստանի Հանրապետության ռազմական ներկայացուցչի պահպանման նպատակով տրամադրվել է 52.4 մլն դրամ: Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի տարածքի վարձակալության նպատակով բյուջեից հատկացումները կազմել են 9.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ արտաքին ռազմական օգնության ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների դասում ներառված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և

փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական և նախորդ տարվա համեմատ ավելանալով 7.9%-ով:

Պաշտպանության՝ այլ դասերին չպատկանող ծախսերը կազմել են 5.6 մլրդ դրամ կամ ծրագրվածի 93.9%-ը, որից 60.8 մլն դրամը (ծրագրվածի 89.4%-ը) տրամադրվել է այլընտրանքային ծառայության ապահովմանը, 50.4 մլն դրամը (ծրագրվածի 100%-ը)՝ զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրամադրմանը և քննությունների ընդունմանը, 162.6 մլն դրամը (ծրագրվածի 86.6%-ը)՝ հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպմանը, 5.3 մլրդ դրամը (ծրագրվածի 100%-ը)՝ պաշտպանության բնագավառի այլ ծախսերին: Այլ ծախսերի գծով արտաբյուջետային միջոցների հաշվին օգտագործվել է 76.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 18.7%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 5.2%-ով:

<u>Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն</u>

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին 2015 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 122 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16.4%-ով կամ 17.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ոստիկանության և նախաքննության դասերի ծախսերի աճով:

Բաժնի ծախսերի 68.3%-ը կամ 83.3 մլրդ դրամ կազմել *են հասարակական կարգի և անվտանգության* խմբի ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 99.5%-ով: Նշված գումարից 63.4 մլրդ դրամը կազմել են ոստիկանության, 19.9 մլրդ դրամը՝ Ազգային անվտանգության դասի ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 99.9%-ով և 98.2%-ով:

2014 թվականի համեմատ *ոստիկանության* դասի ծախսերն աճել են 11%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հասարակական կարգի պահպանության և ՀՀ պետական կառավարման մարմինների ու կազմակերպությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության ապահովման ծախսերի աճով:

2015 թվականին հասարակական կարգի պահպանության ապահովմանը տրամադրվել է 38.4 մլրդ դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.7%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության և ՀՀ քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի տպագրության համար նյութերի ձեռքբերման ծախսերի աճով:

Պետավտոհամարանիշների ձեռքբերման համար պետական բյուջեից ՀՀ ոստիկանությանը տրամադրվել է 236.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության ծախսերը նույնպես ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 2.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 76.1%-ով՝ պայմանավորված ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների ցանկի համալրման, մասնավորապես՝ Երևանի մետրոպոլիտենի պահպանությունը բյուջետային միջոցների հաշվին ապահովելու հանգամանքով, ինչպես նաև աշխատանքի վարձատրության նոր համակարգի ներդրման արդյունքում ծառայությունների սակագների բարձրացմամբ:

2015 թվականին շուրջ 7.6 մլրդ դրամի ծախսեր են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք կազմել են նախատեսվածի 100%-ը և 2.8%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված սակագների բարձրացման հետևանքով պայմանագրերի քանակի կրճատմամբ:

ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին՝ կենցաղային տեխնիկայի ձեռքբերմանն աջակցելու նպատակով տրամադրվող սպառողական վարկերի տոկոսագումարները 2 կամ 3 տոկոսային կետով համաֆինանսավորման ծախսերը կազմել են 7.8 մլն դրամ կամ նախատեսվածի 40.5%-ը՝ պայմանավորված շահառուների փաստացի քանակով:

Ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումների և այլ վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցների հաշվին կատարված ծախսերը կազմել են 13.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 4.2%-ով:

Քաղաքացիներին բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է 15.6 մլն դրամ կամ նախատեսվածի 90.9%-ը, որը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Իսկ նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 3.9 անգամ, որը հիմնականում պայմանավորված է 2014 թվականին ծրագրի ցածր՝ 28.8%, կատարողականով:

ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու վճարովի ծառայության մատուցումից ստացվող միջոցներն օգտագործվել են 97%-ով՝ կազմելով 969.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.3%-ով՝ հիմնականում պայմանավորված հիմնական միջոցների և նյութերի ձեռքբերման ծախսերի աճով:

2015 թվականի ընթացքում *Ազգային անվտանգության* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 19.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 98.2%-ը: 2014 թվականի համեմատ Ազգային անվտանգության դասի ծախսերն աճել են 7%-ով կամ 1.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Ազգային անվտանգության ապահովման ծրագրի ծախսերի աճով: 16.8 մլրդ դրամ տրամադրվել է Ազգային անվտանգության ապահովման ծրագրին, որը կատարվել է 98.5%-ով: 2014 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 6.7%-ով՝ հիմնականում պայմանավորված պայմանագրային զինծառայողների քանակի ավելացմամբ և 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

Պետական պահպանության ապահովման ծախսերի կատարողականը կազմել է շուրջ 2.7 մլրդ դրամ կամ 99.7%: Նախորդ տարվա համեմատ պետական պահպանության ապահովման ծախսերն աճել են 9.5%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի պահպանման նպատակով օգտագործվել է 422.5 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 89.7%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.8%-ով, որը նույնպես պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ կառավարական կապի անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են 23 մլն դրամի ծախսեր, որոնք ապահովել են ծրագրի 25.3% կատարողական և 26.6%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի կատարողականը պայմանավորված է աշխատանքները 2016 թվական տեղափոխելու հանգամանքով:

Հայաստանի *փրկարար ծառայության* համակարգի պահպանման նպատակով հաշվետու տարում ծախսվել է շուրջ 7.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.4%-ով: «Նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանում» ծրագրի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը տրամադրվել է 53.5 մլն դրամ՝ ապահովելով 75.4% կատարողական և 22.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ: Ծրագրից շեղումը պայմանավորված է չհամալրված հաստիքներով:

Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 7.3 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ աճելով 15.8%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Դատարանների դասի ծրագրերին ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 10.6 մլրդ դրամ՝ 97.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 22.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը նույնպես պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: 8.2 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ դատարանների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 98.7%-ը և 17.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: 569.7 մլն դրամ է տրամադրվել ՀՀ սահմանադրական դատարանի պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը և 19.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և ՍԴ 20-րդ հոբելյանական խորհրդաժողովի կազմակերպմամբ:

Հաշվետու տարում 1.4 մլրդ դրամ է տրամադրվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանմանը, որը կազմել է նախատեսվածի 98.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 39.8%-ով՝ հիմնականում պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդերից օգտագործվել է համապատասխանաբար 11.4 մլն դրամ և 136.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 92.2%-ը և 81.5%-ը:

Տվյալ դասում ընդգրկված՝ վարչական օբյեկտների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում իրականացվել են 1.7 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 4.1%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ սահմանադրական դատարանին, սակայն 2015 թվականին իրականացվել են միայն նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները, իսկ հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով գնման մրցույթը ժամկետների սղության պատճառով չի կայացել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Փաստաբանների դպրոցի վերապատրաստման կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել են 211.9 մլն դրամի ծախսեր, որոնք կատարվել են 81.2%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ ծառայությունների մի մասը նպատակահարմար է գտնվել տեղափոխել հաջորդ տարի: Ծրագրի շրջանակներում իրականացվում են փաստաբանների դպրոցի կարողությունների ուժեղացում, վերապատրաստման դասընթացների մշակում և անցկացում, հասարակության ամենախոցելի խմբերին իրավական օգնության տրամադրում, ֆինանսավորման կայուն աղբյուրների մշակում և ապահովում:

Հաշվետու տարում պետական բյուջեից 560.7 մլն դրամ է տրամադրվել *իրավական պաշտպանության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 97.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.1%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերը 2015 թվականին կազմել են 238.7 մլն դրամ կամ նախատեսվածի 96.5%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.7%-ով:

Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 290.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 5.6%-ով:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունների զարգացման նպատակով նախատեսված 1.8 մլն դրամն օգտագործվել է 99.6%-ով, որով ապահովվել են համակարգչային ցանցի համալրումն ու անխափան շահագործումը:

Դատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության փոխհատուցման ծախսերը կազմել են 19.6 մլն դրամ կամ նախատեսվածի 94%-ը: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 26.2%-ով՝ պայմանավորված 2015 թվականին կատարված թարգմանչական աշխատանքների ծավալների աճով:

Անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 9.2 մլն դրամ կամ նախատեսվածի 61.2%-ը և 9.2%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված ավարտված գործերի փաստացի քանակով. նախատեսված 500-ի փոխարեն այն կազմել է 306:

Մարդու իրավունքների պաշտպանին միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող ֆինանսական աջակցության հաշվին կատարված ծախսերը կազմել են 682.5 հազ. դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը:

2015 թվականին 3.3 մլրդ դրամ է տրամադրվել *դատախազության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 99.8%-ը: Հատկացված միջոցներից 3.2 մլրդ դրամը (նախատեսվածի 99.8%-ը) տրամադրվել է ՀՀ դատախազության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: ՀՀ դատախազության պահուստային ֆոնդի հաշվին նախատեսված միջոցներն օգտագործվել են 100%-ով՝ կազմելով 71.1 մլն դրամ:

Հաշվետու տարում *քրեակատարողական համակարգի* պահպանության ծախսերը կազմել են 10.3 մլրդ դրամ կամ 99.4%: 2014 թվականի համեմատ դրանց 12%-ով աճը նույնպես հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

2015 թվականին 6.6 մլրդ դրամ է տրամադրվել *նախաքննության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 97.1%-ը: Հատկացված միջոցների գերակշիռ մասը՝ 5.5 մլրդ դրամը (նախատեսվածի 96.6%-ը) տրամադրվել է ՀՀ քննչական կոմիտեի պահպանմանը: Կատարողականի ցուցանիշը պայմանավորված է տնտեսումներով: Նշենք, որ ՀՀ քննչական կոմիտեն սկսել է գործել 2014 թվականի հոկտեմբերից և 2014 թվականին նրա ֆինանսավորումն իրականացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: ՀՀ քննչական կոմիտեի պահուստային ֆոնդի գծով նախատեսված միջոցներն օգտագործվել են 100%-ով՝ կազմելով 92.2 մլն դրամ, իսկ կարողությունների զարգացման ծախսերը կազմել են 431.2 մլն դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ հատուկ քննչական ծառայության պահպանմանը տրամադրվել է 576.4 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 58.2%-ով՝ հիմնականում պայմանավորված նոր վարչական շենքի լիարժեք շահագործմամբ և աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: ՀՀ հատուկ քննչական ծառայության կարողությունների զարգացմանը տրամադրվել է 3.7 մլն դրամ կամ նախատեսվածի 92.8%-ը՝ պայմանավորված տնտեսումներով, իսկ պահուստային ֆոնդի միջոցներն օգտագործվել են 99.5%-ով՝ կազմելով 11.6 մլն դրամ:

<u>Տնտեսական հարաբերություններ</u>

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի ծախսերի 7.8%-ը տրամադրվել է *տնտեսական հարաբերությունների* բաժնին՝ կազմելով ավելի քան 109.8 մլրդ դրամ և 104.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հատկացված ֆինանսական միջոցների հիմնական մասն ուղղվել է տրանսպորտի (58.1%) և գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության ու որսորդության (31.2%) բնագավառների ծրագրերի իրականացմանը:

Հաշվետու տարում *ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների* դասի ծախսերը կազմել են շուրջ 3.6 մլրդ դրամ՝ 92.8%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշի կատարումը և 0.6%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Ծրագրի 92.8%-ով կատարումը հիմնականում պայմանավորված է արտաբյուջետային միջոցների հաշվին գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի, տնտեսական գործունեության աջակցման ծառայությունների և որակի ենթակառուցվածքների բարեփոխման ծախսերի համապատասխանաբար 82.8%, 41.1% և 70.9% կատարողականով: Դասում ընդգրկված են 15 ծրագրեր, որոնցից հետևյալ վեցի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Հաշվետու տարում ստանդարտների մշակման ծառայությունների ծախսերը կազմել են 14.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ազգային ստանդարտների մշակման, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցության և ստանդարտների ազգային ֆոնդի վարման ու տեղեկատվական սպասարկման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով:

Հիդրոօդերևութաբանության ծառայությունների ձեռք բերման ծախսերը կազմել են 914.6 մլն դրամ, որն օգտագործվել է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոօդերևութաբանական դիտարկումների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19.9%-ով կամ շուրջ 152 մլն դրամով՝ պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրին հատկացվել է 152.3 մլն դրամ: ՓՄՁ սուբյեկտներին աջակցության 2015 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով բավարարվել է 13194 աջակցության հայտ, ընդ որում՝ աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 5.1%-ը գործում են Երևան քաղաքում, 94.9%-ը՝ ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 0.2%-ով: Հարկ է նշել, որ ՓՄՁ սուբյեկտներին աջակցության 2015 թվականի ծրագրի իրականացման համար, բացի ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից հատկացված գումարից, լրացուցիչ ֆինանսական միջոցներ են ներգրավվել նաև միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում:

«ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավաքագրման ազգային մարմնի ստեղծում» ծրագրով պետական աջակցության ծախսերը կազմել են 13.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել Հավատարմագրման ազգային մարմնի կայացմանը և ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխմանը: Հատկացված գումարն ուղղվել է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատանքի վարձատրությանը:

2015 թվականին ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծախսերը կազմել են 475 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 15.7%-ով կամ 88.6 մլն դրամով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 846-Ն որոշման համաձայն Հայաստանի

զարգացման հիմնադրամի 2015 թվականի պահպանման ծախսերի մի մասն իրականացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին: Ծրագիրն ուղղված է արդյունաբերական արտադրանքի արտահանելի հատվածի ընդլայնմանը և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը: Ծրագրի շրջանակներում մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ ստացել են պետական աջակցություն տարբեր ուղղություններով, ինչը դրականորեն է ազդել նրանց արտահանման և արտադրության ծավալների աճի վրա, ինչպես նաև կազմակերպվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝

- հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտում: Նշված ենթածրագրի շրջանակներում 2015 թվականին տարբեր երկրներում կազմակերպվել են մի շարք համաժողովներ և աշխատաժողովներ, Երևանում կազմակերպվել է «Տնտեսական օրակարգ 2015» համաժողովը և Հայաստան-Իրան գործարար համաժողովը.
- «Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» ենթածրագրի շրջանակներում 2015 թվականին բավարարվել է մշակող արդյունաբերության ոլորտների 16 ընկերության հայտ.
- «Օտարերկրյա պետությունում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում» ենթածրագրի շրջանակներում 2015 թվականին բավարարվել է թվով 8 ընկերության 12 հայտ.
- «Օտարերկրյա պետությունում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման միջոցառումների մասնակցություն (կազմակերպում) և իրականացում» ենթածրագրի շրջանակներում 2015 թվականին կազմակերպվել են միջազգային ցուցահանդեսներ հայկական ապրանքների ճանաչելիության բարձրացման և առաջմղման նպատակով:
- «Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում» ենթածրագրի շրջանակներում 2015 թվականին ցուցահանդեսներին մասնակցության աջակցություն է տրամադրվել շուրջ 120 սուբյեկտի.
- «Արտասահմանյան դիստրիբյուտորների և այլ օժանդակ կառույցների ներկայացուցիչների այցելություններ Հայաստան և (կամ) արտերկիր, գործարար կապերի հաստատում» ենթածրագրի շրջանակներում 2015 թվականին կազմակերպվել է արտահանմանն օժանդակող կառույցների/դիստրիբյուտորների ներկայացուցիչների այցելություն Հայաստան.
- «Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում» ենթածրագրի շրջանակներում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ և ուսուցողական սեմինարներ.

- «Արտահանմանն ուղղված արտադրատեսակների արտադրության ներուժի բացահայտմանն ուղված հետազոտության իրականացում» ենթածրագրի շրջանակներում հետազոտություն է իրականացվել Հայաստանի Հանրապետության սննդի և խմիչքների արդյունաբերության արտադրանքի՝ դեպի Ռուսաստանի Դաշնություն արտահանման հնարավորությունների և առկա խնդիրների ուսումնասիրության և վերլուծության վերաբերյալ:

2015 թվականին Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի ծախսերը կազմել են 23.9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունից ձկնամթերքի արտահանման շղթայի քարտեզագրման հետազոտության կազմակերպում: Ծրագիրը գործում է 2015 թվականից:

Հաշվետու տարում 97.4% կատարողական են ապահովել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը՝ կազմելով շուրջ 298.4 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 4.1%-ով կամ 11.8 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2014 թվականի հուլիս 1-ից պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը (նախարարությունների աշխատակազմերի մասով) կազմել են 934.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 97.8%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.5%-ով կամ 172 մլն դրամով, որը նույնպես հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաշվետու տարում շուրջ 108.7 մլն դրամ է տրամադրվել արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանմանը: Ծրագրի ծախսերի 96.2% կատարողականը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.9%-ով կամ 10.7 մլն դրամով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցչի (նստավայրը՝ Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև) և Եվրամիության երկրներում ՀՀ առևտրական ներկայացուցչի (նստավայրը՝ Բելգիայի Թագավորություն, Բրյուսել) պահպանման ծախսերը:

Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների դասում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով 396.7 մլն դրամ օգտագործվել է ՀՀ էկոնոմիկայի

նախարարության արտաբյուջետային միջոցներից՝ ապահովելով ծրագրի 82.8%-ը, ինչը պայմանավորված է որոշ մրցույթներ չկայանալու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.4%-ով կամ 67.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության և վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 99.9% կատարողական են ապահովել ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարության պետական աջակցության ծախսերը՝ կազմելով շուրջ 10 մլն դրամ, որը հատկացվել է տեսչական բարեփոխումների քարտուղարության աշխատանքի վարձատրությանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ տեսչական բարեփոխումների ուղղությամբ: 2015 թվականին ուժի մեջ է մտել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը, որի պահանջներին համահունչ ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք որոշումներ: Տեսչությունների օպտիմալացման աշխատանքները սկսելու նպատակով իրականացված աշխատանքներին զուգահեռ տարեսկզբից իրականացվել են չորս ոլորտների քարտեզագրման աշխատանքներ, որոնք ներկայացվել են միջգերատեսչական հանձնաժողովին, ստեղծվել է առաջին տեսչական մարմինը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմինը, ընդունվել են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներ, այդ թվում՝ ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին որոշումը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 6.6%-ով կամ 702.4 հազար դրամով, ինչը պայմանավորված է տեսչական բարեփոխումների խմբի աշխատակիցների աշխատավարձի փոփոխությամբ:

Որակի ենթակառուցվածքների բարեփոխման ծախսերը կազմել են 141.8 մլն դրամ՝ ապահովելով 70.9% կատարողական՝ պայմանավորված մրցույթների արդյունքում նախատեսվածից ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 17.3%-ով կամ 29.7 մլն դրամով, ինչը, բացի տնտեսումներից, պայմանավորված է նաև 2014 թվականին ծծմբի վերլուծիչ լաբորատոր սարքի ձեռք բերման հանգամանքով:

Ծրագրի շրջանակներում կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել որակի ենթակառուցվածքների բարեփոխմանը, մասնավորապես.

- տեխնիկական կանոնակարգման ոլորտում իրականացվել է Եվրամիության և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) ոչ պարենային արտադրանքի թվով 4 տեխնիկական կանոնակարգերի համադրում՝ հակասությունների բացահայտման տեսանկյունից, Եվրասիական տնտեսական միության թվով 4 ոչ պարենային արտադրանքի գործող տեխնիկական կանոնակարգերի համադրում ազգային տեխնիկական կանոնակարգերի հետ և էտալոնային

լաբորատորիաներին ներկայացվող պահանջների և ճանաչման գործընթացի ԵԱՏՄ և ԵՄ փորձի ուսումնասիրություն.

- ստանդարտացման ոլորտում իրականացվել են Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող 35 տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների փորձաքննություն և ՀՀ-ում դրանց գործարկման ապահովում, Ստանդարտների ազգային ինստիտուտի Համապատասխանության գնահատման մարմինների (ՀԳՄ) գործունեության հաշվառման էլեկտրոնային բազայի ծրագրի մշակում և ներդրում, լաբորատոր կարողությունների զարգացում՝ լաբորատոր սարքերի համալրող արագամաշ սարքավորումների և փորձարկման ստանդարտ նմուշների ձեռք բերում, ինչպես նաև ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման և ստանդարտացման բնագավառի կոմիտեների և ենթակոմիտեների նիստերին մասնակցություն.
- չափագիտության ոլորտում իրականացվել են էտալոնային համակարգերի տեխնիկական սպասարկման, ելակետային չափման միջոցների տրամաչափարկման աշխատանքներ, KOOMET-ի (кооперация в метрологии) անդամ երկրների չափագիտական ինստիտուտներում թվով 10 տրամաչափարկման աշխատանքների դիմաց վճարում, ձեռք են բերվել սարքեր և համակարգեր՝ ԱԳԼՃԿ (ավտոգազալիցքավորման ճնշակայան) ստուգաչափման շարժական լաբորատորիա, ելակետային ավտոկշեռք (ԷԴԵՍՍԱ-40ԱՄ) և մեծածավալ անոթների ստուգաչափման և տրամաչափարկման ելակետային չափանոթների հավաքածու.
- հավատարմագրման ոլորտում իրականացվել են մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել Հավատարմագրման ազգային մարմնի կայացմանը և ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխմանը, իրականացվել է գործարկված պաշտոնական կայք էջի և ռեեստրների սպասարկում և արդիականացում, ինչպես նաև ստեղծվել է տվյալների շտեմարան՝ հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների, գնահատողների, փորձագետների, համապատասխանության սերտիֆիկատների, համապատասխանության հայտարարագրերի վերաբերյալ:

Որակի ենթակառուցվածքների բարեփոխման ծրագրի շրջանակներում ոլորտում աշխատող մասնագետների համար մասնագիտական կարողությունների զարգացման և միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով ապահովվել են վերապատրաստման դասընթացների և ուսուցողական այցերի մասնակցություն արտերկրում:

Տնտեսական գործունեության աջակցման ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են շուրջ 46.7 մլն դրամ, որն ուղղվել է «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների աշխատավարձերի, վերջնահաշվարկների, պարտադիր և կոմունալ վճարների ֆինանսավորմանը: Ծրագրի ծախսերի 41.1% կատարողականը պայմանավորված է «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական

ընկերության լուծարմամբ: Նշված հանգամանքով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի 61.8%-ով կամ շուրջ 75.6 մլն դրամով նվազումը:

Տնտեսական հետազոտությունների կենտրոնի ստեղծման ծախսերը կազմել են 25.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 63.6%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով, ինչպես նաև մրցույթների արդյունքում նախատեսվածից ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ: Ծրագիրը սկսել է գործել 2015 թվականից: Ծրագրի շրջանակներում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների կենտրոնի կողմից կատարվել է 7 հետազոտություն:

2015 թվականին տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 9.4 մլն դրամ կամ նախատեսվածի 31.3%-ը՝ պայմանավորված նրանով, որ փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվել են նախատեսվածից ավելի քիչ փորձարկումներ: Ծրագրի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Շուկայի վերահսկողության պետական տեսչության կողմից իրականացվել են ստուգումներ 98 տնտեսվարող սուբյեկտներում: Ստուգված տնտեսավարող սուբյեկտներից 73-ում հայտնաբերվել են խախտումներ, որոնց համար խախտումներ թույլ տված պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3 անգամ կամ 5.3 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է իրականացված փորձարկումների քանակի աճով:

«Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների չափերի փորձաքննության համար 900 հազ. դրամի չափով նախատեսված միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ փորձաքննություն չի իրականացվել՝ վերամշակման արդյունքում գոյացած թափոնների և կորուստների չափերի 20 և ավելի տոկոս գերազանցման դեպքերի բացակայության պատճառով: ՀՀ կառավարության 2001 թվականի մարտի 27-ի թիվ 239 որոշմամբ հաստատված՝ ««Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության սահմանման» կարգի համաձայն, լիազոր մարմնի որոշմամբ հայտատուի ներկայացրած տվյալները կարող են ենթարկվել փորձաքննության, եթե ապրանքների վերամշակումից գոյացած թափոնների և կորուստների չափերը գերազանցում են նմանատիպ ապրանքների համար հաստատված և կիրառվող չափի 20 և ավելի տոկոսը:

2015 թվականի ընթացքում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 34.3 մլրդ դրամ կամ

ծրագրվածի 108.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի բարձր կատարողականով:

Հաշվետու տարում *գյուղատնտեսության* դասի ծախսերը կազմել են 20.2 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 123.2%-ը, որը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի բարձր կատարողականով: Դրանով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսության դասի ծախսերի 109.4%-ով կամ շուրջ 10.6 մլրդ դրամով աճը:

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 29 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են 4 վարկային և 6 դրամաշնորհային ծրագրեր:

ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 5.2 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերի 70.4%-ով գերազանցումը պայմանավորված է նրանով, որ շինարարական աշխատանքներն ընթացել են ավելի արագ տեմպերով, քան նախատեսված էր: Բացի այդ, ծրագիրն ավարտվելու է 2016 թվականին, ուստի ամբողջ աշխատանքները կենտրոնացել են շինարարական օբյեկտները ժամանակին հանձնելու ուղղությամբ: Նշված ծրագրով նախատեսվում է մինչև 2016 թվականի սեպտեմբեր ամիսն ամբողջությամբ հանձնել շինարարական օբյեկտները: Ծրագրով նախատեսվում է գյուղական ենթակառուցվածքների ոլորտում ներդրումների իրականացում՝ գյուղական անապահով համայնքների բնակիչների կենսամակարդակը բարելավելու և տնտեսական աճ ապահովելու նպատակով: Սա ենթադրում է օժանդակություն հասարակական ենթակառուցվածքների կառուցմանն ու վերականգնմանը, առավելապես լեռնային՝ առավել անապահով համայնքներում: Ծրագրերը ներառում են ջրամատակարարման, գազամատակարարման և ջրահեռացման համակարգեր, ինչպես նաև գյուղական ճանապարհներ և օժանդակ կառույցներ: Ծրագրի շրջանակներում ներդրումներ են իրականացվել ՀՀ Լոռու, Վայոց Ձորի, Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի և Արագածոտնի մարզերում ջրամատակարարման համակարգերի կառուցման և վերակառուցման, ինչպես նաև հիմնական և երկրորդային կարգի ոռոգման համակարգերի վերականգման և բարելավման համար: Ծրագրի շրջանակներում նախատեսված շինարարարական աշխատանքներն ընթանցքի մեջ են, մասնավորապես՝ 9 համայնքներում կատարվում են ջրամատակարարման, 2 համայնքներում՝ ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցման, 1 համայնքում՝ գազաֆիկացման և 4 համայնքներում՝ գազամատակարարման աշխատանքներ:

Հաշվետու տարում Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի

շրջանակներում ծախսվել է 3.3 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերը 93.5%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը: Ծրագրի նպատակն է՝ նվազեցնել աղքատությունը Հայաստանի Հանրապետության գյուղական տարածքներում: Ծրագրի խնդիրն է ստեղծել պտղի և ընկուզեղենի տնտեսապես կայուն արտադրություն, որը կապված կլինի գյուղական մանրածավալ արտադրող ֆերմերների հետ: Ծրագիրը գործում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, ներդրումների աշխարհագրական տեղաբաշխման առումով առավելություն է տրվում լեռնային և գյուղական համայնքներին: Միաժամանակ հարկ է նշել, որ 2015 թվականի հոկտեմբեր ամսին տեղի ունեցավ ֆինանսավորման համաձայնագրի փոփոխություն, և ծրագրի նպատակներից մեկը դարձավ գյուղական համայնքներում ջրամատակարարման և ոռոգման համակարգերի վերակառուցումը: Կատարված ծախսերի բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2015 թվականի հոկտեմբեր ամսին Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի հետ կնքված վարկային համաձայնագրում տեղի ունեցած փոփոխության համաձայն «Հայկական Միրգ ԲԲԸ բաղադրիչից միջոցների վերաբաշխում է կատարվել «Ենթառուցվածքների շինարարություն» բաղադրիչին, որի արդյունքում իրականացվել են և շարունակվելու են իրականացվել նախագծահետազոտական և նոր շինարարական աշխատանքներ, որոնք լայն թափով շարունակվում են և պետք է ավարտվեն մինչև ծրագրի ավարտը՝ 2016 թվականի հուլիս ամիսը:

Վերոհիշյալ վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳՀՄՀ-ի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3.4 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 27.4%-ով կատարումը կապված է դրամաշնորհային համաձայնագրի փոփոխության հետ, որի արդյունքում ենթակառուցվածքների բաղադրիչին հատկացված միջոցները նախատեսվել է օգտագործել 2016 թվականի առաջին կիսամյակում շինարարական աշխատանքների իրականացման նպատակով: 2015 թվականին ծրագրի շրջանակներում մշակվել է գյուղական կարողությունների ստեղծման և ենթակառուցվածքների ու գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրերի իրականացման ձեռնարկ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագրի շրջանակում ծախսվել է ավելի քան 1.3 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերը 26%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է հաշվետու տարվա ընթացքում ծրագրի իրականացման ուղղություններում կատարված մի քանի փոփոխություններով՝ կապված 2016 թվականին ծրագրի ավարտի հետ: Քանի որ վարկային միջոցների գծով առաջացել էին տնտեսումներ, Համաշխարհային Բանկի առաքելության ժամանակ համաձայնեցվել են վերոնշյալ տնտեսված գումարների օգտագործման ուղղությունները, և նշված միջոցների մի մասը ծախսվել է 2015 թվականի ընթացքում:

Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտօգտագործման/ անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում: Սա հնարավոր կլինի կաթնատվության և կենդանիների օրական քաշաճի ավելացմանը զուգահեռ անասնապահական մթերքի ծավալների մեծացման և որակի բարձրացման, արոտավայրերի վարձակալությունից համայնքի բյուջետային եկամուտների ավելացման միջոցով համայնքների արոտավայրերի կառավարման արդյունավետության բարձրացման և անասնապահությունից ստացվող զուտ եկամտի ավելացման միջոցով: Ծրագիրն իրականացվել է չորս բաղադրիչներով՝

- Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ,
- Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում,
- Մրցակցային դրամաշնորհների ծրագիր,
- Ծրագրի իրականացում, մոնիտորինգ և գնահատում:

«Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ» բաղադրիչի նպատակն է ընտրված անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում ստեղծել արոտօգտագործման և կերարտադրության վրա հիմնված անասնապահական մթերքի արտադրության արդյունավետ և կայուն համակարգ, որը կկառավարվի համայնքներում ստեղծվող արոտօգտագործողների միավորումների (սպառողական կոոպերատիվների) կողմից: Ընտրվում են բարձր լեռնային այն համայնքները, որտեղ անասնապահությունն ապրուստի հիմնական միջոց է հանդիսանում և որտեղ համայնքները մեծապես շահագրգռված են բարելավելու սեփական արոտավայրերի օգտագործման միջոցով ստացվող արտադրանքը: Այս նպատակի իրականացումը պահանջում է գյուղամերձ արոտներում կենդանիների գերարածեցման տենդենցի կասեցում, համայնքների հեռագնա արոտների օգտագործման հնարավորությունների ստեղծում, վարելահողերի առավել արդյունավետ օգտագործում, կերարտադրության ու կենդանիների կերակրման և տոհմային աշխատանքների բարելավում, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում: Այս բաղադրիչի շրջանակներում 13 համայնքում ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (34.5 կմ ջրագիծ, 33 հատ խմոց), 1 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (10 կմ ջրագիծ, 2 հատ խմոց), 38 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել են 9 անիվավոր տրակտոր և 111 միավոր գյուղգործիքներ:

«Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում» բաղադրիչի նպատակն է բարձրացնել անասնապահական մթերքի արտադրողականությունը և բարելավել արոտավայրերի վիճակը անասնապահությամբ զբաղվող ֆերմերներին մատուցվող խորհրդատվական և կենդանիների առողջությանն ուղղված ծառայությունների բարելավման միջոցով: Այս նպատակին հասնելու համար աջակցություն է տրամադրվում անասնապահության արդյունավետության բարձրացմանն ուղղված գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների և կենդանիների առողջությանն ուղղված ծառայությունների հզորացմանը: Այս բաղադրիչն իրականացվել է «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» և «Համայնքներում կենդանիների առողջությանն ուղղված ծառայություններ» ենթաբաղադրիչների միջոցով: «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» ենթաբաղադրիչի շրջանակներում Գյուղատնտեսական աջակցության հանրապետական կենտրոնի (ԳԱՀԿ) կողմից տպագրվել են 22 տեղեկատվական թերթիկներ 10700 տպաքանակով 2014 թվականին իրականացված տեխնոլոգիաների գնահատման ծրագրերի (ՏԳԾ) վերաբերյալ և տրամադրվել են «Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոններին» ֆերմերային տնտեսություններին բաժանելու նպատակով: ՀՀ Արագածոտնի, Արմավիրի և Կոտայքի մարզերի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) գյուղատնտեսության գծով տեղական խորհրդատուների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով ԳԱՀԿ-ի կողմից կազմակերպել են ուսուցողական դասընթացներ, որին մասնակցել են 73 մարդ: «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի համար ձեռք են բերվել համակարգչային և տեղեկատվական սարքավորումներ՝ թվով 18 միավոր: «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի համար ձեռք է բերվել մեկ հատ անիվավոր տրակտոր և գյուղգործիքներ՝ թվով 8 միավոր: «Համայնքներում կենդանիների առողջությանն ուղղված ծառայություններ» ենթաբաղադրիչի շրջանակներում ավարտվել է «Մասնավոր անասնաբույժների մոբիլիզացում» խորհրդատվական ծառայության մատուցման գործընթացը, իրականացվել է ընտրված անասնաբույժների ուսուցում և ստեղծվել են անասնաբուժական ասոցիացիաներ: ՀՀ Գեղարքունիքի մարզում ավարտվել են անասնաբուժական սպասարկման կենտրոնի կառուցման շինարարական աշխատանքները, իրականացվել են ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի անասնաբուժական սպասարկման կենտրոնի նախագծման աշխատանքները, իսկ ՀՀ Շիրակի մարզի Փանիկ համայնքում ավարտվել են հողատարածքի նկատմամբ իրավունքի ձևակերպման աշխատանքները: Անասնաբուժական սպասարկման կենտրոնների համար ձեռք է բերվել գույք (ցուցանակներ և գովազդային վահանակներ):

«Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» բաղադրիչի նպատակն է իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն գյուղատնտեսության և անասնապահության ոլորտներում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի որակական հատկությունների բարձրացմանը,

գյուղատնտեսական բիզնեսի շուկայավարման կատարելագործմանը՝ ներառյալ գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը, վերամշակումը, պահեստավորումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը, գյուղական բիզնեսի կառավարման բարելավմանը, կատարելագործմանը և բիզնեսի լավագույն փորձի զարգացմանն ու տարածմանը, գյուղատնտեսական ոլորտում կոոպերացիայի զարգացմանը, շուկայական կապերի ընդլայնմանը և ամրապնդմանը, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի իրացման խնդիրների լուծմանը և ՀՀ տարածաշրջանների կամ մարզերի կտրվածքով գյուղատնտեսական արտադրանքի նոր տեսակների ու նոր տեխնոլոգիաների ներդրմանը, տարածմանը և զարգացմանը: 2014 թվականի հոկտեմբերի 17-ին հայտարարվել է մրցակցային դրամաշնորհների (ՄԴ) ծրագրի յոթերորդ փուլի մրցույթը, 2015 թվականի հունվարի 27-ին ՄԴ հանձնաժողովի կողմից հաղթող են ճանաչվել 16 ծրագրեր: Համաձայն ՄԴ ծրագրերի ընթացակարգի՝ իրականացվել են ֆերմերների կողմից ներկայացված 16 ծրագրերի վերաբերյալ ներդրումների հավաստագրում, նրանց գնահատում, ծրագրերի բնապահպանական կատեգորիաների դասակարգում և բնապահպանական կառավարման պլանների կազմում: Հաղթող ճանաչված 16 ծրագրերի ղեկավարների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր: Ներկայումս 69 ծրագրերից 37 ծրագիր ավարտվել են, մնացած 32 ծրագրերը գտնվում են իրականացման տարբեր փուլերում: Ավարտված ծրագրերի իրականացման շնորհիվ մեկ ծրագրի հաշվով միջինը ստեղծվել են 6-7 աշխատատեղեր, գործող ֆերմերների և ֆերմերային տնտեսությունների եկամուտներն ավելացել են 25-55 տոկոսով: Երևանում տեղի է ունեցել «Դրամաշնորհային ծրագրերի իրականացումը Հայաստանում» համաժողով-ցուցահանդեսը, որի աշխատանքներին մասնակցում էին մոտ 40 ֆերմերներ և գյուղացիական տնտեսություններ, որոնք ներկայացնում էին իրենց կողմից արտադրված գյուղատնտեսական մթերքը:

«Ծրագրի իրականացում, մոնիտորինգ և գնահատում» բաղադրիչի շրջանակներում ֆինանսավորումն ուղղված է ծրագրի կառավարմանը, անձնակազմի վերապատրաստմանը, տարեկան աուդիտին, գործառնական ծախսերին, ինչպես նաև ծրագրի մոնիտորինգին և գնահատմանը: Իրականացվել են ծրագրերի իրականացման գրասենյակի պահպանման, ինչպես նաև տեխնիկական աջակցության, վերապատրաստման և գործուղումների ծախսերը, կատարվել են վճարումներ ծրագրի տարեկան ֆինանսական աուդիտի և հանրային իրազեկման աշխատանքների համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ կապալառուների կողմից ներկայացված հայտերում տեխնիկական մասնագրերը չհամապատասխանելու պատճառով անասնաբույժների հատուկ մեքենայի գնման մրցույթը չի

կայացել և տեղափոխվել է 2016 թվական: Ծրագրի իրականացման ժամկետը հինգ տարի է: Ծրագիրը սկել է գործել 2015 թվականին, ավարտման ժամկետն է 2020 թվականի մայիսի 31-ը: Ծրագրի նպատակներն են արոտավայրերի և անասնապահության համակարգերի արտադրողականության և կայունության բարելավումը թիրախային համայնքներում, ինչպես նաև անասնապահության ոլորտում և ընտրված բարձրարժեք ագրոպարենային արժեշղթաներում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճը: Նշված միջոցառումներն ուղղված են բարձրադիր տարածքների թիրախային համայնքներում արոտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականության և կայունության բարելավմանն ուղղված կառավարման պլանների մշակմանը և ներդրմանը՝ հիմնական շեշտադրումը կատարելով ընտրված անասնապահական արտադրանքի (կաթ և միս) և բարձրարժեք արտադրանքի (միրգ և բանջարեղեն) վրա, շուկայի հետ արտադրողների և վերամշակողների կապի ապահովմանը և վերոհիշյալ ապրանքատեսակների շուկայահանման ծավալների աճի ապահովման հարցում կարևոր դեր կատարող պետական համապատասխան կառույցների զարգացմանն օժանդակությանը: Ծրագիրն իրականացվել է չորս բաղադրիչներով՝

- Համայնքների արոտավայրերի /անասնապահության կառավարման համակարգ,
- Արժեքային շղթայի զարգացում,
- Պետական կառույցների կարողությունների հզորացում,
- Ծրագրի համակարգում և կառավարում:

«Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ» բաղադրիչի նպատակն է ընտրված անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում ստեղծել արոտօգտագործման և կերարտադրության վրա հիմնված անասնապահական մթերքի արտադրության արդյունավետ և կայուն համակարգ, որը կկառավարվի համայնքներում ստեղծվող արոտօգտագործողների միավորումների (սպառողական կոոպերատիվների) կողմից: Ընտրվում են բարձր լեռնային այն համայնքները, որտեղ անասնապահությունն ապրուստի հիմնական միջոց է հանդիսանում և որտեղ համայնքները մեծապես շահագրգռված են բարելավելու սեփական արոտավայրերի օգտագործման միջոցով ստացվող արտադրանքը: Այս նպատակի իրականացումը պահանջում է գյուղամերձ արոտներում կենդանիների գերարածեցման տենդենցի կասեցում, համայնքների հեռագնա արոտների օգտագործման հնարավորությունների ստեղծում, վարելահողերի առավել արդյունավետ օգտագործում, կերարտադրության ու կենդանիների կերակրման և տոհմային աշխատանքների բարելավում, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում: Այս բաղադրիչի շրջանակներում 52 համայնքում հիմնադրվել և իրավաբանական անձանց պետական

ռեգիստրում գրանցվել են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, հաստատվել են 22 համայնքի կառավարման պլանները, 6 համայնքում ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (4.7 կմ ջրագիծ, 15 հատ խմոց), իսկ 11 համայնքում դրանք գտնվում են իրականացման փուլում (41.6 կմ ջրագիծ, 29 հատ խմոց), 14 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 80 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 22 անիվավոր տրակտոր և 58 միավոր այլ գյուղգործիքներ: Ձեռք է բերվել թվով 8 ավտոմեքենա 8 մարզային աջակցության թիմերի համար և 4 ավտոմեքենա՝ բաղադրիչի ղեկավարի և աշխատանքները վերահսկող ու կոորդինացնող մասնագետների համար: Գրասենյակի աշխատանքների կազմակերպման համար ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա:

«Արժեքային շղթայի զարգացում» բաղադրիչի նպատակն է ընտրված սննդամթերքի արժեշղթաներում բարձրացնել տեղական արտադրողների և վերամշակողների կարողությունները՝ ներքին պահանջարկը բավարարելու և միջազգային շուկաներ մուտք գործելու համար:

Նախատեսվում է նպատակային ֆինանսավորում տրամադրել հետևյալ ուղղություններով.

- աջակցություն արտադրական կոոպերատիվներին՝ իրենց արտադրանքը ստանդարտացնելու, տնտեսություններում արտադրվող ապրանքի որակն ու կիրառվող գյուղատնտեսական չափորոշիչները բարելավելու ուղղությամբ,
- առկա գիտելիքների ընդլայնում շուկաների և շուկայական պահանջների, այդ թվում՝ սննդամթերքի անվտանգության համակարգերի վերաբերյալ,
- սննդամթերքի անվտանգության ոլորտում առկա փորձի և համապատասխանության ներդրում՝ ներառյալ համապատասխանություն ռիսկերի վերլուծության և կրիտիկական վերահսկման կետերի համակարգի հետ,
- վերամշակման, պահպանման, արտադրանքի մշակման, շուկայահանման և արտադրանքի որակի ապահովմանն ուղղված միջոցառումների բարելավում,
- ապրանքանիշերի գրանցում և հավաստագրում՝ ներառյալ օրգանական սննդամթերքի հավաստագրումը,
- կառավարման կարողությունների բարելավում:

Նպատակային ֆինանսավորում տրամադրվելու է արժեքային շղթայում ընդգրկված արտադրական կոոպերատիվներին, ասոցիացիաներին և գյուղական ձեռնարկություններին: Ծրագրի իրականացման ընթացքում ֆինանսավորվելու է մոտ 80 ենթածրագիր: Այս բաղադրիչի շրջանակներում իրականացվել է առաջին մրցույթը, որի արդյունքում հաղթող են ճանաչվել 16 ենթածրագրեր, որոնցից 2-ը չեն հավաստագրվել: Արդյունքում 14 ծրագրերի շահառուների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր նպատակային ֆինանսավորում հատկացնելու համար:

Իրականացվել է աշխատաժողով, որի աշխատանքներին մասնակցել են հրավիրված 108 ֆերմերներ՝ արժեքային շղթայի մրցույթի ընթացակարգին ծանոթանալու նպատակով: Ապահովվել է թերթերում, հեռուստատեսությամբ և այլ լրատվամիջոցներով աշխատաժողովների անցկացման ամսաթվերի, ընթացակարգերի, ինչպես նաև հաղթող ճանաչված ենթածագրերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը: Կատարվել է ներկայացված բիզնես-ծրագրերի գրախոսում մասնագիտական գրախոսող կազմակերպության կողմից: Խորհրդատվական պայմանագիր է կնքվել արժեշղթայի՝ սննդի անվտանգության հարցերի գծով մասնագետի հետ: Միջոցներն ուղղվել են ծրագրերի իրականացման գրասենյակի պահպանմանը:

«Պետական կառույցների կարողությունների հզորացում» բաղադրիչի նպատակն է հզորացնել պետական կառույցների կարողությունները՝ առաջին և երկրորդ բաղադրիչների շրջանակներում աջակցություն ստացող արժեշղթաներում բիզնեսի զարգացումը խթանելու և շուկայի հասանելիությունն ապահովելու համար: Այս բաղադրիչի ներքո ֆինանսավորվում են հետևյալ միջոցառումները.

- անասնաբուժական ծառայություններ. մոտ 20 համայնքային անասնաբույժների մոբիլիզացում և վերապատրաստում, ինչպես նաև նրանց տեխնիկական միջոցներով ապահովում: Չորս մարզային անասնաբուժական սպասարկման կենտրոնների հիմնում, որոնք ապահովված կլինեն հանդիպումների սենյակով, գրասենյակով և դեղատնով, ինչպես նաև շարժական կլինիկաներով,
- սննդամթերքի անվտանգության ծառայություններ. մարզային և տեղական տեսուչներին ստուգիչ սարքերով ապահովում և ուսուցման կազմակերպում՝ սննդամթերքի անվտանգության ոլորտի կառույցների կարողությունների զարգացման նպատակով: Լրացուցիչ գործիքների տրամադրում «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ պատվաստումներ իրականացնելու նպատակով,
- աջակցություն «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ սեփական բուծման և սելեկցիայի միջոցով բանջարեղենի տեղական սորտերի բարձրորակ սերմերի և սածիլների արտադրության կազմակերպման համար,
- պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի ներդրում, որի շրջանակներում աջակցություն կտրամադրվի նաև «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ին՝ հողի մակրոէլեմենտների, թթվայնության և հումուսի քանակության հարցերով լիարժեք խորհրդատվություն տրամադրելու համար:

«Համայնքային անասնաբուժական ծառայություններ» ենթաբաղադրիչի շրջանակներում ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար ձեռք են բերվել

սերվերային սարքավորումներ: «Ինստիտուցիոնալ զարգացում» ենթաբաղադրիչի շրջանակներում սկսվել են ՀՀ ԳՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 3000մ^2 մակերեսով ապակեպատ ջերմատունն ու ֆիտոպաթոլոգիայի լաբորատորիայի մասնաշենքի վերանորոգման աշխատանքները: Ընթացքի մեջ է նաև ջերմատան համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման գործընթացը:

«Ծրագրի համակարգում և կառավարում» բաղադրիչի շրջանակներում ֆինանսավորումն ուղղված է ծրագրի կառավարմանը, անձնակազմի վերապատրաստմանը, տարեկան աուդիտին, գործառնական ծախսերին, ինչպես նաև ծրագրի մոնիտորինգին և գնահատմանը: Լրացուցիչ ծախսեր են կատարվել լրացուցիչ տեխնիկական մասնագետների ընդգրկման, տրանսպորտային միջոցների և դաշտային այցելությունների, ազդեցությունների գնահատման և աուդիտի ուղղություններով: Միջոցներն ուղղվել են ծրագրերի իրականացման գրասենյակի պահպանմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից տրամադրված Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2015 թվականին ծախսվել է շուրջ 166.6 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 93.8%-ով կատարումը պայմանավորված է ծրագրի ուղղությունների առաջնահերթությունների վերաբերյալ քննարկումների երկար տևողությամբ: Ծրագրի ավարտման ժամկետն է 2016 թվականի դեկտեմբերի 11-ը: Ծրագրի նպատակն է բարելավել ագրոհամակարգի ծառայությունների մատուցման գործընթացը, որը թույլ կտա պահպանել համայնքների բնակչության կենսամակարդակը, ինչպես նաև պաշտպանել բնական ռեսուրսները գյուղատնտեսության ոլորտի մրցակցային հողագործության հետևանքով առաջացող ճնշումից: Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչներից՝

- Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ,
- Օժանդակ ծառայությունների ուժեղացում,
- Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

Ծրագրի շրջանակներում ՀՀ 6 մարզերի՝ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի 21 համայնքների կոոպերատիվների անդամների, կոոպերատիվների խորհրդի, համայնքների արոտների կառավարման և անասնապահության զարգացման հանձնաժողովների և գյուղապետարանի աշխատակազմի համար իրականացվել է ուսուցում՝ կապված արոտօգտագործման, կոոպերատիվի բյուջեի կազմման, ֆինանսական հոսքերի կառավարման, հաշվապահական հաշվառման, կոոպերատիվի անդամների իրավունքների ու պարտականությունների մանրամասն ներկայացման, էկոլոգիայի վրա բացասական ազդեցության կանխման և դեգրադացիայի դեմ պայքարի ու արոտների բարելավման, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ներկայացման և այլ թեմաներով: ՀՀ 6 մարզի 55

համայնքի շուրջ 218 հա արոտներում ավարտվել են դեգրադացված տարածքների վերականգնողական աշխատանքները: ՀՀ 6 մարզերի 24 համայնքներում իրականացվում են գյուղամերձ դեգրադացված արոտների ուսումնասիրություններ: Շարունակվել են ՀՀ ամբողջ ջրարբիացման համակարգի և արոտային ճանապարհների ուսումնասիրության և թվային քարտեզներում տվյալների մուտքագրման աշխատանքները:

Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում համաֆինանսավորման միջոցներից ծախսվել է շուրջ 5.8 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագիրն ավարտվել է 2014 թվականի դեկտեմբերի 31-ին: Դրամաշնորհային ծրագրի ավարտի օրը համաձայնագրում կատարված փոփոխությամբ երկարաձգվել է մեկ տարով և սահմանվել 2014 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագրի նպատակն էր Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը: Ծրագրի խնդիրն էր նախաներդրումային, ներդրումային և հետներդրումային տեխնիկական օժանդակության տրամադրումը Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՖՐԵԴԱ) միջոցով ֆինանսավորվող ձեռնարկություններին, ՖՐԵԴԱ-ին մասնագիտացված տեխնիկական օժանդակության ցուցաբերումը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սննդի անվտանգության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2015 թվականին ծախսվել է 141.5 մլն դրամ: Ծրագրի համաձայնագրի ժամկետի ավարտն էր 2015 թվականի հոկտեմբերի 30-ը, ինչի հետ կապված՝ Համաշխարհային Բանկի հետ համաձայնություն էր ձեռք բերվել դրամաշնորհային միջոցներից առաջացած տնտեսված գումարների ծախսման ուղղությունների վերաբերյալ, որն իրականացվել է 2015 թվականի երկրորդ կիսամյակում՝ հանգեցնելով ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերի նկատմամբ փաստացի ծախսերի 44%-ով գերազանցման: Ծրագրի նպատակն էր աջակցել սննդամթերքի անվտանգության ապահովման ժամանակակից համակարգի ստեղծմանը՝ հիմնվելով միջազգային չափանիշների և լավագույն փորձի վրա: Աջակցությունը խթան կհանդիսանա սննդամթերքի անվտանգության ոլորտում հետագա բարեփոխումների իրականացման համար: Ծրագրի երեք հիմնական ուղղություններն են ՀՀ իրավական դաշտի բարելավումը՝ միջազգային և ԵՄ սննդամթերքի անվտանգության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, պետական կառույցների աշխատակիցների համար անհրաժեշտ ուսուցումների մեթոդաբանության մշակումը և ռիսկերի ու տնտեսական վերլուծության կարողությունների զարգացումը՝ պետական կառույցների կողմից ազգային և միջազգային մակարդակով սննդամթերքի անվտանգության ոլորտում իրականացվող քաղաքականությունը և որոշումները ԵՄ Ազատ Առևտրի Համաձայնագրին օժանդակող ԱՀԿ ՍՖՍ

(սանիտարական և ֆիտոսանիտարական) սկզբունքներին համապատասխան ապահովելու նպատակով: Ծրագիրն իրականացվել է երեք բաղադրիչներով՝

- Սննդամթերքի անվտանգության ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում,
- Տեխնիկական կարողությունների զարգացում,
- Թարգմանություն և աուդիտ:

Սննդամթերքի անվտանգության ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման բաղադրիչով իրականացվել է սանիտարական և բուսասանիտարական (ՍԲՍ) ոլորտի օրենսդրության բարելավում՝ ՀՀ իրավական ակտերի մոտարկում Եվրամիության իրավական ակտերին: Իրականացվել է 50 ԵՄ իրավական ակտերի մոտարկում, որոնց հիման վրա կազմվել են ՀՀ իրավական ակտերի նախագծեր, բոլոր փաստաթղթերը տրամադրվել են ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը (ՍԱՊԾ): Իրականացվել է սննդամթերքի անվտանգության բնագավառում հանրային իրազեկվածության վերաբերյալ սոցիալական հարցում, որի արդյունքները տրամադրվել են ՍԱՊԾ-ին, վերջինիս անձնակազմի և լրագրողների համար սննդամթերքի անվտանգության ոլորտը լուսաբանելու վերաբերյալ համատեղ ուսուցում, ՍԱՊԾ, լաբորատորիայի և տնտեսավարողների համար ուսուցում-քննարկում ԵԱՏՄ շրջանակներում օրենսդրական դաշտի իրազեկվածության բարձրացման ուղղությամբ:

Տեխնիկական կարողությունների զարգացման բաղադրիչի շրջանակներում իրականացվել է ՍԱՊԾ տեխնիկական հագեցվածության և սերվերի համար նախատեսված սենյակին ներկայացվող պահանջների վերլուծություն: Մշակվել է ՍԱՊԾ կարիքների համար սերվերային սարքավորումների տեխնիկական բնութագիր: ՍԱՊԾ-ի համար ձեռք են բերվել համակարգչային սարքավորումներ: Կենդանիների հիվանդությունների վերահսկողության կարողությունների հզորացման նպատակով մրցույթի հիման վրա ընտրվել է խորհրդատվական կազմակերպություն, որի կազմում ընդգրկված միջազգային և տեղական փորձագետների կողմից իրականացվել է ոլորտի ներկա իրավիճակի ուսումնասիրություն: Կազմվել են հաշվետվություններ Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական դեղերին վերաբերող օրենսդրության ուսումնասիրության, Հայաստանի զոոնոզ (մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդություն, աղբյուրը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1913-Ն որոշման ռազմավարական ծրագիր) և սննդային ծագման հիվանդությունների վերաբերյալ: ՍԱՊԾ անձնակազմի համար իրականացվել է ռիսկերի գնահատման ուսուցում: Իրականացվել են կենդանիների հիվանդությունների կանխարգելման և պայքարի ռազմավարությունների, ինչպես նաև հիվանդությունների ազդեցության տնտեսական վերլուծության աշխատանքներ: ՀՀ ԳՆ և ՍԱՊԾ համապատասխան անձնակազմի համար իրականացվել է կենդանիների հիվանդությունների կանխարգելման և պայքարի

ռազմավարությունների, ինչպես նաև հիվանդությունների ազդեցության տնտեսական վերլուծության վերաբերյալ ուսուցում:

«Թարգմանություն և աուդիտ» բաղադրիչի շրջանակներում ընտրվել են խորհրդատուներ, որոնք իրականացրել են անհրաժեշտ թարգմանությունը, այդ թվում՝ ԵՄ և ՀՀ իրավական ակտերի թարգմանություններ, միջազգային փորձագետների համար բանավոր և գրավոր թարգմանություններ, ինչպես նաև ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ թարգմանություններ: Ծրագրի ավարտից հետո իրականացվել է ծրագրի աուդիտ:

Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 112.2 մլն դրամ, որից 60.9 մլն դրամը կատարվել է վճարումներ յոթ պտղատեսակների վերլուծության, դրանց ընտրության, տեխնիկատնտեսական հիմնավորումների իրականացման, ինչպես նաև հետագա վարկավորման պայմանների մշակման համար: Ծախսերի 13.7%-ով գերազանցումը ծրագրային ցուցանիշից պայմանավորված է նրանով, որ դրամական միջոցները ՀՀ գանձապետարանի հատուկ հաշվից տեղափոխվել են առևտրային բանկում բացված ծրագրային հաշիվների վրա: 2015 թվականին ավարտվել են ծրագրով նախատեսված յոթ պտղատեսակների ընտրության գործընթացը, ինչպես նաև վարկավորման պայմանների մշակման աշխատանքները, սակայն սեզոնային բնույթից ելնելով՝ վարկավորման գործընթացի սկիզբը հետաձգվել է մինչև 2016 թվականի գարուն, քանի որ ԳԶՄՀ կողմից ներկայացվել են նոր առաջադրանքի պայմաններ, որի համապատասխան պետք է ընտրվի խորհրդատու ծրագրի իրականացման զուգահեռ ֆերմերներին խորհրդատվություն տրամադրելու համար: Սակայն առաջադրանքի պայմանների փոփոխության հետևանքով նոր խորհրդատու չի ընտրվել, և դրամաշնորհային միջոցներից նախատեսված վճարումները 2015 թվականին չեն կատարվել:

Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագիրը նախատեսված է շահառուներին բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով այգեգործական վարկերի տրամադրման համար, որոնց ֆինանսավորումն իրականացվում է ծրագրերի իրականացման գրասենյակի կազմում գտնվող Գյուղական ֆինանսավորման կառույցի միջոցով:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) նախապատրաստական աշխատանքների կազմակերպման և անցկացման ծախսերը կազմել են 123.4 մլն դրամ՝ ապահովելով 96.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.2%-ով կամ 15.6 մլն դրամով, քանի որ որոշ ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտություն չի առաջացել: Գյուղատնտեսական համատարած հաշվառումն իրականացվել է 2014 թվականին, իսկ 2015 թվականին կատարվել է ծրագրի արդյունքների ամփոփում: Ծրագրին աջակցելու նպատակով

ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցների հաշվին կատարված ծախսերը կազմել են շուրջ 4.8 մլն դրամ կամ նախատեսվածի 92.5%-ը: Միջոցները նախատեսվել են ԳՀՀ տվյալների բազայի ձևավորման համար սերվերի և վերջինիս համար անհրաժեշտ ծրագրային փաթեթի ձեռքբերման համար: Ծրագրի 92.5% կատարողականը պայմանավորված է նրանով, որ սերվերի համար անհրաժեշտ ծրագրային փաթեթի ձեռքբերում չի իրականացվել:

Հաշվետու տարում գյուղատնտեսության դասում ընդգրկված հետևյալ 10 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացման նպատակով ծախսվել է 58.9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների, գրանցամատյանի վարման, օրիգինատորի հաշվառման, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմման, սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների և փաստաթղթավորման, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի և գրանցամատյանների հրատարակման, ինչպես նաև բույսերի նոր սորտերի փորձարկումների աշխատանքներ: Լաբորատոր հետազոտությունների են ենթարկվել 15933 տոննա գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր, որոնք ստացել են համապատասխան դասային գնահատում և փաստաթղթավորում: Ընդհանուր առմամբ հետազոտվել են հացահատիկային, հատիկաընդեղենային, բանջար-բոստանային, կերային, դեկորատիվ, անտառային բույսերի սերմեր և կարտոֆիլի տնկանյութ: Ընդունվել և հետազոտվել են շուրջ 1056 նմուշներ, սպասարկվել են 484 տնտեսավարող սուբյեկտներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով կամ 1.1 մլն դրամով:

Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծախսերը կազմել են 4.5 մլն դրամ, որոնք նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են 70.2 մլն դրամ: Հայաստանի Հանրապետությունում առկա է գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող 852 համայնք: Յուրաքանչյուր տարի ագրոքիմիական հետազոտության են ենթարկվում հանրապետության ողջ տարածքի վարելահողերը և բազմամյա տնկարկները՝ որոշելով սննդատարրերով (ազոտ, ֆոսֆոր, կալիում) ապահովվածությունը, որից հետո տրվում է ագրոքիմիական քարտեզ և բնութագրեր: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին իրականացվել են գյուղատնտեսական մշակովի հողերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ 171 համայնքներում, հետազոտված 86184 հեկտար տարածքից վերցված 28728 հողանմուշներում կատարվել են 72682 լաբորատոր փորձաքննություններ, որոշվել է ազոտի, ֆոսֆորի և կալիումի պարունակությունը հողի մեջ, կազմվել

և համայնքներին են հանձնվել 171 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր, որոնցում հստակ նշվել են պարարտանյութերի տեսակները, պարարտացման նորմերը՝ ըստ կուլտուրաների, պարարտացման ժամկետները, և հանձնվել են համայնքներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.6%-ով կամ 7.8 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ և իրականացված աշխատանքների ծավալով:

Գյուղական խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման նպատակով կատարվել են շուրջ 395.8 մլն դրամի ծախսեր: Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ մատուցող Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-ների) և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնների (ԳԱՀԿ-ների) միջոցով ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարման նպատակով գյուղացիական տնտեսություններին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ՝ 21817 խորհրդատվական միջոցառումներ, 1091 սեմինար, 847 դաշտային ուսուցման և 151 փորձացուցադրական աշխատանքների կազմակերպում, լրատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցում, 94 ռադիոհեռուստահաղորդում, 447 անուն տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում՝ 128140 տպաքանակով, 156 համար թերթերի թողարկում՝ 207500 տպաքանակով: Նշված ծրագրի միջոցառումների իրականացումը պայմանավորված է մարզերում գյուղատնտեսության բնագավառում տնտեսավարողների կողմից ներկայացրած անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվության պահանջարկով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.2%-ով կամ 49.3 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ և իրականացված աշխատանքների ծավալով:

Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 134.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ապահովվում է Հայաստանի Հանրապետությունում բույսերի վնասակար օրգանիզմների հետազոտությունների, բույսերի պաշտպանության, ինչպես նաև պատվաստված անասնագլխաքանակի կայուն ֆոնի և գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացումը: 2015 թվականին թվով 24 ագրոնոմների միջոցով գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում իրականացվել է բուսասանիտարական մոնիտորինգ 250 հազար հա տարածքների վրա: Ջերմուկ քաղաքի 240 հա տարածքում իրականացվել են մոծակների և խայթող այլ միջատների դեմ պայքարի միջոցառումներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.5%-ով կամ 5.7 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ և իրականացված աշխատանքների ծավալով:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացման համար 2015 թվականին ծախսվել է 339.4 մլն դրամ: Ծրագրի նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պահպանումը և անասնաբուժական տեսակետից բարձրորակ անասնապահական արտադրանքի ապահովումը: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 15.8%-ով կամ 46.4 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարողներին առևտրային բանկերի միջոցով տրամադրվել են սուբսիդավորված վարկեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 33.3%-ով կամ 290.5 մլն դրամով՝ պայմանավորված նրանով, որ նախկինում փոխհատուցվում էր վարկի տոկոսադրույքի 4 տոկոսային կետին համարժեք մասը, իսկ հանրապետության առավել կարիքավոր համայնքների համար՝ 6 տոկոսային կետին համարժեք մասը, սակայն 2015 թվականի մարտ ամսից բոլոր համայնքների տնտեսավարողների համար փոխհատուցվող մասը կազմում է 6 տոկոսային կետ:

Եվրամիության փորձարկման ռեֆերենս մեթոդներով մեղրի և ձկան փորձաքննությունների ծառայություններին ուղղվել է 30 մլն դրամ: Ծրագրի նպատակն է մնացորդային նյութերի հսկողություն իրականացնել տեղական արտադրության մեղրի և ձկան մեջ, ինչը կբացահայտի և կհավաստի, որ նշված կենդանական ծագում ունեցող սննդամթերքները չեն պարունակում արգելված նյութեր, անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային քանակներ կամ վերջիններիս պարունակությունը չի գերազանցում ՀՀ օրենդրությամբ սահմանված մնացորդային քանակները: Ծրագիրը սկսել է իրականացվել 2015 թվականից:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը, որոնք իրականացվում են արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են շուրջ 190.6 մլն դրամ: Ֆոնդում գոյացած միջոցների 70 տոկոսն օգտագործվում է ծառայության աշխատողների նյութական խրախուսման, իսկ 30 տոկոսը՝ ծառայության համակարգի զարգացման և հսկիչ գնումների ֆինանսավորման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 14%-ով կամ 31 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ներմուծված սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի ծավալների նվազմամբ:

Ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի լաբորատոր փորձաքննության վճարների ծախսերը, որոնք իրականացվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են շուրջ 81.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.2%-ով կամ 1 մլն դրամով:

Գյուղատնտեսության դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են շուրջ 906.6 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը և ապահովել 98.3% կատարողական՝ պայմանավորված գնումների գործընթացի ընթացքում առաջացած խնայողություններով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 27.2%-ով կամ շուրջ 194 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2014 թվականի հուլիսի 1-ից պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացմամբ:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը (նախարարությունների աշխատակազմերի մասով) կազմել են 512.7 մլն դրամ՝ ապահովելով 97.5% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 26.5%-ով կամ 107.3 մլն դրամով, ինչը նույնպես հիմնականում պայմանավորված է պետական ծառայողների աշխատավարձերի և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Բույսերի պաշտպանության միջոցառումների գծով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 89.2 մլն դրամ կամ նախատեսվածի 59.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով՝ կապված ծառայությունների մատուցման և գնման գործընթացի հետ: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Համայնքների միջոցով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների բաղադրիչի շրջանակներում ՀՀ մարզպետարաններին անհատույց հատկացվել է 2000 կգ մկնասպան միջոց՝ 25000 հա մկնանման կրծողներով առավել վարակված գյուղատնտեսական նշանակության վարելահողերում և բազմամյա տնկարկներում մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու համար: Համայնքներին բաշխելու նպատակով միջատասպան թունանյութի ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում նախորդ տարի ձեռքբերված «Կռալ» տեսակի բույսերի պաշտպանության միջատասպան թունանյութերով «օկնոգինա» վնասատուի դեմ քիմիական պայքարի միջոցառումներ են իրականացվել ՀՀ Արագածոտնի և Կոտայքի մարզերի 8 համայնքներում շուրջ 404 հա-ի վրա՝

մորեխներով առավել վարակված գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում: Հանրապետությունում անտառային վնասատուների վարակվածության ցածր մակարդակի պատճառով անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ ավիացիոն քիմիական պայքարի միջոցառումներ չեն իրականացվել: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.6%-ով կամ 20.9 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2015 թվականի բուսասանիտարական վիճակով և ձեռք բերված նյութերը պահեստավորելու և հետագայում օգտագործելու հանգամանքով:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 97.8% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերն աճել են 3.7%-ով կամ շուրջ 41.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ձեռք բերված պատվաստանյութերի ծավալների աճով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել է իրականացնել կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանության, անասնահակահամաճարակային կանխարգելիչ աշխատանքներ՝ Հայաստանի Հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ստեղծման նպատակով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր իրականացնել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված 8601784 հատ անասնահակահամաճարակային միջոցառումներ: Նշված աշխատանքներն իրականացվել են անասնաբույժ մասնագետների և համաճարակաբանների կողմից 935 համայնքներում, փաստացի իրականացվել են 8518517 հատ անասնահակահամաճարակային միջոցառումներ:

Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցության ծախսերը կազմել են 4.3 մլն դրամ՝ ապահովելով 74.1% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով, ինչի արդյունքում տվյալ ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 25.3%-ով: Միջոցները հատկացվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանին: Ծրագրի նպատակն է ուսուցողական դասընթացների կազմակերպումը, որը կնպաստի մասնագիտական պատրաստվածության աստիճանի բարձրացմանը: 2015 թվականին ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 42 աշխատակիցներ:

Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 9.6 մլն դրամ՝ 3.7%-ով զիջելով նախատեսված և նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է նրանով, որ իրականացվել են նախատեսվածից պակաս քանակով լաբորատոր հետազոտություններ՝ կապված տեսչական ստուգումների կասեցման հետ:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար պետական աջակցության ծախսերը կազմել են 2.6 մլրդ դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր, որոնք բաշխվել են Հայաստանի Հանրապետության մարզերի հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար: Ծրագիրը սկսել է իրականացվել 2015 թվականից:

Տոհմային երինջների ձեռքբերման ծախսերը կազմել են շուրջ 799.1 մլն դրամ՝ ապահովելով 91.7% կատարողական, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է տոհմային երինջների խմբաքանակի ներկրում Հայաստանի Հանրապետություն: Նշենք, որ 2014 թվականին այս ուղղությամբ ծախսեր չէին իրականացվել:

Հաշվետու տարում շուրջ 1.3 մլրդ դրամ է տրամադրվել *անտառային տնտեսության* դասին՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերն աճել են 22.4%-ով կամ 229.4 մլն դրամով՝ պայմանավորված անտառպահպանական ծառայությունների ձեռք բերման ծախսերի աճով: 2015 թվականին անտառային տնտեսությանը կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երկու ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառպահպանական ծառայություններին կատարված հատկացումները: Նշված ծառայությունների ձեռքբերման համար նախատեսվել է 1.2 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Այն տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ որպես դրամաշնորհ, իր իրավասության ներքո գտնվող 344.2 հազար հեկտար տարածքների պահպանության աշխատանքների դիմաց վճարման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.6%-ով կամ 229.4 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ և իրականացված աշխատանքների ծավալով:

Անտառային պետական մոնիթորինգի համար նախատեսված շուրջ 54.6 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է, որը նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել: Հատկացված գումարների հաշվին շուրջ 370 հազար հա անտառտնտեսություններում, ազգային պարկերում, արգելավայրերում և բնության հատուկ պահպանվող տարածքների անտառներում իրականացվել են անտառպահպանության և անտառօգտագործման բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքների ուսումնասիրում, փայտանյութի սպառման շուկայի, մթերման և արտահանման, ապօրինի հատումների և դրա արդյունքում բնափայտի տեղափոխումների, իրացման վերաբերյալ տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն և գնահատում: Ներդրված հեռահար զոնդավորման ծրագրային համակարգի միջոցով վերծանվել են անտառածածկ տարածքների փոփոխությունների ուսումնասիրությունները:

2015 թվականին ավելի քան 12.8 մլրդ դրամ տրամադրվել է *ոռոգման* դասի ծախսերին՝ կազմելով ծրագրվածի 92.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման վարկային ծրագրերով նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել է 10 ծրագիր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են երկու վարկային և երկու դրամաշնորհային ծրագրեր:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 5.1 մլրդ դրամ: Ծրագրված ծախսերի նկատմամբ 26.9%-ով գերազանցումը պայմանավորված է նրանով, որ մի շարք պայմանագրերով աշխատանքներն իրականացվել են նախատեսվածից ավելի մեծ ծավալով և ժամանակացույցից շուտ: Նախատեսված ժամկետներից շուտ իրականացվել են նաև պայմանագրերով նախատեսված տեխնիկական վերահսկողության ծառայությունների աշխատանքները: Ծրագրի նպատակներն են կրճատել էլեկտրաէներգիայի սպառումը, բարելավել ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետությունն ընտրված ոռոգման համակարգերում, բարելավել ոլորտին առնչվող կարևոր տեղեկատվության առկայությունը և հուսալիությունը՝ որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար: Ծրագիրը բաղկացած է 3 մասից.

- ոռոգման համակարգի բարելավում՝ մեխանիկական ոռոգման փոխարկումը ինքնահոսի՝ չորս ինքնահոս համակարգի կառուցման միջոցով: Մեխանիկական եղանակով ստացած ջուրը տեղափոխող, հեռացնող և այլ ջրանցքների վիճակի բարելավում՝ տասներեք ընտրված պոմպակայանների հեռացնող մոտ 52 կմ ջրանցքների վերականգնման միջոցով.
- կառավարման տեղեկատվություն՝ տեխնիկական ուսումնասիրությունների իրականացում ոռոգման կազմակերպությունների շահագործման և պահպանման ու կապիտալ նորոգման կարիքները վերլուծելու և «Ջրառ» կազմակերպությունների և ՋՕԸ-ների տեխնիկական աուդիտ իրականացնելու նպատակներով: Կարգավարական հսկողության և տվյալների ձեռք բերման համակարգի (SCADA) տեղադրում շուրջ յոթանասուն դիտակետում՝ մայր ջրանցքների և ջրառների ընտրված կետերի վրա:
- ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների աջակցություն՝ աջակցության տրամադրում ծրագրերի իրականացման գրասենյակին ծրագրի կառավարման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման աշխատանքներում՝ ապրանքների, խորհրդատվական ծառայությունների, այդ թվում՝ աուդիտի և գործառնական ծախսերի ապահովման միջոցով: Աջակցության տրամադրում ՋՕԸ-ների

ղեկավարությանը, անձնակազմին և անդամներին, ուղղված նրանց տեխնիկական, գործառնական, ֆինանսական և կազմակերպչական կարողությունների և աշխատանքի բարելավմանը՝ խորհրդատվական ծառայությունների և ուսուցման միջոցով:

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի շրջանակներում 2015 թվականին ավարտվել են Գեղարդալճի ինքնահոս համակարգի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքները, ինչպես նաև շինարարական աշխատանքների մրցութային գործընթացը, ստորագրվել է շինարարական պայմանագիր, ավարտվել են նաև Մեղրիի ինքնահոս ոռոգման համակարգի շինարարական աշխատանքները, որի ընթացքում կատարվել է մագիստրալային 8.5 կմ երկարությամբ խողովակաշարի շինարարություն, ավարտին են մոտենում մագիստրալային 35.64 կմ երկարությամբ խողովակաշարի ձախ ճյուղի շինարարական աշխատանքները:

Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 719.7 մլն դրամի ծախսերը չեն կատարվել՝ պայմանավորված վարկային ծրագրի համաձայնագիրը նախատեսված ժամկետից ուշ ստորագրելու հանգամանքով: Համաձայնագիրը ստորագրվել է 2015 թվականի հոկտեմբերի 16-ին և պետք է անցնի ներպետական համաձայնեցման ընթացակարգ: Ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2016 թվականից:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 18.5 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 2.8%-ով կատարումը պայմանավորված է նախատեսված աշխատանքներն ուշ սկսելու հանգամանքով: 2015 թվականին խորհրդատուի կողմից ավարտվել է ՏՏՀ (տեխնիկատնտեսական հիմնավորում) ուսումնասիրությունը: KFW բանկի հետ քննարկվել է ծրագրի հետագա իրականացման գործընթացը, ըստ որի առաջին փուլով որոշվել է իրականացնել Կապսի ջրամբարի հիմնանորոգումը՝ 25 մլն մ^3 ընդհանուր ծավալով: Համաձայն ՏՏՀ ուսումասիրության արդյունքների 25 մլն մ^3 ծավալով Կապսի ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների մանրամասն նախագծման, շինարարության, շինտեխնիկական վերահսկողության և խորհրդատվական ծառայությունների մատուցման ընդհանուր ներդրումային ծախսերը կկազմեն 60 մլն եվրո: Վարկային համաձայնագիրը ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել և ստորագրվել 2014 թվականի դեկտեմբերի 19-ին, որից հետո անցնելով համաձայնագրի ներպետական համաձայնեցման ընթացակարգը՝ ուժի մեջ է մտել 2015 թվականի հունիսի 29-ից: 2015 թվականի ընթացքում «Շրջակա միջավարի վրա սոցիալական ազդեցությունը գնահատող» խորհրդատուի և «Փորձագետների հանձնաժողովի» մասնակիցների ընտրության նպատակով անցկացվել է նախաորակավորման մրցութային գործընթաց, որից հետո պատրաստվել են նաև համապատասխան մրցութային փաստաթղթեր՝ 2016 թվականին նախաորակավորում անցած

մասնակիցների միջև մրցութային գործընթաց իրականացնելու համար: Անցկացվել է նաև «Ծրագրի աջակցություն և կառավարում, Կապսի ջրամբարի վերականգնման մանրամասն նախագծի և մրցութային փաստաթղթերի պատրաստում, շինարարության վերահսկողություն» խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցութային գորընթացը՝ նախավորակավորում անցած մասնակիցների միջև: Մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները սկսվել են 2015 թվականի դեկտեմբերին և կավարտվեն 2017 թվականի երկրորդ կիսամյակում: 2015 թվականի դեկտեմբերից սկսված աշխատանքների դիմաց հիմնական վճարումներն ըստ ներկայացված հայտերի տեղափոխվել են 2016 թվական:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 702 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված վարկային ծրագրի համաձայնագրի նախատեսված ժամկետից ուշ ստորագրելու հանգամանքով: Համաձայնագիրը ստորագրվել է 2016 թվականի հունվարի 26-ին և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պետք է անցնի ներպետական համաձայնեցման ընթացակարգ: Ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2016 թվականին: Խորհրդատուն 2013 թվականի նոյեմբերի 25-ին կնքված պայմանագրի համաձայն, շարունակում է իրականացնել «Վեդի ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման» մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները: Նախագծի և մրցութային փաստաթղթերի մանրամասն պատրաստման աշխատանքները սկսվել են 2015 թվականի հունվարին, և ավարտը նախատեսվում է 2016 թվականի ապրիլին, որից հետո կհայտարարվի շինարարական աշխատանքների իրականացման մրցույթ: Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կկազմի շուրջ 4 տարի: 2015 թվականի ընթացքում պատվարի և օժանդակ կառուցվածքների նախնական նախագծի հիման վրա պատրաստվել են «Պատվարի և օժանդակ կառուցվածքների» կառուցման նախաորակավորման մրցութային փաստաթղթեր, և հայտարարվել է նախաորակավորման մրցույթ, որն ընթացքի մեջ է:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 190.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2015 թվականին ծրագիրն ավարտվել է: Ծրագրի նպատակն էր իրականացնել գոյություն ունեցող ոռոգման համակարգերի համալիր տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություններ, ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում և պատվարի, Կապսի ջրամբարի թասի հատվածում գեոտեխնիկական ու երկրաբանական հետազոտություններ՝ ջրի մատչելիության բարելավման և արդյունավետ ոռոգման տեխնոլոգիաների ներդրման միջոցով արտադրության ավելացման ընդունելի հայեցակարգ մշակելու համար: Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցման

դրամաշնորհային ծրագիրն ուժի մեջ է մտել 2013 թվականին: 2015 թվականին ծրագրի իրականացման ընթացքում ավարտվել է «Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում / Ախուրյան գետ-Կապսի ջրամբարի և Կապսի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում» տեխնիկատնտեսական հիմնավորման (ՏՏՀ) ուսումնասիրությունը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ԵՎԲ-ի կողմից ֆինանսավորվող ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 253 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագիրն ավարտվել է 2015 թվականին: Աշխատանքների նախապատրաստման փուլում ջրօգտագործողների ընկերություններից ստացվել են սպասարկման տարածքների ոռոգման համակարգերի մասին տեխնիկական, տնտեսական և ֆինանսական ցուցանիշներ: Կատարվել են ստացված տվյալների վերլուծություններ և իրականացվել են ոռոգման համակարգերի տվյալների տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություններ, ինչի արդյունքում կկատարվի վերանորոգման ենթակա ոռոգման համակարգերի ընտրություն՝ ելնելով դրանց խիստ վթարային լինելու, առաջնային ու եկամտաբերության բարձր նորմա ունենալու չափորոշիչներից: Աշխատանքների գերակշիռ մասն իրականացվել է 2015 թվականին:

2015 թվականին ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին նախատեսված ավելի քան 5.2 մլրդ դրամ աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 10.2%-ով աճը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ: 2015 թվականին ծառայություններ են մատուցվել 37 ջրօգտագործողների ընկերությունների: Համակարգի հետագա զարգացման և ջրօգտագործողների ընկերությունների՝ որպես կենսունակ հաստատությունների կայացման հարցում միջնաժամկետ հեռանկարում մեծ դեր է հատկացվում պետական օժանդակությանը: Ոռոգման համակարգին պետական ֆինանսական աջակցության շրջանակների հստակեցումը և տրամադրման մեխանիզմների բարեփոխումն է՛լ ավելի են կարևորվում աղքատության հաղթահարման միջոցառումների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի կանոնավոր հասանելիությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը գյուղական բնակավայրերում: Ջրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման ամրապնդումը, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնածախսածածկման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների ու որակի որոշման աշխատանքների իրականացման համար 2015 թվականի պետական բյուջեից ծախսվել է 119.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար իրականացվել են 154.99 կմ ընդհանուր երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 26.4%-ով կամ 25 մլն դրամով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների հաշվարկման կարգի և դրույքների փոփոխությամբ:

Ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպություններին 2015 թվականին տրամադրվել է շուրջ 949 մլն դրամ ֆինանսական աջակցություն, որը կատարվել է նախատեսված չափով: Աջակցության հիմնական նպատակն է ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպությունների վնասների փոխհատուցման արդյունքում կազմակերպությունների տեխնիկական և ֆինանսական կայունության ապահովումը, որը թույլ կտա կազմակերպություններին իրականացնել կնքված պայմանագրերով ոռոգման ջրի մատակարարումը և կատարել ստանձնած պայմանագրային պարտավորությունները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 13.2%-ով կամ 144.6 մլն դրամով՝ պայմանավորված սակավաջրության հետևանքով սեզոնին մեխանիկական ջրի միջոցով հողի ոռոգման ջրամատակարարման կազմակերպմամբ:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից ոռոգման համակարգերի հիմնանորոգմանն ուղղվել է շուրջ 780.7 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: 2015 թվականի ընթացքում վերականգնվել և վերանորոգվել են 45 հատ խորքային հորեր, 40 պոմպակայաններ, ինչպես նաև մի շարք ջրանցքներ և խողովակաշարեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 21.8%-ով կամ 217.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալների նվազմամբ:

Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման համար տրամադրվել է 197.4 մլն դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Ծրագրի իրականացման արդյունքում պահպանվում և շահագործվում են հանրապետությունում առկա կոլեկտորադրենաժային ցանցերը՝ մաքրվում և վերանորոգվում է կոլեկտորադրենաժային ցանցերի մի մասը, որոնցով հնարավորություն է տրվում Արարատյան հարթավայրի հողերի գրունտային ջրերի մակարդակները պահպանել թույլատրելի խորությունների վրա: 2015 թվականի ընթացքում իրականացվել են 154.99 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի և Արարատյան հարթավայրում տեղադրված 450 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումների աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել

են 10.8%-ով կամ 23.9 մլն դրամով, ինչը պայմանավորված է նախատեսված աշխատանքների համար կնքված պայմանագրերի արժեքով, ինչպես նաև կատարված աշխատանքների ծավալներով:

Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրությունների ծախսերը կազմել են շուրջ 10.2 մլն դրամ կամ ծրագրի 86.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է որոշակի ծառայությունների և նյութական արժեքների ձեռքբերման ծախսերի տնտեսումներով: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 3.7%-ով կամ 392.2 հազար դրամով, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների նվազմամբ:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերը 2015 թվականին կազմել են շուրջ 6.8 մլրդ դրամ՝ ապահովելով 40.2% կատարողական: Վերջինս հիմնականում պայմանավորված է «Վառելիքի այլ տեսակներ» դասի կատարողականով:

2015 թվականին *միջուկային վառելիքի* դասի ծախսերը կազմել են 245.1 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանմանը՝ ապահովելով 98.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.9%-ով կամ 22 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ:

2015 թվականին վառելիքի այլ տեսակների դասի ծախսերը կազմել են ավելի քան 5.4 մլրդ դրամ կամ ծրագրվածի 35.5%-ը, որը հիմնականում պայմանավորված է ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման վարկային ծրագրի կատարողականով, ինչպես նաև նույն ծրագրի դրամաշնորհային բաղադրիչի շրջանակներում նախատեսված 3.1 մլրդ դրամի միջոցները չօգտագործելու հանգամանքով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող վեց դրամաշնորհային և մեկ վարկային ծրագրեր:

Մասնավորապես՝ ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 3.7 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերը կատարվել են 35.5%-ով՝ պայմանավորված համաձայնագրի շրջանակներում ՌԴ-ի կողմից 3.7 մլրդ դրամի հաստատում ստանալու հանգամանքով: Ծրագրի առաջին փուլում նախատեսվում է իրականացնել էներգաբլոկի սարքավորումների և շինությունների համալիր ուսումնասիրություն և շահագործման լրացուցիչ ժամկետի նախապատրաստման ծրագրի մշակում, երկրորդ փուլում՝ նախապատրաստման ծրագրի իրականացում, ներառյալ հետազոտական, հաշվարկային, վերլուծական, նախագծային, կոնստրուկտորական, մոնտաժային և գործակարգաբերման աշխատանքները, և անհրաժեշտ սարքավորումների մատակարարումներ: Ծրագրի կատարման աստիճանով պայմանավորված՝ չեն օգտագործվել ծրագրին աջակցելու նպատակով նախատեսված դրամաշնորհային ծրագրով հատկացված 3.1 մլրդ դրամի միջոցները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էներգախնայողության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 287.6 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 94.6%-ով կատարումը պայմանավորված է շինանարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության աշխատանքների սեզոնայնությամբ, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ: 2012 թվականից ՀՀ կառավարությունը Համաշխարհային բանկի օժանդակությամբ ձեռնամուխ է եղել էներգախնայողության ծրագրի իրականացմանը: Ծրագիրն ուղղված է հանրային նշանակության օբյեկտներում (դպրոցներ, այլ ուսումնական հաստատություններ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, վարչական շենքեր, մշակույթի տներ, բնակավայրերի արտաքին լուսավորություն և այլն) էներգախնայողական միջոցառումներ իրականացնելուն: Ծրագրի զարգացման նպատակն է՝ կրճատել սոցիալական և հանրային նշանակության այլ կառույցների էներգասպառման մակարդակը: Գլոբալ բնապահպանական նպատակն է՝ կրճատել ջերմոցային գազերի արտանետումները պետական ոլորտում էներգախնայողության մեջ ներդրումների համար արգելքների վերացման միջոցով: Ծրագիրն ունի 2 հիմնական բաղադրիչ՝ «Էներգախնայողական ներդրումներ հանրային օբյեկտներում» և «Ծրագրի տեխնիկական աջակցություն»: Առաջին բաղադրիչի շրջանակներում Էներգախնայողության ներդրումներ են կատարվում սոցիալական և հանրային նշանակության այլ օբյեկտներում, օրինակ՝ դպրոցներում, մանկապարտեզներում, հիվանդանոցներում, վարչական շենքերում, փողոցային լուսավորությունում: Երկրորդ բաղադրիչի շրջանակներում վերացվելու են էներգախնայողության ներուժի իրացման առկա խոչընդոտները (պոտենցիալ շահառուների կողմից էներգախնայողության վերաբերյալ տեղեկատվության պակաս, ինչպես նաև ռիսկերի սխալ գնահատում), և ստեղծվելու է նպաստավոր միջավայր պետական հատվածում էներգախնայողության համար: Ծրագրի շրջանակներում հատկացված միջոցերը ծախսվել են 10 քրեակատարողական հաստատություններում, ինչպես նաև 13 այլ հանրային օբյեկտներում էներգախնայողության միջոցառումների իրականացման, նշված օբյեկտներում տեխնիկական հսկողության իրականացման, չափման և փորձարկման սարքավորումների ձեռքբերման, շուկայի ուսումնասիրության և հիմնադրամի առաջիկա գործառնական ծրագրի մշակման, ինչպես նաև երկրորդ ազգային էներգախնայողության գործողությունների ծրագրի մշկման և ներկայացման համար:

Իրանի Իսլամական Հանրապետության աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությունում՝ Իրանի հետ սահմանամերձ բնակավայրերի գազի բաշխման ցանցի կառուցման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 495.1 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 49.8%-ով գերազանցումը հիմնականում պայմանավորված է կանխավճարի վճարմամբ: Ծրագրի շրջանակներում վճարումներ են կատարվել ներկրված սարքավորումների և դրանց համար նախատեսված հարկերի ու տուրքերի գծով: Ծրագիրը կնպաստի բազմաթիվ բնակարանների,

առողջապահական, կրթական, մշակութային և այլ հաստատությունների կողմից էկոլոգիապես մաքուր վառելիքի օգտագործմանը, գազի առկայությունը կնպաստի նաև անտառահատումների կրճատմանը, էկոլոգիայի և դրանից բխող խնդիրների լուծմանը:

2015 թվականին Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 262.6 մլն դրամ: Ծրագրի ծախսերը 6.3%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ: Ծրագիրն ավարտվել է 2015 թվականի սեպտեմբերի 30-ին: Ծրագրի շրջանակներում կատարվել է «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի նախապատրաստման միջոցառումների իրականացում, մասնավորապես՝ ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի վրա ազդեցության գնահատում, գլխավոր կապալառուի ընտրության մրցութային փաստաթղթերի պատրաստում, ինչպես նաև ծրագիր իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարողությունների ամրապնդում և բարձրացում: Հաշվետու ժամանակահատվածում վճարումներ են կատարվել ծրագրում ներգրավված «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ աշխատակիցները մասնակցել են մասնագիտական կարողությունների բարձրացմանն ուղղված դասընթացներին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 624.8 մլն դրամ՝ ապահովելով 101.9% կատարողական: 2015 թվականի ընթացքում հատկացված միջոցներն ուղղվել են ընտրված Կարկառ տեղամասին մերձակա ճանապարհի, հորատման հարթակի և այլ օժանդակ ենթակառուցվածքների կառուցմանը: Ծրագրի նպատակն է՝ Հայաստանում հայտնի հավանական երկրաջերմային տեղանքներից մեկում՝ Կարկառում, հետախուզական հորատման միջոցով էլեկտրաէներգիայի արտադրության համար բավարար ռեսուրսի առկայության և որակի հաստատումը, և երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման գործում մասնավոր հատվածի ներգրավումը: Ծրագիրը շարունակական է, 2016 թվականին նախատեսվում է սկսել հորատման աշխատանքները, որը ենթադրում է 2 նեղ հորատանցքերի հորատում, այնուհետև երկրաջերմային ռեսուրսի հաստատման դեպքում՝ կիրակականցվեն արտադրական հորատանցքերի հորատման աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 3.9 մլն դրամ: Ծրագրի ծախսերի 3.7%-ով կատարումը պայմանավորված է համաձայնագիրը նախատեսված ժամկետից ուշ կնքելու հանգամանքով: Նշենք,

որ այն կնքվել է 2015 թվականի հունիսի 5-ին, սակայն վավերացվել է ուշացումով և ուժի մեջ է մտել 2015 թվականի հոկտեմբերի 2-ին: Բացի այդ, մրցույթների արդյունքում առաջացել են տնտեսումներ և դեկտեմբեր ամսվա ընթացքում հաղթող կազմակերպությունները հրաժարվել են կանխավճարներից: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետությանը՝ արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի նախատեսվող ծրագրին նախապատրաստման հարցում: Ծրագրի շրջանակներում իրականացվել են արևային ներուժի գնահատման և տեղանքների ընտրությանն ուղղված փորձառու միջազգային կազմակերպության ընտրության, ինչպես նաև արդիական ճշգրիտ սարքավորումների մրցութային կարգով ձեռքբերման աշխատանքներ:

Հաշվետու տարում *էլեկտրաէներգիայի* դասի ծախսերը կազմել են ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 81.2% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 283 մլն դրամի միջոցները չօգտագործելու հանգամանքով: Վերջինս պայմանավորված է «Որոտանի ՀԷԿ» ՓԲԸ-ի գույքի առուվաճառքի գործընթացով, որի հետևանքով ծրագրի իրականացումը կասեցվել է: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել է 5 ծրագիր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են չորս վարկային ծրագրեր:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220կվ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման վարկային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 156.8 մլն դրամ, որը որպես կանխավճար տրամադրվել է չորս ենթակայանների («Ագարակ-2», «Շինուհայր», «Եղեգնաձոր» և «Արարատ-2») վերակառուցման աշխատանքների վերահսկողությանը և կառավարմանը: Ծրագրի ծախսերի 13.3%-ով գերազանցումը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել 220 կվ լարման «Ագարակ-2», «Շինուհայր», «Արարատ-2» և «Եղեգնաձոր» ենթակայանները: Ենթակայանների արդիականացումն ու վերակառուցումը կնպաստի էներգետիկ անվտանգության և սպառողների էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացմանը, էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում կարգավորման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 144.2 մլն դրամ: Ծրագրի ծախսերը 9.6%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ընդլայնել

կարգավարական կառավարման ավտոմատացված համակարգը (SCADA): Արդյունքում նախատեսվում է բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը և բարելավել համակարգի կառավարումը: Ծրագրի շրջանակներում օգտագործված գումարը տրամադրվել է «Կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի ընդլայման նախապատրաստում, վերահսկողություն և կառավարում» խորհրդատվական ծառայությունների համար, որպես կանխավճար և խորհրդատուի կողմից իրականացված գլխավոր կապալառուի մրցութային փաթեթի վերանայման աշխատանքների դիմաց:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում «Աշնակ» ենթակայանի, Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավման վարկային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 26.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են վճարումներ բանկային ծառայությունների դիմաց: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել «Աշնակ» ենթակայանը և կառուցել պահուստային կարգավարական կառավարման կենտրոն: Արդյունքում նախատեսվում է բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը և բարելավել համակարգի կառավարումը:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 36.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են վճարումներ բանկային ծառայությունների դիմաց: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել Երևանի ՋԷԿ-ի 220 կվ ենթակայանը: Արդյունքում ակնկալվում է բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը և բարելավել համակարգի կառավարումը:

2015 թվականին 761.5 մլն դրամ տրամադրվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 24.1%-ով կամ 147.7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաշվետու տարում *լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության* ոլորտներին պետական բյուջեից հատկացվել է 12.8 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել սպառողներին ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ ընդերքի պահպանման, հաշվառման և գրանցման, դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման աշխատանքներ: Նախորդ տարվա

համեմատ նշված ծախսերն աճել են մոտ 2.1 անգամ կամ 6.7 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ:

2015 թվականին *տրանսպորտի* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 63.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 123.9%-ով: Ծրագրված ցուցանիշի գերազանցումը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի բարձր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտի բնագավառում բյուջետային ծախսերն արձանագրել են 16.2% աճ՝ հիմնականում պայմանավորված ճանապարհային տրանսպորտի դասի ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում *ճանապարհային տրանսպորտի* դասի ծախսերը կազմել են ավելի քան 57 մլրդ դրամ՝ 28.9%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի բարձր կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 15 ծրագրեր, որոնցից յոթը վարկային և մեկը՝ դրամաշնորհային ծրագրեր են:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի 3-րդ տրանշի շրջանակներում նախատեսված 329 մլն դրամի դիմաց ծախսվել է շուրջ 9.7 մլրդ դրամ: Ծրագրված ցուցանիշի գերազանցումը պայմանավորված է նրանով, որ կապալառու կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր՝ 74 մլն եվրոյի չափով, որի շրջանակներում կանխավճար է վճարվել շինարարական աշխատանքների դիմաց, ինչը 2015 թվականի բյուջեով նախատեսված չի եղել: Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացում, որի նպատակով թվով 1017 հողերի նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ:

Նշված ծրագրի դրամաշնորհային բաղադրիչի շրջանակներում նախատեսված շուրջ 4.3 մլրդ դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ ծրագրերը ուշ են հաստատվել, և դրանց իրականացման համար պայմանագրերը նախատեսված ժամկետից ուշ են կնքվել: Բանակցությունների արդյունքում տեխնիկական համագործակցության համաձայնագիրը ստորագրվել է 2015 թվականի հոկտեմբերի 1-ին՝ Երևանում և հոկտեմբերի 9-ին՝ Լյուքսեմբուրգում, որով կարգավորվում են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության՝ որպես շահառուի և ԵՆԲ-ի՝ որպես պատվիրատուի հարաբերությունները: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են Գյումրիի շրջանցիկ ճանապարհի և Գյումրի-Բավրա ճանապարհահատվածի տեխնիկատնտեսական ուսումնասիրության, բնապահպանական/սոցիալական ազդեցությունների գնահատման և մանրամասն նախագծման, խորհրդատուի ընտրության մրցույթի կարճ ցուցակի կազմման, ինչպես նաև Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման աշխատանքները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 13.5 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերը 2.6 անգամ գերազանցել են նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է նրանով, որ իրականացվել են նախատեսվածից ավել աշխատանքներ: Ծրագրով նախատեսվում էր իրականացնել շուրջ 36.3 կմ երկարությամբ ճանապարհահատվածների վերանորոգում, սակայն ծրագրի իրականացման ընթացքում առաջացած տնտեսումների հաշվին հնարավոր դարձավ ընդգրկել լրացուցիչ ճանապարհահատվածներ: Կնքված պայմանագրերի համաձայն աշխատանքները նախատեսված էր ավարտել 2016 թվականին, սակայն դրանք ընթացել են արագ տեմպերով, և կնքված 16 պայմանագրերից ամբողջությամբ ավարտվել են թվով 11 պայմանագրերով նախատեսված աշխատանքները և 5 պայմանագրերով նախատեսված աշխատանքների գրեթե 90%-ը: Մնացած աշխատանքները տեղափոխվել են 2016 թվական: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին փաստացի վերանորոգվել են 101.5 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ: Մշակվել, քննարկվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության է արժանացել Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման լրացուցիչ ֆինանսավորման» վարկային ծրագիրը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 6.3 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերը 28.4%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ նախորդ տարիների ընթացքում նախատեսված, բայց չկատարված աշխատանքներն ամբողջովին իրականացվել են 2015 թվականի ընթացքում: 2015 թվականի դեկտեմբերի 29-ին բացվել է հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին տրանշի՝ շուրջ 31 կմ երկարությամբ Երևան-Արտաշատ և Երևան-Աշտարակ ճանապարհահատվածի երկկողմանի երթևեկությունը: Հատված 2-ում և Հատված 3-ում ավարտվել են բետոնե պատվածքի աշխատանքները, իրականացվել են արգելափակոցների տեղադրման, գծանշման, ջրահեռացման, արհեստական կառույցների և արտաքին լուսավորության աշխատանքներ, ստորագրվել է փոխըմբռնման համաձայնագիր, որով ավարտման ժամկետ է սահմանվել 2016 թվականի հունիսի 13-ը: Հերթական ՄՎՎ-ն (միջանկյալ վճարման վկայագիր) ներկայացվել է դեկտեմբեր ամսին, որը գտնվում է ստուգման և վերանայման փուլում, ինչի հետևանքով ֆինանսավորումը մասնակիորեն տեղափոխվել է 2016 թվական:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի 2-րդ տրանշի շրջանակներում ծախսվել է շուրջ 5.6 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերի 92.1% կատարողականը պայմանավորված է նրանով, որ որոշ պայմանագրերի կնքումը նախատեսված ժամկետից տեղափոխվեց 2016 թվականի տարեսկիզբ:

2015 թվականին իրականացրել է մոտ 60 ջրթող խողովակների շինարարություն և մեկնարկել է 2 կամուրջների կառուցումը: Հիմնականում իրականացվել են հնագիտական պեղումներ, հողային և ենթակառուցվածքների, հիմքի նախապատրաստման, հողային, ջրթող խողովակների և արհեստական այլ կառույցների աշխատանքներ: Հերթական ՄՎՎ-ն ներկայացվել է դեկտեմբեր ամսին, որը գտնվում է ստուգման և վերանայման փուլում, ինչի հետևանքով ֆինանսավորումը տեղափոխվել է 2016 թվական:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի 3-րդ տրանշի շրջանակներում ծախսվել է շուրջ 2.7 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերի 56.2%-ով կատարումը պայմանավորված է նախատեսված աշխատանքների ուշ մեկնարկով: Ծրագրի շրջանակներում կառուցվող Լանջիկ-Գյումրի 27.5 կմ հատվածի շինարարության տեխնիկական վերահսկող կազմակերպություն է ընտրվել իտալական կոնսորցումը, իսկ չինական «Սինոհիդրո Քորփորեյշն» ընկերությունը կիրականացնի կառուցման աշխատանքները: 2015 թվականի դեկտեմբերին վերջինիս վճարվել է 18 մլն եվրո կանխավճար: Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների համար հայտարարվել է միջազգային մրցույթ, արդյունքներն ամփոփվել են, պայմանագիրը գտնվում է կնքման փուլում: Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածը դեռևս գտնվում է վերանայման և հաստատման փուլում: ՀՕՏԾ (հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր) իրականացնող կազմակերպության հետ պայմանագիրը ստորագրվել է 2015 թվականի դեկտեմբերի 1-ին, մեկնարկային հաշվետվությունը ներկայացվել է դեկտեմբերի 15-ին, որից հետո միայն սկսել է ՀՕՏԾ իրականացումը առաջին ենթահատվածում: Ծրագրով նախատեսված ֆինանսավորումն իրականացվել է խորհրդատվական ծառայությունների, ՀՕՏԾ-ի շրջանակներում իրականացվող աշխատանքների, հաղորդակցուղիների տեղափոխման, «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի պահպանման ծախսերի նպատակով:

Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորության) շրջանակներում ծախսվել է 5.1 մլրդ դրամ: Ծրագրի ծախսերը 33.4%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է նրանով, որ իրականացվել են նախատեսվածից ավել աշխատանքներ, մասնավորապես՝ կատարվել են ճանապարհային հանգույցների կառուցման աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում կատարվել են նաև վճարումներ նախագծային վերահսկողական ծառայության, տարեկան աուդիտի, պետական տուրքերի և նոտարական ծառայությունների, անկախ մոնիտորինգային կազմակերպության, հողի օտարման ու տարաբնակեցման աշխատանքների դիմաց և վճարվել է աշխատավարձ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետի կամրջի վերակառուցման վարկային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 31.7 մլն դրամ կամ բյուջեով հատկացված գումարի 5.6%-ը: Ծրագրով նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական սահմանի Սադախլո-Բագրատաշեն անցման կետում Դեբեդ գետի վրա նոր կամրջի կառուցման աշխատանքները, որի իրականացման համար Հայաստանի և Վրաստանի կառավարությունների միջև համաձայնագիրը կնքվել է 2014 թվականի դեկտեմբերի 24-ին և ԱԺ կողմից հաստատվել 2015 թվականի մայիսի 5-ին: Համաձայնագրով նախատեսված է ծրագրի շրջանակներում համագործակցություն՝ համատեղ հանձնաժողովի միջոցով, որը ստեղծվել է 2015 թվականի սեպտեմբեր ամսին, իսկ առաջին նիստը կայացել է 2015 թվականի հոկտեմբերի 26-ին: Համատեղ հանձնաժողովի նիստերի ընթացքում ձեռք բերվող համաձայնություններից հետո նոր միայն կիրականացվի շինարարական աշխատանքների իրականացման և շինարարական, նախագծահետազոտական ու տեխնիկական հսկողության աշխատանքների մատուցման մրցույթ: 2015 թվականին օգտագործված միջոցներն ուղղվել են «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի պահպանման ծախսերին և գրասենյակային տարածքի վարձակալությանը:

Հաշվետու տարվա պետական բյուջեից շուրջ 3.7 մլրդ դրամ է տրամադրվել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը՝ ապահովելով նախատեսված ծախսերի 96.9%-ը, որը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ շահագործման է հանձնվել 3.2 կմ երկարությամբ Վազաշեն-Պառավաքար շրջանցիկ ճանապարհը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 71.3%-ով կամ 9.1 մլրդ դրամով՝ պայմանավորված ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ծավալների նվազմամբ:

2015 թվականին ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերը կազմել են 5.9 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 99.3%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 3464.5 կմ ճանապարհների՝ ձմեռային և 2978.9 կմ ճանապարհների ամառային պահպանման աշխատանքները: Իրականացվել է 1720 կմ երկարությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների առանձին հատվածների ծածկի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, ավարտվել է ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների ցանցի տեսաձայնագրությունը, իրականացվել է ավտոմոբիլային ճանապարհների անհարթության գործակցի որոշում: Նախորդ տարվա համեմատ ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերն աճել են 5.1%-ով կամ 289.6 մլն

դրամով՝ պայմանավորված ճանապարհների պահպանման և շահագործման ծավալների ավելացմամբ:

Հաշվետու տարում տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են շուրջ 200.8 մլն դրամ՝ 96.8%-ով՝ ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի գծով 2015 թվականին կնքվել է Դիլիջանի թունելի հիմնանորոգման պայմանագիրը (1 մլրդ դրամ ընդհանուր արժեքով), որի շրջանակներում իրականացվել են 197.5 մլն դրամի աշխատանքներ: Մնացած աշխատանքները, համաձայն պայմանագրի, նախատեսվում է ավարտել 2016-2017 թվականներին: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերն աճել են մոտ 4.6 անգամ կամ 156.8 մլն դրամով, ինչը պայմանավորված է 2015 թվականին մեկ խոշոր օբյեկտի՝ Դիլիջանի թունելի հիմնանորոգմամբ՝ 2014 թվականին ավելի փոքր օբյեկտի՝ մեկ կամրջի հիմնանորոգման դիմաց:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման նպատակով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 776.7 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 97.3%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ուղղություններով աշխատանքներ են կատարվել հանրապետության բոլոր մարզերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.3%-ով կամ 52.7 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների աճով:

«Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 26.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Հաշվետու տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության նպատակով «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել են ճանապարհային քարտեզով նախատեսված տրանսպորտի բնագավառի բոլոր միջոցառումները: Իրականացված աշխատանքների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը միացել է ԵՏՄ-ի շրջանակներում «կաբոտաժային» փոխադրումների փուլային ազատականացման ծրագրին: «Կաբոտաժային» բեռնափոխադրումների իրականացումը սկսվել է 2016 թվականի հունվարի 1-ից: ԵՏՄ անդամ-պետությունների շրջանակներում համապատասխանաբար միմյանց տրամադրել են տարածքներ՝ բեռնափոխադրման ավարտից հետո մեկ «կաբոտաժային» փոխադրում իրականացնելու նպատակով, ինչի արդյունքում առավել արդյունավետ կդառնան միջպետական բեռնափոխադրումները, կկրճատվեն բեռնափոխադրման ծախսերը: Նախորդ տարվա համեմատ «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը չեն փոփոխվել:

Հաշվետու տարում ՀՀ-ում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի համակարգի պահպանման և սպասարկման ծախսերը կազմել են 23.8 մլն դրամ՝ 91.3%-ով ապահովելով ծրագրի

կատարումը: Շեղումը պայմանավորված է եվրոյի՝ ՀՀ կառավարության 2015 թվականի բյուջետային ուղերձում սահմանված և փաստացի փոխարժեքների տարբերությամբ: Ծրագրի շրջանակներում շարունակվում է «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» Եվրոպական համաձայնագրի պահանջներին համապատասխան ՀՀ-ում ներդրված հսկիչ սարքի (թվային տախոգրաֆի) համակարգի էլեկտրոնային կառավարումը: 2015 թվականի ընթացքում ՀՀ փոխադրողներին տրամադրվել է 130 թվային տախոգրաֆի քարտ՝ նախորդ տարվա 66-ի դիմաց: ՀՀ բեռնափոխադրող ընկերություններին տրամադրվել է 175 ՏՆԵԿ (Տրանսպորտի նախարարների եվրոպական կոմիտե) թույլտվություն, միջպետական 22 երթուղիների սպասարկման համար հայտարարվել է մրցույթ, իսկ երթուղիների սպասարկման համար 27 օտարերկրյա փոխադրողներին տրվել են 81 թույլտվություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 14.4%-ով կամ շուրջ 4 մլն դրամով, որը պայմանավորված է տարեկան սպասարկման գումարի նվազմամբ՝ ըստ գլխավոր պայմանագրի:

Հաշվետու տարում Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացմանը պետական աջակցության համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով շուրջ 3.3 մլրդ դրամ, որից 3.1 մլրդ դրամն օգտագործվել է բակերի և փողոցների ընթացիկ վերանորոգման, իսկ 149.8 մլն դրամը՝ ճաքալցման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը կազմել են 188.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նշենք, որ 2014 թվականին «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ին տրամադրվել էր 152.8 մլն դրամ սուբսիդիա՝ «Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.5%-ով կամ 35.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է կազմակերպության կողմից իրականացվող գործառույթների ընդլայնմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում *երկաթուղային տրանսպորտի* դասի ծախսերը կազմել են 573.9 մլն դրամ և ապահովել 91.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերն աճել են 7.2%-ով կամ 38.5 մլն դրամով, որը պայմանավորված է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց տրամադրված սուբսիդիայի աճով: Նշված ծախսերը կազմել են շուրջ 534.9 մլն դրամ՝ ապահովելով 90.9% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Հայաստանի Հանրապետության և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև կնքված կոնցեսիոն պայմանագրի համաձայն կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և

ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոների տարեկան վնասը անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում: Հաշվետու ժամանակաշրջանում կնքվել է կոնցեսիոն պայմանագրի փոփոխության երրորդ համաձայնագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.7%-ով կամ 38.4 մլն դրամով, որը պայմանավորված է նախորդ տարիներին առաջացած պարտքերի ամբողջությամբ մարմամբ:

Հաշվետու տարում շուրջ 39.1 մլն դրամի սուբսիդիա է հատկացվել «Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ին՝ կազմելով ծրագրված հատկացումների 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.3%-ով: Ծրագրի շրջանակներում 2013 թվականի հունվարի 18-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «ՌԱՍԻԱ» ՖՋԷ-ի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր՝ երկու երկրները իրար կապող երկաթուղու տեխնիկատնտեսական հիմնավորման, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, նախագծման և կառուցման նախապատրաստական փուլի վերաբերյալ: Կողմերը համագործակցելու են տեխնիկական, առևտրային, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, ինչպես նաև իրագործելիությանը և նախագծմանը վերաբերող այլ տեղեկատվության փոխանակման հարցում, որպեսզի կոնցեսիոներին հնարավորություն ընձեռվի կազմել Հայաստանի Հարավային երկաթուղու իրագործելիության լիարժեք ուսումնասիրություն:

2015 թվականին *օդային տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 77.8% կատարողական՝ կազմելով 647.1 մլն դրամ: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցներով իրականացվող ծախսերի գծով, որոնք 37.3%-ով զիջել են ծրագիրը՝ կազմելով 296.3 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ անհատ անձանց և կազմակերպություններին, հիմնականում՝ մշակույթի բնագավառի ներկայացուցիչներին, բարեգործական նպատակով նախատեսված օգնությունները նախատեսվածից պակաս են կազմել, ինչպես նաև նախատեսվածից քիչ միջոցներ են հատկացվել «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին ուսումնավարժանքային թռիչքների համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.9%-ով կամ շուրջ 14 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված գործուղումների և շրջագայությունների, պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման, շահույթ չհետապնդող կազմակերպություններին նվիրատվությունների և հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերի աճով:

243.8 մլն դրամ են կազմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պահպանման ծախսերը՝ ապահովելով ծրագրի 98%-ը, որը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 26.9%-ով կամ 51.7 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հաշվետու տարում մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աէրոնավիգացիոն սպասարկման, թռիչք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 8.5 մլն դրամ՝ ապահովելով 84.6% կատարողական, որը պայմանավորված է նախատեսված երեք չվերթի փոխարեն երկուսի կատարմամբ: Արդյունքում նշված ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 13%-ով կամ 1.3 մլն դրամով: Ծրագիրը նախատեսվել է «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության ու Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ մարդասիրական օդանավերի սպասարկման դիմաց փոխհատուցումների իրականացման համար:

ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 98.5 մլն դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16.9%-ով կամ 14.2 մլն դրամով:

2015 թվականին *խողովակաշարային և այլ տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 5.5 մլրդ դրամ՝ ապահովելով 95.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող երկու վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի և վերջինիս գծով Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր աղբյուրից ծախսվել է շուրջ 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով համապատասխանաբար 91.4% և 94.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ հիմնական կապալառուն հրաժարվել է պայմանագրով նախատեսված կանխավճարից: Ծրագրի շրջանակներում կատարվել են դրենաժային թունելի երկարացման և մետրոյի թունելների վերականգնողական աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 284.9 մլն դրամ: Այս ծրագրի 70.8% կատարողականը նույնպես պայմանավորված է պայմանագրով նախատեսված կանխավճարից հիմնական կապալառուի հրաժարվելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում կատարվել են հրշեջ սարքավորումների, մեքենավարների համար տրենաժորային համակարգի, վագոնների լվացման սարքավորումների նախագծման, մոնտաժման և մատակարարման աշխատանքներ:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի դասում ընդգրկված երկու ծրագրերը կատարվել են նախատեսված ծավալով: Մասնավորապես՝ 2.5 մլրդ դրամ սուբսիդիա է տրամադրվել Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2%-ով կամ 49.6 մլն դրամով:

590.8 մլն դրամ սուբվենցիա է տրամադրվել վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների շրջանակներում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 26.5%-ով կամ 123.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

2015 թվականին *կապի* ոլորտին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 391.3 մլն դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է և ուղղվել հեռահաղորդակցության ու կապի կանոնակարգման ծառայությունների ձեռքբերմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոեթերի մոնիթորինգի, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման գործառույթները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.1%-ով կամ շուրջ 4.4 մլն դրամով՝ պայմանավորված Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոնի «Գորիս» մասնաճյուղը ԼՂՀ-ին փոխանցելու հանգամանքով:

2015 թվականի ընթացքում *«Այլ բնագավառներ»* խմբի ծախսերը կազմել են ավելի քան 185.7 մլն դրամ՝ ապահովելով 98.6% կատարողական: Միջոցներն ուղղվել են զբոսաշրջության աջակցության ծառայություններին: Ծրագրից շեղումը պայմանավորված է նախատեսվածից ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռք բերման հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.1 անգամ կամ 125.9 մլն դրամով, որը պայմանավորված է զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցությամբ, ավելի շատ քանակով ավանդական տոնակատարությունների և փառատոների կազմակերպմամբ, ինչպես նաև զբոսաշրջային ոլորտում գովազդատեղեկատվական համակարգի զարգացմանն ուղղված աշխատանքների ընդլայնմամբ:

2015 թվականի ընթացքում *տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 122.5 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Խմբում ընդգրկված են 2 ծրագրեր: Մասնավորապես՝ տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններին հաշվետու տարում ՀՀ

պետական բյուջեից տրամադրվել է 42.4 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեությունն ուղղված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնածին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների ծախսերը կազմել են 80.1 մլն դրամ: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել:

2015 թվականին *այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների* գծով փաստացի ցուցանիշը կազմել է 698.1 մլն դրամ՝ 12.2%-ով գերազանցելով ծրագիրը, որը պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման և Բելգիական Քեյ Բի Սի Էն Վի բանկի աջակցությամբ իրականացվող ռադիոիզոտոպների արտադրության արտադրամասի ստեղծման վարկային ծրագրերի բարձր կատարողականով: Խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են ավելի քան 2.8 մլրդ դրամի ծախսեր՝ 2.8%-ով գերազանցելով ծրագիրը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է 2.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը նվազել են 73.3%-ով՝ հիմնականում պայմանավորված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորությունների կատարման գծով ծախսերի նվազմամբ, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի աճով: Հաշվետու տարում տվյալ խմբում կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 12 ծրագրեր, որոնցից երեքը՝ վարկային և մեկը դրամաշնորհային ծրագրեր են:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 398.5 մլն դրամ՝ 185.3%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է իրականացված շինարարական

աշխատանքների՝ նախատեսվածից ավել ծավալներով: Ծրագիրը սկվել է 2012 թվականին և ավարտվել 2015 թվականի մարտին: Ծրագրի նպատակն էր բարելավել աղքատ համայնքների և ամենախոցելի խմբերի համար համայնքային ենթակառուցվածքների որակն ու մատչելիությունը՝ ի արձագանք բացահայտվող կարիքների: Ծրագիրն ընդգրկում էր հանրակրթական, հատուկ, արվեստի, երաժշտական և մարզական դպրոցների, մանկապարտեզների, մանկատների, ծերանոցների, համայնքի հասարակական կենտրոնների, ջրային տնտեսության օբյեկտների և առողջապահական հիմնարկների կառուցում և վերանորոգում, նախատեսված էր նաև կահույքի ձեռքբերում դպրոցների, մանկապարտեզների և համայնքային կենտրոնների համար: Ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքները ՀՀ 8 մարզերի 11 օբյեկտներում, ՀՀ տարբեր մարզերի 20 դպրոցների, 4 հատուկ դպրոցների, 1 համայնքային կենտրոնի և 1 տուն-թանգարանի համար ձեռք է բերվել կահույք, բոլոր ընթացող շինարարական աշխատանքները վերահսկվել են տեխնիկական վերահսկիչների կողմից, ֆինանսավորվել են գրասենյակի գործառնական ծախսերը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տարածքային զարգացման հիմնադրամի վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են 611.6 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով 61.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է շինարարական աշխատանքները ուշ սկսելու հանգամանքով, քանի որ ՀԲ-ի հետ նախագծային պայմանագրերի կնքման ընթացակարգերի համաձայնեցումը տևել է նախատեսվածից ավելի երկար: Անավարտ օբյեկտների շինարարական աշխատանքները տեղափոխվել են 2016 թվական: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին և շարունակվելու է մինչև 2020 թվականի հունիսը: Ծրագրի նպատակը համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքի որակի և հասանելիության բարելավումն է: Ծրագիրն ընդգրկում է հետևյալ ոլորտները.

- կրթական, առողջապահական և սոցիալական ծառայություններ ապահովող հիմնական սոցիալական ենթակառուցվածքների (դպրոցներ, մանկապարտեզներ, առողջապահական կլինիկաներ, համայնքային կենտրոններ, մարզադահլիճներ և խաղահրապարակներ) կառուցում, վերանորոգում, հիմնանորոգում և (կամ) ընդլայնում,
- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեղադրում, հիմնանորոգում, ոռոգման և գյուղերում էլեկտրաֆիկացման աշխատանքների իրականացում:

Նախատեսված է նաև դպրոցներին, մանկապարտեզներին և համայնքային կենտրոններին ապահովել կահույքով: Ծրագրի շրջանակներում սկսվել են շինարարական աշխատանքները ՀՀ 7 մարզերի 9 օբյեկտներում, գնվել են համակարգչային սարքավորումներ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի համար, մշակվել է 15 նոր նախագիծ՝ նախատեսված 9-ի փոխարեն: Բոլոր ընթացող շինարարական աշխատանքները վերահսկվել են նախագծի հեղինակների և

տեխնիկական վերահսկիչների կողմից: Հիմնադրամի գրասենյակի տարածքի վերանորոգումը տեղափոխվել է 2016 թվական:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող տեղական ինքնակառավարման բարեփոխումների դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 3.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին և շարունակվելու է մինչև 2020 թվականի օգոստոսը: Ծրագրի նպատակը Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների միջոցով ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարմանը հասնելուն օժանդակելն է: Ծրագիրը նախատեսում է 14 խոշորացված համայնքային փնջերում, ըստ գերակայության սկզբունքի, ներդրումների կատարում համայնքային զարգացման համար, այդ թվում՝

- սոցիալական ենթակառուցվածքներ՝ կրթական, առողջապահական, մշակութային, սոցիալական նշանակության հաստատությունների կառուցում, վերակառուցում, վերանորոգում և գույքի տրամադրում,
- տնտեսական ենթակառուցվածքներ՝ խմելու և ոռոգման ջրամատակարարման համակարգերի, համայնքային և միջհամայնքային ճանապարհների կառուցում, վերակառուցում, վերանորոգում,
- սանիտարական և շրջակա միջավայրի պահպանության ենթակառուցվածքներ՝ կոյուղու ցանցերի, հեղեղատարների, հանգստի գոտիների բարեկարգում, վերանորոգում:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են վճարումներ հաշվապահական ոլորտում մատուցված ծառայությունների դիմաց, և գնվել են համակարգչային սարքավորումներ:

Բելգիական Քեյ Բի Սի Էն Վի բանկի աջակցությամբ իրականացվող ռադիոիզոտոպների արտադրության արտադրամասի ստեղծման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 317.5 մլն դրամ՝ 5 անգամ գերազանցելով նախատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է ծրագրի ավարտով: ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի «Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն ստեղծելու ծրագրին հավանություն տալու, «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 19-ի N 310-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1424-Ն որոշմամբ հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետությունում ռադիոիզոտոպների արտադրության համալիրից, պոզիտրոնային էմիսիոն տոմոգրաֆներով համալրված ախտորոշիչ կենտրոնից և ուռուցքաբանական կլինիկայից բաղկացած ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի ստեղծման ծրագրին: Նույն որոշմամբ Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի (այսուհետ՝ ՈՒԳՀԿ) ստեղծման ծրագրի շրջանակում հիմնադրվել է «Ռադիոիզոտոպների

արտադրության կենտրոն» ՓԲԸ-ն: ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 807-Ն որոշմամբ հավանություն է տրվել ՈՒԳՀԿ ստեղծման նորացված ծրագրին, որտեղ ներկայացված էր վերոնշյալ ծրագրի միասնական եռափուլ իրականացման մոտեցումը, համաձայն որի ծրագրի առաջին փուլում ստեղծվելու էր ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն՝ որպես ՈՒԳՀԿ բաղադրիչներից մեկը: ՈՒԳՀԿ ծրագրի երկրորդ փուլով նախատեսվում էր ստեղծել ճառագայթային բուժման կենտրոն (Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային ծրագրի շրջանակում), և երրորդ փուլում կառուցվելու էր ներհիվանդանոցային վիրաբուժության և քիմիաթերապիայի կենտրոն: Ծրագրի շրջանակներում իրականցվում են ռադիոիզոտոպների արտադրության արտադրամասի ստեղծման աշխատանքները, համապատասխան սարքավորումներն արդեն իսկ ներկրվել են Հայաստանի Հանրապետություն: 2015 թվականին ավարտվել են ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի կառուցման, ներքին հարդարման և համապատասխան ինժեներական համակարգերի ձեռքբերման, ինչպես նաև սարքավորումների տեղակայման և մոնտաժման աշխատանքները: 2016 թվականին նախատեսվում է սկսել կենտրոնի գործունեությունը:

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության գծով նախատեսված շուրջ 301.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.4%-ով կամ 1.1 մլն դրամով:

Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման ծախսերը ևս ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 269.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 27.7%-ով կամ 58.4 մլն դրամով:

Հաշվետու տարում նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը կազմել են 14.3 մլն դրամ կամ նախատեսվածի 55.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.7 անգամ կամ 9.1 մլն դրամով:

582.4 մլն դրամ են կազմել տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը՝ 96%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 27.1%-ով կամ 124.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Պետական պահուստից նյութական արժեքների թարմացման, փոխարինման, փոխառման և ապաամրագրման գործառնությունների գծով 2015 թվականին ոչ ֆինանսական ակտիվների

օտարումից ստացվել են 2.4 մլն դրամի արտաբյուջետային միջոցներ՝ 12.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը:

Ծախսերի այս խմբում ներառվել են «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կատարված հատկացումները: ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվել են 326.7 մլն դրամի ծախսեր: Նշված գումարից 279.7 մլն դրամը կազմել են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները, 47 մլն դրամը՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման գծով ծախսերը:

<u>Շրջակա միջավայրի պաշտպանություն</u>

2015 թվականին *շրջակա միջավայրի պաշտպանության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 5.7 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 100.7%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ 2015 թվականի ծախսերն աճել են 20.9%-ով կամ 978.4 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման և արտաքին աղբյուրներից ստացվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող որոշ ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու տարում *աղբահանության* գծով նախատեսված 34.7 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է և տրամադրվել է ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայությունների ձեռքբերմանը: Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, վնասազերծումը, պահպանումը և թաղումը, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունը իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 28.2%-ով կամ 13.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ անվտանգության

պահպանության համար հատկացվող միջոցները 2015 թվականին հանվել են «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ի բյուջեից և տրամադրվել ՀՀ ոստիկանությանը:

2015 թվականին *օդի աղտոտման դեմ պայքարի* դասի ծրագրերին ուղղվել է ավելի քան 170.9 մլն դրամ՝ 100%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ օդի աղտոտման դեմ պայքարի դասի ծախսերն ավելացել են 14.1%-ով՝ հիմնականում պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացման հանգամանքով:

Հատկացված գումարից 16.6 մլն դրամը թափոնների ուսումնասիրության ծառայությունների ֆինանսավորման նպատակով տրամադրվել է «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին, որի 2015 թվականի աշխատանքային ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել են ՀՀ տարածքում գործող 1136 կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների տվյալները՝ նախատեսված 1050-ի փոխարեն, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների ռեեստրի ստեղծման աշխատանքներին աջակցելու նպատակով ուսումնասիրվել են թափոնների գոյացման 20 օբյեկտ և թափոնների հեռացման 11 վայր, «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարմանն աջակցելու նպատակով «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի անալիտիկ լաբորատորիայում կատարվել են շրջակա միջավայրի օբյեկտներում՝ հողում, ջրում կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակների որոշում (ջրի 26 նմուշ՝ 390 վերջնական արդյունքով), ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում իրականացվել են թափոնների 679 անձնագրերի մշակման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն ավելացել են 17.6%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի իրականացմանն ուղղվել է 154.4 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին կատարվել են օդային ավազանի որակի դիտարկումներ օդի նմուշառման երեք եղանակով՝ պասիվ, ակտիվ և ավտոմատ: Պասիվ եղանակով նմուշառումներ են իրականացվել 234 դիտակետում, ակտիվ եղանակով նմուշառումներ՝ 17 ստացիոնար դիտակայանում, ավտոմատ եղանակով դիտարկումներ՝ Երևանի, Ալավերդու և Ամբերդի 7 կայանում: ՀՀ բնակավայրերի օդային ավազանի որակի մոնիթորինգի միջոցառումների շրջանակում որոշվել է 490731 ցուցանիշ: Մակերևութային ջրերի քիմիական որակի մոնիտորինգի աշխատանքներ են իրականացվել հանրապետության 41 գետի, Արփա-Սևան թունելի, Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան լճի և Սևանա լճի 131 դիտակետում, որտեղից վերցվել է ջրի 1004 փորձանմուշ, որոշվել՝ 40383 ցուցանիշ: Նախորդ տարվա համեմատ ջրային օբյեկտների և օդային ավազանի

աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծախսերն աճել են 13.7%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության դասի ծրագրերին ուղղվել է ավելի քան 3.2 մլրդ դրամ՝ 102.9%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի ծախսերում արձանագրվել է ծախսերի 15.4%-ով աճ՝ մասամբ պայմանավորված վերոհիշյալ վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով: Բացի այդ, 2015 թվականի ընթացքում ֆինանսավորվել են կենսաբազմազանության և բնության պաշտպանության դասի երեք ծրագրեր՝ ««Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող (ԲՀՊ) տարածքների պահպանության գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ծառայություններ» և «Ջրավազանային կառավարման պլանների կազմման ծառայություններ», որոնց գծով 2014 թվականին հատկացումներ նախատեսված չեն եղել:

2015 թվականին ձկան պաշարների համալրման ծառայությունների ծախսերը կատարվել են տարեկան ծրագրի 97.2%-ի չափով՝ պայմանավորված տնտեսումներով, և կազմել են 58.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին Սևանա լիճ է բաց թողնվել «Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների գիտահետազոտական ինստիտուտ» ՍՊԸ-ի կողմից աճեցված 366.7 հազ. հատ մանրաձուկ:

Սևանա լճի ջրածածկ անտառատնկարկների մաքրման ծառայություններին ուղղվել է 125.4 մլն դրամ՝ 100%-ով կատարելով ծրագիրը: 2015 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են 142.5 հա տարածքի մաքրման աշխատանքներ, այդ թվում՝ 57.5 հա՝ Նորատուսի տարածքում և 85.0 հա՝ Վարդենիսի տարածքում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

2015 թվականին «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար նախատեսված 267.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների գծով 2015 թվականի պետական պատվերով ծրագրված միջոցառումները: 2014 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 18.9%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի աճով:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված

137.3 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: «Դիլիջան» ազգային պարկում հաշվետու տարում իրականացված անտառվերարտադրության աշխատանքների շրջանակներում տնկվել է 5.0 հա անտառ, կատարվել է 3.0 հա վրա անտառի լրացում, 17.0 հա վրա անտառի միանվագ խնամք, 450.0 կգ անտառային սերմերի մթերում և 4.0 հա անտառի ցանքս: Պահպանության ռեժիմն ուժեղացնելու նպատակով կառուցվել է 10 նոր ուղեփակոց: Անտառպահպանական աշխատանքների շրջանակներում իրականացվել է 5 կմ հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում, 8 կմ հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում, 2.0 կմ հանքայնացված շերտերի կառուցում: Կատարված անտառտնտեսավարման աշխատանքների շրջանակներում իրականացվել է 1809.2 խմ փայտանյութի իրացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 46.5%-ով, ինչը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության, տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների գծով հատկացվել է 134.1 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2015 թվականին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինման ներքո գտնվող ԲՀՊ տարածքներում կատարվել են ծրագրային աշխատանքներ, այդ թվում՝ Ստեփանավանի «Սոճուտ», Իջևանի «Դենդրոպարկ», Բերդի «Սորաններ», Վանաձորի «Սարուխանյան Ժ. անվան» դենդրոպարկերում, «Ջրվեժ» անտառպարկում, «Էրեբունի» պետական արգելոցում և «Որդան կարմիր» արգելավայրում իրականացվել են պահպանության, պաշտպանության և գիտական ուսումնասիրության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.1%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների իրականացման նպատակով հատկացվել է 120.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հաշվետու տարում «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը հիմնականում նպատակաուղղված է եղել պետական արգելոցի տնօրինման տակ գտնվող արգելավայրերի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության ու բնության ժառանգության պահպանության աշխատանքներին: Իրականացվել է 7.5 կմ հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում: Տեսա և ֆոտոբռնիչների օգնությամբ շարունակվել են կենդանական աշխարհի (լուսան, արջ, գայլ, վայրի խոզ և բեզոարյան այծ) միգրացիայի և հաշվառման աշխատանքները: Նախորդ

տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 22.1%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից 44.5 մլն դրամ է հատկացվել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ծառայություններին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում փորձաքննության են ներկայացվել թվով 168 նախատեսվող գործունեությունների և հիմնադրույթային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր:

2015 թվականին «Ջրավազանային կառավարման պլանների կազմման ծառայություններին» ուղղվել է 49.3 մլն դրամ՝ 96.3%-ով ապահովելով տարեկան նախատեսված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից պետական բյուջեի շրջանակներում մշակվել են Արարատյան դաշտի ջրավազանային կառավարման պլանների նախագծերը: Նախորդ տարի նշված նպատակով 20 մլն դրամի չափով միջոցներ էին հատկացվել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են 2.1 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 105.7% կատարողական: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է կատարված փաստացի աշխատանքների ծավալով: Հայաստանի Հանրապետության և Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի միջև Արփա-Սևան թունելի վերականգնման ծրագրի ֆինանսավորման վարկային համաձայնագիրը կնքվել է 2007 թվականի դեկտեմբերի 12-ին: Ծրագրի իրականացման ժամկետ է սահմանված մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագրի նպատակն է գետերից ջրի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով Սևանա լիճ ջուր տեղափոխող 48 կմ երկարությամբ Արփա-Սևան հիդրոհամակարգային որոշ հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը: 2015 թվականի ընթացքում իրականացվել են 304.79 գծմ երեսակների վերանորոգման և 1934.13 քմ տորկրետի ու լցամղման աշխատանքներ:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանության ծառայություններին հատկացվել է 41.7 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են անփոփոխ:

2015 թվականին «Զիկատար» պետական արգելավայրի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված 15.5 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի

կողմից 2015 թվականին իրականացվել են «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերի 1.5% աճը նույնպես պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծառայությունների նպատակով նախատեսված 7.1 մլն դրամ ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Հատկացված միջոցների հաշվին ՀՀ բնապահպանության նախարարության և «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի միջև կնքված պայմանագրի համաձայն իրականացվել են մասնաճյուղի գրասենյակի վարձակալության և կոմունալ ծառայությունների վճարման ծախսերը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 4.2%-ով:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված շուրջ 133.0 մլն դրամ ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության տարածքներում ուսումնասիրվել են ողնաշարավոր կենդանիների որոշ տեսակների (հայկական մուֆլոն, բեզոարյան այծ, գորշ արջ, եվրոպական այծյամ, փորսուղ, եվրոպական նապաստակ, գայլ, անտառային կատու և այլն) կենդանատեսակների ինչպես ձմեռային կենսակերպը, այնպես էլ սեզոնային փոփոխությունների հետ կապված նրանց միգրացիան, տարիքային և քանակային կազմը: 2014 թվականին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի պետական արգելոցի պահպանության ծառայություններ ծրագրի ֆինասավորումն իրականացվել էր ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին:

2015 թվականին Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ֆինանսավորման նպատակով ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության սերմնարտադրության զարգացման ծրագրի իրականացման գործընթացի ապահովման նպատակով բացված արտաբյուջետային հաշվի մնացորդից 18.0 մլն դրամ գումար է հատկացվել ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին: Միջոցները 2015 թվականին չեն օգտագործվել, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մրցույթի գործընթացը չի ավարտվել, և աշխատանքները տեղափոխվել են 2016 թվական:

2015 թվականին *այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության* դասի ծախսերը կազմել են 2.2 մլրդ դրամ կամ ծրագրվածի 97.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ներառված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Օժանդակության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը՝ հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով Ինստիտուցիոնալ զարգացման հիմնադրամի (ԻԶՀ) դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 32.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի աճով, որոնք կազմել են շուրջ 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.5%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 23%-ով կամ 256.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար հաշվետու տարում ՀՀ համայնքներին տրամադրվել է 292.8 մլն դրամ սուբվենցիա, որը կազմել է ծրագրվածի 98.6%-ը: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի կատարման շրջանակներում բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաներ են հատկացվել 14 համայնքների: Հատկացումները 2014 թվականի համեմատ աճել են 22.5%-ով կամ 53.8 մլն դրամով:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 20.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել են ՀՀ բնապահպանության նախարարության տեղային համակարգչային ցանցի և առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային ու տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների ծախսերն աճել են 9.1%-ով՝ պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի ծառայություններին 2015 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 44.8 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2015 թվականի ընթացքում

քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոերկրաբանական մշտադիտարկումներ են կատարվել ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքներում ընդգրկված 128 ստորերկրյա ջրաղբյուրներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3 անգամ՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ և կատարված աշխատանքների ծավալների աճով:

Հաշվետու տարում 76.7 մլն դրամ էր նախատեսվել ՀՀ բնապահպանության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով, որի տարեկան ծրագիրը կատարվել է 97.4%-ով և կազմել 74.7 մլն դրամ՝ հիմնականում պայմանավորված թափուր հաստիքների առկայությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 45.7%-ով՝ հիմնականում պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ազգային կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման և կոնվենցիայի ներկայացվելիք՝ Հայաստանում կենսաբանական բազմազանության մասին 5-րդ ազգային հաշվետվության կազմման դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 50.7 մլն դրամ կամ նախատեսվածի 98.1%-ը: Ծրագրի շրջանակներում մշակվել, տպագրվել և «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի քարտուղարությանն է ներկայացվել Կոնվենցիայի իրականացման մասին հինգերորդ ազգային զեկույցը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Օժանդակություն ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը՝ հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով ԻԶՀ-ի դրամաշնորհային ծրագիրը կատարվել է 90.3%-ով կամ 146.1 մլն դրամի չափով: Ծրագրի շրջանակներում Երևանում, Ալավերդիում և Կապանում կազմակերպվել են ՇՄԱԳ (Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման) և ՀԱԳ (Հանքարդյունաբերության ազդեցության գնահատման) ուղեցույցների կիրարկման իրազեկվածության բարձրացման դասընթացներ, հանքարդյունահանման գործունեության ազդակիր խոցելի համայնքների վերահսկման կարողությունների ուժեղացմանը նվիրված ուսուցողական այց Լեհաստան, որին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության, «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի, ՀՀ Սյունիքի և Լոռու մարզպետարանների, Քաջարանի և Ախթալայի քաղաքապետարանների ներկայացուցիչները:

2015 թվականին Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ազգային պորտֆելի ձևավորման վարժություն» դրամաշնորհային ծրագրի գծով ծախսերը կազմել են 7.5 մլն դրամ և ապահովել տարեկան ծրագրային ցուցանիշի 95.3% կատարում: Ծրագրի շրջանակներում ավարտվել է «Ազգային

պորտֆելիո ԳԷՀ-6» փաստաթղթի մշակումը, որը տպագրվել է և ներկայացվել «Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի հետ համագործակցության հանձնաժողովի» հոկտեմբերի 9-ի նիստի քննարկմանն ու արժանացել հավանության:

ՄԱԿ-ի ՇՄ ծրագրի և Դանիայի տեխնիկական համալսարանի համագործակցության կենտրոնի աջակցությամբ իրականացվող «Տեխնոլոգիաների կարիքների գնահատում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում հաշվետու տարում կատարվել են 16.3 մլն դրամ ծախսեր՝ 71.5%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Վճարումների մնացած մասը նախատեսվում է իրականացնել 2016 թվականին: Ծրագրի շրջանակներում ներկայացվել և ընդունվել է կլիմայի գլոբալ փոփոխության մեղմման և հարմարվողականության կիզակետային ոլորտներով Հայաստանի համար առաջնային 6 սեկտորների ցանկը, ինչպես նաև կլիմայի գլոբալ փոփոխության մեղմման և հարմարվողականության տեխնոլոգիաների մշակման ջրային և թափոնների կառավարման ոլորտներում 16 նոր տեխնոլոգիաներ: Շահառու կազմակերպությունների և խմբերի հետ իրականացվել է ՀՀ–ում կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության կարիքների գնահատման վերաբերյալ սեմինար:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 172.8 մլն դրամ կամ նախատեսվածի 98.1%-ը: ՀՀ բնապահպանության նախարարության և KfW-ի կողմից «Արփի Լիճ» ազգային պարկի պահպանման գոտու տնտեսական զարգացման պլանից առաջնահերթության և ծրագրով առկա միջոցների նկատառումով ընտրված և հաստատված ներդրումների հետևյալ ուղղությունների շրջանակներում իրականացվել են.

- «Հինգ համայնքներում՝ Բերդաշեն, Գառնառիճ, Շաղիկ, Մեծ Սեպասար և Սիզավետ, զարգացման առաջնահերթ փոքր ծրագրերի իրականացում» ծրագրով նախատեսված միջոցառումները.
- «Տեղական անասնապահության և մսի արտադրության բարելավում» ծրագրի շրջանակներում «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի՝ բաղադրիչն իրականացնող կազմակերպության հետ կնքվել է իրագործելիության ուսումնասիրության և բիզնես պլանի մշակման պայմանագիր.
- «Մեղվապահություն և մեղրի արտադրության բարելավում» ծրագրի իրականացման աշխատանքներում ներգրավվել է համաֆինանսավորող կազմակերպություն՝ ՄԱԿ-ի ԳԷՀ փոքր դրամաշնորհների ծրագիրը.
- «Համայնքներում խմելու ջրի մատակարարում» ծրագրի շրջանակներում իրականացվել են 11 համայնքների առկա ջրամատակարարման համակարգերի և կառուցվածքների վերակառուցման աշխատանքներ:

Ծրագիրն ավարտվել է 2015 թվականի հոկտեմբերի 30-ին:

<u>Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ</u>

2015 թվականին *բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 39.2 մլրդ դրամ՝ 14.6%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է ջրամատակարարման ոլորտում արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի կատարողականով: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերը 25.3%-ով կամ 7.9 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Բնակարանային շինարարությանը 2015 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 6.6 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2 մլրդ դրամ է կազմել Երևան համայնքին 4-րդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածությունից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերման նպատակով տրամադրվող պետական աջակցությունը: Ծրագրի շրջանակներում վերոնշյալ բնակիչներն ապահովվել են 235 բնակարանով:

Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրին տրամադրվել է 4.6 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում պետական ծառայող հանդիսացող շահառուներին տրամադրվում են բնակարաններ բազմաբնակարան շենքային համալիրում՝ շուկայականից ցածր գներով և հիփոթեքային վարկերի արտոնյալ պայմաններով:

Բաժնի ծախսերի 75.1%-ն ուղղվել է *ջրամատակարարման* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 29.5 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 120.4%-ը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 3%-ով:

Հաշվետու տարում 248.7 մլն դրամ է տրամադրվել ջրային տնտեսության ոլորտում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը, որը հատկացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին: Նշված ծախսերը կատարվել են 98.9%-ով, ինչը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 35.4%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի՝ խմելու ջրի մատակարարման ծառայությունների արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի սուբսիդավորման նպատակով նախատեսված 2.2 մլրդ դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 40.3%-ով

կամ 623.4 մլն դրամով, ինչը պայմանավորված է 2015 թվականին վարկերի՝ մարման ենթակա մայր գումարների աճով, ինչպես նաև էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության արդյունքում առաջացած ֆինանսական ճեղքվածքի մարման համար նախատեսված սուբսիդիան նույնպես ամբողջությամբ տրամադրվել է՝ կազմելով 299.6 մլն դրամ: «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականին 233.3 մլն դրամ է հատկացվել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից տրամադրված վարկի մայր գումարի մարման նպատակով: 2014 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 14.8%-ով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հետ կապված «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության արդյունքում առաջացած ֆինանսական ճեղքվածքի աճով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման երրորդ վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են ավելի քան 2 մլրդ դրամի ծախսեր՝ 51.8%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ծրագիրն ավարտելու նպատակով պայմանագրով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի աշխատանքների կատարման հիմնական փուլը սկսվել է 2013 թվականին: 2015 թվականին Մասիս, Աշտարակ, Էջմիածին քաղաքներում և հարակից գյուղերում ամբողջությամբ կատարվել են ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցման ու վերանորոգման աշխատանքները: Ծրագիրը 2015 թվականի հունիսին ավարտվել է:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի (Գյումրու) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարվել են 1.7 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 111.1%-ը: Շեղումը պայմանավորված է շինարարական աշխատանքների ծավալների պատվերների փոփոխությամբ, ինչպես նաև նրանով, որ կատարվել են վճարումներ նախորդ տարիների ընթացքում ավարտված շինարարական աշխատանքների դիմաց վճարման ենթակա բանկային երաշխիքի և հետավարտական երաշխիքային գումարների գծով: Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի երկրորդ փուլի աշխատանքներն սկսվել են 2010 թվականի սեպտեմբեր ամսից, որը համարվում է առաջին փուլի շարունակությունը: 2015 թվականին կառուցվել են շուրջ 82 կմ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցեր, տեղադրվել են 2474 տնային դիտահորեր: «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ծրագրի շրջանակներում ավարտված աշխատանքների արդյունքում նոր վերականգնված գոտիներում ապահովվել է շուրջօրյա ջրամատակարարում, իսկ հին գոտիներում ջրամատակարարման օրական միջին տևողությունը կազմել է 18.6 ժամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի (Գյումրի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 1-ին փուլի դրամաշնորհային միջոցների ազատ մնացորդի հաշվին նախատեսված 36.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: 2015 թվականին կատարվել են վարկային և դրամաշնորհային ծրագրի 1-ին փուլի շրջանակներում ավարտական շինարարական աշխատանքների դիմաց բանկային երաշխիքների և ետերաշխիքային գումարների վճարումները:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու (Վանաձորի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարվել են 450.7 մլն դրամի ծախսեր, որոնք կազմել են ծրագրային ցուցանիշի 30.6%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ հիմնականում կատարվել են վճարումներ նախորդ տարիների ընթացքում ավարտված շինարարական աշխատանքների դիմաց վճարման ենթակա բանկային երաշխիքի և հետավարտական երաշխիքային գումարների մասով՝ ըստ ներկայացված բանկային երաշխիքների և հետավարտական երաշխիքների: Գերմանիայի զարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի երկրորդ փուլն ուժի մեջ է մտել 2010 թվականի սեպտեմբեր ամսից և համարվում է առաջին փուլի շարունակությունը: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին կառուցվել են շուրջ 97.7 կմ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանց և շուրջ 65.9 կմ ընդհանուր երկարությամբ տնային միացում: «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ծրագրի շրջանակներում ավարտված աշխատանքների արդյունքում նոր վերականգնված գոտիներում ապահովվել է շուրջօրյա ջրամատակարարում, իսկ հին գոտիներում ջրամատակարարման օրական միջին տևողությունը կազմել է 19.6 ժամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 1-ին փուլի դրամաշնորհային միջոցների ազատ մնացորդի հաշվին կատարվել է 193.5 մլն դրամի ծախս՝ 5.4 անգամ գերազանցելով նախատեսված ցուցանիշը: 2015 թվականին կատարվել են վարկային և դրամաշնորհային ծրագրի 1-ին փուլի շրջանակներում ավարտական շինարարական աշխատանքների դիմաց բանկային երաշխիքների և ետերաշխիքային գումարների վճարումները:

2015 թվականին Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 8.4 մլրդ

դրամի ծախսեր՝ 2.4 անգամ գերազանցելով ծրագրային ցուցանիշը, որը պայմանավորված է ծրագրվածից ավել աշխատանքների կատարմամբ (ջրագծերի, դիտահորերի նորոգում, պողպատյա խողովակների ձեռքբերում): Ծրագրի շրջանակներում կատարվել են նաև Երևան քաղաքի ջրամատակարարման ու ջրահեռացման ծրագրերի գծով աշխատանքների նախագծման, մրցութային փաթեթի նախապատրաստման և մրցույթի հայտարարման աշխատանքներ:

Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի շրջանակներում ծախսվել է 3.8 մլրդ դրամ՝ 2.7%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը: Այն ֆինանսավորվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրամիության և Եվրոպական ներդրումային բանկի կողմից տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին: Եվրամիության աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը 2015 թվականին կազմել են 1.5 մլրդ դրամ՝ 10.3%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը, ինչը պայմանավորված է փաստացի կատարված աշխատանքներով: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերը կատարվել են 100.7%-ով՝ կազմելով 737.9 մլն դրամ: Ծրագրի կատարողականը պայմանավորված այն հանգամանքով, որ, վարկային համաձայնագրի պայմանների համաձայն, աշխատանքների իրականացումը փոխկապակցված է Եվրամիության և Եվրոպական ներդրումային բանկի ծրագրերի կատարման հետ: Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի շրջանակներում կատարվել են 1.4 մլրդ դրամի ծախսեր՝ 99.4%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 150.2 մլն դրամ կամ ծրագրվածի 78.3%-ը՝ պայմանավորված կատարված աշխատանքների ծավալով: 2015 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ Բյուրեղավան, Աբովյան, Սևան, Դիլիջան, Տաշիր, Ճամբարակ, Սպիտակ, Ջրաշեն, Ախթալա Արթիկ, Ջերմուկ, Իջևան քաղաքներում, ինչպես նաև՝ 2 կոյուղու մաքրման կայանների կառուցում Դիլիջան և Ջերմուկ քաղաքներում: Ծրագիրը 2015 թվականի դեկտեմբերին ավարտվել է:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում ծախսվել է 6.1 մլրդ դրամ՝ 2.3 անգամ գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ աշխատանքներն ընթացել են արագ տեմպերով: Հաշվետու տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում կնքվել են շինարարական աշխատանքների թվով 6 պայմանագրեր, որոնց շրջանակներում կատարվել են 3.3 մլրդ դրամ գումարի աշխատանքներ: ՀՀ Արմավիրի, Արարատի,

Կոտայքի, Լոռու, Տաշիրի, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի, Շիրակի և Արագածոտնի մարզերում 2015 թվականի ընթացքում կառուցվել են մոտ 332 կմ ջրատարներ, ներքին ցանցեր, տան մուտքագծեր, ինչպես նաև 10630 հատ ջրաչափական հորեր:

Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին ծախսվել է 316.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 87.8%-ը:

Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 74.9 մլն դրամի դիմաց ծախսվել է 288.7 հազ. դրամ: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ կապալի պայմանագրերն ուժի մեջ են մտել ուշացումով:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիրը կատարվել է 200.7 մլն դրամի չափով, կամ նախատեսվածից 74.7%-ով ավելի՝ պայմանավորված փաստացի կատարված աշխատանքների ծավալով: Ծրագրի շրջանակներում կատարվել են բակային պոմպերի նախագծման, գնման և տեղադրման աշխատանքներ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի գծով նախատեսվել է 74.9 մլն դրամ, որի դիմաց ծախսերը կազմել են 15.0 մլն դրամ: Ծրագրի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ կապալի պայմանագրերն ուժի մեջ են մտել ուշացումով:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 100.1 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 105% կատարում՝ պայմանավորված փաստացի կատարված աշխատանքների ծավալով: Ծրագրի շրջանակներում կանխավճար է հատկացվել մրցութային և նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման համար:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման շարունակականության ապահովման դրամաշնորհային ծրագրի գծով արձանագրվել է 104.8% կամ 1.7 մլրդ դրամ կատարողական: 2014 թվականին Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և ՀՀ-ի միջև ստորագրվել է Հայ-Գերմանական ֆինանսական համագործակցության «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II- Փուլ 3» դրամաշնորհային

համաձայնագիրը 2.1 մլն և 3.0 մլն եվրո գումարների չափով, որը կտրամադրվի KfW բանկի կողմից ԵՄ ՀԼԾ (Եվրամիության Հարևանության ներդրումային ծրագրի) աջակցությամբ: Ծրագրի նպատակն է՝ ապահովել «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման շարունակականությունը: Դրամաշնորհային համաձայնագրին կից առանձին համաձայնագիրը ստորագրվել և ուժի մեջ է մտել 2014 թվականի նոյեմբերի 13-ից, որի հիման վրա 2014 թվականի հունիս ամսից ներկայացված հայտերի գումարները՝ 1163.6 հազ. եվրոյի չափով, KfW բանկի կողմից ֆինանսավորվել են 2015 թվականի հունվարին: ՀՀ կառավարության համաֆինանսավորման գումարների հաշվին ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից մարվել են Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտ և ռեզիդենտ համարվող «Էմ Վի Վի դեկոն Ջի Էմ Բի Էյջ, Էն Վի Վի Էներջի Էյ Ջի, Էյ-Ի-Ջի Սերվիս ՍՊԸ և «ՍԱՈՒՌ» Ս.Ա.Ս» ընկերությունների կոմսորցիումի անդամների ԱԱՀ-ի և շահութահարկի դիմաց առաջացած պարտավորությունները:

2015 թվականին նախատեսված ամբողջ ծավալով կամ 1 մլրդ դրամ հատկացվել է «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորման նպատակով, որն ուղղվել է Գերմանիայի զարգացման բանկի աջակցությամբ իրականացված «Շիրակի (Գյումրի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում (1-ին և 2-րդ փուլեր)» վարկային ծրագրերի շրջանակներում կնքված ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկի մայր գումարի մարմանը:

Նախատեսված չափով՝ 756.9 մլն դրամ միջոցներ են հատկացվել «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին՝ խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորման նպատակով, որն ուղղվել է Գերմանիայի զարգացման բանկի աջակցությամբ իրականացված «Լոռի (Վանաձոր) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում (1-ին և 2-րդ փուլեր)» վարկային ծրագրերի շրջանակներում կնքված ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկի մայր գումարի մարմանը:

2015 թվականին Ֆրանսիական Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսերը կազմել են 13.8 մլն դրամ: Ծրագիրը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով: Հատկացված գումարը ծախսվել է վարկային ծրագրի իրագործելիության որոշման ծախսերի կատարման նպատակով:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարար ընկերությունների կողմից չսպասարկվող համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավմանն ու զարգացմանն ուղղված կիրառելիության ուսումնասիրության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել է շուրջ 107.0 մլն դրամի ծախս՝

ապահովելով ծրագրի 100%-ով կատարում: Հայաստանի Հանրապետության մոտ 560 գյուղական համայնքներ գտնվում են ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքից դուրս: Նշված համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման նպատակն է գտնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործման և պահպանման ինստիտուցիոնալ լուծումներ, հստակեցնել իրավական դաշտի փոփոխումների ուղղությունները, ինչպես նաև իրականացնել անհրաժեշտ ներդրումների գնահատումն ու առաջնահերթության սահմանումը: Հայաստանի Հանրապետության և KfW բանկի միջև ստորագրված դրամաշնորհային համաձայնագրի հիման վրա տրամադրվել է 500 հազ. եվրո գումարի դրամաշնորհ՝ բնակավայրերում առաջին անգամ լայնածավալ ուսումնասիրություններ իրականացնելու համար: 2015 թվականին ավարտվել է խորհրդատուի կողմից իրականացված ուսումնասիրությունների հիման վրա նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքները, որի հիման վրա «Կոմունալ ենթակառուցվածք Ծրագիր II – Փուլ 3» վարկային և դրամաշնորհային համաձայնագրերի շրջանակներում KFW բանկի կողմից տրամադրվող գումարների հաշվին նախատեսվում է սկսել շինարարական աշխատանքները:

«Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-Ջրմուղկոյուղի», «Լոռի-Ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգման ծրագրերի շրջանակներում, որոնք նախատեսվել է իրականացնել Եվրոպական ներդրումային բանկի, Եվրոպական հարևանության ներդրումային բանկի և Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ, 2015 թվականին պետական բյուջեով հատկացված միջոցները՝ 3.5 մլրդ դրամի չափով, չեն օգտագործվել: Միասնական ծրագրի արժեքն է 67.5 մլն եվրո, որից KfW բանկի վարկի միջոցներից՝ 30.0 մլն եվրո, Եվրոպական ներդրումային բանկի վարկ՝ 25.5 մլն եվրո և այլ ներդրողների միջոցներից՝ 12.0 մլն եվրո: Ծրագրերի առանձին համաձայնագրերը ստորագրվել են 2015 թվականի դեկտեմբերի 8-ին, և ծրագրի իրականացումը տեղափոխվել է 2016 թվական:

2015 թվականին պետական բյուջեի ծախսերի՝ փողոցների լուսավորման խմբում համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման համար նախատեսված 2.2 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 13.2%-ով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Այլ դասերին չպատկանող բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 906.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 98.4%-ը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 24.8%-ով՝ պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման

մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի աճով: Ծրագրի շրջանակներում 728.3 մլն դրամ է տրամադրվել ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանմանը՝ 98.9%-ով ապահովելով տարեկան ծրագրային հատկացումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 34.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2014 թվականի հուլիսի 1-ից պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաշվետու տարում 178.2 մլն դրամ է տրամադրվել ՀՀ քաղաքաշինության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով, որից 152.5 մլն դրամը հատկացվել է պետական բյուջեի, 25.7 մլն դրամը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին: Նշված ծախսերը կատարվել են համապատասխանաբար 95.9%-ով և 98.8%-ով՝ պայմանավորված գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով:

<u>Առողջապահություն</u>

2015 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով *առողջապահության* ոլորտում կատարվել են շուրջ 86.1 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի 99.8%-ը:

Բաժնի ծախսերի 46.5%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 32.5%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 12.1%-ը՝ այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի, 6.2%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը և 2.7%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը: 2014 թվականի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 12.3%-ով կամ 9.4 մլրդ դրամով՝ պայմանավորված հիվանդանոցային, արտահիվանդանոցային ծառայությունների և այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերի աճով:

Հաշվետու տարում *դեղագործական ապրանքների* ձեռքբերման ծախսերը կազմել են ավելի քան 2.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 92.9% կատարողական:

Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման նպատակով ծախսվել է շուրջ 2.3 մլրդ դրամ՝ 93%-ով ապահովելով ծրագիրը: Միջոցներն օգտագործվել են սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված ազգաբնակչությանը դեղորայքով ապահովելու նպատակով: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 7.6%-ով՝ պայմանավորված բուժօգնություն ստացողների և հատուկ խմբերում ընդգրկված անձանց թվի աճով: 2015 թվականին անվճար և արտոնյալ պայմաններով դեղ ստացող հիվանդների թիվը կազմել է 163000՝ 2014

թվականի 146700-ի համեմատ աճելով 11.1%-ով: Մասնավորապես՝ հակադիաբետիկ դեղեր ստացող՝ շաքարային դիաբետով տառապող 12500 հաշվառված հիվանդների դեղապահովումը 2014 թվականին կազմել է 50%, իսկ 2015 թվականին հաշվառված 13000 հիվանդների դեղապահովումը՝ 80: 2015 թվականին մեկնարկել է մանկական ինսուլինային ծրագիրը, որի արդյունքում 0-22 տարեկան տարիքային խմբում ընդգրկված հիվանդներն ապահովվում են ինսուլինային գրիչներով, նորագույն ինսուլիններով, արյան մեջ գլյուկոզայի որոշման համար անհրաժեշտ սարքերով և թեստ երիզներով:

Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման նպատակով հատկացվել է 1.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող իմունականխարգելման ազգային ծրագրի ծառայությունների աջակցության դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 40.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 87.7% կատարողական, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի նպատակն է իմունականխարգելման ոլորտում ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը, մասնագիտական կարողությունների զարգացումը, հանրության իրազեկումը կառավարելի վարակիչ հիվանդությունների (այդ թվում՝ նաև պնևմակոկային վարակների) կանխարգելման գործում պատվաստումների կարևորության և անհրաժեշտության, ինչպես նաև բուժաշխատողների իրազեկումը նոր կառավարելի վարակիչ հիվանդությունների՝ պնևմակոկային վարակների կանխարգելման միջոցների մասին: Ծրագրի շրջանակներում ներդրումներ են կատարվել առողջապահական կազմակերպություններում՝ ձեռք են բերվել սառնարան-մեքենա, համակարգչային սարքեր, բազմաֆունկցիոնալ տպիչ (սկաներ) պատճենահանող սարք, սեղանի համակարգիչներ և այլն: Ծախսերի աճը 2014 թվականի համեմատ կազմել է 133%՝ պայմանավորված ներդրումների և կատարված աշխատանքների ծավալով:

2015 թվականի պետական բյուջեից *արտահիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերմանը տրամադրվել է 28.0 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.2%-ով կատարում: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 37.2%-ը կամ ավելի քան 10.4 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների, 28.3%-ը կամ 7.9 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական ծառայությունների, 3.1%-ը կամ 882.1 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 31.3%-ը կամ շուրջ 8.8 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը:

Արտահիվանդանոցային ծառայությունների խմբում ընդգրկված *ընդհանուր բնույթի բժշկական* ծառայությունների դասի ծախսերը կատարվել են 99.7%-ով և կազմել 10.4 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է գյուղական բնակավայրերում բժիշկ մասնագետների բացակայությամբ, ինչպես

նաև սպասարկման տարածքի բնակչության առավելագույն թվաքանակի գերազանցմամբ, որի պայմաններում ֆինանսավորումն իրականացվում է հաստատված գնի 80 տոկոսի չափով: Միջոցներն ուղղվել են բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայությունների ֆինանսավորմանը: Ծրագրի շրջանակներում տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժամանկաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի կողմից բժշկական օգնություն և սպասարկում է իրականացվել հանրապետության ամբողջ ազգաբնակչությանը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվել է շուրջ 1.2 մլրդ դրամ ընդհանուր արժեքով դեղորայք: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 12%-ով կամ 1.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Ավելի քան 7.9 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված բժշկական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ 98.4%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը և 13.8%-ով կամ 960.4 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայությունների ձեքբերման համար հատկացվել է 249.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել շուրջ 2150 հաշմանդամ երեխաների՝ նախորդ տարվա 2000-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 6.8%-ով:

Հեմոդիալիզի անցկացման ծառայությունների ծախսերը 2015 թվականին կազմել են 1.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.6% կատարողական, որը կապված է առանձին կազմակերպություններում բժշկական օգնության դեպքերի քանակի հետ: Այս ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2015 թվականին իրականացվել է 107.2 հազար սեանս՝ 2014 թվականի 100.3 հազար սեանսի դիմաց: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 6.9% կամ 124.4 մլն դրամ:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններին 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 1.5 մլրդ դրամ՝ 97.3%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը, որը պայմանավորված է առանձին կազմակերպություններում բժշկական օգնության դեպքերի քանակով: Ծրագրի շրջանակներում նախածննդյան և հետծննդյան հսկողություն է իրականացվել հանրապետության շուրջ 50.0 հազար հղիների նկատմամբ՝ նախորդ տարվա 49.4 հազարի փոխարեն, ինչպես նաև բուժօգնություն են ստացել գինեկոլոգիական հիվանդություններով կանայք: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 9.8%-ով կամ 131.5 մլն դրամով՝

հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և բուժօգնության դեպքերի աճով:

Հաշվետու տարում սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայությունների համար նախատեսված 94.3 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ օգտագործվել է, որը տրամադրվել է «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 12.7%-ով կամ 10.6 մլն դրամով, ինչը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններին տրամադրվել է 139 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում դիսպանսերային հսկողություն է իրականացվել շուրջ 1300 հիվանդների նկատմամբ, ինչպես նաև հիվանդների հայտնաբերման նպատակով իրականացվել է շուրջ 37.4 հազար հետազոտություն՝ 2014 թվականի 64.9 հազարի դիմաց: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 5.2%՝ հիմնականում պայմանավորված բժշկական և սպասարկող անձնակազմի աշխատավարձերի բարձրացմամբ:

Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 3.9 մլրդ դրամ՝ 99.1%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է մարզային պոլիկլինիկաներում նեղ մասնագետների բացակայությամբ, ինչպես նաև սպասարկման տարածքի բնակչության առավելագույն թվաքանակի գերազանցմամբ, որի պայմաններում ֆինանսավորումն իրականացվում է հաստատված գնի 80 տոկոսի չափով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել հանրապետության ամբողջ բնակչությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.8%-ով կամ 669.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված բժշկական և սպասարկող անձնակազմերի աշխատավարձերի բարձրացմամբ:

Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններին տրամադրվել է 141.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9% կատարողական: Ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված ցանկին համապատասխան 2014 թվականի 8.0 հազար հիվանդի դիմաց 2015 թվականին բուժօգնություն է ստացել 8.1 հազար հիվանդ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.3%-ով կամ 1.8 մլն դրամով:

Անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով հակաբեղմնավորիչ ժամանակակից միջոցների մատչելիության ապահովման գծով 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված 45.8 մլն դրամը չի օգտագործվել՝ կապված դրանց բաշխման կարգի մշակման և գնումների գործընթացի հետ: Ծրագիրն առաջին անգամ նախատեսվել է 2015 թվականին: Ծրագրի ներառումը պայմանավորված է ՀՀ կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային

զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջև առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման շուրջ օժանդակության համաձայնագրով:

Ստոմատոլոգիական ծառայությունների դասում ընդգրկված են 2 ծրագրեր՝ «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» և «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ», որոնց շրջանակներում օգտագործվել է 882.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.3%-ը: Մասնավորապես՝ 803.1 մլն դրամ տրամադրվել է ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով 99.7% կատարողական և 4.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի քանակը կազմել է 298.6 հազար՝ նախորդ տարվա 282.7 հազարի դիմաց:

Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 79 մլն դրամ՝ ապահովելով 95% կատարողական, որը պայմանավորված է բուժօգնության դեպքերի քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.2%-ով: Ծրագրի շրջանակներում հետազոտվել են 65.8 հազար երեխաներ՝ 2014 թվականի 66.7 հազարի դիմաց: Ստոմատոլոգիական ծառայությունների դասի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 4.3%-ով կամ 36.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Պարաբժշկական ծառայությունների շրջանակներում 2015 թվականին օգտագործվել է շուրջ 8.8 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.3%-ը: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով՝ պայմանավորված շտապ բժշկական օգնության ծառայությունների և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում 3.3 մլրդ դրամ տրամադրվել է շտապ բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2015 թվականին սպասարկվել է 477.3 հազար կանչ՝ 2014 թվականի 467.0 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.5%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ և կանչերի թվի աճով:

Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը կազմել են շուրջ 3.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին, ինչպես և 2014 թվականին, իրականացվել է 4.0 մլն հետազոտություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.8%-ով կամ 375.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների գծով 2015 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 1.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.7%-ը: Ծրագրի շրջանակներում ապահովվել է զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված բժիշկ-փորձագետների և բուժքույրերի աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցումը: Ծրագրից շեղումը պայմանավորված է առանձին կազմակերպություններում զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց ուղեգրման ճանապարհածախսի տնտեսմամբ և ամբուլատոր բուժման դեպքերի փաստացի քանակով: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է ծախսերի նվազում, որը կազմել է 14.7%:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից *հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման ծախսերը կազմել են 40.0 մլրդ դրամ՝ 99.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հիվանդանոցային ծառայությունների ծախսերի 39.4%-ը կամ շուրջ 15.8 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների, 37.9%-ը կամ շուրջ 15.2 մլրդ դրամը՝ մոր և մանկան բժշկական ծառայությունների, 22.7%-ը կամ 9.1 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների ծախսերը:

Ընդհանուր բնույթի *հիվանդանոցային ծառայությունների* դասում ընդգրկված՝ անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը կազմել են ավելի քան 2.2 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2014 թվականի 22.4 հազար հիվանդի դիմաց 2015 թվականին բուժօգնություն է ստացել 22.0 հազար հիվանդ: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.5%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում պետական բյուջեից ավելի քան 7.4 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ֆինանսավորմանը՝ 100.0%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2015 թվականին բուժօգնություն է ստացել 66.5 հազար հիվանդ՝ 2014 թվականի 61.4 հազարի դիմաց: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13.1%-ով կամ 862.5 մլն դրամով:

Զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են ավելի քան 2.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նշված ծրագրով պետության կողմից

երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բուժօգնություն է մատուցվել 12.1 հազար հիվանդի 2014 թվականի 15.0 հազար հիվանդի դիմաց: 2014 թվականի համեմատությամբ նշված ծախսերը նվազել են 17.2%-ով կամ 591.8 մլն դրամով, պայմանավորված այն հանգամանքով, որ 2015 թվականին շահառուների մի մասի բժշկական օգնությունն իրականացվել և փոխհատուցվել է «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում, ինչպես նաև առանձին կազմակերպություններում բուժօգնության դեպքերի քանակով:

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 2.3 մլրդ դրամ՝ 99%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2015 թվականին բուժօգնություն է մատուցվել 9.8 հազար հիվանդի՝ 2014 թվականի 5.5 հազարի դիմաց: Նշենք, որ 2014 թվականին պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների առողջապահական փաթեթի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման ծախսերը ֆինանսավորվել էին այդ նպատակով ՀՀ առողջապահության նախարարության համար բացված արտաբյուջետային հաշվի միջոցներից, որոնց մնացորդի հաշվին ծախսեր են կատարվել նաև 2015 թվականին՝ «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրի շրջանակներում: Նշված ծախսերը կազմել են շուրջ 992.7 մլն դրամ՝ 100.0%-ով ապահովելով ծրագրի կատարումը: 2014 թվականի համեմատ պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների առողջապահական փաթեթի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման ծախսերը (ներառյալ՝ արտաբյուջետային հաշվից ֆինանսավորվածները) աճել են 125.2%-ով: Աճը պայմանավորված է նրանով, որ ծրագիրը սկսել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվել 2014 թվականի ապրիլից՝ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի թիվ 375-Ն որոշման, ինչպես նաև 2015 թվականից նոր ծառայության՝ պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության ներդրմամբ: Հիմնականում նշվածով պայմանավորված՝ 2014 թվականի համեմատ ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների դասի ծախսերն աճել են 15.5%-ով:

Հաշվետու տարում 9.1 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ կազմելով ծրագրի 99.8%-ը: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 18.9%-ով կամ ավելի քան 1.4 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2015 թվականին առաջին անգամ ՀՀ պետական բյուջեից սրտի անհետաձգելի վիրահատության ծառայությունների ձեռքբերման համար միջոցների հատկացմամբ, ինչպես նաև

հոգեկան ու նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

2015 թվականին տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 1.4 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Եթե 2014 թվականին ծրագրի շրջանակներում բուժօգնություն էր ստացել 5.6 հազար հիվանդ, ապա 2015 թվականին հիվանդների թիվը կազմել է 4.4 հազար: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 17.6%-ով՝ պայմանավորված մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջին արժեքի ավելացմամբ: Ծրագիրը ներառում է նոր հայտնաբերված տուբերկուլյոզով հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, տուբերկուլյոզով քրոնիկ հիվանդների երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի ապահովումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, վերականգնողական բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային առողջարաններում: Ֆինանսավորման մեխանիզմների փոփոխությունը նպաստել է քրոնիկ հիվանդների բուժումը դիսպանսեր հսկողությամբ կազմակերպելուն, որը և հանգեցրել է հիվադների թվաքանակի նվազմանը:

Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով 2015 թվականի բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին բուժօգնություն է ստացել 14.2 հազար հիվանդ՝ 2014 թվականի 13.1 հազարի դիմաց: 2014 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 1.6%-ով՝ պայմանավորված մեկ հիվանդի բուժման միջին արժեքի նվազմամբ:

Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների գծով պետական բյուջեից տրամադրվել է 185.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 1.3 հազար հիվանդ՝ 2014 թվականի 1.1 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 2.4%-ով:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններին 2015 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 2.7 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 6 հազար հիվանդ՝ 2014 թվականի 6.7 հազարի փոխարեն: 2014 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 16.2%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել է 857.7 մլն դրամ՝ 98.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 46.7 հազար հիվանդ՝ 2014 թվականի 53.2 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը

նվազել են 8.4%-ով կամ 78.4 մլն դրամով, որը պայմանավորված է 2015 թվականին բուժօգնություն ստացած անձանց թվաքանակի նվազմամբ:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ծախսերը նույնպես կատարվել են 100%-ով՝ կազմելով ավելի քան 1.1 մլրդ դրամ: Նշված ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախորդ տարվա 11.8 հազար հիվանդի փոխարեն 2015 թվականին բուժօգնություն է ստացել 10.9 հազար հիվանդ: 2014 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 1.1%-ով՝ պայմանավորված 2015 թվականին բուժօգնություն ստացած հիվանդների թվի նվազմամբ:

Վերականգնողական բժշկական օգնության ծառայությունների համար նախատեսված միջոցները ևս ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով շուրջ 613.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին, ինչպես և 2014 թվականին, բուժօգնություն է ստացել 4.3 հազար հիվանդ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 1.1%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայությունների գծով նախատեսված 2.2 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ դեպքերի բացակայության պատճառով:

ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված է փուլ առ փուլ երաշխավորել սրտի անհետաձգելի վիրահատությունների իրականացումը ՀՀ բոլոր քաղաքացիների համար: Այս նպատակով 2015 թվականի պետական բյուջեից առաջին անգամ հատկացվել է 951.1 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին բուժօգնություն է մատուցվել 1.4 հազար հիվանդի՝ նախատեսված 799 հիվանդի դիմաց, որն ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Մոր և մանկան բժշկական ծառայությունների դասի շրջանակներում իրականացվել են 4 ծրագրեր, որոնց ծախսերը կատարվել են 99.5%-ով՝ կազմելով շուրջ 15.2 մլրդ դրամ: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով կամ 258.4 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված երեխաներին մատուցվող բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 6.9 մլրդ դրամ է տրամադրվել մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը՝ 99.3%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2014 թվականի 61.8 հազար դեպքի դիմաց 2015 թվականին արձանագրվել է 59.6 հազար դեպք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է շուրջ 344 մլն դրամ կամ նախատեսվածի 95.9%-ը: Շեղումը պայմանավորված է առանձին կազմակերպություններում բուժօգնության դեպքերի քանակով: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2014 թվականի 4.9 հազար դեպքի դիմաց 2015 թվականին արձանագրվել է 4.8 հազար դեպք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3%-ով՝ պայմանավորված մեկ հիվանդի բուժման միջին արժեքի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում երեխաներին բժշկական օգնության ծառայությունների մատուցման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով շուրջ 7.9 մլրդ դրամ: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2015 թվականին բուժօգնություն է ստացել 62.2 հազար հիվանդ՝ 2014 թվականի 62.4 հազարի փոխարեն: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 2.5%-ով կամ 195.4 մլն դրամով՝ պայմանավորված մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջին արժեքի ավելացմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բուժօգնություն՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից, ինչպես նաև մինչև 18 տարեկան երեխաների հիվանդանոցային բուժօգնություն պահանջող անհետաձգելի վիճակների և սուր հիվանդությունների դեպքերում բուժօգնության իրականացում:

2015 թվականին առաջին անգամ ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով: Ծրագիրը նախատեսվել է սոցիալապես անապահով, նպաստառու ընտանիքների անպտուղ զույգերին վերատադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական ծառայություններ մատուցելու համար՝ յուրաքանչյուր տարի 2 տարիքային խումբ ընգրկելու ընթացակարգով: Անվճար բուժօգնության իրավունք ունեցող ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 36 և ավելի միավոր ունեցող նպաստառու կանանց համար այն իրականացվում է անվճար, իսկ 30-35 միավոր ունեցողների համար՝ 50% զեղչով: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում ծախսվել է 56.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 71.3%-ը: Շեղումը պայմանավորված է բուժօգնության դեպքերի փաստացի քանակով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 180 հիվանդ՝ նախատեսված 696-ի փոխարեն: Նշենք, որ ծախսված գումարից 50 մլն դրամը հատկացվել է «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտ», «Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն» և «Շենգավիթ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններին՝ որպես կանխավճար՝ 2016 թվականի ընթացքում սահմանամերձ գյուղական համայնքների անպտղություն ունեցող 35 ամուսնական

զույգերի վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու համար:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից ավելի քան 5.3 մլրդ դրամ է օգտագործվել հանրային *առողջապահական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 99.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16%-ով՝ պայմանավորված իմունականխարգելման ազգային ծրագրի և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ծախսերի աճով: Տվյալ խմբի շրջանակներում կատարվել են 4 ծրագրեր:

Ամբողջությամբ օգտագործվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայությունների համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 74.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման աշխատանքներ՝ մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառման ու նվազեցման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.4%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Արյան հավաքագրման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 251 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է արյան փոխներարկման կայանների պահպանումը, որոնց ֆունկցիոնալ խնդիրն է արյան հավաքագրումը, բաց թողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով ու դրա բաղադրիչներով ապահովումը Հայաստանի մարզերում: Երևան քաղաքը սպասարկում է «Ռ.Յոլյանի անվ. արյունաբանության կենտրոն» ՓԲԸ-ն: Կենտրոնի առաջնային խնդիրներից են՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող արյան չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբուլատոր հետազոտումը և բուժումը, արյան փոխներարկման կայանների կողմից կատարվող աշխատանքների արտագնա ստուգումը և մեթոդական օգնությունը, ինչպես նաև հղի կանանց հակառեզուս իմունոգլոբուլենի ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.7%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Իմունականխարգելման ազգային ծրագրին տրամադրվել է շուրջ 1.9 մլրդ դրամ՝ 98.9%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել պատվաստանյութեր և ներարկիչներ կարմրուկի, խոզուկի և այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 34.8%-ով՝ կապված պատվաստումների ազգային օրացույցով նախատեսվող հնգավալենտ, ռոտավիրուսային և պնևմակոկային պատվաստանյութերի քանակի ավելացման, ԱԿԴՓ և ԱԴՓ-Մ (դիֆթերիա, հեպատիտ Բ, փայտացում, կապույտ հազ, հեմոֆիլուսային Բ տեսակի վարակ, ռոտավիրուսային վարակ, պոլիոմիելիտ, կարմրուկ, կարմրախտ, խոզուկ և տուբերկուլյոզ) պատվաստանյութերի

գների բարձրացման, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում կառավարելի վարակիչ հիվանդությունների դեպքերի կանխարգելում և կայուն հակահամաճարակային իրավիճակ ապահովելու նպատակով նորակոչիկների կանխարգելիչ պատվաստումների իրականացման, այդ թվում՝ մենինգակոկային, պնևմակոկային հեպատիտ Ա-ի, ԿԿԽ-ի (կարմրուկ, կարմրախտ, խոզուկ), տուլարեմիայի պատվաստանյութերի ձեռք բերման հետ:

2015 թվականին պետական բյուջեից ավելի քան 3.1 մլրդ դրամ է օգտագործվել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: 2015 թվականի պետական բյուջեում այս ծրագրում միավորվել են 2014 թվականի պետական բյուջեի «Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ», «Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություններ» և «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայություններ» ծրագրերը: Ծրագրի նպատակն էր 2015 թվականին ապահովել.

- Հայաստանի Հանրապետության տարածքում հիգիենիկ և հակահամաճարակային պետական հսկողության միջոցառումների իրականացումը,
- ինֆեկցիոն հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը,
- բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ ուսումնասիրությունների կազմակերպումը,
- բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման կազմակերպական-մեթոդական կանոնակարգումը,
- հիգիենիկ-համաճարակաբանական նորմերի և կանոնների պատշաճ համակարգի ստեղծումը,
- բնակչության հիգիենիկ և բժշկական գիտելիքների մակարդակի բարձրացումը:

Ծրագրի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 5579.1 հազար փորձագիտական լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ՝ 2014 թվականի 5610.0 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Այլ դասերին չպատկանող առողջապահության խմբի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում օգտագործվել է ավելի քան 10.4 մլրդ դրամ, որոնց կատարողականը կազմել է 104.1%: Նշված կատարողականը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական

համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 29.7%-ով՝ հիմնականում պայմանավորված նշված երկու ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով և 2015 թվականին առողջապահական օբյեկտների շինարարության նպատակով միջոցների հատկացմամբ:

2015 թվականին պետական բյուջեից 28.1 մլն դրամ է տրամադրվել հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցման նպատակով՝ ապահովելով ծրագրի 69.6% կատարողական, որը պայմանավորված է փոխհատուցում ստանալու համար դիմած քաղաքացիների փաստացի քանակով: Ծրագրի շրջանակներում այն հիվանդները, որոնց ախտորոշումը հնարավոր չէ կատարել հանրապետությունում, ուղեկցողով գործուղվում են Մոսկվա կամ ԱՊՀ երկրներ՝ ախտորոշման և հետագա բուժում նշանակելու համար: Մեկ հիվանդի ճանապարհածախսը ուղեկցողով գնալու և վերադառնալու համար կազմում է միջին հաշվով 400 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11%-ով: 2015 թվականին մեկնածների թիվը կազմել է 187՝ նախորդ տարվա 203-ի դիմաց:

Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների շրջանակներում ծախսվել է շուրջ 665 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Այն ուղղվել է սոցիալապես անապահով խավի հիվանդների՝ յուրահատուկ, բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ 43.6 հազար հետազոտությունների իրականացմանը (միջուկա-մագնիսական տոմոգրաֆ, համակարգչային տոմոգրաֆիա, կորոնարոգրաֆիա, հորմոնալ հետազոտություններ և այլն)՝ 2014 թվականի 33.2 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 42.5%-ով՝ կապված հետազոտությունների թվաքանակի աճի հետ:

Ամբողջությամբ օգտագործվել են դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայությունների համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 20.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մարդասիրական կարգով ներմուծվող դեղերի և «որբ դեղերի» ցանկում ընդգրկված դեղերի պետական գրանցման նպատակով փորձաքննություններ, հոգեմետ և հսկվող դեղերի պահանջարկի հաշվարկ և այլ ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Առողջապահական օբյեկտների շինարարության համար նախատեսված միջոցները ևս ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 950 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցման շարունակական աշխատանքները:

Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման համար 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 397 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.9%-ով: Ծրագիրը կապված է ՀՀ

դատախազության, ՀՀ ոստիկանության, ՀՀ պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և դատարանների որոշումներին համապատասխան, հատուկ և վտանգավոր պայմաններում աշխատանքի (դիահերձում, արտաշիրիմում և այլ հետազոտական աշխատանքների) հետ:

«Պաթանատոմիական ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը ևս նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով ավելի քան 56.2 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.6%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է մանկական մահերի և հիվանդությունների պատճառների բացահայտում՝ մանկամահացության մակարդակը նվազեցնելու նպատակով:

Հաշմանդամ և կարիքավոր երեխաների՝ օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 98.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի հատկացումներն ուղղվում են հենաշարժական խնդիրներով հիվանդ երեխաների բուժմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.1%-ով: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին պատրաստվել է 1952 օրթեզ և կորսետ՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 50 հազար և 80 հազար դրամ արժեքով՝ 2014 թվականի 1858-ի դիմաց:

Ավելի քան 88.5 մլն դրամ է տրամադրվել առողջ ապրելակերպի խթանման և հանրային իրազեկման ծառայություններին՝ ապահովելով 98.4% կատարողական, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է բժշկական վիճակագրության և բժշկասանիտարական տեղեկատվության հավաքում և վերլուծություն: ՀՀ առողջապահության համակարգում շարունակվել են ներդրվել համակարգչային տեխնոլոգիաներ և ցանցեր: Ներդրվել են նաև առողջապահական տեղեկատվական համակարգեր և ինտերնետային կապ: Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության, բնակչության լայն շրջանակներում հավաստի բժշկական գիտելիքների տարածման համար տպագրվում է հանրամատչելի զրույցների հավելված: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 7.7%-ով:

Բժշկական օգնության մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններին տրամադրվել է շուրջ 236.3 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Միջոցներն ուղղվել են 2014 թվականի Առողջապահության ազգային հաշիվների զեկույցի կազմման, Հայաստանի առողջապահության արդյունավետության գնահատման 2014 թվականի տարեկան զեկույցի կազմման, 2015 թվականի կլինիկական, բժշկատնտեսագիտական ստանդարտի մշակման, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, ֆինանսավորման մեխանիզմների բարելավման նպատակով

նորմատիվ փաստաթղթի մշակման ծառայությունների ձեռքբերմանը, սիրտ-անոթային, սպինալ և պրոֆեսիոնալ հիվանդություններով, շաքարային դիաբետով, ասթմայով տառապող հիվանդներին, ինչպես նաև ուրոլոգներին և նեֆրոլոգներին ուռուցքաբանական, նարկոլոգիական, մաշկավեներական, հոգեբուժական և հակատուբերկուլյոզային ծառայությունների գծով կազմակերպչամեթոդական օգնությանը: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 6%-ով՝ պայմանավորված կազմմեթոդական օգնության ծավալների նվազման հետ:

Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայությունները ևս ամբողջությամբ ֆինանսավորվել են՝ կազմելով ավելի քան 59.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 40%-ով, որը հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում ամբողջությամբ ֆինանսավորվել են նաև տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի համակարգման ծառայությունները, որոնց տրամադրվել է 62.1 մլն դրամ: Ծրագրի նպատակն է բնակչությանը պահպանել տուբերկուլյոզի տարածման վտանգից՝ ապահովել հիվանդության վաղ հայտնաբերումը: Ծրագրի շրջանակներում մատուցվել են տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի պահպանման աջակցության ծառայություններ, իրականացվել է ծրագրի աշխատանքների կազմակերպում, այդ թվում՝ մոնիթորինգ, եռամսյակային վիճակագրական տվյալների հավաքում, հակատուբերկուլյոզային բուժհաստատություններում տուբերկուլյոզի կանխարգելմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և ԱՀԿ-ի կողմից մշակված ստանդարտ ընթացակարգերի կիրառում, ստուգայցերի հաճախակի կազմակերպում, հիվանդներին սոցիալ-հոգեբանական աջակցության ցուցաբերում, մեթոդական օժանդակության ցուցաբերում Հայաստանում գործող տուբերկուլյոզային և հակատուբերկուլյոզային կազմակերպություններին, վերապատրաստման դասընթացների իրականացում ֆտիզիատորների, առողջության առաջնային պահպանման բժիշկների և բուժքույրերի համար, տուբերկուլյոզի կանխարգելման նպատակով առողջ վարքագծի վերաբերյալ գիտելիքների քարոզչություն, իրազեկման աշխատանքների իրականացում բնակչության շրջանում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 34%-ով, որը պայմանավորված է «Հանրապետական հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ-ի և «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի միավորմամբ ու «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ստեղծմամբ:

ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցման նպատակով բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման ծախսերի փոխհատուցման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 8.1 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 75.2%-ը՝ պայմանավորված ըստ ցանկության մարզեր ուղեգրված բժիշկ-մասնագետների քանակով: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին ՀՀ մարզեր են ուղեգրվել 5

բժիշկ-մասնագետ՝ 15 ամիս տևողությամբ, իսկ 2014 թվականին 12 բժիշկ-մասնագետ՝ 22 ամիս տևողությամբ: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 56.8%-ով:

Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ծախսը կազմել է շուրջ 2.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 104.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ ֆինանսավորվել են: Ծրագրի նպատակն է ուժեղացնել համակարգի արդյունավետ կառավարումը, զարգացնել ընտանեկան բժշկության վրա հիմնված առաջնային բժշկական օգնության ծառայությունները և վերականգնել մարզերում առողջապահական ծառայությունների մատուցումը՝ բնակչությանն առավել հասանելի, որակյալ և կայուն առողջապահական ծառայություններ տրամադրելու համար, ամբուլատորիաների կառուցումը, բժշկական սարքավորումների, գրասենյակային և ուսումնական կահույքի ձեռքբերումը, ինչպես նաև բժշկական կենտրոններում շինարարական աշխատանքների իրականացումը: 2015 թվականին շահագործման են հանձնվել ՀՀ Արմավիրի մարզում՝ Մեծամորի բժշկական կենտրոնի հիմնանորոգված պոլիկլինիկական հատվածը, Ակնալճի բժշկական ամբուլատորիայի նորակառույց շենքը, ՀՀ Տավուշի մարզում՝ Բերդի բժշկական կենտրոնը, Ոսկեվանի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նորակառույց շենքը, Բագրատաշենի բժշկական ամբուլատորիայի նորակառույց շենքը, Նավուրի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նորակառույց շենքը, Բերդավանի առողջության կենտրոնի հիմնանորոգված շենքը, ՀՀ Սյունիքի մարզում՝ Կապանի բժշկական կենտրոնը, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Ճամբարակի առողջության կենտրոնը, ՀՀ Արարատի մարզում՝ Քաղցրաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նորակառույց շենքը, ՀՀ Լոռու մարզում՝ Լեռնապատի առողջության կենտրոնի նորակառույց շենքը, որոնք հագեցած են բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով: Ավարտվել են Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի նորակառույց շենքի շինարարական աշխատանքները: Բժշկական կենտրոնը հագեցվել է բժշկական սարքավորումներով, կահույքով ու պարագաներով և շահագործման է հանձնվել 2016 թվականի փետրվարին: Ավարտվել են նաև ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրականի բժշկական ամբուլատորիայի և ՀՀ Վայոց ձորի մարզի Հռիփսիմեի առողջության կենտրոնի շենքերի կառուցման աշխատանքները: Ընթացքում են՝ Արարատի մարզում՝ Մխչյանի և Լանջազատի, իսկ Լոռու մարզում՝ Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոնների շենքերի կառուցման աշխատանքները:

ԱՄՆ Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնի աջակցությամբ իրականացվող սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնման և արձագանքման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 120 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի

95% կատարողական: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ պայմանագրերը կնքվել են նախատեսվածից ցածր գներով, և ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանումների արդյունքում առաջացել են տնտեսումներ: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 18.2%-ով՝ հիմնականում պայմանավորված մասնագիտական ծառայությունների և վարչական սարքավորումների ձեռքբերման ծավալների աճով: Ծրագրի նպատակն է համաճարակաբանական հսկողության կայուն համակարգի ստեղծումը՝ գրիպի համապատասխան լաբորատոր և ախտորոշիչ հզորություններով, որոնք հնարավորություն կընձեռեն արագ ախտորոշել կասկածելի դեպքերը, իրականացնել սեզոնային և պանդեմիկ գրիպի դետքային վերահսկողություն, համապատասխան վարակաբանական հսկողություն և մարդկային ռեսուրսների կարողությունների հսկողություն, որը հնարավորություն կտա արդյունավետորեն արձագանքել պանդեմիկ և նովել գրիպի վտանգներին, սահմանել և վերահսկել սեզոնային գրիպի ու շնչառական հիվանդությունների ազդեցությունը հանրային առողջության վրա, ամբողջությամբ մասնակցել Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) GISN համագործակցության կենտրոններին ժամանակին և որակյալ նմուշներ տրամադրելով, ինչպես նաև բուժօգնության և ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացումը: 2015 թվականին կնքվել և ավարտվել են ծրագրով նախատեսված մի շարք պայմանագրեր, մասնավորապես՝ ձեռք են բերվել բժշկական սարքավորումներ և գործիքներ, օզելտամիվիր ֆոսֆատ՝ 75 մգ, համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր, քիմիական նյութեր, թարգմանչական ծառայություններ, գրիպի համաճարակաբանական հսկողության համակարգի պահպանման նպատակով ամենամյա լաբորատոր նմուշների որակի, հիմնական կարողությունների գնահատման ծառայություններ, Երևան, Կապան և Վանաձոր քաղաքներում սեզոնային գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության համակարգի և լաբորատոր գործունեության պարբերաբար մշտադիտարկման և վերահսկման ծառայություններ, գրիպի կանխարգելման և բուժման վերաբերյալ նորմատիվային փաստաթղթերի մշակում և ներդրում, իրականացվել է սարքերի և սարքավորումների սպասարկում, տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում: Ապահովվել է գրիպի բոլոր տեսակների (թռչնի H5N5, պանդեմիկ H1N1 և այլ սեզոնային) և այլ շնչառական վարակների (ՄԵՐՍ և այլն) նկատմամբ նմուշառման, նմուշների տեղափոխման և լաբորատոր հետազոտությունների համար անհրաժեշտ բոլոր ռեագենտները, դրանք իրականացնելու համար անհրաժեշտ լաբորատոր սարքավորումները և պայմանները: Համակարգում ընդգրկվել են Տավուշի մարզը՝ որպես պետական սահմանի անցումային կետ ունեցող և կենդանի թռչնի ներմուծման հիմնական ուղի, և Կոտայքի մարզը՝ որպես ամենաշատ թռչնաֆաբրիկաներ ունեցող մարզ: Իրականացվել է համաճարակաբանների, առաջնային բժշկական օգնության կազմակերպությունների անձնակազմի և մասնագետների ուսուցում, գրիպի և սուր շնչառական վարակների վերաբերյալ բնակչության իրազեկման

լայնածավալ ծրագիր, որում ներառվել են մարզերում և Երևանում հանրակրթական ու նախակրթական կազմակերպությունների ղեկավարները և բուժսպասարկում իրականացնող անձնակազմը:

ՀԲ աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 1.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 145.4% կատարողական: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է սքրինինգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների մատակարարման համար 2014 թվականին նախատեսված գումարը և ոսկրածուծի փոխպատվաստման բաժանմունքի ու ցողունային բջիջների լաբորատորիայի ստեղծման նպատակով 2014 թվականին նախատեսված աշխատանքները 2015 թվական տեղափոխելու հանգամանքով: 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել է նաև ՀԲ աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման դրամաշնորհային ծրագիր՝ ուղղված հիմնական վարկային ծրագրի աջակցմանը, որի շրջանակներում ծախսվել է 97.8 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 43.1%-ը: Վերջինս պայմանավորված է սքրինինգային հետազոտությունների՝ նախատեսվածից փոքր քանակով: Ծրագրերի նպատակն է՝ ապահովել հեմատոլոգիական և օնկոլոգիական ծառայությունների արդյունավետության բարձրացումը, որի համար ծրագրով նախատեսվում է ՀՀ առողջապահական համակարգի շարունակական զարգացում, ինչպես նաև հանրապետությունում և ողջ աշխարհում տարեցտարի ավելացող ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) կանխարգելում ու բուժման արդյունավետության բարձրացում, ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և արդյունավետ բուժմանն ուղղված սքրինինգային, ինչպես նաև ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ բնակչության իրազեկման ծրագրերի իրականացում, ուռուցքաբանական ծառայությունների արդիականացում, ճառագայթային բուժման կենտրոնի շինարարություն և հագեցում անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, պարագաներով ու կահույքով, ՀՀ ԱՆ պրոֆ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնի արդիականացում՝ կենտրոնի հիմնական բուժական և պոլիկլինիկական մասնաշենքերի հիմնանորոգում, ժամանակակից բուժսարքավորումներով հագեցում, ոսկրածուծի փոխպատվաստման և բարձր դոզաներով քիմիաթերապիայի բաժանմունքի հիմնում: 2015 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ ԱՆ պրոֆ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնի վերակառուցման և եռահարկ մասնաշենքի կառուցման շինարարություն,
- ժամանակակից ճառագայթային բուժման կենտրոնի կառուցման նախագծանախահաշ-վային փաստաթղթերի մշակում,

- Սևանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային նոր մասնաշենքի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում,
- Արտաշատի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում,
- հանրապետության ողջ տարածքում չարորակ նորագոյացությունների ռեգիստրի ստեղծում,
- ավարտվել են Ոսկրածուծի փոխպատվաստման և ցողունային բջիջների լաբորատորիայի ստեղծման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները,
- 314 համակարգիչ է տրամադրվել հանրապետության առողջության առաջնային պահպանման բոլոր կենտրոններին՝ էլեկտրոնային առողջության ծրագրին աջակցելու նպատակով,
- 2015 թվականի հունվարից մեկնարկել են քաղաքացիների համար անվճար սքրինինգային հետազոտությունները, որոնց նպատակն է ՀՀ բնակչության ռիսկային խմբերում իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգներ՝ ուղղված այդ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, վերահսկմանը և մահացության նվազեցմանը: Զուգահեռ Երևանում և մարզերում իրականացվում է ծրագրի հանրային իրազեկման քարոզարշավ, ինչպես նաև ծրագրի իրականացման նկատմամբ մշտադիտարկում՝ այդ նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից: 2015 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում իրականացվել է 58602 ՊԱՊ թեստ (արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման հետազոտություն)՝ նախատեսված 105000-ի փոխարեն: Նույն ժամանակահատվածում 197110 քաղաքացիների մոտ իրականացվել է արյան մեջ գլյուկոզի հետազոտություն՝ նախատեսված 225000-ի փոխարեն, և շուրջ 270490 քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ՝ նախատեսված շուրջ 225000-ի փոխարեն: 2015 թվականին նախատեսված և փաստացի կատարված հետազոտությունների թերակատարման հիմնական պատճառը եղել է նմանատիպ փորձի բացակայությունը ինչպես ՀՀ առողջապահական համակարգում, այնպես էլ Համաշխարհային բանկի կողմից այլ երկրներում իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում: Ներկայումս իրականացվում է լայնածավալ հանրային իրազեկման քարոզարշավ, որը նպատակ է հետապնդում ավելացնել քաղաքացիների մասնակցությունը սքրինինգային ծրագրերին, մասնավորապես՝ արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման հետազոտությանը, և բարձրացնել դիմելիությունը առողջության առաջնային պահպանման հաստատություններ:

ՀԲ աջակցությամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի շրջանակներում առողջապահության կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծրագրի նախապատրաստման համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 30.3 մլն դրամ՝ 16.4%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է

արտարժույթի փոխարժեքի բարձրացմամբ: Դրամաշնորհային ծրագրի նպատակն է «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում առողջապահության կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծրագրի նախապատրաստական փուլի իրականացումը:

Նշված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են չարորակ նորագոյացությունների ռեգիստրի ստեղծման աշխատանքներ, զուգահեռ Երևանում և մարզերում իրականացվել է ծրագրի հանրային իրազեկման քարոզարշավ, ինչպես նաև ծրագրի իրականացման նկատմամբ մշտադիտարկում՝ այդ նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից:

Հաշվետու տարում արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայությունների գծով տրամադրվել է ավելի քան 10.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 26.3%-ով, որը պայմանավորված է պետական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձերի և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Արտասահմանյան առաջավոր կլինիկաների փորձի ուսումնասիրման նպատակով բժիշկների գործուղումների գծով ծախսերը կազմել են 6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 16.7% կատարողական: Ծրագիրը 2015 թվականին իրականացվել է առաջին անգամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում էր վերապատրաստման գործուղել սրտաբաններ, ուռուցքաբաններ, արյունաբաններ և ճառագայթային բժշկության մասնագետներ: Թերակատարումը պայմանավորված է բժիշկ–մասնագետների՝ արտասահման ուղեգրման կարգի մշակումը և արտասահմանյան առաջատար կլինիկաների հետ պայմանագրերի կնքումն ուշ իրականացնելու հանգամանքով:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից առաջին անգամ ֆինանսավորվել են նաև «Երեխաների առողջ սնուցում» հանրային իրազեկման ծառայությունները, որոնց գծով ծախսվել է 5.5 մլն դրամ կամ նախատեսվածի 54%-ը: Այն նպաստում է երեխաների առողջ սնուցման, վաղ տարիքի՝ 0-5 տարեկան, երեխաների սնուցման բարելավմանն ուղղված հանրային իրազեկման միջոցառումներին: Երեխայի սնուցման վերաբերյալ ծնողների բավարար տեղեկացվածությունը և ադեկվատ գործելակերպը նպաստում է մանկան առավել հավասարակշռված սնուցման կազմակերպմանը, որը երեխայի նորմալ աճի ու զարգացման կարևորագույն նախապայմաններից է: Թերակատարումը պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի նպատակն է լուծել Հայաստանում լայն տարածում գտած երեխաների թերսնուցման խնդիրը իրազեկման՝ գրքույկների, բուկլետների և պաստառների տպագրման, սննդի քարոզչության հետ կապված հաղորդաշարերի պատրաստման, նկարահանման և հեռարձակման միջոցով, որոնք ամբողջությամբ կատարվել են:

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերը 2015 թվականին կազմել են 3.2 մլրդ դրամ կամ ծրագրի 97%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցության և գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական ու տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի գծով արձանագրվել է ծախսերի նվազում 16.5%-ով՝ հիմնականում պայմանավորված տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացման և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պահպանումը, որին ուղղվել է 1.9 մլրդ դրամ՝ ապահովելով 97.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 22.5%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցության շրջանակներում ծախսվել է շուրջ 449 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 89.7%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով և հայտարարված ու չկայացած մրցույթներով: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- ՄԻԱՎ-ի ախտորոշման համար թեստ-հավաքածուների և հակառետրովիրուսային բուժման նպատակով դեղամիջոցների ձեռքբերում,
- օպորտունիստական վարակների բուժման նպատակով դեղամիջոցների, ախտորոշիչ նյութերի և լաբորատոր ծախսանյութերի ձեռքբերում,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակի վերաբերյալ դասընթացների կազմակերպում,
- ներուժի զարգացման նպատակով սեմինար-վարժանքների կազմակերպում,
- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության աշխատակիցների կողմից 9 քրեակատարողական հիմնարկներում կրթական միջոցառումների, ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվության և հետազոտության իրականացում,
- ՀՀ ԱՆ նարկոլոգիական հանրապետական կենտրոնում, Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում, ինչպես նաև 7 քրեակատարողական հիմնարկներում մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի իրականացում,
- մեթադոնային փոխարինող բուժման համար դեղորայքի ձեռքբերում,

- ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության կետերին և լաբորատորիաներին տեխնիկական աջակցության տրամադրում,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների իրականացում,
- մոնիթորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի հզորացում,
- ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի ենթակառուցվածքների վերանորոգման աշխատանքներ:

Ծրագրի շրջանակներում 2015 թվականին ավելի քան 46642 հղիների շրջանում իրականացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն, 774 հիվանդ ստացել է հակառետրովիրուսային բուժում, 480 ներարկային թմրամիջոցներ գործածողներ ստացել են մեթադոնային փոխարինող բուժում, 3210 դատապարտյալ ստացել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման մինիմալ փաթեթը: Իրականացվել է 212 բուժաշխատողների, 13 լաբորատոր մասնագետների և 12 պետական և ոչ պետական ոլորտի աշխատողների վերապատրաստում: 2014 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 25.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է առողջապահական և լաբորատոր նյութերի գծով ծախսերի նվազմամբ՝ կապված դեղորայքի և բժշկական նշանակության պարագաների կարիքի նվազման հետ, և ընթացիկ դրամաշնորհների գծով ծախսերի նվազմամբ՝ կապված հետազոտությունների քանակի նվազման հետ:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ «Առողջապահության համակարգի հզորացում» ծրագրի շրջանակներում 2015 թվականին ծախսվել է շուրջ 13.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 75.8%-ը, որը հիմնականում պայմանավորված է հայտարարված ու չկայացած մրցույթներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են առողջապահական համակարգի զարգացման հայեցակարգի մշակում, հիվանդությունների միջազգային դասակարգման (ՀՄԴ) ընթացակարգային ծածկագրերի թարգմանություն, ադապտացում, ծառայությունների մատուցում պալիատ/ամոքիչ խնամքի ոլորտում, պալիատիվ խնամքի դասընթացներ՝ բժիշկների և բուժքույրերի համար, հակատուբերկուլյոզային դեղերի որակի գնահատման գործընթաց, ձեռք են բերվել և բաշխվել բժշկական ծախսանյութեր, արյան փոխներարկման մարզային կայանների համար գնվել են բժշկական նշանակության ապրանքներ:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացման և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման ծրագրին տրամադրվել է շուրջ 821.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը: Հաշվետու տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում բազմադեղակայուն տուբերկուլյոզի բուժման համար ներմուծվել են անհրաժեշտ քանակով 1-ին և 2-րդ շարքի հակատուբերկուլյոզային դեղորայք, բժշկական ծախսանյութեր և ժամանակակից ախտորոշիչ սարքավորումներ: «Հայկական կարմիր խաչի

ընկերություն» հասարակական կազմակերպության և «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ կնքվել են դրամաշնորհային պայմանագրեր և իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- տուբերկուլյոզով հիվանդներին տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ սննդային և հիգիենիկ փաթեթների տեսքով,
- ծայրահեղ կարիքավոր տուբերկուլյոզով հիվանդներին ձմռան 3.5 ամիսների համար տրամադրվել է ջեռուցման ծախսերի փոխհատուցում,
- Հանրապետական տուբերկուլյոզային դիսպանսերում բուժվող հիվանդներին տրամադրվել են թարմ սննդի փաթեթներ,
- ուղղակիորեն վերահսկվող բուժման ռազմավարության շրջանակներում դեղորայքի ընդունումը բուժաշխատողի ներկայությամբ կազմակերպելու նպատակով հիվանդներին կամ բուժաշխատողներին տրամադրվել է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում,
- տուբերկուլյոզի ազգային գրասենյակի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տրամադրվել է լրացուցիչ ֆինանսական աջակցություն, գրասենյակի աշխատակիցների կողմից իրականացվել են ստուգայցեր տուբերկուլյոզային հաստատություններ, ներդրվել է տուբերկուլյոզային ծառայությունների կառավարման (ETB) էլեկտրոնային ծրագիրը, իրականացվել են մասնագետների վերապատրաստման դասընթացներ տուբերկուլյոզի ոլորտում,
- գնվել են լաբորատոր և վարակի վերահսկման պարագաներ,
- պերիֆերիկ լաբորատորիաներից իրականացվել է խորխի նմուշների տեղափոխում ազգային ռեֆերենս լաբորատորիա:

<u>Հանգիստ, մշակույթ և կրոն</u>

2015 թվականին *հանգստի, մշակույթի և կրոնի* ոլորտի ծրագրերի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 30.4 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 100.4%-ը՝ հիմնականում պայմանավորված Ավստրիական «Վագներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս ԷյՋի», «Էլեկտրոնիկ Թիեթր քոնթրոլս Ջիէմբիէյջ» և «Արթսթեք» ընկերությունների կողմից «Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ» և «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների վերազինման ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերի 42%-ով աճը հիմնականում պայմանավորված է արվեստի և հեռուստառադիոհաղորդումների ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում *հանգստի և սպորտի* ծառայություններին տրամադրվել է շուրջ 1.8 մլրդ դրամ՝ 97.7%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

2015 թվականին ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստմանը և առաջնությունների անցկացմանը տրամադրվել է 929.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Հատկացված միջոցները նպատակաուղղվել են միջոցառումների իրականացմանը, դրանց քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, մարզիկների բժշկական հետազոտման աշխատանքների բարելավմանը, մարզաձևերի ՀՀ ազգային հավաքական թիմերը երիտասարդ հեռանկարային մարզիկներով համալրմանը և օլիմպիական վարկանիշային միջազգային մրցումներին նախապատրաստմանը: Ծրագրում ընդգրկված 32 մարզական ֆեդերացիաներն անցկացրել են Հայաստանի Հանրապետության 93 առաջնություններ, 127 ուսումնամարզական հավաքներ, մասնակցել են 147՝ Եվրոպայի, աշխարհի առաջնությունների և միջազգային մրցաշարերի: 2015 թվականին ՀՀ հավաքական թիմերի մարզիկները 12 մարզաձևերից (ազատ ոճի ըմբշամարտ, հունա-հռոմեական ըմբշամարտ, թաեքվոնդո, ձյուդո, հրաձգություն, բռնցքամարտ, ծանրամարտ, շախմատ, սամբո, ուշու, մարմնամարզություն, հեծանվային սպորտ) աշխարհի և Եվրոպայի առաջնություններում (մեծահասակներ, երիտասարդներ, պատանիներ) նվաճել են 37 ոսկե, 46 արծաթե և 56 բրոնզե մեդալ, ընդհանուր հաշվարկով՝ 139 մեդալ: Նախորդ տարվա համեմատ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

2015 թվականին շախմատիստների պատրաստման նպատակով 251.2 մլն դրամ տրամադրվել է «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամին՝ կազմելով ծրագրի 88%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Հիմնադրամի նպատակներն ու խնդիրներն են Հայաստանի ամբողջ տարածքում տաղանդաշատ երեխաների բացահայտումը, նրանց անվճար կրթումը, միջազգային մրցաշարերի և միջոցառումների կազմակերպման շնորհիվ շախմատի մասսայականացումը: Նշված նպատակների իրագործման համար մշակվել են համապատասխան ծրագրեր, որոնցից են՝ մարզերում շախմատային խմբակների ստեղծումը, որտեղ երեխաները անվճար ուսանում են շախմատ, լավագույնները մասնակցում են մրցաշարերի, ստանում որակավորում, միջազգային և ազգային մրցաշարերի կազմակերպումը, մարզիչների որակավորումը բարձրացնելու նպատակով սեմինարների կազմակերպումը, որտեղ արտերկրից հրավիրվում են փորձառու մարզիչներ՝ իրենց փորձը կիսելու և շախմատային գիտելիքներ հաղորդելու համար, լավագույն սաների համար հավաքների կազմակերպումը: Նախորդ տարվա համեմատ շախմատիստների պատրաստման ծախսերը նվազել են 1.2%-ով:

Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով պետական աջակցությունը կազմել է 50 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ծավալով և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել: Ծրագրի շրջանակներում դրամական մրցանակներ են հանձնվել օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի առաջնություններում և գավաթի խաղարկություններում հաղթած մարզիկներին, նրանց անձնական մարզիչներին, հավաքականի գլխավոր մարզիչներին, երկրորդ մարզիչներին, բժիշկներին և մարզադպրոցներին:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով տրամադրվել է շուրջ 7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.5%-ը: Խաղերն անցկացվել են ՀՀ մարզերի 38 տարածաշրջաններում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում, 4 փուլով, 6 մարզաձևերից, մասնակցել են հանրակրթական դպրոցների աշակերտներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ուսանողական մարզական միջոցառումներին հաշվետու տարում տրամադրվել է 37.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 99%-ը: 2014 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 8.7 անգամ՝ պայմանավորված 2015 թվականին երկու տարին մեկ անցկացվող համաշխարհային ունիվերսիադային մասնակցությամբ, որն անցկացվել է Կորեայի Գվանգջու քաղաքում: Հայաստանը մասնակցել է 6 մարզաձևում 12 մարզիկով և նվաճել մեկ ոսկե մեդալ սպորտային մարմնամարզությունից: Հայաստանի պատվիրակությունը 138 երկրների շարքում գրավել է 41-րդ տեղը: Ծրագրի շրջանակներում անցկացվել են նաև ՀՀ 16-րդ ուսանողական մարզական խաղերը՝ 10 մարզաձևերից, որոնց մասնակցել են 16 բուհերի 1198 մարզիկներ: Ընդհանուր առմամբ խաղարկվել է հաղթողի 14 գավաթ և 378 մեդալ: 2015 թվականին Երևանում կայացել է շախմատի եվրոպական համալսարանական առաջնությունը, որին մասնակցել են 9 եվրոպական երկրների 25 համալսարանական թիմեր, շուրջ 82 ուսանող-շախմատիստներ: Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի թիմը տղաների մրցապայքարում գրավել է 2-րդ տեղը:

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացման ծախսերը կազմել են ծրագրի 99.9%-ը կամ շուրջ 7 մլն դրամ՝ 1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրում ընդգրկված է 7 մարզաձև: Փառատոնն անցկացվել է ՀՀ մարզերում և ԼՂՀ-ի Ստեփանակերտ քաղաքում, որին մասնակցել է 22000 մարդ:

ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով տրամադրվել է 117.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 98.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.5%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տվյալ ծրագրից 36.5 մլն դրամ ուղղվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ՝ «Հաշմանդամություն ունեցող

լավագույն մարզիկ» և «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթները կազմակերպելու և անցկացնելու նպատակով, որոնք չէին նախատեսվել:

Մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացման համար հատկացվել է 8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Ծրագրի նպատակը մանկապատանեկան սպորտի, մասնավորապես՝ ֆուտբոլի մասսայականացումն է: Ծրագիրն անցկացվել է 2015 թվականի օգոստոսի 10-17-ը Հանքավանի հանգստյան գոտու «Զեփյուռ» մարզահամալիրում՝ մանկապատանեկան թիմերի, Երևան քաղաքի և մարզերի մարզադպրոցների ու ֆուտբոլի ակումբների մարզիչների համար, որին մասնակցել է 125 մարդ: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններին պետական աջակցությունը կազմել է 10.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 99.8%-ը: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 4 հասարակական կազմակերպությունների, որոնք իրականացրել են հետևյալ միջոցառումները:

- Մայիսի 4-6-ը Երևանում «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությունն անցկացրել է «Համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ» ծրագրով ֆուտբոլի հանրապետական առաջնությունը, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 5 հատուկ դպրոցների աշակերտներ: Յուրաքանչյուր թիմ ներկայացրել է 12-15 տարեկան 8 մարզիկ: Մրցումներին մասնակցել է 60 մարդ:
- 2015 թվականի հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 3-ը «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությունը մասնակցել է ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում անցկացված հատուկ օլիմպիադաների աշխարհի ամառային խաղերին՝ լողի ազատ ոճում նվաճելով մեկ ոսկե մեդալ: Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է եղել 5 մարզիկով:
- Հունիսի 9-11-ը Երևանում անցկացվել է հաշմանդամների հանրապետական մարզական 13-րդ փառատոնը, որին մասնակցել է 120 մարզիկ Երևան, Էջմիածին, Աբովյան, Արարատ, Արմավիր, Սպիտակ, Վանաձոր, Գյումրի, Տաշիր, Կապան քաղաքներից: Հաշմանդամ մարզիկները իրենց ուժերը չափել են 7 մարզաձևերում:
- Հուլիսի 14-29-ը Երևանում անցկացվել է կույր շախմատիստների տղամարդկանց անհատական եզրափակիչ առաջնությունը, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և Երևան քաղաքը ներկայացնող առաջին և երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող 16 կույր շախմատիստներ:
- Բացի վերոնշյալից, Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը մասնակցել է օգոստոսի 19-23-ը Իտալիայի Միլան քաղաքում կայացած պարականոեի աշխարհի առաջնությանը:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.8%-ով՝ պայմանավորված վերջին միջոցառմանը Հայաստանի մասնակցությունն ապահովելու նպատակով ՀՀ պետական բյուջեից «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությանը լրացուցիչ միջոցների հատկացմամբ:

Նախատեսված ծավալով իրականացվել են նաև հետևյալ 7 ծրագրերը:

Նավամոդելային սպորտի զարգացման նպատակով տրամադրվել է 5.5 մլն դրամ: 2015 թվականին Բուլղարիայում կայացած նավամոդելային սպորտի աշխարհի առաջնությանը մասնակցելու համար պատրաստվել են «Նավիգա» համաշխարհային կազմակերպության պահանջներին համապատասխան մրցունակ մոդելներ, Հայաստանը շահել է միաժամանակ ոսկե և արծաթե մեդալներ: Հայաստանի ներկայացուցիչը 4-րդ անգամ նվաճել է Աշխարհի չեմպիոնի կոչումը՝ արժանանալով լավագույն արդյունք ցուցաբերած անվանական գավաթին: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի չեմպիոններին թոշակի հատկացման նպատակով «ՀՀ հավաքական թիմերի կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է շուրջ 41 մլն դրամ պետական աջակցություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.3%-ով՝ պայմանավորված ՀՀ հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրության ավելացմամբ:

Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցության նպատակով տրամադրվել է 3.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5%-ով՝ պայմանավորված ՀՀ կառավարության 2015 թվականի բյուջետային ուղերձում ներկայացված՝ եվրոյի փոխարժեքի նվազմամբ:

Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոներին մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 44 մլն դրամ: 2014 թվականին այս ծրագրի շրջանակներում միջոցներ չեն օգտագործվել, քանի որ այն անցկացվում է երկու տարին մեկ անգամ:

Հակադոպինգային համաշխարհային գործակալությանն անդամակցելու նպատակով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 3.2 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության 2015 թվականի բյուջետային ուղերձում ներկայացված՝ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճով:

ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովման նպատակով տրամադրվել է 71.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 49.8%-ով, որը պայմանավորված է ձեռք բերված մարզահագուստի պահանջարկի ավելացմամբ և գների աճով:

Երևանում կայացած միջազգային մարաթոնյան վազքի անցկացման ապահովման նպատակով տրամադրվել է 20.3 մլն դրամ: 2014 թվականին այս ծրագիրը չէր իրականացվել, և նախատեսված միջոցները չէին օգտագործվել:

Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակ հատկացնելու նպատակով տրամադրվել է 146.1 մլն դրամ կամ ծրագրված հատկացումների 97.4%-ը: Շեղումը պայմանավորված է թոշակ ստացող անձանց թվի նվազմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.7%-ով՝ պայմանավորված թոշակ ստացողների թվի նվազմամբ և ցուցաբերած մարզական արդյուքներով:

2016 թվականի Ռիո դե Ժանեյրոյի 31-րդ Օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության նախապատրաստման և մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 16.5 մլն դրամ կամ նախատեսվածի 90.4%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից 18.1 մլրդ դրամ տրամադրվել է *մշակութային ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 102.1%-ը՝մ պայմանավորված ավստրիական «Վագներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս ԷյՋի», «Էլեկտրոնիկ Թիեթր քոնթրոլս Ջիէմբիէյջ» և «Արթսթեք» ընկերությունների կողմից «Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախումբ» և «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների վերազինման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով: 2014 թվականի համեմատ մշակութային ծառայությունների ծախսերն աճել են 49%-ով՝ հիմնականում պայմանավորված վերը նշված ծրագրի ծախսերի աճով:

Հաշվետու տարում շուրջ 1.8 մլրդ դրամ ուղղվել է *գրադարանների* դասի ֆինանսավորմանը, որն իրականացվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական բյուջեից տրամադրված միջոցներն ավելացել են 16.4%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

2015 թվականին 1.7 մլրդ դրամ ուղղվել է 16 գրադարանների կողմից իրականացվող գրադարանային ծառայություններին: Հաշվետու տարում գրադարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել նրանց գործունեության պայմանների բարելավումն ու մշակութային ժառանգության պահպանության ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացների իրականացումը, գրադարանային հավաքածուների պետական հաշվառման աշխատանքները: Տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ նորացվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները: Հաշվետու տարում մշակութային ծառայությունների

մատչելիությունն ապահովելու նպատակով «Բիբլիոբուս» շրջիկ գրադարան-ավտոմեքենան շրջել է Արագածոտն, Շիրակ, Գեղարքունիք, Լոռի, Սյունիք մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում՝ բնակչության գրադարանային տեղեկատվական սպասարկման ծառայություն իրականացնելու և գրադարանային հավաքածուները համալրելու նպատակով: «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակներում մասնակից 12 գրադարանների կողմից համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են մուտքագրվել մատենագիտական գրառումներ: Ազգային գրադարանի միջոցով իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության հավատարմագրման վկայական ստացած 5 համայնքային գրադարանների վերազինումը՝ համաձայն հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման դրամաշնորհային ծրագրի: Իրականացվել է «Համայնքային գրադարանավարների վերապատրաստում» դրամաշնորհային ծրագիրը, որի շնորհիվ ՀՀ տասը մարզերից վերապատրաստվել են 100 համայնքային գրադարանավարներ: Նախորդ տարվա համեմատ գրադարանային ծառայությունների ծախսերն ավելացել են 16.5%-ով:

2015 թվականին հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների մատուցման համար պետական բյուջեից Հայաստանի ազգային գրապալատին հատկացվել է 79.3 մլն դրամ: Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող՝ ՀՀ-ում ու արտերկրում լույս տեսած և լույս տեսնող հրատարակությունների անձեռնմխելի ֆոնդերի պահպանման, մատենագիտական տեղեկույթով ապահովման, գիտության զարգացման և հանրության կրթական մակարդակի բարձրացման խնդիրների իրագործմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.3%-ով:

2015 թվականին *թանգարանների և ցուցասրահների* դասի ծրագրերին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 2.2 մլրդ դրամ, որը գրեթե ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.7%-ով, որը նույնպես պայմանավորված է աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Նշված միջոցներից 2 մլրդ դրամը տրամադրվել է թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ֆինանսավորմանը, որն իրականացվել է 99.9%-ով: Հատկացումների հաշվին ապահովվել է 37 թանգարանների գործունեությունը: Թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունը, հանրահռչակումը, բացառիկ ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստումը, թանգարանային առարկաների կոնսերվացումը և վերականգնումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.5%-ով կամ 222.7 մլն դրամով:

Թանգարաններին և ցուցասրահներին աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին տրամադրվել են 246.4 մլն դրամ սուբվենցիաներ: Միջոցներն ուղղվել են Երևանի քաղաքապետարանի ենթակայության 4 թանգարանների գործունեության ապահովմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.2%-ով կամ 12.2 մլն դրամով:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից 206 մլն դրամ է տրամադրվել *մշակույթի տների, ակումբների և կենտրոնների* ֆինանսավորմանը, որն օգտագործվել է 64.3%-ով՝ պայմանավորված տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 24.7%-ով՝ հիմնականում պայմանավորված 2015 թվականին տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորոգման նպատակով միջոցների հատկացմամբ: Այդ նպատակով տրամադրվել է 150 մլն դրամ՝ ապահովելով 73.5% կատարողական: Միջոցները նախատեսված էին ՀՀ Արարատի, Արմավիրի և Շիրակի մարզերում մշակութային օբյեկտների հիմնանորգման համար: Արմավիրի և Շիրակի մարզերում աշխատանքներն ամբողջությամբ իրականացվել են և առկա են եղել տնտեսումներ, Արարատի մարզում կատարվել են միայն նախագծանախահաշվային աշխատանքները, իսկ հիմնանորոգման աշխատանքները տեղափոխվել են 2016 թվական:

Հաշվետու տարում 46.6 մլն դրամ ուղղվել է համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը: Ծախսերն իրականացվել են նախատեսված ծավալով և 16%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Մշակութային օբյեկտների շինարարություն ծրագրի շրջանակներում 2015 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 9.4 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 13.4%-ը: Միջոցները նախատեսված էին ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակ գյուղի մշակույթի տան շինարարական աշխատանքների համար, որոնք նախատեսված ծավալով չեն իրականացվել՝ կապալառու կազմակերպության կողմից աշխատանքների ժամանակացույցի խախտմամբ պայմանավորված:

Այլ մշակութային կազմակերպությունների դասին ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 848.4 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 11.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է արխիվային ծառայությունների և Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծախսերի աճով՝ կապված աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հետ:

Շուրջ 524.3 մլն դրամ տրամադրվել է Հայաստանի Ազգային արխիվի սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.1%-ով:

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 35.9 մլն դրամ աջակցություն: Ծրագրի նպատակը մշակութային արժեքների փորձագիտական ուսումնասիրության, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումն է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.9%-ով:

2015 թվականին տվյալ դասում ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 252.7 մլն դրամն ամբողջությամբ ուղղվել է Երևանի կենդանաբանական այգու սուբսիդավորմանը, որը նախորդ տարվա համեմատ աճել է 9.2%-ով:

Հայրենիք-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 35.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.8%-ով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հայաստան-սփյուռք գործակցության վերաբերյալ տեղեկատվական վերլուծական նյութերի պատրաստման և տարածման, համահայկական լրատվական ռեսուրսների (համահայկական կայքերի, տեղեկագրերի, հեռուստատեսային լրատվական հաղորդումների, հեռուստակամուրջների և այլն) ստեղծման աշխատանքներ:

Արվեստի բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 11.9 մլրդ դրամ, որը 4.5%-ով գերազանցել է ծրագրային ցուցանիշը և 78.8%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված ավստրիական «Վագներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս էյՋի», «Էլեկտրոնիկ Թիեթր քոնթրոլս Ջիէմբիէյջ» և «Արթսթեք» ընկերությունների կողմից «Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախումբ» և «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների վերազինման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով:

Օպերային և բալետային արվեստի ներկայացումներին աջակցության նպատակով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին հաշվետու տարում տրամադրվել է շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 23.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված օպերային և բալետային արվեստի պահպանման, զարգացման, թատրոնի ստեղծագործական ներուժի խթանման, կատարողական արվեստի որակի բարձրացման, կադրերի հոսունության նվազեցման, ինչպես նաև երիտասարդ կատարողների շրջանում դասական արվեստի նկատմամբ հետաքրքրության աճի նպատակային աշխատանքների իրականացման նպատակով (357 մարդ) լրացուցիչ 280 մլն դրամի նախատեսմամբ (համաձայն ՀՀ կառավարության 31.07.2014 թ. N 825-Ն որոշման), ինչպես նաև աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Ամբողջությամբ տրամադրվել է նաև Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի համար նախատեսված սուբսիդիան՝ կազմելով 333.6 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, թատերարվեստի բնագավառում հանդիսատեսի հոգևոր պահանջների ձևավորման և բավարարման, դասական և ժամանակակից լավագույն դրամատիկական ստեղծագործությունների բեմադրման նպատակով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերի 11.2%-ով աճը պայմանավորված է աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Մշակութային միջոցառումների իրականացմանը հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է 1.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 96.4%-ը: Ժամանակակից արվեստի զարգացման գործում 2015 թվականին առաջնահերթություն է համարվել երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավումը, նոր մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծումը, հայ ժամանակակից ստեղծագործություններով խաղացանկերի և երկացանկերի համալրումը, սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ: Առանձնակի կարևորվել է դեբյուտային գործընթացներին պետական աջակցությունը՝ արվեստի տարբեր ոլորտներում երիտասարդ ստեղծագործական ներուժի հայտնաբերման, խթանման, մշակութային կյանքում նրանց ներգրավման և ժամանակակից մտածողության խրախուսման, ինչպես նաև սերնդափոխության շարունակականության ապահովման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.4%-ով՝ պայմանավորված 2014 թվականին «Իմ Հայաստան» փառատոնի անցկացմամբ, որը տեղի է ունենում երկու տարին մեկ անգամ:

Տվյալ դասում ընդգրկված՝ մշակութային օբյեկտների շինարարության ծրագրի գծով 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 214.4 մլն դրամ, կազմելով նախատեսվածի 99.7%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի թատրոնի շենքի և «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ին ամրացված տարածքում շինության կառուցման շարունակական աշխատանքները:

Օտարերկրյա պետություններում հայալեզու թատերական ներկայացումներին աջակցության շրջանակներում Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան թատրոնին հատկացվել է 20 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և պահպանվել է նախորդ տարվա մակարդակին:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարների համար օգտագործվել է 37.2 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 81.6%-ը: Տնտեսումը պայմանավորված է Հանրապետությունում գտնվող պատվովճար ստացողների փաստացի թվաքանակով, ինչպես նաև պատվովճարը միանվագ (մի քանի ամիսը մեկ անգամ) ստանալու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի վճարման ծառայությունների համար տրամադրվել է 191.6 հազար դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 42%-ը և 11.6%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Միջոցների տնտեսումը պայմանավորված է պատվովճարներն ամբողջությամբ չստանալու, ինչպես նաև վճարումների ծառայության տոկոսադրույքի նվազմամբ (շահառուները ներգրավվում են անկանխիկ վճարումների համակարգ):

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծրագրի շրջանակներում 359.9 մլն դրամ է հատկացվել թատերական ներկայացումների սուբսիդավորմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16.9%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են 1.7 մլրդ դրամ, որոնք օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով: Ծրագիրն ուղղվել է թատերարվեստի զարգացմանն ու տարածմանը, թատերարվեստին հաղորդակցմանը, թատերարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16.9%-ով: Հատկացումների ավելացումն ուղղվել է աշխատավարձի բարձրացմանը և սակագների բարձրացմամբ պայմանավորված՝ էլեկտրաէներգիայի ծախսերի ավելացմանը:

2015 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների ծրագրի շրջանակներում նախատեսված 1.6 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն ուղղվել է երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 33.4%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ 2015 թվականին տվյալ ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է նաև Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը 176.4 մլն դրամի չափով:

Հայ մշակույթի միջազգային կենտրոններին աջակցության ծրագրի շջանակներում 25.7 մլն դրամ է հատկացվել Վենետիկում հայ-համաեվրոպական երկխոսության միջազգային կենտրոնի պահպանման համար, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.2%-ով՝ պայմանավորված եվրոյի փոխարժեքի նվազմամբ:

Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 19.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.2%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում են մի շարք հայապահպանական խնդիրներ, մասնավորապես՝ իրականացվում են հայ համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ:

Ազգային ակադեմիական խմբերգային համերգների ծրագրով նախատեսված միջոցներն ուղղվել են «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովմանը: Նշված ծախսերը կազմել են 166.4 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են 22.6%-ով, որը պայմանավորված է աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

2015 թվականին ավստրիական «Վագներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս էյՋի», «Էլեկտրոնիկ Թիեթր քոնթրոլս Ջիէմբիէյջ» և «Արթսթեք» ընկերությունների կողմից «Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ» և «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների վերազինման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 4.7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրվածի 113.7%-ը: Միջոցներն ուղղվել են «Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ» և «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների դահլիճների բեմական մեխանիզմների և լուսային տեխնիկայի վերազինմանը:

«Տիկնիկները հանուն խաղաղության և միջմշակութային երկխոսության» համաշխարհային երթի և տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնի ու համաժողովի (գլոբալ ծրագրի շրջանակներում) ծրագրի շրջանակներում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից տրամադրված միջոցների հաշվին նախատեսված 7.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարի նշված ծրագրին ՀՀ պետական բյուջեից միջոցներ չէին հատկացվել:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից *կինեմատոգրաֆիայի* բնագավառին տրամադրվել է 677.8 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.6%-ով՝ հիմնականում պայմանավորված կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայությունների ծախսերի ավելացմամբ:

Կինոնկարների արտադրությանը տրամադրվել է 450.7 մլն դրամ: Կինոարվեստի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ռազմավարությունը պայմանավորված է կինոարվեստի պահպանման, տարածման և զարգացման, կինոարտադրությունն ապահովող տեխնոլոգիայի մշտական կատարելագործման, միջազգային կինոփառատոններին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության

ապահովմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: 2015 թվականին նկարահանվել են 15 խաղարկային, 10 վավերագրական ֆիլմեր և 5 մուլտֆիլմեր:

Ազգային կինոծրագրերի իրականացման համար հատկացումներն ուղղվել են Հայաստանի Ազգային կինոկենտրոնի գործունեության ապահովմանը: 2015 թվականին այդ ուղղությամբ բյուջետային ծախսերը կազմել են 151 մլն դրամ՝ 4.6%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Հատկացումների ավելացումն ուղղվել է սակագնի բարձրացմամբ պայմանավորված՝ էլեկտրաէներգիայի ծախսերի ավելացմանը, և աշխատավարձերի բարձրացմանը:

Հաշվետու տարում 30.2 մլն դրամ է տրամադրվել կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին վերականգնվել է 16 ֆիլմ, իրականացվել է 5 ֆիլմի թվայնացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4 անգամ՝ պայմանավորված վերականգնված ֆիլմերի քանակի աճով:

Փաստավավերագրական կինոծրագրերը ֆինանսավորվել են 45.8 մլն դրամի չափով: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.5%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման դասին ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 449 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 96.6%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 17.7%-ով՝ հիմնականում պայմանավորված հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների ծախսերի աճով:

Հաշվետու տարում 4 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով՝ կազմելով նախատեսված հատկացումների 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 100 մլն դրամ, որը իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Ծրագրի նպատակներն են պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը, պահպանական փաստաթղթերի փաթեթի ստեղծումը և դրանց շնորհիվ հուշարձանների պահպանության ապահովումն ու հետագա սերունդներին փոխանցումը: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են նախատեսված 400 հուշարձանների պահպանական գոտիների նախագծման և թողարկման, 2000 հուշարձանների հաշվառման և ցուցակագրման, 250 հուշարձանի հաշվառման և վկայագրման, ինչպես նաև հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի 390 վավերագրերի կազմման և թվայնացման աշխատանքներ: Պատմամշակութային ժառանգության վերաբերյալ հանրությանն իրազեկելու

նպատակով հրատարակության է պատրաստվել «Հուշարձան» տարեգրքի «ԺԱ» հատորը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.9%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ, ինչպես նաև Աղցքի հայոց արքաների դամբարանների պեղումների ծրագրի գործարկման հետ կապված՝ ծախսերի ավելացմամբ:

Հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիթորինգի նպատակով տրամադրվել է 8.3 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխության չեն ենթարկվել: Հաշվետու տարում իրականացվել է 25 հուշարձանի տեխնիկական վիճակի մոնիթորինգ:

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը տրամադրվել է 60 մլն դրամ աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 100%-ը և պահպանվելով նախորդ տարվա մակարդակին: Ծրագիրն իրականացվել է «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» ՀԿ-ի կողմից, որը հաշվետու տարվա ընթացքում իրականացրել է 470 պատմամշակութային հուշարձանի վավերագրում:

Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 275.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 94.6%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 18.9%-ով՝ պայմանավորված նախագծահետազոտական ծախսերի ավելացմամբ: Աճը պայմանավորված է աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ, հուշարձանների ամրակայման, նորոգման ու վերականգնման ծախսերի աճով և ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք գյուղի Արշակունիների դամբարանի տարածքում պեղումների կատարման նպատակով ծախսերի նախատեսմամբ: Հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են եղել պատմամշակութային հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 17 հուշարձանի վերականգնման, 4 հուշարձանի հրատապ ուսումնասիրման, ամրակայման և վերականգնման, 3 նախագծային աշխատանքներ, 3 հուշարձանի պեղումների կատարում:

2015 թվականին *ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների* ծախսերը կազմել են շուրջ 8.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերն ավելացել են 45.7%-ով՝ հիմնականում պայմանավորված հեռուստառադիոհաղորդումների դասի ծախսերի աճով:

Հաշվետու տարում *հեռուստառադիոհաղորդումների* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 7.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ

ծախսերն աճել են 59.1%-ով՝ հիմնականում պայմանավորված հեռուստատեսային ծառայությունների հատկացումների աճով:

Ոլորտի պետական կառավարման մարմինների՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանմանը տրամադրվել է 391.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.3%-ը և 8.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի, ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Գնումների գործընթացի հրապարակայնության ապահովման նպատակով 2015 թվականին տրամադրվել է 20.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրված հատկացումների 68.4%-ը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ կազմակերպված գնման գործընթացի արդյունքում պայմանագիրը կնքվել է 2015 թվականի ապրիլի 17-ին, որի շրջանակներում ծառայությունների մատուցումը սկսվել է մայիսի 11-ից, ինչի արդյունքում 4 ամսվա նախատեսված գումարը չի օգտագործվել: Ծրագիրը նախատեսված է պետական գնումների կատարման համար անհրաժեշտ մրցույթների կազմակերպման, հանրությանը պետության կողմից կատարվող գնումների վերաբերյալ հրապարակային տեղեկատվության տրամադրման, մասնագետների վերապատրաստման արդյունավետ իրականացման համար:

Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստման, հեռարձակման, ձեռքբերման և բազմացման նպատակով հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է 51.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը և 3.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է 2015 թվականին 2 հաղորդում ավել պատրաստելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում պատրաստվել են հայապահպանություն քարոզող հաղորդումներ, ֆիլմաշարեր և տեսահոլովակներ սփյուռքի համայնքներին տրամադրելու և հեռարձակելու նպատակով:

2015 թվականին հեռուստառադիոհաղորդումների դասի ներքոհիշյալ 12 ծրագրերը կատարվել են նախատեսված ծավալով:

Հեռուստառադիոհաղորդումների դասի հատկացումների գերակշիռ մասը՝ 4.9 մլրդ դրամ, տրամադրվել է հեռուստատեսային ծառայություններին, որից 4.7 մլրդ դրամը հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով տրամադրվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ, 228.6 մլն դրամը՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում թվային ցանցի կազմակերպման աշխատանքներն իրականացնելու համար: Նախորդ տարվա համեմատ հեռուստատեսային ծառայությունների ծախսերն աճել են 92.8%-ով կամ 2.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված հեռուստահաղորդումների արտադրության և ձեռքբերման,

հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև 2015 թվականին ՀՀ տարածքում թվային ցանցի կազմակերպման աշխատանքների իրականացման համար միջոցների հատկացմամբ: 2015 թվականի ընթացքում ՀՀ թվային ցանցի կազմակերպման աշխատանքների շրջանակներում տեղադրվել է ավելի քան 80 նոր աշտարակ և մոտ 160 նոր հեռահաղորդակցական խցիկ: Հայաստանի Հանրապետության տարածքում թվային վերգետնյա հեռուստատեսային հեռարձակման համակարգի ներդրման ծրագրով ամբողջությամբ ավարտվել են նախատեսված աշխատանքները: Ներկայումս թվային ազդանշանը հասանելի է ՀՀ ողջ տարածքում: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1208-Ն որոշման՝ կարգավորվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից 48733 հատ DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի ձեռքբերման և դրանք անհատույց սոցիալական անապահով խմբերին հանձնելու հարցը:

Հաշվետու տարում ռադիոծառայությունների շրջանակներում 778.6 մլն դրամ դրամաշնորհ է տրամադրվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով, որը նախորդ տարվա համեմատ աճել է 16.8%-ով՝ հիմնականում պայմանավորված ռադիոհաղորդումների արտադրության և ձեռքբերման ծախսերի ավելացմամբ, որն էլ հիմնականում ուղղվել է հոգևոր-մշակութային նոր ռադիոալիքի համար հոգևոր-մշակութային ռադիոհաղորդումների ձեռքբերմանը, ինչպես նաև աշխատավարձերի բարձրացմանը և ռադիոհաղորդումների հեռարձակման ծախսերի ավելացմանը:

Ռադիո և հեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով 91.4 մլն դրամ է տրամադրվել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին, որը 3.4 անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և հեռուստառադիոհաղորդումների արտադրության և ձեռքբերման ծախսերի աճով:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ծրագիրը նախատեսված է հեռուստառադիոհաղորդումների միջոցով ԱՊՀ երկրներում տեղեկույթ տարածելու և ստանալու համար: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս ԱՊՀ երկրներում ծանոթանալ Հայաստանի մշակութային, քաղաքական և տնտեսական կյանքին: Նշված ծրագրի գծով հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 131.9 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 10%-ով՝ հիմնականում պայմանավորված եթերային (հեռուստատեսային) ժամերի ավելացմամբ:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 44.7 մլն դրամի պետական աջակցություն, որը նախորդ տարվա համեմատ աճել է 4.8 անգամ՝ հիմնականում պայմանավորված

հետազոտությունների քանակի, դրանք իրականացնող անձանց թվաքանակի և աշխատավարձերի բարձրացմամբ:

2015 թվականի պետական բյուջեից տնտեսական վերլուծությունների ծառայությունների շրջանակներում 191.2 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որը պահպանվել է նախորդ տարվա մակարդակին: 2015 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

- «Հրապարակում» հեռուստահաղորդաշարի հաղորդումների պատրաստում և եթերի ապահովում Հանրային հեռուստատեսությամբ՝ շաբաթը մեկ անգամ, ՀՀ կառավարության գործունեության, ՀՀ վարչապետի այցերի և հանդիպումների նկարահանումների ապահովում և արխիվացում, հրատապ նյութերի տրամադրում հեռուստաընկերություններին,
- Հեռուստահաղորդումների, էլեկտրոնային կայքերի, հանրապետական թերթերի, սոցիալական ցանցերի շուրջօրյա մշտադիտարկում, տեղեկատվության մշակում, վերլուծություն և ռիսկերի կառավարում,
- ՀՀ կառավարության գործունեության լուսաբանում հանրապետական և մարզային ԶԼՄ-ներում, ՀՀ կառավարության գործունեության և իրականացված ծրագրերի լուսաբանում, մարզային հաղորդումների պատրաստում և մարզային հեռուստաընկերությունների միջոցով հեռարձակում:

Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայությունների ծախսերը կազմել են 150.2 մլն դրամ, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 1.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգմանը պետական բյուջեից տրամադրվել է 135 մլն դրամ դրամաշնորհ, իսկ տեխնիկական վերազինմանը՝ 209 մլն դրամ: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը համապատասխանաբար նվազել են 38.6%-ով և աճել 71.4%-ով:

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգմանը պետական բյուջեից տրամադրվել է 50 մլն դրամ դրամաշնորհ, որը նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել:

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինմանը պետական բյուջեից տրամադրվել է 8.9 մլն դրամ, որն ուղղվել է հեռուստատեսային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերմանը և 4.4 անգամ գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

«Հոգևոր-մշակութային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման նպատակով 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 7.6 մլն դրամ դրամաշնորհ, որն ուղղվել է հեռուստատեսային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերմանը:

2015 թվականի պետական բյուջեում շուրջ 1.2 մլրդ դրամ են կազմել *հրատարակչությունների և խմբագրությունների* դասի ծախսերը՝ 98%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերն աճել են 8.2%-ով՝ հիմնականում պայմանավորված տնտեսագիտական հրապարակումների և հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 72.2 մլն դրամ (100%), որը հատկացվել է «Հանրապետություն» ՓԲԸ-ին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի հրատարակման համար, և «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ-ին՝ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի հրատարակման համար: Հաշվետու ժամանակաշրջանում լույս է տեսել «Հայաստանի Հանրապետություն» թերթի 236 և «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի 90 օրինակ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 102 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին հրատարակվել է 40 անուն գիրք՝ նախորդ տարվա 55-ի դիմաց: 2014 թվականի համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 77.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.6%-ով:

Տնտեսագիտական հրապարակումների շրջանակներում 84.3 մլն դրամ է տրամադրվել «Էկոնոմիկա» հանդես ՓԲԸ-ին՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: 2014 թվականի համեմատ նշված ծախսերի 94.3%-ով աճը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Ոչ պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 47.1 մլն դրամ կամ նախատեսվածի 96%-ը՝ պայմանավորված «Հայաստանի գրողները տպագրության մեջ և վաճառքում», «Սիսիանի ձայն» և «Կամք+» թերթերը լույս չտեսնելու, ինչպես նաև «Շախմատային Հայաստան» թերթի՝ նախատեսված 52 համարի դիմաց 27-ով պակաս տպագրության հանգամանքով: Հաշվետու ժամանակաշրջանում «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրի շրջանակներում հրատարակվել է 62 անուն թերթ և ամսագիր՝ կանխատեսված 65-ի և նախորդ տարվա 67-ի համեմատ: Ծրագրի շրջանակներում պետական հոգածություն է ցուցաբերվում ոչ պետական մամուլին, ինչի միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռվում տեղեկույթ ստանալ տեղերից: Պետական աջակցություն է ցուցաբերվում նաև ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող գրական և մշակութային մամուլին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը տրամադրվել է 45.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 5.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 432.5 մլն դրամ կամ ծրագրվածի 98.8%-ը: Միջոցները տրամադրվել են ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) և «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացներում և ՀՀ արդարադատության նախարարության գործունեության ընթացքում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանքի ձեռքբերման, «Առլիս» տեղեկատվական համակարգի պահպանման և շահագործման աշխատանքները, ինչպես նաև ՀՀ մուտքի վիզայի բլանկների ու միջազգային պայմանագրերի տպագրությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.8%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2015 թվականին տպագրվել է ՀՀ Սահմանադրության նախագիծը:

Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին աջակցության շրջանակներում 10 մլն դրամ է հատկացվել «Վրաստան» թերթի հրատարակմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Թարգմանչական ծառայությունների համար նախատեսված գումարը նույնպես օգտագործվել է 100%-ով՝ կազմելով 185.9 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ աճելով 7.7%-ով, որը պայմանավորված է աշխատանքների ծավալների աճով: 2015 թվականին թարգմանվել է 21989 էջ՝ 2014 թվականի 20302 էջի դիմաց:

Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակմանը 2015 թվականի համար նախատեսված 15.3 մլն դրամ գումարը չի օգտագործվել՝ կապված պետական գույքի մասնավորեցման մասին համապատասխան որոշումների և դրանց հիմքով համապատասխան հայտարարությունների հրապարակման բացակայության հետ:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 39.1 մլն դրամ աջակցություն՝ կազմելով ծրագրի 97.8%-ը: Հատկացումների հաշվին հրատարակվել է 60 անուն գիրք՝ նախատեսված 61-ի փոխարեն, և իրականացվել են 8 լազերային սկավառակի պատրաստման աշխատանքներ: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 1.1%-ով:

Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 33 մլն դրամ (100%): Միջոցները հատկացվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակման, էլեկտրոնային գրադարանի համալրման ու «Արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկիչ» ծրագրի համալրման և սպասարկման աշխատանքներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրման և սփյուռքի համայնքներին առաքման նպատակով հատկացվել է 10 մլն դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: 2015 թվականի ծրագրի շրջանակներում մոտ 285 ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների առաքվել է 50000 կտոր գրականություն՝ 2014 թվականի 41258 կտորի դիմաց:

«Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակման նպատակով օգտագործվել է 7.8 մլն դրամ կամ նախատեսվածի 94.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.7%-ով՝ ծառայությունն ավելի ցածր գնով ձեռք բերելու արդյունքում: Տարեգրքի նպատակն է արժևորել, գրի առնել, լրացնել և ամբողջական դարձնել սփյուռքի հայ համայնքների գործունեությունը, Հայաստան-սփյուռք գործակցության ոլորտում իրականացվող ծրագրերը և ձեռնարկները: Տարեգիրքը կարող է հիմք հանդիսանալ էական քայլեր իրականացնելու համար սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների բարելավման և տվյալների միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ, համապարփակ տեղեկատվություն տարածել տարբեր երկրներում գործող հայկական համայնքների մասին: Տարեգրքի միջոցով լուսաբանվում են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից տարվա ընթացքում սփյուռքի հետ իրականացված ծրագրերը, համահայկական կազմակերպությունների և հոգևոր կառույցների ազգապահպան ձեռնարկները՝ դրանք հասանելի դարձնելով աշխարհասփյուռ հայությանը:

Գրական ժառանգության պահպանման և տարածման համար նախատեսված 26.4 մլն դրամի միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Ծրագրի շրջանակներում ապահովվում է «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշվետու տարում *տեղեկատվության ձեռքբերման* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 376.1 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 4.4%-ով՝ հիմնականում պայմանավորված հանրային իրազեկման ապահովման ծախսերի կրճատմամբ:

Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունները մատուցվել են «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից, որը տեղեկույթ է տրամադրել հանրապետության ԶԼՄ-ներին և

արտերկրում գտնվող ՀՀ դեսպանատներին: Այս նպատակով հատկացվել է 82.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.6%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Հանրային իրազեկման ապահովմանը տրամադրվել է 293.6 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել են աշխատանքներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության և համայն հայության շահերին առնչվող պետական քաղաքականության տեղեկատվական սպասարկմանը, տեղեկատվական հոսքերի դիտարկմանն ու կառավարմանը, ռիսկերի ախտորոշմանն ու գնահատմանը, դրանց կանխարգելման և հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.6%-ով՝ պայմանավորված 2014 թվականի տարեվերջին կենտրոնի աշխատակիցներին պարգևատրելու հանգամանքով:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից 971.6 մլն դրամ է տրամադրվել *կրոնական և հասարակական այլ ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են 86.6%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 21.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է պետական բյուջեից «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 728.8 մլն դրամ է տրամադրվել *երիտասարդական ծրագրերի* դասին, որի ծախսերը կատարվել են 88.2%-ով և նախորդ տարվա համեմատ աճել են 21.2%-ով: Նշված գումարից 252.7 մլն դրամն ուղղվել է «Երիտասարդական ծրագրեր»-ին՝ ապահովելով 98.2% կատարողական և 1.3%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին տրամադրվել է 8 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նշված գումարից շուրջ 5.7 մլն դրամը տրամադրվել է «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին, 2.3 մլն դրամը՝ «Ինֆորմացիոն ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի պայքարի վերաբերյալ լավագույն լրագրողական լուսաբանման համար: Նախորդ տարվա համեմատ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 41.3%-ով՝ պայմանավորված «Ինֆորմացիոն ազատության կենտրոն» ՀԿ-ին գումարի հատկացմամբ:

«Արի տուն» ծրագրի շրջանակներում Սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան ճանաչողական այցելությունների կազմակերպման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 93.5 մլն դրամ՝ ապահովելով 93.5% կատարողական, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ բարերարները հոգացել են մասնակիցներից մի քանիսի ճամբարի և էքսկուրսիաների ծախսերը:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվում են 13-20 տարեկան սփյուռքահայ երիտասարդների 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում, 4 օր՝ ճամբարում: Մասնակցում են թվով 9 ճանաչողական շրջայցերի, ինչպես նաև ճամբարում մասնակցում են հայոց լեզվի, հայկական երգի և պարի դասերի: Գլխավոր նպատակներից է նաև սփյուռքում բնակվող հայազգի երիտասարդների հայապահպանությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.8%-ով՝ հիմնականում պայմանավորված մասնակիցների թվի ավելացմամբ: 2015 թվականին ծրագրին մասնակցել են 1365 երիտասարդներ՝ 2014 թվականի 1300-ի դիմաց::

2015 թվականին պետական բյուջեից Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը տրամադրվել է 12 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում անցկացվել են թվով 11 միջոցառումներ, շահառուների թիվը կազմել է շուրջ 700 մարդ: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 80.7%-ով՝ կազմելով 362.6 մլն դրամ և 45.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրում նախատեսված 2270 շահառուի փոխարեն ընդգրկվել է 2095 շահառու:

Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության ծախսերը 2015 թվականին կազմել են 242.8 մլն դրամ՝ 82.1%-ով ապահովելով ծրագիրը և 11.4%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Օգտագործված գումարից 147.1 մլն դրամը տրամադրվել է ՀՀ երիտասարդական հիմնադրամին, որին վերապահված է եղել 2015 թվականի ընթացքում հասարակական կազմակերպությունների միջև դրամաշնորհային մրցույթների կազմակերպման իրավասությունը: Շեղման հիմնական պատճառը պայմանավորված է նրանով, որ հիմնադրամի կողմից մի շարք անվանակարգերում դրամաշնորհային մրցույթներ չեն անցկացվել: Համապատասխանաբար 20 մլն դրամ և 75.7 մլն դրամ է հատկացվել հասարակական կազմակերպություններին և քաղաքական կուսակցություններին, որոնք ամբողջությամբ օգտագործվել են: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերի աճը պայմանավորված է իրականացված միջոցառումների քանակի աճով:

Այլ դասերին չպատկանող հանգստի, մշակույթի և կրոնի դասի շրջանակներում ծախսվել է 836.6 մլն դրամ՝ ապահովելով 97.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.8%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման

(նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով տրամադրվել է 712.4 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 97.4%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների աշխատակազմերի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.5%-ով:

ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների՝ ծրագրերի իրականացման գրասենյակների պահպանման նպատակով տրամադրվել է 124.2 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 96.8%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 25.1%-ով:

<u>Կրթություն</u>

2015 թվականին *կրթության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 122.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 100.2% կատարողական: Ծրագրի կատարողականը պայմանավորված է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերում ընդգրկված՝ ՀԲ աջակցությամբ իրականացվող կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրի բարձր կատարողականով (170.8%): 2014 թվականի համեմատ կրթության բնագավառի ծախսերն աճել են 5.6%-ով կամ շուրջ 6.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հանրակրթության ծախսերի, միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման, բարձրագույն մասնագիտական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծախսերի աճով, ինչպես նաև Կրթության գերազանցության ազգային ծրագրի և Համաշխարհային բանկի աջակցությամբ Կրթության բարելավման ծրագրի իրականացմամբ:

2015 թվականի պետական բյուջեի կրթությանը հատկացված միջոցներից 596.8 մլն դրամն ուղղվել է *նախադպրոցական կրթությանը*՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 100% կատարողական և 24%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված երեխաների թվաքանակի աճով և ուսումնաօժանդակ ու սպասարկող անձնակազմի աշխատավարձի բարձրացմամբ: Ծրագիրը մեկնարկել է 2011 թվականից և ուղղված է մանկապարտեզ չունեցող համայնքների ավագ տարիքի երեխաների կրթության կազմակերպմանը: Նշված գումարից 4.5 մլն դրամը հատկացվել է նախադպրոցական կրթության գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացմանը, որն ամբողջությամբ ծախսվել է:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով ավելի

քան 72.6 մլրդ դրամ, որից 24.9 մլրդ դրամը կազմել են տարրական, 32.2 մլրդ դրամը՝ հիմնական, 15.6 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը: Հանրակրթության համակարգում 2015 թվականին գործել է 1357 դպրոց՝ 349 հազար աշակերտով՝ 2014 թվականի 1359 դպրոցի և 345.5 հազար աշակերտի դիմաց: Նախորդ տարվա համեմատ հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 4.4%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և երեխաների թվաքանակի աճով:

Երաժշտական դպրոցներում ուսուցմանը տրամադրվել է 385 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Հատկացումների հաշվին ապահովվել է «Երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 17.4%-ով կամ շուրջ 57 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Շուրջ 7.9 մլն դրամ է կազմել երաժշտական դպրոցներում սովորողների կրթաթոշակը: Նշված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

2015 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հատուկ կրթության ծախսերը կատարվել են 98.8%-ով՝ կազմելով ավելի քան 3.3 մլրդ դրամ, որից շուրջ 1.1 մլրդ դրամն ուղղվել է տարրական, 1.6 մլրդ դրամը՝ հիմնական, 660.4 մլն դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառների հատուկ կրթական հաստատություններին: Հաշվետու տարում հատկացված միջոցներով գործել է 22 դպրոց շուրջ 2.2 հազար աշակերտով՝ նախորդ տարվա 23 դպրոցի և 2.4 հազարի դիմաց (1 դպրոց դարձել է ներառական): 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 7.2%-ով կամ 223.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպման համար ծախսվել է ավելի քան 2.0 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.9%-ը: Տնտեսումը հիմնականում պայմանավորված է Ապարանի ռազմամարզական վարժարանի՝ նախատեսված ծավալով չգործելու հանգամանքով: Համակարգում գործել է 7 դպրոց, սաների միջին տարեկան թիվը կազմել է 2460.3՝ 2014 թվականի 2520.3-ի դիմաց: 2014 թվականի համեմատ մասնագիտացված հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 7.4%-ով կամ 140.0 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

2015 թվականին ավելի քան 11.4 մլն դրամ է տրամադրվել մասնագիտացված հանրակրթական հաստատությունների սաների կրթաթոշակների վճարմանը, որը կատարվել է 85.5%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կրթաթոշակ տրամադրվել է միայն որոշակի

չափանիշների բավարարող սաներին, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.3 անգամ՝ պայմանավորված սաների թվի աճով:

2015 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ներառական կրթության ծախսերը կատարվել են 99.5%-ով՝ կազմելով ավելի քան 2.3 մլրդ դրամ, որից 1.1 մլրդ դրամը՝ տարրական, 1.2 մլրդ դրամը՝ հիմնական, և 93.3 մլն դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերն են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 44.9%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և դպրոցների ու սովորողների թվաքանակի աճով: 2015 թվականին գործել է 95 ներառական դպրոց 4.2 հազար աշակերտով՝ 2014 թվականի 83 դպրոցի և 3.1 հազար աշակերտի դիմաց:

Հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ընդգրկված՝ երեկոյան ուսուցման ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվել են ՀՀ Շիրակի մարզի և Երևան քաղաքի երեկոյան դպրոցները, որոնց տրամադրվել է ավելի քան 45.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 9.3%՝ պայմանավորված աշակերտների թվաքանակի աճով:

2015 թվականին *նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության* խմբի ծախսերը կազմել են 8.9 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 99.2%-ը, որից շուրջ 2.6 մլրդ դրամը կազմել են նախնական մասնագիտական (արհեստագործական), 6.3 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծախսերը: Նշված դասերի գծով ծրագրված ցուցանիշները կատարվել են համապատասխանաբար 97.7%-ով և 99.8%-ով:

Հաշվետու տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 2.2 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով 97.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական հաստատություններում սովորող ուսանողներին տրամադրվել է 383.8 մլն դրամ կրթաթոշակ՝ 96.8%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.6%-ով՝ պայմանավորված կրթաթոշակ ստացող սովորողների թվի նվազմամբ:

2015 թվականին միջին մասնագիտական կրթության ոլորտում 5.8 մլրդ դրամ է տրամադրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների, 518.3 մլն դրամ՝ միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների վճարմանը: Նշված երկու ծրագրերն էլ կատարվել են 99.8%-ով: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են

համապատասխանաբար 29.7%-ով և 15.9%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից 11.1 մլրդ դրամ տրամադրվել է *բարձրագույն կրթության* բնագավառին, որից շուրջ 10.2 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, 917.8 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը: Բարձրագույն կրթության ծախսերի տարեկան ծրագիրն ապահովվել է 98.9%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 17.4%-ով կամ 1.6 մլրդ դրամով, ինչը մասամբ պայմանավորված է բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծախսերի աճով:

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր: Դրանցում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման համար կատարված հատկացումները, որոնք օգտագործվել են 99%-ով՝ կազմելով շուրջ 7.4 մլրդ դրամ: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է 880.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 96.7%-ը և 0.8%-ով գիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է կրթաթոշակ ստացող ուսանողների թվի նվազմամբ:

1.9 մլրդ դրամ են կազմել բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրի ծախսերը, որոնք կատարվել են 99.8%-ով և 51.6%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և բուհերի թվի աճով: 2015 թվականին համակարգում գործել են 22 բուհեր՝ նախորդ տարվա 20-ի դիմաց (ցանկում ավելացել են Երևանում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղը և «Հայաստանում ֆրանսիական բարձրագույն ինժեներական ինստիտուտ» հիմնադրամը):

Հաշվետու տարում *հետբուհական մասնագիտական կրթության* բնագավառի ծախսերը կատարվել են 97.9%-ով՝ կազմելով 917.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 14.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հետբուհական մասնագիտական կրթության, գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրման ծախսերի աճով: Մասնավորապես՝ 47.6 մլն դրամ տրամադրվել է գիտական կադրերի պատրաստման գծով նպաստներին, որը կատարվել է 92.4%-ով՝ պայմանավորված ասպիրանտների թվաքանակի նվազմամբ՝ կապված օտար լեզվի ընդունելության քննությունը չհաղթահարելու հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.7 անգամ՝ կապված աշխատավարձերի բարձրացման և ասպիրանտների թվաքանակի աճի հետ:

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների վճարման համար 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 37.3 մլն դրամ, որը կատարվել է 92.6%-ով: Շեղումը պայմանավորված է ասպիրանտների և դոկտորանտների թվի փոփոխությամբ: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 4.5%-ով:

Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի ծախսերը համապատասխանաբար կազմել են 594.0 մլն և 238.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 98.4%-ով և 98.9%-ով: Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծրագրի կատարողականը պայմանավորված է օտար լեզվի ու ինֆորմատիկայի դասընթացների կազմակերպման համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Ծրագիրն իրականացվել է 14 բարձրագույն ուսումնական հաստատություններում, որտեղ ասպիրանտների թիվը կազմել է 924, օրդինատորներինը (այդ թվում ինտերնատուրա)՝ 208, դոկտորանտներինը՝ 18: Բացի այդ, վերապատրաստվել են թվով 1200 բժիշկներ և բուժքույրեր: Նախորդ տարվա համեմատ նպաստների գծով ծախսերն ավելացել են 13.4%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Կրթաթոշակի գծով ծախսերն աճել են 7.4%-ով՝ պայմանավորված ասպիրանտների թվի աճով:

Հաշվետու տարում *ըստ մակարդակների չդասակարգվող կրթության* խմբի ծախսերը կազմել են ավելի քան 6.0 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը, որից 4.7 մլրդ դրամը կազմել են արտադպրոցական դաստիարակության, 1.3 մլրդ դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերը: 2014 թվականի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերն աճել են 26.8%-ով կամ շուրջ 1.3 մլրդ դրամով: Ընդ որում՝ 31.5%-ով կամ 1.1 մլրդ դրամով ավելացել են արտադպրոցական դաստիարակության, 12.5%-ով կամ 148.0 մլն դրամով՝ լրացուցիչ կրթության ծախսերը:

Արտադպրոցական դաստիարակությանը 2015 թվականի պետական բյուջեից հատկացված 13 մլն դրամ աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում անցկացվել են ՀՀ դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադան, կազմակերպվել են հունա-հռոմեական և ազատ ոճի ըմբշամարտերի հանրապետական առաջնություններ, որոնց հաղթողները մասնակցել են դպրոցականների համաշխարհային գիմնազիադային, լավագույն ռազմահայրենասիրական և դաստիարակչական ծրագրերի մասսայականացման և դպրոցների միջև փորձի փոխանակման նպատակով իրականացվել է լավագույն աշխատանքների տպագրություն, ՀՀ պատվիրակությունը ՌԴ Ուլյանովսկ քաղաքում մասնակցել է ԱՊՀ մասնակից պետությունների միջև դպրոցական սպորտի երրորդ միջազգային փառատոնին: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են

30%-ով կամ 3.0 մլն դրամով՝ պայմանավորված վերջին միջոցառմանը ՀՀ պատվիրակության մասնակցության ապահովման համար միջոցների տրամադրմամբ:

Շուրջ 2.7 մլրդ դրամ է հատկացվել արտադպրոցական դաստիարակության ծրագրի ֆինանսավորմանը՝ ապահովելով 99.7% կատարողական: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 25.5%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ: Համակարգում գործել է 10 հաստատություն, սովորողների միջին տարեկան թիվը կազմել է 7638 երեխա՝ ինչպես նախորդ տարի:

Շախմատի մրցույթների պատրաստման ծառայություններին 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 17.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13.5%-ով, որը նույնպես հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

«Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրի համար նախատեսված 777.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 22.3.%-ով՝ հիմնականում պայմանավորված մարզական միջոցառումների քանակի ավելացմամբ և աշխատավարձերի բարձրացմամբ: Հատկացված միջոցների հաշվին 4 հասարակական կազմակերպությունների 24 մանկապատանեկան մարզադպրոցներում մարզվել են 5526 մարզիկներ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 467.1 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 37.3%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և երաժշտական ու արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով սովորող երեխաների ուսման ամսական վարձավճարների փոխհատուցման չափի փոփոխությամբ. այն 2015 թվականին կազմել է 22228 դրամ ՝ 2014 թվականի 16186 դրամի դիմաց:

Արտադպրոցական դաստիարակության գծով ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման համար նախատեսվել է շուրջ 219.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 31.1%-ով՝ կապված աշխատավարձերի բարձրացման հետ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներին տրամադրվել է շուրջ 77.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը մեթոդիստ-մանկավարժների և հանրապետության առաջատար մասնագետների միջոցով հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների 8810 մանկավարժների և սովորողների ցուցաբերել է

մեթոդական օգնություն՝ նախատեսված 6500-ի դիմաց (2014 թվականին՝ 8800): Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 19.5%-ով՝ հիմնականում կապված աշխատավարձերի բարձրացման հետ:

2015 թվականի պետական բյուջեով երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման համար նախատեսված 17.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին տպագրվել են 20 անուն դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ՝ նախորդ տարվա 27-ի դիմաց: Հրատարակված գրականության մի մասն անվճար տրամադրվել է հանրապետության մշակութային կրթօջախներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Արտադպրոցական դաստիարակության բնագավառում «Վինդսերֆինգ մարզաձևին առնչվող ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է շուրջ 49.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման նպատակով հատկացվել է 168.2 մլն դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը: 2015 թվականին 46 մարզական կազմակերպությունների համար նախատեսված 39 անուն մարզագույքի դիմաց ձեռք է բերվել 38 անուն մարզագույք: Ծրագիրը ներդրվել է 2015 թվականից:

Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման նպատակով հատկացվել է 3.8 մլն դրամ կամ նախատեսվածի 51.7%-ը, որը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 14.8%-ով՝ պայմանավորված մարզերից վերապատրաստվող մարզիչների թվի նվազմամբ:

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպման նպատակով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման համար նախատեսված 8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նույնպես աճել են 10.2%-ով, որը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ և աշակերտների թվի աճով:

Իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը աջակցության նպատակով 2015 թվականին տրամադրվել է 25 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 24.2%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

2015 թվականին պետական բյուջեից «Դպրոցահասակ երեխաների մասնակցություն դպրոցական խաղերին» ծրագրով նախատեսված 49.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակում ՀՀ դպրոցականները մասնակցել են Ֆրանսիայում կայացած բասկետբոլի աշխարհի առաջնությանը, ՌԴ Ուլյանովսկ քաղաքում ԱՊՀ մասնակից պետությունների միջև դպրոցական սպորտի երրորդ միջազգային փառատոնին, Վրաստանում կայացած լողափնյա վոլեյբոլի դպրոցականների միջազգային առաջնությանը, Ուկրաինայում կայացած պատանիների միջազգային մրցաշարին: Անցկացվել են ֆուտբոլ և բասկետբոլ մարզաձևերից հանրապետական մրցումներ, որոնց մասնակցել է 336 հոգի: ՀՀ դպրոցականների աշխարհի առաջնությանը նախապատրաստելու համար կազմակերպվել են ուսումնամարզական հավաքներ հանդբոլ, սեղանի թենիս և ֆուտ-զալ մարզաձևերից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով տրամադրվել է 16.2 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 81.1%-ը, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Արդյունքում նշված ծախսերը զիջել են նաև նախորդ տարվա ցուցանիշը՝ 14.4%-ով: Ծրագրի հաշվին երաժշտական դպրոցների համար նախատեսված 20 անուն 102 գործիքի դիմաց ձեռք է բերվել 22 անուն 96 երաժշտական գործիք:

2015 թվականին շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը և կատարելագործմանն աջակցության նպատակով նախատեսված 15.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրում ընդգրկված 15 շնորհալի պատանի երաժիշտ-կատարողները 2015 թվականին մասնակցել են շուրջ 60 հանրապետական և միջազգային նախագծերի՝ մրցույթներ, փառատոներ, մենահամերգներ, վարպետության դասեր և այլ նպատակային ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարության իրականացման գծով 2015 թվականին նախատեսված 64.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: 2015 թվականի ընթացքում երկրապահ կամավորականների միության 73 մարզային և տարածքային բաժանմունքներում, սփյուռքի 15 ներկայացուցչություններում երկրապահ ակումբների թիվն ավելացել է 1437-ով: Անցկացվել է հրամանատարասերժանտական դասընթացների 8 փուլ, որից 5-ը՝ դպրոցներում, իսկ 3-ը՝ ամռանը ճամբարում կազմակերպվող պատանիների հանգստի ուսումնամարզական հավաքների ժամանակ: Պարապմունքներն անցկացվել են շաբաթական 3 օր՝ ԵԿՄ տարածքային բաժանմունքներում և շաբաթական 5 օր՝ դպրոցներում, իսկ կիրակի օրերին տարածքներում անցկացվել են հրամանատարասերժանտական դասընթացներ: 2015 թվականի

վերջին մեկնարկել է ՀՀ և ԼՂՀ մարզեր ուխտագնացությունների կազմակերպումը: Ծրագիրը 2015 թվականին իրականացվել է առաջին անգամ:

2015 թվականին պետական բյուջեից ավելի քան 1.3 մլրդ դրամ է տրամադրվել *լրացուցիչ կրթությանը*՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 95.4%-ը: Նախորդ տարվա համեմատ լրացուցիչ կրթության ծախսերն աճել են 12.5%-ով՝ հիմնականում պայմանավորված հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայությունների գծով ծախսերի աճով:

ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվերի շրջանակներում 2015 թվականին օգտագործվել է շուրջ 30.9 մլն դրամ՝ ապահովելով 82.1% կատարողական: Ծրագրից շեղումը պայմանավորված է մի շարք պատճառներով՝ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստումներով (միջազգային կազմակերպությունների կողմից, վարկային և դրամաշնորհային ծրագրերով), օրենքով նախատեսված համապատասխան մարմիններում տեղի ունեցող վերակազմավորումներով, կադրերի հոսունությամբ (թափուր պաշտոնների առկայությամբ): 2015 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի հաշվին վերապատրաստվել է 2132 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 1710-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 26.8%-ով, որը պայմանավորված է վերապատրաստվողների թվի աճով, դասախոսական մեկ ժամի արժեքի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

«Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսված 109.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն իրականացվում է ՀՀ ՖՆ «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և նախատեսված է բյուջետային բարեփոխումների և պետական ֆինանսների կառավարման զարգացումների բնագավառում հանրային ծառայողների վերապատրաստման արդյունավետ իրականացման համար: Ծրագրի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 18.3%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Լրացուցիչ կրթության ուսուցման գծով պետական պատվերի շրջանակներում տրամադրվել է ավելի քան 17.7 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված ծավալը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: Միջոցները հատկացվել են ՀՀ դատախազությանը: Այս ծրագրով նախատեսված փորձաքննությունների նշանակման մասնագիտական վերապատրաստման 40 դասընթացի դիմաց իրանակացվել է 26 դասընթաց, սակայն դասընթացում նախատեսված 71 թեմաների փոխարեն ընդգրկվել է 93 թեմա, իսկ մասնակիցների նախատեսված քանակը պահպանվել է՝ կազմելով 360 մարդ:

ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման նպատակով ծախսվել է 344.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: 2015 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների քանակը կազմել է 2523՝ 2014 թվականի 3030-ի դիմաց: 2015 թվականին մեկ դասընթացի տևողությունը եղել է 72 ակադեմիական ժամ՝ 2014 թվականի 60-ի դիմաց:

Հաշվետու տարում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերը կազմել են 54.5 մլն դրամ կամ նախատեսվածի 93.4%-ը՝ 3.5%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է նրանով, որ հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացները կազմակերպվել են դասընթացների համար դիմած քաղաքացիների խմբերի փաստացի թվի հիման վրա:

Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայությունների գծով նախատեսված 114.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է և տրամադրվել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը: Նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը կազմել է 2.3%՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

2015 թվականին օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման ծախսերը կազմել են 14.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Հատկացումների հաշվին ամբողջությամբ վճարվել են ՌԴ ԱԻՆ քաղաքացիական պաշտպանության ակադեմիա գործուղված փրկարարական ծառայողների ճանապարհածախսը, կրթաթոշակը և բնակվարձը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 811.6 հազար դրամ՝ ապահովելով 96.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է փաստացի վերապատրաստվածների՝ նախատեսվածից քիչ քանակով: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին վերապատրաստվել է 21 պետական ծառայող՝ 2014 թվականի 30-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 69.1%-ով՝ հիմնականում կապված մեկ դասաժամի արժեքի ավելացման հետ:

375.5 մլն դրամ է տրամադրվել «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրին՝ 92.8%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Միջոցներն ուղղվել են ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Ազգային անվտանգության խորհրդի, ՀՀ քննչական կոմիտեի աշխատակիցների և համայնքային ծառայողների վերապատրաստմանը: Շեղումը պայմանավորված է փաստացի վերապատրաստված ծառայողների թվաքանակով: Վերապատրաստման ծառայությունների ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 2.8%-ով:

«Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրի գծով օգտագործվել է 42 մլն դրամ, ապահովելով ծրագրի 65% կատարողական, որը պայմանավորված է

նրանով, որ 2015 թվականի սկզբից նախատեսված 30 ունկնդրից 9-ը իրենց ուսումնառությունը սկսել են ավելի ուշ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 0.5%-ով:

Լրացուցիչ կրթության դասում հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայություններին տրամադրվել է ավելի քան 224.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են ավելի քան 2.5 անգամ, որը պայմանավորված է վերապատրաստման ընթացքում ուսումնական ծրագրերի, դասաժամերի և վերապատրաստվողների թվաքանակի ավելացմամբ: 2015 թվականին վերապատրաստում են անցել 8200 հարկային և մաքսային տեսուչներ՝ 2014 թվականի 3586-ի փոխարեն:

ՀՀ ֆինանսների նախարարության «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում ներդրումների համար նախատեսված 1.2 մլն դրամը, գնումների գործընթացով պայմանավորված, չի օգտագործվել:

2015 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի 11.4%-ն ուղղվել է *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 13.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 104.5%-ը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրի կատարողականով: 2014 թվականի համեմատ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերը նվազել են 15%-ով՝ հիմնականում պայմանավորված տվյալ դասում ընդգրկված կրթական օբյեկտների հիմնանորոգման և կրթական օբյեկտների շինարարության ծախսերի նվազմամբ:

2015 թվականին սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծախսերը կազմել են 30.1 մլն դրամ՝ ապահովելով 83.2% կատարողական, որը պայմանավորված է նախատեսված միջոցառումների՝ պակաս թվով իրականացման հանգամանքով: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին վերապատրաստվել են 63 ուսուցիչներ՝ 2014 թվականի 48-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 101.1%-ով:

Տվյալ խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են շուրջ 2.8 մլրդ դրամ՝ 90.4%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում հիմնանորոգվել են 43 օբյեկտներ՝ 2014 թվականի 117-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել 35.8%-ով:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերին տրամադրվել է 335.1 մլն դրամ՝ ապահովելով 95.8% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է Գեղարքունիքի մարզի Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը և իրականացվել են Լոռու մարզի Վանաձորի գյուղատնտեսական քոլեջի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքներ: Նախորդ տարվա

համեմատ նշված ծախսերն աճել են 186.4%-ով՝ պայմանավորված կատարված աշխատանքների ծավալների աճով:

Ուսանողներին զեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրման ծախսերը կատարվել են 61.7%-ով և կազմել շուրջ 29.0 մլն դրամ: Ծրագրից օգտվել է 185 ուսանող՝ նախատեսված 300-ի և նախորդ տարվա 180-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 25.7%-ով՝ հիմնականում կապված նվազագույն ախատավարձի և բնակվողների թվի աճի հետ:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների շինարարությանը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 252.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 89.6%-ը: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում կատարվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի նոր մանկապարտեզի և ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի դպրոցի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ ծրագրի գծով բյուջետային ծախսերը նվազել են 87.5%-ով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալների նվազմամբ:

2015 թվականին 666.1 մլն դրամ է տրամադրվել մարզական օբյեկտների շինարարությանը՝ ապահովելով 98.2% կատարողական: Ծրագրի շրջանակներում կառուցվել են ՀՀ Լոռու մարզի Սպիտակի մանկապատանեկան մարզադպրոցի ըմբշամարտի դահլիճը, ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոցի նոր մասնաշենքը և Արմավիրի մարզի Էջմիածնի նոր մարզադպրոցը: Նշենք, որ 2014 թվականին շինարարական աշխատանքներ էին կատարվել 4 օբյեկտներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.1%-ով՝ պայմանավորված օբյեկտների թվով, ինչպես նաև շինարարական աշխատանքների ծավալներով:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղվել է 449.7 մլն դրամ, ապահովելով 100% կատարողական: 2015 թվականին ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 4500 երեխայի ամառային հանգիստը, ինչպես և 2014 թվականին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.2%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Ավարտական փաստաթղթերի՝ գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման նպատակով ծախսվել է 285.9 մլն դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 0.6%-ով՝ պայմանավորված կայացած մրցույթների արդյունքում ձևավորված գներով:

Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման ծրագրի շրջանակներում ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից կատարվել են 965.5 մլն դրամի ծախսեր՝ 99.6%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին փոխհատուցման նպատակով տրամադրվել է ավելի քան 40.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 63.8%-ը: Ծրագրի շրջանակներում գործուղված մանկավարժների թիվը կազմել է 236՝ նախատեսված 310-ի և նախորդ տարվա 253-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է շուրջ 66.7 մլն դրամ՝ ապահովելով 99% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Երևան քաղաքի և 7 մարզերի գյուղական բնակավայրերից մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 24.3%-ով, որը պայմանավորված է երթուղիների արժեքի փոփոխությամբ և տրանսպորտային ծառայություններից օգտվողների քանակի աճով:

Ռազմագիտության կաբինետների վերականգնման համար 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 15.3 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված ծավալով: Պատրաստվել են «Տեղեկատվական պատերազմ», «Հրամանատարի դերն ու նշանակությունը», «Ձիրավի ճակատամարտ» և «Ակոռիի ճակատամարտ» տեսասկավառակներ՝ յուրաքանչյուրից 1505 հատ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը մնացել են անփոփոխ:

Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 35 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%կատարողական: Անց են կացվել ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 24-րդ խաղերը 9 մարզաձևերից, յուրաքանչյուր մարզաձև անցկացվել է չորս փուլով: Խաղերին մասնակցել է 1026 մասնակից՝ ինչպես և 2014 թվականին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Դպրոցականների օլիմպիադաների անցկացման ծախսերը կազմել են շուրջ 64.7 մլն դրամ՝ 100%-ով կատարելով ծրագիրը: 2015 թվականին անց են կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերը հանրակրթական 16 առարկաներից, որոնց մասնակցել է 1404 դպրոցական՝ 2014 թվականի 1461-ի դիմաց, և համահայկական հայագիտական 7-րդ օլիմպիադան. որին մասնակցել է 83 դպրոցական: 2015 թվականին Հայաստանում անցկացվել է քիմիայի Մենդելեևյան 49-րդ միջազգային օլիմպիադան,

որին մասնակցել են 95 դպրոցականներ, որում Հայաստանը շահել է 1 բրոնզե մեդալ: Հանրապետական փուլի հաղթող դպրոցականներից 48 լավագույնները մասնակցել են նաև միջազգային 8 օլիմպիադաների՝ ընդհանուր առմամբ շահելով 3 ոսկե, 11 արծաթե, 24 բրոնզե մեդալներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.4%-ով՝ պայմանավորված օլիմպիադաների քանակով և անցկացման վայրով:

Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 861.4 մլն դրամ, որոնք ամբողջությամբ կատարվել են: 1420 ուսումնական հաստատություններում իրականացվել են Հայաստանի կրթական ցանցի սպասարկման, կառավարման և ցանցային սարքավորումների պահպանման աշխատանքներ: Ուսումնական հաստատություններին տրամադրվել են պահուստային կապի միջոցներ և անվճար բջջային կապի հեռախոսահամարներ: Շահագործվել է ինտերնետային-համակարգչային կայանը: ՀՀ 5 և ԼՂՀ 16 համայնքներում կազմակերպվել են դասընթացներ 447 աշակերտի և 338 ուսուցիչների համար: Կրթական հաստատություններում «Մայքրոսոֆթ» ընկերության արտոնագրված ծրագրային համակարգեր օգտագործելու նպատակով ՀՀ կառավարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված պայմանագրի շրջանակում ձեռք են բերվել Windows և Office ծրագրային համակարգերի 18000 արտոնագրեր, որոնք տրամադրվել են ՀՀ կրթական ուսումնական հաստատություններին: Շահագործվել են մի շարք կրթական պորտալներ: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Ավելի քան 416.9 մլն դրամ տրամադրվել է գնահատման և թեստավորման ծառայություններին, որոնք մատուցվում են «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են 0.9%-ով՝ պայմանավորված 2015 թվականին պետական ավարտական և միասնական քննություններ հանձնողների թվով: «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2015 թվականի ընթացքում աշխատանքներ է իրականացրել հետևյալ հիմնական ուղղություններով.

Հանրակրթությունում փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 125.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը 2015 թվականին կազմել է ավելի քան 6 հազար՝ 2014 թվականի ավելի քան 10 հազարի դիմաց: Ծրագրի շրջանակներում ընթացել են աշխատանքներ հինգ հիմնական ուղղություններով՝

- Հեղինակային կրթական ծրագրերի լրամշակման, իրականացման և տարածման բաց համակարգ: Մշակվել և վերամշակվել են ավելի քան 30 ծրագրեր, ուսուցման կազմակերպման 30-ից ավելի կարգեր, իրականացվել է 10-12 դասարաններում «Արվեստ» առարկայի նոր

դասընթացների փորձարկում, մեդիագրադարանում պատրաստվել են 14 նոր ուսումնական փաթեթ, էլեկտրոնային նյութեր, մանկավարժական աշխատողների վերապատրաստման մոդուլներ՝ 6 հատ.

- Մանկավարժական աշխատողների կարողությունների զարգացում որպես ուսումնական նախագծերի կազմակերպիչներ, սովորողների ինքնավարության և ինքնաուսուցման խորհրդատուներ: Կազմակերպվել են մանկավարժական աշխատողների դպրոցների գործունեություն, սեմինարներ, դասվարների ամառային ճամբար, ուսումնական կենտրոնների բլոգներ՝ 11 հատ, դասավանդողների ուսումնական բլոգներ՝ 124 հատ, այլ գործունեություն.
- Անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ, լրացուցիչ կրթություն, ստուգատեսային ճամբարներ, 7-րդ հանրակրթական Դիջիթեք-2015, 2-րդ հանրապետական բնագիտական-տեխնիկական ստեղծագործության ստուգատես՝ 8 անվանակարգով, 226 հայտով, 30-ից ավելի այլ ստուգատեսներ, փառատոներ, ակումբներ, այլ միջոցառումներ.
- Աջակցություն կրթահամալիրի կրտսեր դպրոցներին, քոլեջի կազմում գործող նախակրթարաններին, այդ թվում՝ ընթերցարանների կազմակերպում, մուլտադարան, ձայնադարան, այլ նախագծեր.
- Աջակցություն հեղինակային, կրթական ծրագրեր մշակող, իրականացնող և տարածող կրթահամալիրին, նյութերի պատրաստում, հրապարակում, հաղորդումներ, թարգմանություններ, պարբերականներ, մեթոդական մշակումներ, ցուցահանդեսներ, հավաքներ, գիտաժողովներ և այլն:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.1%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակման ու տրամադրման համար 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 99.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Ծրագրի նպատակներն են՝ աջակցել սփյուռքահայության լեզվամշակութային ուծացման դեմ պայքարին, հայեցի կրթության ու դաստիարակության, հայ ինքնության ճանաչմանը, ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, սփյուռքի հայապահպանության ծրագրերի իրականացմանը, նպաստել համայնքներում կրթական ծրագրերի իրականացմանը, աջակցել կրթօջախներում ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու որակի բարելավմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 25.7%-ով, որը պայմանավորված է տրամադրվող գրքերի քանակի ավելացմամբ:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման և հրատարակման համար կատարվել են շուրջ 12.3 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 76.6%-ը, որը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի 12.4%-ով անկումը, պայմանավորված է գնումների գործընթացի կազմակերպման կարգի փոփոխության արդյունքում գնումների

իրականացման աշխատանքների հետաձգմամբ: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել թվով 1000 ֆիլմ-ձեռնարկ-տեսասկավառակ, տպագրվել են 2000 օրինակ 4 անուն ուսումնական այլ նյութեր, թվով 3000 հատ ուսումնական ձեռնարկներ, ձեռք են բերվել 1700 օրինակ բրայլյան տետրեր:

2015 թվականին ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայությունների ծրագրին պետական բյուջեից հատկացվել է 42.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը կազմել է 1095՝ 2014 թվականին 1498-ի դիմաց, տրամադրվել է 144 խորհրդատվական տեղեկանք՝ 2014 թվականի 124-ի դիմաց: Ճանաչման վերաբերյալ որոշում է կայացվել 9 (2014 թվականին՝ 18) օտարերկրյա որակավորումների մասին: Վերջին ցուցանիշի անկումը մեծապես կախված է Իրանի Իսլամական Հանրապետությունից եկող ուսանողների թվի կրճատմամբ: Տրամադրվել է 942 (2014 թվականին՝ 1356) տեղեկատվություն տեղական և միջազգային շահառուներին, որի գերակշիռ մասը կազմում է Վրաստանին տրամադրված տեղեկատվությունը՝ կապված Վրաստանում օրենսդրական փոփոխությունների հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների նպատակով հաշվետու տարում ծախսվել է 137.1 մլն դրամ՝ 97.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովի ու Բոլոնիայի քաղաքականության 4-րդ ֆորումի աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծվել և շահագործվել է պաշտոնական կայքէջ: «Արմնյուզ» հեռուստաընկերության կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ թողարկվել է կրթության ու գիտության ոլորտում տիրող իրավիճակի և ընթացող բարեփոխումների թեմայով մասնագիտական հաղորդաշար՝ «Ալմա Մատեր»: Իրականացվել են «Բոլոնիայի գործընթացը ՀՀ բուհերում՝ վերջինիս վերաբերյալ փոփոխությունները, ինչպես նաև ՀՀ ուսանողների համալսարանական կյանքի և աշխարհայացքի պատկերի վերհանումը» և «ՀՀ ուսանողների կենսաոճի, սոցիալ-տնտեսական կարիքների և Բոլոնիայի գործընթացի գնահատման հետազոտություն» թեմաներով ուսումնասիրություններ: Իրականացվել են նաև անգլալեզու studyinarmenia.org և amhe.am բարձրագույն կրթության վերաբերյալ պորտալի շահագործման աշխատանքները: Ստեղծվել է աշխատանքային փորձագիտական խումբ, որը ներկայացրել է բարձրագույն կրթության՝ Բոլոնիայի գործընթացին համահունչ, օրենսդրական փոփոխությունների փաթեթ: Ապահովվել է մասնակցությունը Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ առկա ֆորումներին, սեմինարներին, կոնֆերանսներին: 2015 թվականի մայիսի 14-15-ին Երևանում կայացել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի 9-րդ նախարարական գագաթաժողովը և Բոլոնիայի քաղաքականության 4-րդ ֆորումը: Հայաստան են

ժամանել 47 երկրների և 28 միջազգային կազմակերպությունների պատվիրակություններ, ընդհանուր մասնակիցների թիվը կազմել է 498: Նախորդ տարվա համեմատ բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների ուղղությամբ ծախսերը նվազել են 2.1%-ով, ինչը պայմանավորված է միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումներով:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում ընդգրկված՝ մարզական օբյեկտների հիմնանորոգման համար հատկացվել է 99.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.6%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի «Տորք Անգեղ» մարզական միության շենքի հիմնանորոգման աշխատանքները: 2014 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 29.4%-ով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալով:

Հաշվետու տարում պետական բյուջեից 505.8 մլն դրամ է հատկացվել կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների թիվը կազմել է 8077՝ 2014 թվականի 9099-ի դիմաց: Կազմակերպվել են 19 հանրակրթական առարկաների գծով և դասվարների սեմինարներ, որոնց մասնակցել է 4026 մարդ՝ 2014 թվականի 6014-ի դիմաց, մշակված և փորձագիտական եզրակացություն ստացած էջերի թիվը կազմել է 71032՝ 2014 թվականի 44403-ի դիմաց, մշակվել են հանրակրթական ուսումնական տարբեր չափորոշիչներ, մոդուլներ, հրատարակվել են հոդվածներ, ուղեցույցեր՝ ընդհանուր առմամբ 159 հատ՝ 2014 թվականի 141-ի դիմաց: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 0.7%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտման և գնահատման ծախսերը կազմել են ավելի քան 172 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.4%-ով, որը պայմանավորված է գնահատված երեխաների միջին տարեկան թվի 20-ով նվազմամբ: 2015 թվականին կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կարիքների գնահատման մասով երեխաների միջին տարեկան թիվը կազմել է 120՝ 2014 թվականի 140-ի դիմաց:

2015 թվականի պետական բյուջեից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների ուղղությամբ կատարվել են շուրջ 163 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 98.1%-ը և 2014 թվականի համեմատ նվազելով 1.8%-ով, որը պայմանավորված է նրանով, որ երեք թեմատիկ հետազոտություններ տեղափոխվել են 2016 թվական: Ծրագրի շրջանակներում փորձաքննության են ենթարկվել մշակված 10 մասնագիտությունների և որակավորումների չափորոշիչների նախագծերը, փորձաքննության են

ենթարկվել նաև նախորդ տարիներին մշակված, որոշակի ժամանակով կիրառված 10 մասնագիտությունների և որակավորումների վերանայված պետական կրթական չափորոշիչները՝ մշակվել են ՄԿՈ մասնագիտությունների ու որակավորումների համար ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ, աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների տեխնիկական առաջադրանքներ, վերապատրաստվել են հաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, դասախոսներ, փորձագետներ, կատարվել են հետազոտական, բարեփոխումների արդյունքների գնահատման աշխատանքներ և այլն:

2015 թվականին ավելի քան 67.5 մլն դրամ է տրամադրվել մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններին, որոնք ամբողջությամբ օգտագործվել են: Ծրագիրն իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից, որը հետապնդում է մասնագիտական կրթության ոլորտում ուսումնասիրություններ, վերլուծություն, խորհրդատվություն և գնահատում իրականացնելու նպատակներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.6%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

2015 թվականին 93.7 մլն դրամ է հատկացվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցմանը, որոնք ամբողջությամբ օգտագործվել են: Եվս 26.3 մլն դրամ հատկացվել է Երևանի քաղաքապետարանին՝ պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման շրջանակներում՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում դասագրքեր են բաշխվել սոցիալապես անապահով ընտանիքների՝ 5-12-րդ դասարանների աշակերտներին: Ծրագիրը, ինչպես և 2014 թվականին, իրականացվել է ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի նախարարությունների, ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի միջոցով: Ընդհանուր առմամբ տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել:

2015 թվականին ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 2.7 մլրդ դրամ՝ 70.8%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ 2014 թվականին կնքված դրամաշնորհային ծրագրերի վերջնաժամկետը երկարացվել էր, և աշխատանքները շարունակվել են 2015 թվականին:

«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչներից.

- Հանրակրթության որակի բարելավում,

- Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին:
- «Հանրակրթության որակի բարելավում» բաղադրիչի շրջանակներում 2015 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները:
- «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթաբաղադրիչի շրջանակներում նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկան և դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրման նպատակով վերլուծվել է Երևան քաղաքում ստեղծված նախակրթարաններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկան և դրա վրա ազդող գործոնները: Ներկայացվել է միջնաժամկետ հաշվետվություն:
- «Ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի ներդրում» ենթաբաղադրիչի շրջանակներում էլեկտրոնային կրթական նյութերի ձեռքբերման նպատակով Համաշխարհային բանկը 2015 թվականի ապրիլի 8-ին հաստատել է մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների համար էլեկտրոնային կրթական նյութերի գնման մրցույթի փաթեթը, որի հիման վրա հայտարարվել է մրցույթ: Հաղթող է ճանաչվել «Մակադամիան ԱՌ» ՓԲԸ-ն, որի հետ հուլիսի 8-ին կնքվել է պայմանագիր: Պայմանագրի կատարման աշխատանքները ավարտվել են նոյեմբերի 30-ին, էլեկտրոնային կրթական նյութերը հասանելի են http://esource.armedu.am/ հասցեով:
- «Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին» ենթաբաղադրիչի շրջանակներում 2015 թվականի փետրվարից սկսվել է ավագ դպրոցները նոր կահույքով համալրելու գործընթացը, որն ավարտվել է 2015 թվականի օգոստոսին: Բոլոր ավագ դպրոցներին տրամադրվել է աշակերտական նոր կահույք: 2015 թվականի հուլիսից մեկնարկել և ըստ պահանջարկի միջնակարգ դպրոցների ավագ դասարաններին է տրամադրվել աշակերտական կահույք և շարժական համակարգչային լաբորատորիա:

«Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» բաղադրիչի շրջանակներում 2015 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները:

- «Աջակցություն բարձրագույն կրթության կայուն ֆինանսական համակարգի ներդրմանը» ենթաբաղադրիչի շրջանակներում 2013 թվականի սեպտեմբերի 5-ին մեկնարկած Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում դրամաշնորհային փորձնական ծրագրերի իրականացումը 2015 թվականին ավարտվել է ծրագրում ընդգրկված 10 բուհերում: Դրամաշնորհային ծրագրերն ամփոփած բուհերում ընթացել է իրականացված ծրագրերի աուդիտ: Դրամաշնորհային ծրագրերն ամփոփած բուհերը ներկայացրել են ամփոփ ծրագրային և

ֆինանսական հաշվետվություններ, որոնք ուղարկվել են ՆՄՀ համակարգող խորհրդի հաստատմանը: Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել են նաև ՆՄՀ դրամաշնորհային ծրագրերի լուսաբանման աշխատանքները, մասնավորապես՝ ընտրվել է ՆՄՀ փորձնական փուլով իրականացված 10 ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական հոլովակի նկարահանման և ֆոտոռեպորտաժի իրականացման ծառայություններ իրականացնող կազմակերպությունը, որն իրականացրել է համապատասխան աշխատանքները: Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է նաև ՆՄՀ փորձնական փուլի արդյունքների վերաբերյալ տեղեկատվական գրքույկը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, որը տպագրվել է և բաժանվել «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի ամփոփիչ և «Կրթության բարելավում» վարկային ծրագրի մեկնարկի համաժողովի մասնակիցներին: ՆՄՀ դրամաշնորհային ծրագրերի լուսաբանումն ու քննարկումն իրականացվել է նաև վերոնշյալ համաժողովի, առանձին բուհերի կողմից կազմակերպված հանդիսավոր բացման միջոցառումների, ինչպես նաև 2015 թվականի սեպտեմբերի 11-12-ը ՋԼՄ-ների ներկայացուցիչների համար կազմակերպված համաժողովի ընթացքում: ՆՄՀ փորձնական ծրագրի արդյունքները քննարկվել են նաև ՀԲ կողմից 2015 թվականի սեպտեմբերին կազմակերպված վեբինարի ընթացքում: Այս ուղղությամբ նախատեսված աշխատանքներն ավարտվել են:

- «Աջակցություն բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխման ծրագրին» ենթաբաղադրիչի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել և ամփոփվել է ՀՀ մանկավարժական կրթություն իրականացնող պետական հինգ բուհերի համար ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և աշխարհագրություն ուղղություններով լաբորատորիաների գնման նպատակով միջազգային մրցակցային գնման գործընթացը: Լաբորատոր սարքավորումների մատակարարումն ավարտվել է 2015 թվականի նոյեմբերին:

2015 թվականին ուսուցիչների ատեստավորման գծով ծախսերը կազմել են շուրջ 3.7 մլն դրամ կամ ծրագրի 85.5%-ը, որը պայմանավորված է ուսուցիչների ատեստավորման գործընթացների քանակով: 2015 թվականին տարակարգ ստացած ուսուցիչների թիվը հասել է 572-ի՝ 2014 թվականի 303-ի դիմաց: Եվս 91 ուսուցիչ տարակարգ են ստացել 2015 թվականի դեկտեմբերի 21-ին, սակայն վճարումներն իրականացվել են 2016 թվականին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 91.7%-ով՝ պայմանավորված տարակարգ ստացած ուսուցիչների քանակի ավելացմամբ:

2015 թվականին «Հայ ասպետ» հեռուստամրցաշարի անցկացմանը պետական բյուջեից հատկացվել է 69.1 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: ՀՀ հանրային հեռուստաալիքով հեռարձակվող հեռուստամրցաշարին մասնակցել են թվով 96 դպրոցների 1056 աշակերտներ, ինչպես և 2014 թվականին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Արտասահմանում սովորող ուսանողներին հաշվետու տարում հատկացվել է 100 մլն դրամ աջակցություն, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել: Ծրագիրն իրականացվում է «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից, որի առաքելությունն է՝

- ստեղծել ու համախմբել առաջադեմ և ստեղծագործ մտածելակերպ ունեցող ուսանողների սերունդ՝ բազմապատկելով աշխարհի լավագույն համալսարաններ հաճախող հայ ուսանողների թիվը՝ նրանց տրամադրելով նյութական, մենթորական և այլ աջակցություն,
- ստեղծել ենթակառուցվածք, որն ի մի կբերի «Լույսի»-ի ուսանողների գիտելիքները, փորձառությունն ու կապերը, և կառաջարկի ծրագրեր, որոնք կօգնեն ուսումնական ձեռքբերումներից անցում կատարել իրական աշխարհի նվաճումներին՝ ի բարօրության Հայաստանի:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարների տրամադրմանն ուղղվել է 67.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: 2015 թվականին հավելավճար է տրվել 572 ուսուցչի՝ 2014 թվականի 303-ի դիմաց: 2014 թվականի համեմատ ծախսերն աճել են 101.1%-ով՝ հիմնականում պայմանավորված որակավորում ստացած ուսուցիչների թվաքանակի աճով:

Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովման նպատակով օգտագործվել է 565.7 մլն դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: 2014 թվականին ծրագիրը ներդրվել է ՀՀ Սյունիքի և ՀՀ Վայոց ձորի մարզերում, իսկ 2015 թվականից՝ նաև ՀՀ Արարատի մարզում: Ծրագրի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ապահովվել է դպրոցականներին սննդով ապահովելու համար նախատեսված մթերքների տեղափոխման կազմակերպումը, սնունդ է ստացել ՀՀ կրթության և գիտությաան նախարարության ենթակայության՝ ՀՀ Սյունիքի և ՀՀ Վայոց ձորի մարզերում գտնվող 2 դպրոցների տարրական դասարանների 384 աշակերտ, ՀՀ Սյունիքի մարզի 112 դպրոցների տարրական դասարանների՝ 5823 և նախակրթարանների 77 աշակերտ, ՀՀ Վայոց ձորի մարզում՝ տարրական դասարանների 2428 աշակերտ, ՀՀ Արարատի մարզում՝ 13740 աշակերտ: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.7 անգամ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2014 թվականի 4 ամսվա փոխարեն 2015 թվականին ծրագիրը նախատեսվել է ողջ տարվա համար, ինչպես նաև սնունդ ստացող երեխաների թվաքանակի աճով:

2015 թվականին կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման համար նախատեսված 10 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրը նպատակաուղղված է մշակելու տարատարիք ուսումնական խմբերում մաթեմատիկա առարկայի դասավանդման հայեցակարգային դրույթները, մշակելու և փորձարկելու ուսուցման կազմակերպման համար նախատեսված ուսումնադիդակտիկ նյութերը: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում պատրաստվել են մաթեմատիկա,

հանրահաշիվ առարկաների վերաբերյալ երեք ձեռնարկներ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 8.7%-ով՝ պայմանավորված կատարված աշխատանքների ծավալով:

Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպմանը տրամադրվել է 3.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի դասավանդում Բուխարեստի համալսարանում: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրմանը հատկացվել է 3.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է դասախոսություն սփյուռքագիտության ոլորտում Զալցբուրգի համալսարանում: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2015 թվականին 60 մլն դրամ է տրամադրվել հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ծրագրին՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում՝

- իրականացվել են վարկանիշավորման մեթոդաբանության լրամշակման, նոր՝ միասնական ցանկով փորձնական վարկանիշավորման մեթոդաբանության մշակման աշխատանքներ, և վերոնշյալ լրամշակման հիման վրա իրականացվել են ծրագրային փոփոխություններ էլեկտրոնային համակարգերում,
- հրապարակվել է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ազգային համակարգ» հարցաթերթիկների լրացման ուղեցույց-ձեռնարկը, իրականացվել է ընտրանքային հետազոտություն բուհերի դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանակներում,
- կատարվել են տեղեկատվության հավաքագրման և մուտքագրման աշխատանքներ,
- իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի շրջանակներում:

2015 թվականին Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կայքում հրապարակվել են 16 բուհերի, ինչպես նաև 8 խմբի բաժանված հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման արդյունքները: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծրագրին տրամադրվել է 81.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում նախատեսվել և մատուցվել են կրթաբուժական ծառայություններ թվով 65 երեխաների՝ 2014 թվականի 58 երեխայի դիմաց: Ծախսերի աճը 2014 թվականի համեմատ կազմել է 20.1% կամ 13.6 մլն դրամ՝ հիմնականում կապված երեխաների թվի ավելացման և նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ:

2015 թվականին «Ուսանողներին ուսումնական վարկերի տրամադրում» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման ծրագրի գծով նախատեսված 57.6 մլն դրամի դիմաց տրամադրվել է 28.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 49% կատարողական, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ սուբսիդավորումն իրականացվել է վարկավորմամբ զբաղվող ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 99.4 %-ով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 573.1 մլն դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Վարկային ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից՝

- Հանրակրթության որակի բարելավում.
- Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը:

Ծրագրի «Հանրակրթության որակի բարելավում» բաղադրիչի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ հետևյալ ենթաբաղադրիչների գծով.

- Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում: Ստեղծվել են 33 նախակրթարաններ ՀՀ Կոտայքի (13), ՀՀ Շիրակի (12) և ՀՀ Գեղարքունիքի (8) մարզերում, որտեղ իրականացվել են համապատասխան տարածքների բարեկարգման, գույքով համալրման աշխատանքներ, ձեռք են բերվել անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութեր, խաղալիքներ, պիտույքներ և այլն: Բոլոր հաստատությունները բնականոն գործում են: Նոր նախակրթարաններում ընգրկվել է մոտ 1170 երեխա: Կրթության Ազգային ինստիտուտի կողմից վերապատրաստվել են երեք մարզերի 33 նախակրթարաններում ընդգրկված թվով 79 դաստիարակ: Պատրաստվել են մի շարք ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթեր: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել հանրակրթական պետական չափորոշիչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման նպատակով նախատեսված հետազոտությունն իրականացնելու ուղղությամբ: Հետազոտության նախապատրաստական աշխատանքների շրջանակներում կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ: Նորարարությունների մրցակցային հիմնադրամի միջոցով 6 բուհի տրամադրվել է դրամաշնորհ:

- Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը: Հանրակրթության երրորդ աստիճանում որակյալ կրթություն ապահովելու համար անհրաժեշտ է ժամանակակից ենթակառուցվածքների, համապատասխան նյութատեխնիկական միջոցների առկայություն: Ենթաբաղադրիչի շրջանակում կիրականացվի 107 ավագ դպրոցներից 17 ավագ դպրոցների հիմնանորոգում: Դպրոցներից շատերը կառուցվել են խորհրդային միության տարիներին և ունեն

ենթակառուցվածքային թերություններ, ներառելով ոչ լիարժեք ջեռուցման համակարգեր, սեյսմիկ անվտանգության և այլ խնդիրներ: Հաշվետու ժամանակահատվածում ենթաբաղադրիչի շրջանակներում 5 և 12 ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման նպատակով պատրաստվում են նախագծանախահաշվային փաստաթղթեր:

Վերանորոգման նախագծերը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձվում ավագ դպրոցների կարիքներին՝ հոսքային ուսուցման կազմակերպման համար (տեխնիկական, բնագիտական, հումանիտար և այլն), որպեսզի հաշվի առնվի, թե ինչ տիպի դասասենյակներ, սարքավորումներ անհրաժեշտ կլինեն դպրոցին, մասնավորապես՝ ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության լաբորատորիաներ, համակարգչային սենյակներ և այլն: Վերանորոգվող դպրոցներն ընտրվել են ՀՀ ԿԳ նախարարության կողմից մշակված և Համաշխարհային բանկի կողմից հաստատված չափանիշների հիման վրա, որտեղ բացի շենքային պայմանների գնահատականից, հաշվի է առնվել դպրոցի կառուցման տարեթիվը, սպասարկող ոլորտը և աշակերտների թիվը:

- «Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով» ենթաբաղադրիչի նպատակներն են՝ կրթության որակի բարելավումը կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով և սովորողների գիտելիքների և հմտությունների բարելավումը՝ համաձայն արդի պահանջներին:

2015 թվականի ընթացքում նախապատրաստական աշխատանքներ են տարվել հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման նպատակով նախատեսված հետազոտությունն իրականացնելու ուղղությամբ: Հետազոտության նախապատրաստական աշխատանքների շրջանակներում կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ՝ ուսումնասիրության ենթակա հարցերի ճշգրտման և տեխնիկական առաջադրանքի նախագիծը պատրաստելու համար: Ելնելով քննարկումների արդյունքներից, հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման հետազոտությունն իրականացնելու նպատակով մշակվել է հետազոտության տեխնիկական առաջադրանքը: Խորհրդատվական կազմակերպության կողմից ներկայացվել է գնահատման հետազոտության մեթոդաբանությունը: Ներկայումս գնահատման հետազոտության աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ենթաբաղադրիչի շրջանակներում 2015 թվականի ընթացքում մշակվել են նաև հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչների, ինչպես նաև ուսումնական ծրագրերի վերանայման նպատակով ձևավորվելիք աշխատանքային խմբերի տեխնիկական առաջադրանքները, նշված աշխատանքային խմբերին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով հումանիտար և բնագիտական առարկաների չափորոշիչների և ծրագրերի մշակման

միջազգային փորձագետների աշխատանքային պարտականությունների նկարագրերը: Մշակվել է նաև ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվող գործողությունների լուսաբանման ժամանակացույցը:

«Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը» ենաբաղադրիչի շրջանակներում 2015 թվականին «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից իրականացվել է ՆՄՀ գործառնական ընթացակարգերի վերանայումը: Մշակվել են ՆՄՀ փորձնական փուլի արդյունքներով վերանայված ՆՄՀ ղեկավար ձեռնարկը և ՆՄՀ դրամաշնորհային ծրագրերի համար հայտ ներկայացնող բուհերի ֆինանսական կարողությունների ստուգման աշխատանքների նկարագիրը, կազմավորվել է ՆՄՀ համակարգող խորհուրդը, որը սահմանել է ՆՄՀ առաջին շրջափուլի գերակայությունները: Հայտարարվել է ՆՄՀ առաջին շրջափուլի շրջանակներում բուհերի կողմից դրամաշնորհային հայտերի ընդունման մեկնարկը, որի վերջնաժամկետ է սահմանվել նոյեմբերի 11-ը: Հայտերի ներկայացման ընթացքում առաջացող հարցերի պարզաբանման և բուհերին աջակցության ցուցաբերման նպատակով 2015թ. հոկտեմբերին կազմակերպվել և անցկացվել է երկօրյա աշխատաժողով: Սահմանված ժամկետներում 10 բուհի կողմից ստացվել է 11 հայտ: Զուգահեռաբար ընթացել են ՆՄՀ Հայտերի գնահատման հանձնաժողովի ստեղծման աշխատանքները՝ թեմատիկ և ֆունկցիոնալ փորձագետների ընտրության միջոցով: ՆՄՀ համակարգող խորհրդի կողմից հաստատվել է փորձագետների ցանկը, որոնց կողմից իրականացվել է հայտերի գնահատում: Մինչև 2015 թվականի ավարտն իրականացվել է դրամաշնորհային պայմանագրերի կնքումը:

«Դպրոց կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության (ԻԱՄ) աջակցության նպատակով օգտագործվել է 20 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են տարբեր մասնագիտական հավաքներ, հանդիպումներ, սեմինարներ, քննարկումներ՝ ուղղված մանկավարժների մասնագիտական կարիքների վերհանմանը և դասակարգմանը, ուսուցման խնդիրներին, դպրոցների ազգային վարկանիշավորման համակարգին, դասավանդման ծրագրերին և մեթոդներին, մշակված նյութերի ներկայացմանը և լուսաբանմանը, գնահատման գործիքներին և դպրոցին հուզող այլ հարցերի: 2015 թվականի ընթացքում միության կողմից կազմակերպված մասնագիտական հավաքներին մասնակցել են «Դպրոց կենտրոնների միություն» ԻԱՄ-ի անդամ 110 դպրոց-կենտրոնների տնօրեններ: Ծրագիրը գործում է 2015 թվականից:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Ազգային երգ ու պար» առարկայի ներդրման գծով նախատեսված 7.8 մլն դրամն ամբողջությամբ ծախսվել է: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են Երևան քաղաքի 25 և մարզերի 50 ուսուցիչներ: Ծրագիրը գործում է 2015 թվականից:

Դպրոցներում ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացման գծով նախատեսված շուրջ 23.4 մլն դրամը ևս ամբողջությամբ օգտագործվել է: 2015 թվականին դպրոցներում ռոբոտաշինության խմբակների թիվը կազմել է 67, որոնցում ընդգրկված են եղել շուրջ 1000 աշակերտներ: Ծրագիրը գործում է 2015 թվականից:

Պրահայի Կարլովի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպման գծով նախատեսվել է 4.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի և պատմության դասավանդում Պրահայի Կարլովի համալսարանում: Ծրագիրը գործում է 2015 թվականից:

Կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 587.8 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: 2015 թվականին ծրագիրն իրականացվել է առաջին անգամ: Կրթության գերազանցության ազգային ծրագիրը (ԿԳԱԾ) Հայաստանի հանրակրթության որակի բարձրացման և համակարգային բարեփոխումների իրականացման նախաձեռնություն է: 2015 թվականի ընթացքում ԿԳԱԾ-ի շրջանակնեում իրականացվել են ուսուցիչների վերապատրաստման ծրագրի լրամշակված տարբերակի լիակատար փորձարկում և լրամշակման ամփոփում, վերապատրաստող խմբի 20 ավագ և 20 վերապատրաստող-մասնագետների վերապատրաստում, ինչպես նաև ծրագրի թեկնածուների հավաքագրում և ընտրություն: «Արարատյան բակալավրիատը» (ԱԲ), որպես հայկական կրթական լավագույն ավանդների և ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա սովորելու միջազգայնորեն ճանաչելի և մրցունակ համակարգ, լրամշակվել և ներդրվել է «Այբ» ավագ դպրոցում: Մշակվել է ԱԲ դպրոցների արդյունավետ տեղակայման խորհրդատվական ձեռնարկը, կատարվել են դպրոցների ֆիզիկական միջավայրի տեղական և միջազգային չափանիշների ուսումնասիրություն, Ստեփանակերտում կազմակերպվել է ԱԲ համակարգի դպրոցի ներդրման նպատակով ճանաչողական այց: 2014 թվականին Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի մասնագետների կողմից մշակվել է ուսուցիչների, իսկ 2015 թվականին՝ նաև ԿԳԱԾ-ի ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման բաժնի մասնագետների վերապատրաստման ծրագիրը: Վերապատրաստումը տևել է 20 շաբաթ: Վերապատրաստման ծրագիրը բաղկացած էր 6 բաղադրիչից, որոնք ուղղված էին դասավանդման արդյունավետության բարձրացմանը խոչընդոտող հիմնական խնդիրների լուծմանը: 2015 թվականին, մինչ բուն վերապատրաստման ծրագրի մեկնարկը, մասնակիցներն իրականացրել են հատուկ առանձնացված 12 մասնագիտական հոդվածների ընթերցումներ, խմբային քննարկումներ, վերլուծություններ: ՀՀ ԿԳՆ-ում տեղի ունեցած մի շարք հանդիպում-քննարկումների արդյունքում Արարատյան բակալավրիատի ծրագիրը լրամշակվել է և ՀՀ ԿԳ նախարարի կողմից «Այբ» կրթական

հիմնադրամի ներկայացրած «Արարատյան բակալավրիատ» ծրագիրը հաստատվել է որպես այլընտրանքային:

«Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում» ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների համար գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսերը կազմել են շուրջ 102.5 մլն դրամ կամ նախատեսվածի 51.2%-ը: Շեղումը պայմանավորված է եղել 17 չափաբաժիններից 7-ի գնման գործընթացի չկայացման հանգամանքով, ինչպես նաև 2 չափաբաժնի մասով պայմանագրի լուծմամբ (մատակարարումը չիրականացնելու հետևանքով): Ծրագրի շրջանակներում 4 արհեստագործական ուսումնարանների համար ձեռք են բերվել ուսումնական արհեստանոցներ, իսկ երեքի համար՝ ուսումնական կաբինետներ և մեկ համակարգչային լսարան: Գործընթացն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև կնքված ֆինանսավորման համաձայնագրի «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում» ծրագրի շրջանակում և սկսվել է 2015 թվականին:

2015 թվականին շուրջ 11.4 մլն դրամ է տրամադրվել «Դասընթացավարների վերապատրաստում. կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը երիտասարդների աշխատանքներում» արտաբյուջետային ծրագրին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն իրականացվել է 2015 թվականից և ֆինանսավորվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից:

Շուրջ 7 մլն դրամ է տրամադրվել «Ճամփորդություն Հայ տպագրության քառուղիներով՝ նվիրված Ոսկան Երևանցու 400-ամյակին» արտաբյուջետային ծրագրին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն իրականացվել է 2015 թվականին և ֆինանսավորվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից՝ կրթական, գիտական և մշակութային ծրագրերի իրականացման համար:

Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի բժշկական ուսումնական հաստատություններում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին վերաբերող կրթության և ուսուցման մակարդակի բարելավման նպատակով սեմինար-վերապատրաստումների կազմակերպման գծով նախատեսված 7.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Այն ևս սկսվել է 2015 թվականից և ֆինանսավորվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից՝ կրթական, գիտական և մշակութային ծրագրերի իրականացման նպատակով:

2015 թվականին պետական բյուջեից շուրջ 986.5 մլն դրամ տրամադրվել է *այլ դասերին չպատկանող կրթության* բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի (825.3 մլն դրամ կամ ծրագրի 99.2%-ը) և ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (161.2 մլն դրամ կամ ծրագրի

99.9%-ը) պահպանմանը: Տվյալ ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 99.3%-ով, իսկ 2014 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 31.8%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Սոցիալական պաշտպանություն

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի 27.2%-ն ուղղվել է *սոցիալական պաշտպանության* ոլորտին: Կատարված հատկացումները կազմել են 383.7 մլրդ դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական: 2014 թվականի համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացել են 12%-ով կամ 41.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքային կենսաթոշակների և կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծախսերի աճով:

Հաշվետու տարում ավելի քան 1.2 մլրդ դրամ տրամադրվել է *վարչական և անաշխատունակության* խմբին՝ ապահովելով 99.2% կատարողական: Նշված ծախսերը 2014 թվականի համեմատ գրեթե չեն փոփոխվել:

Վարչական դասին տրամադրվել է շուրջ 209.5 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 98.6%: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 7%-ով՝ մեծ մասամբ պայմանավորված բժշկասոցիալական վերականգնման ծառայությունների շրջանակներում կատարված ծախսերի աճով: Հաշվետու տարում շուրջ 98.1 մլն դրամ տրամադրվել է աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցմանը, որը կազմել է ծրագրի 97%-ը: Տնտեսումը բացատրվում է նպաստառուների թվի կրճատմամբ՝ նախատեսված 528 անձի փոխարեն փոխհատուցում են ստացել 510-ը: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերի 5.7%-ով աճը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Բժշկասոցիալական վերականգնման ծառայությունների շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 111.4 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Այս ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվում է նախապրոթեզավորման և հետպրոթեզավորման, աշխատունակության վերականգնման կարիք ունեցող հաշմանդամ քաղաքացիների բուժումը: 2015 թվականին բժշկական օգնություն է տրամադրվել 3 հիվանդությունների գծով 500 հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 8.3%-ով կամ 8.5 մլն դրամով՝ պայմանավորված հիվանդությունների բուժման գների աճով:

2015 թվականին ավելի քան 1 մլրդ դրամ տրամադրվել է *անաշխատունակության* դասին՝ ապահովելով 99.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ անաշխատունակության դասի

ծախսերը նվազել են 1.4%-ով կամ 14.7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար կատարված ծախսերի նվազմամբ:

Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերման համար տրամադրվել է 10.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2015 թվականին տպագրվել են 42520 թերթ բրայլյան գրքեր, 320 հատ բրայլյան տետրեր, 74400 թերթ «Բյուլետեն» ամսագիր, 1600 ժամ «Խոսող գիրք»: 2014 թվականի համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 824.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին տրամադրվել է 4673 հատ պրոթեզաօրթոպեդիկ պարագա (2014թ.՝ 4250), 7723 հատ վերականագնողական պարագա (2014թ.՝ 7586), 80 հատ ձայնաստեղծ սարք (2014թ.՝ 80), 170 հատ աչքի պրոթեզ (2014թ.՝ 150), կատարվել է 657 վերանորոգում (2014թ.՝ 592): Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 3.4%-ով կամ 29.4 մլն դրամով, ինչը պայմանավորված է մրցույթի արդյունքում գնման ենթակա ապրանքների՝ ավելի ցածր գներով ձեռքբերմամբ:

Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններին հատկացվել է 70.1 մլն դրամ՝ ապահովելով 98.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.4%-ով կամ 3.6 մլն դրամով, որը պայմանավորված է մեկ հիվանդի բուժման հետ կապված ծախսերի աճով: Ծրագրի շրջանակներում 4 հիվանդությունների գծով անվճար բժշկական օգնություն է տրամադրվել 318 հիվանդի՝ նախորդ տարվա 339-ի դիմաց:

Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասներին և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման համար օգտագործվել է 23.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի նպատակը մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ երիտասարդների ու պատանիների սոցիալական վերականգնումն է ցերեկային կենտրոնում ծառայությունների մատուցման միջոցով: Ծրագիրն իրականացվում է ««Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից, որտեղ սպասարկվում է 50 շահառու: Շահառուները կենտրոնում ժամը 10.00-17.00-ը ստանում են ցերեկային խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ, ինչպես նաև մեկանգամյա սնունդ: Կենտրոնը հնարավորություն է ընձեռում շահառուներին մնալ ընտանիքում՝ դրանով նպաստելով հատուկ տիպի հաստատությունների բեռնաթափմանը: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին կատարվել է նաև կենտրոնի 24 աշխատողի աշխատավարձերի և կոմունալ ծախսերի

վճարում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.2%-ով կամ շուրջ 2 մլն դրամով, որը պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ և կոմունալ ծախսերի աճով:

Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 79.3 մլն դրամ կամ նախատեսվածի 92.6%-ը: Շեղումը պայմանավորված է ձեռք բերված սայլակների քանակով՝ նախատեսված 450-ի փոխարեն ձեռք է բերվել 404 սայլակ, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունքում սայլակների՝ նախատեսվածից ցածր գներով: Նախատեսված 1000 հատ լսողական սարքերն ամբողջությամբ ձեռք են բերվել: Նշենք, որ 2014 թվականին ձեռք էր բերվել 625 սայլակ և 900 լսողական սարք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.7%-ով կամ 6.6 մլն դրամով, որը պայմանավորված է ձեռք բերված սայլակների քանակի նվազմամբ:

Եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերի տրամադրման ծախսերը կազմել են 15.8 մլն դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը: Ծրագրի շրջանակներում լսողական խնդիրներ ունեցող հաշմանդամներին և տարեցներին լսողական սարքեր ձեռք բերելու նպատակով տրամադրվել է 198 հավաստագիր՝ նախատեսված 200 հավաստագրի փոխարեն: 2014 թվականին նշված ծախսերն իրականացվել են ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին:

Ծերության դասի ծրագրերին 2015 թվականին հատկացվել է շուրջ 283.2 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 17.7%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքային կենսաթոշակների և կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծախսերի աճով:

Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ծախսերը կազմել են 22 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով կամ 488.7 մլն դրամով, ինչը պայմանավորված է զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի բաձրացմամբ, որը 2015 թվականի հունվարի 1-ից սահմանվել է 14000 դրամ՝ նախկին 13000 դրամի փոխարեն, իսկ հուլիսի 1-ից՝ 16000 դրամ, զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքի չափի բաձրացմամբ, որը 2015 թվականի հուլիսի 1-ից սահմանվել է 1500 դրամ՝ նախկին 1300 դրամի դիմաց: Միաժամանակ նվազել է կենսաթոշակ ստացողների փաստացի թիվը:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերը կազմել են 685.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 30.8%-ով կամ 305 մլն դրամով, որը բացատրվում է Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ և մասնակից կենսաթոշակառուների թվի կրճատման հանգամանքով:

Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների ծախսերը կատարվել են 100%-ով և կազմել շուրջ 13.3 մլրդ դրամ: 2014 թվականի համեմատ դրանք աճել են 15.9%-ով կամ 1.8 մլրդ դրամով: Սոցիալական նպաստների ծախսերի աճը 2014 թվականի համեմատ բացատրվում է ինչպես հիմնական կենսաթոշակի, այնպես էլ նպաստառուների թվի աճով:

ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակների ծախսերը կազմել են շուրջ 2.4 մլրդ դրամ, ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են մոտ 6.1 անգամ կամ 2 մլրդ դրամով, որը պայմանավորված է կենսաթոշակառուների թվի աճով, ինչպես նաև 2015 թվականից նախկին դատախազների, նախկին պատգամավորների և ՀՀ սահմանադրական դատարանի նախկին անդամների (թվով շուրջ 370 կենսաթոշակառու) կենսաթոշակների ծախսերը տվյալ ծրագրում ներառելու հանգամանքով:

Տարեցների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է շուրջ 2 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Սույն ծրագրի նպատակն է շուրջօրյա խնամքի ծառայություններ տրամադրել դրանց կարիքն ունեցող տարեց և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց, նրանց համար ապահովելով արժանապատիվ կենսապայմաններ: Խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններն իրենց մեջ ներառում են կացարանի, կենսապահովման համար անհրաժեշտ պայմանների, սնունդով, հագուստով, կոշկեղենով, անկողնային պարագաներով ապահովումը, բժշկական օգնության ու սպասարկման, սոցիալ-հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրումը, մշակութային միջոցառումների կազմակերպումը և այլն: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին սպասարկվել է 1153 շահառու: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19.8%-ով կամ 325.3 մլն դրամով, որը պայմանավորված է 2015 թվականի հուլիսի 1-ից 120 հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքը «Ձորակ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ում իրականացնելու հանգամանքով, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով նախատեսված հատկացումներն օգտագործվել են 99.4%-ով՝ կազմելով 139.7 մլն դրամ: Սույն ծրագրի շրջանակներում իրականացվում է միայնակ տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց՝ տնային պայմաններում գնահատված կարիքներին համարժեք խնամքի ծառայությունների տրամադրումը, նրանց կյանքի որակի բարելավումը: Տնային պայմաններում խնամքն իր մեջ ներառում է կենցաղային սպասարկումը, սոցիալ-հոգեբանական օգնությունը, բժշկական օգնությունն ու սպասարկումը և իրավաբանական խորհրդատվությունը: Միջոցառման շրջանակում

«Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով ծառայություններ են տրամադրվում Երևան քաղաքում բնակվող միայնակ տարեց ու 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող շուրջ 1500 անձի: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13.7%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի նպատակով 2015 թվականին տրամադրվել է 15.4 մլն դրամ պետական աջակցություն, որը կատարվել է 86.5%-ով: Սույն ծրագրով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում իրականացվում է հոգեկան առողջության հետ խնդիրներ ունեցող անձանց ցերեկային սպասարկում: Շեղումը պայմանավորված է 30 շահառուի փոխարեն փաստացի 15 շահառու սպասարկելու հանգամանքով: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ նվազել են 11.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է շահառուների թվաքանակի նվազմամբ:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում ու տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով տրամադրվել է շուրջ 189.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսված միջոցների 99.9%-ը: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն ծրագրով պետական աջակցություն է ցուցաբերվում «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ հանրապետության 6 մարզերում և Երևան քաղաքում 4200 միայնակ ծեր ու հաշմանդամ քաղաքացիների տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում խնամքի տրամադրման ծառայություններն իրականացնելու համար: Բարեգործական հասարակական կազմակերպության կողմից տնային պայմաններում սպասարկման ծառայություններ են տրամադրվել շուրջ 2000 շահառուի, իսկ խնամքի 19 ցերեկային կենտրոնում՝ 2200 շահառուի, որոնք օգտվել են նաև մեկանգամյա սննդի տրամադրման ծրագրից: Նշված ծախսերը 2014 թվականի նկատմամբ աճել են 10%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Տվյալ դասում ամենամեծ կշիռն ունեն աշխատանքային կենսաթոշակների ծախսերը, որոնք կազմել են 221.7 մլրդ դրամ և օգտագործվել են 100%-ով: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13.9%-ով կամ 27 մլրդ դրամով, որը պայմանավորված է հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացմամբ: 2015 թվականի հունվարի 1-ից աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը սահմանվել է 16000 դրամ՝ նախկին 14000 դրամի փոխարեն, իսկ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին տասը տարվա համար սահմանվել է 800 դրամ, տասը տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար՝ 500 դրամ, նախկինում սահմանված համապատասխանաբար 700 դրամի և 400 դրամի դիմաց:

Վանաձորի տարեցների տանը խնամվողների շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծրագրին հատկացված միջոցները կազմել են 22.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն ծրագրով «Վանաձորի տարեցների տուն» ՀԿ-ին 55 տարեցների և 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով վճարվել է 27 հաստիքային միավորների աշխատավարձը: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13.5%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում 2015 թվականին ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է 20.8 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցները նախատեսվել են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն մասնակցի համար կուտակային վճարի սահմանված չափը լրացնելու նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.2 անգամ կամ 11.3 մլրդ դրամով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ համակարգը ներդրվել է 2014 թվականի հուլիսի 1-ից՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից *«Հարազատին կորցրած անձինք»* խմբի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են շուրջ 5 մլրդ դրամ՝ ապահովելով 99% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով:

Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճարի գծով ծախսերը կազմել են 129.6 մլն դրամ՝ ապահովելով 83.1% կատարողական: Շեղումը պայմանավորված է պարգևավճար ստացածների փաստացի թվով, որը կազմել է 93՝ նախատեսված 99-ի փոխարեն: Նշվածով պայմանավորված՝ տվյալ ծախսերը նախորդ տարվա նկատմամբ նվազել են 6.4%-ով:

Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստը կազմել է 4.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 0.3%-ով:

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցության համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 60.4%-ով՝ կազմելով շուրջ 36.1 մլն դրամ: Ծրագիրը ներդրվել է 2015 թվականին:

«Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 59.2 մլրդ դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է երեխայի ծննդյան միանվագ նպաստի և ընտանիքի

կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծախսերի աճով: Խմբի ծախսերի զգալի մասը՝ 36.6 մլրդ դրամ, տրամադրվել է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին փաստացի նպաստ են ստացել ամսական միջինը 103745 ընտանիք, նախատեսված 104685 ընտանիքների փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 3.2%-ով՝ պայմանավորված նպաստի չափի բարձրացմամբ: 2014 թվականի օգոստոսի 1-ից ընտանեկան նպաստի նպաստի բազային մասը սահմանվել է 17000 դրամ՝ նախկին 16000 դրամի փոխարեն:

ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին հաշվետու տարում տրամադրվել են 104.4 մլն դրամ միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ, որոնք ֆինանսավորվել են ներկայացված հայտերին համապատասխան՝ կազմելով նախատեսվածի 18.8%-ը և 15.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

2015 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների գծով ծախսերը կազմել են շուրջ 3.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Սույն ծրագրով փաստացի երեխայի խնամքի նպաստ են ստացել ամսական միջին 13063 երեխա՝ նախատեսված 11200 երեխայի փոխարեն: 2014 թվականի համեմատ այս ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

ՀՀ մանկատների շրջանավարտներին 2015 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 12.1 մլն դրամի աջակցություն և խորհրդատվություն՝ ապահովելով 73.9% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Սույն ծրագիրն իրականացվում է 2014 թվականից՝ «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի 18-23 տարեկան շրջանավարտների համար: Ծրագրի շրջանակներում շահառուների համար իրականացվել են մասնագիտական կողմնորոշման, խորհրդատվության աշխատանքներ, ուսուցում, վերապատրաստում, բժշկական և իրավաբանական օգնության տրամադրման աջակցություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 38.5%-ով կամ 3.4 մլն դրամով, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հղիության և ծննդաբերության նպաստի գծով ծախսերը կազմել են ավելի քան 6.1 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2014 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 12.4%-ով կամ 871.4 մլն դրամով, որը պայմանավորված է հղիների թվի նվազմամբ, ինչպես նաև՝ օրենսդրական փոփոխություններով: 2014 թվականի դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և

փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի համաձայն, որն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից, փոփոխվել է մայրության նպաստի չափը հաշվարկելու կարգը:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարումը կազմել է 9.4 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2014 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 18.4%-ով՝ հիմնականում պայմանավորված երրորդ և հաջորդ երեխաների ծնունդների աճով:

2015 թվականին վարժական հավաքների և զինծառայության ու փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են, որոնք կազմել են 401.3 մլն դրամ՝ նախորդ տարվա 262.4 մլն դրամի դիմաց:

Երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են 2.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում գործում է երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատություն, որոնցում 2015 թվականին խնամվել է միջինը 684 երեխա՝ նախատեսված 735-ի փոխարեն, ինչը պայմանավորված է հաստատությունների բեռնաթափման քաղաքականության արդյունքում Խարբերդի մասնագիտացված մանկատան չափահաս սաների՝ «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներով անձանց կենտրոն տեղափոխման, երեխաների կենսաբանական ընտանիք վերադառնալու, որդեգրման և խնամատար ընտանիքներ տեղավորման հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.1%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափման) ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են 94.1%-ով՝ կազմելով 21.1 մլն դրամ: Շեղումը բացատրվում է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում «Առավոտ» ՀԿ-ի միջոցով ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում իրականացվել են 60 երեխաների խնամքի հաստատություններից բեռնաթափման և 40 երեխաների՝ նշված հաստատություններ մուտքի կանխարգելման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.2%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայությունների ծախսերը կազմել են 227.1 մլն դրամ կամ նախատեսվածի 95.8%-ը: Ծրագրի շրջանակներում երեք ցերեկային կենտրոններում իրականացվել է միջին հաշով 268 երեխաների ցերեկային խնամք՝ նախատեսված 300-ի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.2%-ով՝ կապված նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն՝ կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման ծախսերը Հայաստանի Հանրապետության կողմից ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններին տրամադրվել է 954.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ով կատարում: Ծրագրի շրջանակներում երեխաների խնամքի 8 գիշերօթիկ հաստատությունում 2015 թվականին նախատեսվել է սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ երեխաների շուրջօրյա խնամք: Ծրագրի շրջանակներում 7 գիշերօթիկ հաստատությունների կողմից իրականացվել են տարեկան միջինը 614 շահառուների խնամքի աշխատանքներ՝ նախատեսված 730-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2015 թվականին երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայությունների շրջանակներում տրամադրվել է 70 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ով կատարում: Ծրագիրն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով, և այն իրականացնող «Հույսի կամուրջ» ՀԿ-ին 4 ցերեկային կենտրոններում (Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ) 254 երեխաների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով իրականացվել են 84 հաստիքային միավորների աշխատավարձերի վճարումները: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 10.5%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 23.1 մլն դրամ կամ նախատեսվածի 60.5%-ը, որը պայմանավորված է խնամատար ընտանիք տեղափոխվող երեխաների՝ նախատեսվածից պակաս քանակով. 25 շահառուի փոխարեն ծրագրից օգտվել է 17 շահառու: Նշված ծախսերը 2014 թվականի նկատմամբ նվազել են 1.4%-ով, որը պայմանավորված է մեկ շահառուի՝ ծրագրից օգտվելու միջին տևողությամբ:

ՀՀ մանկատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին հաշվետու տարում տրամադրվել է ավելի քան 4.8 մլն դրամ աջակցություն կամ նախատեսվածի 83.2%-ը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են հատկացվում դպրոցական տարիքի երեխաների գրպանի ծախսերի համար: Շեղումը պայմանավորված է 194 երեխաների փոխարեն տարեկան միջին փաստացի 167 դպրոցահասակ երեխաների դրամական աջակցություն տրամադրելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրման ծախսերը կազմել են 600 հազար դրամ կամ նախատեսվածի 92.3%-ը և 36.8%-ով նվազել նախորդ տարվա համեմատ: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի անկումը պայմանավորված է շահառուների փաստացի քանակով. այն կազմել է 12՝ նախատեսված 13-ի և նախորդ տարվա 19-ի դիմաց:

Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրման ծախսերը կազմել են 20.4 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Սույն ծրագիրը հանդիսանում է «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)» ծրագրի բաղադրիչ մասը: Ծրագրի շրջանակներում 100 շահառուի (60 կենսաբանական և 40 կանխարգելված ընտանիքների) տրամադրվել է բնաիրային օգնության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ և կոշիկ, գրենական պիտույքներ, դասագրքեր, և կենսաբանական ընտանիքներին փոխհատուցվել է էլեկտրաէներգիայի ծախսի մի մասը: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 24.7%-ով կամ 4 մլն դրամով, որը պայմանավորված է շահառու երեխաների թվի ավելացմամբ:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 2007 թվականի նոյեմբերի 3-ի վճռի համաձայն կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի՝ Հայաստանի Հանրապետության կողմից փոխհատուցումը կազմել է 3 մլն դրամ (100%): 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 30.5%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի աճով:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործերով վճիռների համաձայն կրած վնասների փոխհատուցումը ևս ամբողջությամբ կատարվել է՝ կազմելով 6.9 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 9.5%-ով:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 37.2 մլն դրամ կամ տարեկան ծրագրի 94.3%-ը: Ծրագրի շրջանակներում 3-18 տարեկան երեխաներին մինչև 6 ամիս ժամկետով տրամադրվում են շուրջօրյա խնամքի ծառայություններ: Ծրագրից շեղումը պայմանավորված է նախատեսված 20 երեխայի փոխարեն 17 երեխա խնամելու հանգամանքով: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 16.6%-ով կամ 5.3 մլն դրամով, որը պայմանավորված է երեխաների թվի աճով և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարանի 08.06.2012թ. Գործ N ԵԴԿ /1247/02/10/ վճռի համաձայն կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցումը Հայաստանի Հանրապետության կողմից

կազմել է 369.4 հազար դրամ, որը կատարվել է նախատեսված գումարի չափով: Տվյալ ծախսերը պահպանվել են նախորդ տարվա մակարդակին:

2015 թվականին պետական բյուջեից 1.5 մլրդ դրամ տրամադրվել է *գործազրկության* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 92.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրման ծախսերի կատարողականով: 2014 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 1.9%-ով՝ հիմնականում պայմանավորված գործազրկության նպաստի ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական աջակցությունը կազմել է 45.5 մլն դրամ, որը 41.1%-ով զիջել է ծրագրված և 3.1%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Ծրագրի նպատակը փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն ու աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության իրականացման և ինքնազբաղվածության խթանման համար աջակցության տրամադրումն է, ինչպես նաև լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը: Ծրագրի շահառուներն են աշխատաշուկայում անմրցունակ անձինք, որոնց տրամադրվում է ակնկալվող ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցություն՝ խորհրդատվություն, ուսուցում, ձեռնարկատիրական գործունեության գործարար ծրագրի մշակում: Շեղումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ 2015 թվականին կատարված փոփոխություններով, մասնավորապես՝ հիմնական միջոցների ձեռքբերման համար միանվագ հատկացվում է առավելագույնը 500.0 հազար դրամ, իսկ աջակցության մյուս տեսակները՝ տարածքի վարձակալություն, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձի՝ այդ գործունեությունից առաջացող՝ օրենքով սահմանված եկամտային հարկը և օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը տրամադրվում է յուրաքանչյուր ամիս, ծրագրում ընդգրկվող վարձու աշխատողի աշխատավարձի մասնակի վճարը՝ ամսական կտրվածքով, 2 տարի ժամանակահատվածով, սակայն ծրագրերում հիմնականում վարձու աշխատող չի ընդգրկվել:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման ծախսերը կազմել են 136.9 մլն դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում հարմար աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անմրցունակ անձի համար վեց օրացուցային ամիս ժամկետով, ամսական կտրվածքով, գործատուին տրվում է փոխհատուցում՝ տվյալ անմրցունակ անձի համար սահմանված ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով, բայց

ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը, իսկ ուղեկցողի կարիք ունեցող անձանց ուղեկցող ունենալու համար տրվում է դրամական օգնություն մինչև վեց օրացուցային ամիս ժամկետով, ամսական կտրվածքով՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով: Տարվա ընթացքում ծրագրում ընդգրկվել է 516 անձ: Նախորդ տարվանից այս ծրագրով պայմանագիրը շարունակողների թիվը տարեսկզբից կազմել էր 184 անձ: 2015 թվականի ընթացքում ծրագրում ընդգրկվածների ընդհանուր թիվը կազմել է 700 անձ: Նշված ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 23.6%-ով կամ 26.1 մլն դրամով, որը պայմանավորված է ծրագրում ընգրկված անձանց թվի աճով:

Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման նպատակով տրամադրվել է 102.3 մլն դրամ կամ նախատեսվածի 65.9%-ը: Ծրագրի նպատակը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման և աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է: Ծրագրի շահառուները գործազուրկներն են, ինչպես նաև աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձինք: Ծրագրի շրջանակներում շահառուների համար կազմակերպվում է մասնագիտական պատրաստում՝ նախնական մասնագիտական պատրաստում և արհեստագործական ուսուցում մինչև 6 ամիս տևողությամբ, վերամասնագիտացում և որակավորման բարձրացում՝ մինչև 3 ամիս տևողությամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր 1700 անձի ուսուցում, 2015 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին ներկայացվել է հայտ 1600 անձի համար, սակայն 87 անձի ուսուցման հայտ մերժվել է՝ հաշվի առնելով այդ մասնագիտություններով աշխատանքի տեղավորման ցածր ցուցանիշները: 1480 հայտի ընթացք է տրվել, սակայն պայմանագիր է կնքվել 977 անձանց (որից 85-ը՝ հաշմանդամություն ունեցող անձ) համար: Ծրագրի կատարողականը հիմնականում բացատրվում է մրցույթի անցկացման կարգի պահանջների խստացմամբ, որի պատճառով արդեն ստորագրված մի շարք պայմանագրեր չեղյալ են հայտարարվել մրցույթին մասնակցած կազմակերպությունների՝ պարտքեր ունենալու և նախորդ տարի շրջանառություն չունենալու պատճառով: Շեղումը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց քանակով և տնտեսումներով: Նշված ծախսերը նախորդ տարվա նկատմամբ նվազել են 48.8%-ով կամ 97.4 մլն դրամով, որը պայմանավորված է հաշվետու տարում գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի գումարի տեղափոխմամբ «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում» ծրագիր: 2015 թվականին գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող

անձանց կրթաթոշակի տրամադրման ծախսերը կազմել են ավելի քան 72.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված աշխատանք փնտրող անձանց ուսուցման ամբողջ ընթացքում յուրաքանչյուր ամիս վճարվում է կրթաթոշակ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով:

Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 27.9 մլն դրամ՝ ապահովելով 89.3% կատարողական, որը պայմանավորված է ծրագիրն իրականացնող «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ում կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի նպատակը հանրակրթության ոլորտում, մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների մասնագիտական կողմնորոշման, անձի ինքնագնահատման, կարիերայի պլանավորման, ձեռներեցությամբ սեփական զբաղվածությունն ապահովելու և աշխատաշուկա մուտք գործելու համար հիմնական կարողությունների զարգացմանն ուղղված մեթոդաբանության, ուսումնական ծրագրերի մշակման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստման, հանրային իրազեկման ապահովումն է: Ծրագրի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինտեգրված սոցիալական ծառայությունների համապատասխան մասնագետները: 2014 թվականի նկատմամբ նշված ծախսերն ավելացել են 8.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

2015 թվականին գործազրկության նպաստի վճարմանն ուղղվել է 781.7 հազար դրամ կամ նախատեսվածի 5.4%-ով: Ծրագիրը, որպես զբաղվածության պետական կարգավորման պասիվ ծրագիր, ներառված չէ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, դրա փոխարեն նշված օրենքում ներառվել են ծրագրեր, որոնք խթանում են աշխատանք փնտրելու ակտիվ գործընթացները: Ծրագիրն իրականացվել է մինչև 2015 թվականի առաջին կիսամյակ: 2015 թվականին նախատեսվել էր վճարել 2014 թվականին գործազրկության նպաստի ստացման իրավունքը տարբեր պատճառներով չիրացրած անձանց հասանելիք գումարը՝ շուրջ 800 անձի հաշվարկով, սակայն գործազրկության նպաստ ստանալու համար ներկայացել են ամսական միջին հաշվով 3 անձ, որի արդյունքում նախատեսված միջոցները տնտեսվել են:

Գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության ծախսերը կազմել են 57.4 մլն դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը: Ծրագրի նպատակը աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերում, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերում և սահմանամերձ տարածաշրջաններում շարունակաբար չլրացվող թափուր աշխատատեղերի համալրումն ու կայուն զբաղվածության ապահովումն է: Ծրագրի շահառուներն են

գործազուրկները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք: Ծրագրի շրջանակներում շահառուներին փոխհատուցվում են շահառուի և իր ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսը, գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսը, մեկ տարվա ընթացքում 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախսը, միանվագ ֆինանսական աջակցություն՝ նվազագույն ամսական աշխատավարձի եռապատիկի չափով, ամսական գումար բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով, աշխատավարձի հավելում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50%-ից մինչև կրկնապատիկի չափով: Հաշվետու տարվա ընթացքում ծրագրում ընդգրվել է 48 անձ: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 99.7%-ով կամ 28.7 մլն դրամով, որը պայմանավորված է ծրագրում ընգրկված անձանց թվի ավելացմամբ:

Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպմանը պետական բյուջեից տրամադրվել է 5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի նպատակը տնտեսության մեջ և աշխատաշուկայում տեղի ունեցող զարգացումների գնահատումն ու միտումների բացահայտումը, ինչպես նաև աշխատուժի պահանջարկի կանխատեսումն է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.9%-ով՝ պայմանավորված ծառայության արժեքի աճով:

Աշխատանքի տոնավաճառի կազմակերպմանը տրամադրվել է 7.7 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել: Ծրագրի նպատակը գործատուի և աշխատանք փնտրողի անմիջական հաղորդակցման միջոցով մի կողմից աշխատանք փնտրողի կայուն զբաղվածության ապահովումն է, իսկ մյուս կողմից՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղերի արդյունավետ համալրման ապահովումը: Ծրագրի շահառուներն են աշխատանք փնտրողները և գործատուները: 2015 թվականի ընթացքում կազմակերպվել է 11 տոնավաճառ:

Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայությունների ծրագիրն իրականացվում է «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ 540 հաշմանդամ անձանց մասնագիտական կողմնորոշման ձևավորման ու աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան աշխատանքային ունակությունների վերականգնման, ինչպես նաև լիարժեք կյանքին նրանց ինտեգրման նպատակով: Նշված ծախսերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 17 մլն դրամ կամ նախատեսվածի 85.4%-ը՝ պայմանավորված «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային

վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է ծախսերի աճ 1.7%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին տրամադրվել է շուրջ 106.3 մլն դրամ աջակցության՝ ապահովելով 92.9% կատարողական: Ծրագրի նպատակը ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկի՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար ցուցաբերվող աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է: Ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի միջոցներից գործազուրկին վճարվում է աշխատավարձ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված գումարի չափով, գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին վճարվում է նրա նախորդ տարվա միջին ամսական աշխատավարձի 20 տոկոսի չափով հավելում, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված գումարի չափը, ինչպես նաև գործատուին տրամադրվում է գումար՝ գործազուրկի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը փոխհատուցելու համար: Ծրագրի տևողությունը 3 ամիս է: Շեղումը պայմանավորված է դեկտեմբեր ամսվա ծրագրում ընդգրկված գործազուրկների վճարումը 2016 թվականի հունվար ամսին իրականացնելու հանգամանքով: Ծրագրում ընգրկվել է 352 գործազուրկ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.4%-ով՝ պայմանավորված շահառուների թվաքանակի և նվազագույն ամսական աշխատավարձի աճով: 2014 թվականին ծրագրում ընդգրկվել էր 349 անձ:

2015 թվականին աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման համար գործատուներին տրամադրվել են 101.4 մլն դրամ միանվագ փոխհատուցումներ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 97.6%-ը: Ծրագրի նպատակը աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ աշխատանքի վայրում աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման հնարավորությունների ընձեռման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է, ինչպես նաև աշխատատեղի հարմարեցման աջակցության միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց կայուն զբաղվածության ապահովումը: Ծրագիրը բաղկացած է 2 ենթածրագրից: Առաջին ենթածրագիրը աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար փոխհատուցումն է, երկրորդը՝ հաշմանդամություն, այդ թվում՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման

ու աշխատատեղերի հարմարեցումն է: Առաջին ենթածրագրում ընդգրկվել է 471 անմրցունակ անձ՝ նախատեսված 460-ի փոխարեն, իսկ երկրորդ ենթածրագրում ընդգրկված անձանց թիվը կազմել է 29՝ նախատեսված 123-ի փոխարեն: Հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղի հարմարեցման ծրագրով նախատեսված թվաքանակը չի ապահովվել, քանի որ նշված անձինք աշխատելու մոտիվացիա չունեն, հատկապես մարզերում՝ տրանսպորտային միջոցների և միջավայրի մատչելիության բացակայության պատճառով: Նաև օրենսդրական խնդիրներից ելնելով ծրագրի իրականացման շրջանակներից դուրս են մնում 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք, որոնք նույնպես կարիք ունեն աշխատատեղերի հարմարեցման: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ծախսերն աճել են 35%-ով կամ 26.3 մլն դրամով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց թվի աճով:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով աջակցությունը գյուղացիական տնտեսություններին կազմել է 821.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի նպատակը սեզոնային զբաղվածության ապահովման միջոցով հանրապետության առավել խոցելի և աղքատ գյուղական բնակավայրերի բնակչության սոցիալական լարվածության մեղմումն ու աշխատանքի արտադրողականության բարձրացումն է, նրանց կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը, իրավիճակից բխող մարտահրավերներին արագ արձագանքող միջոցներով՝ գյուղացիական տնտեսություններին աջակցելը: Ծրագրի շահառուները գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող՝ աշխատաշուկայում անմրցունակ անձինք են: Ծրագիրն առաջնահերթության կարգով իրականացվում է գյուղացիական տնտեսության՝ բնական պատճառներով ստացած վնասների վերականգնման համար, ինչպես նաև բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերում: Հողօգտագործողին տրվում է ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություն, եթե ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ստանում է ընտանեկան նպաստ, ընտանիքում առկա է երկու և ավելի անչափահաս, ընտանիքի անդամներից մեկը հաշմանդամություն ունեցող անձ է: Ծրագրում ընդգրկված հողօգտագործողի ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար գործատու հանդիսացող հողօգտագործողին տրվում է աշխատավարձի փոխհատուցում՝ մեկ աշխատանքային օրվա համար 4000 դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքում՝ նպատակային սոցիալական վճարը: Ծրագրի շրջանակներում աշխատանքում ներգրավված յուրաքանչյուր վարձու աշխատողի համար (բացառությամբ ծրագրում ընդգրկված հող օգտագործողի ընտանիքի անդամի) գործատու հանդիսացող հող օգտագործողին տրվում է աշխատավարձի փոխհատուցում՝ մեկ աշխատանքային օրվա համար 3000 դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքում՝ նպատակային սոցիալական վճարը: Ծրագրի

շրջանակներում ներգրավված և քաղաքացիաիրավական պայմանագրով հողօգտագործողի համար գյուղատնտեսական տեխնիկայի միջոցով ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձին մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) դիմաց վճարելու համար հողօգտագործողին տրվում է փոխհատուցում՝ մեկ ժամվա համար 5000 դրամ: Հաշվետու տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել է 4793 ծրագիր՝ նախատեսված 3217-ի փոխարեն, ծրագրում ընդգրկվել է 6285 անձ, 472 համայնք և մշակվել է 8076 հա հողատարածք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.4 անգամ կամ 580.9 մլն դրամով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված գյուղացիական տնտեսությունների քանակի աճով:

2015 թվականին աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության ծախսերը նախատեսված 5.6 մլն դրամի դիմաց կազմել են 95 հազար դրամ: Ծրագրի նպատակը աշխատաշուկայում անմրցունակ անձանց կայուն զբաղվածության ապահովումն է՝ աշխատանքի տեղավորման լրացուցիչ հնարավորությունների ընձեռման միջոցով: Անմրցունակ անձանց, որոնց տարածքային կենտրոնն առնվազն երեք ամսվա ընթացքում չի տեղավորում հարմար աշխատանքի, որպես աշխատանքի տեղավորման լրացուցիչ հնարավորություն, տրամադրում է աջակցություն համապատասխան փոխհատուցման հավաստագրի միջոցով՝ ոչ պետական կազմակերպությունների աշխատանքի տեղավորման ծառայություններից օգտվելու համար: Ծրագրի ծախսերի 1.7%-ով կատարումը պայմանավորված է փաստացի շահառուների բացակայությամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր 100 անձի աշխատանքի տեղավորում ոչ պետական կազմակերպությունների միջոցով: Անմրցունակ անձին աշխատանքի տեղավորման նպատակով ոչ պետական կազմակերպությանը տրամադրվող փոխհատուցման հավաստագրի արժեքը վճարվում է փուլերով: Մասնավորապես՝ գումարի ընդհանուր արժեքի 5 տոկոսը փոխանցվում է ոչ պետական կազմակերպությանը՝ անմրցունակ անձի հետ աշխատանքի տեղավորման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելուց հետո, 25 տոկոսը՝ վերջինիս կողմից անմրցունակ անձին աշխատանքի տեղավորելուց հետո, 70 տոկոսը՝ անմրցունակ անձին աշխատանքի տեղավորելուց մեկ տարի հետո, եթե այդ ընթացքում վերջինս շարունակում է աշխատել ոչ պետական կազմակերպության միջնորդությամբ:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցումը կազմել է 4.8 մլն դրամ կամ նախատեսվածի 91%-ը: Գործատուին այցելելու հետ կապված տրանսպորտային, ինքնակենսագրության կազմման, գործատուին պատշաճ մակարդակով ներկայանալու նպատակով իրականացվող ծախսերի որոշակի մասը փոխհատուցելու համար անմրցունակ անձին տրվում է դրամական օգնություն՝ յուրաքանչյուր այցելության համար 2000 դրամ, բայց յուրաքանչյուր

օրացուցային ամսվա համար ոչ ավելի, քան 18000 դրամը: Ծրագրի առավելագույն տևողությունը երեք ամիս է: Ծրագրով իրականացվել է 1925 աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում: Շեղումը պայմանավորված է ծրագրում ընդգրկված շահառուների և այցելությունների թվի պակաս լինելու հանգամանքով: Նախատեսված 2301 անձի փոխարեն ծրագրում ընդգրկվել է աշխատաշուկայում անմրցունակ 1925 անձ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 50.9%-ով կամ 1.6 մլն դրամով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անմրցունակ անձանց թվի աճով:

Բնակարանային ապահովման խմբի ծրագրերին ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 499.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցներն ուղղվել են զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովմանը և բնակարանային պայմանների բարելավմանը: Նախորդ տարվա համեմատ բնակարանային ապահովման ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Այլ դասերին չպատկանող սոցիալական հատուկ արտոնությունների խմբում ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 13.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9% կատարողական և 23.6%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է Հայրենական Մեծ պատերազմի (ՀՄՊ) մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարների ծախսերի աճով:

2015 թվականի պետական բյուջեից վետերանների պատվովճարներին տրամադրվել է 503.2 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 25.7%-ով՝ պայմանավորված պատվովճարի ամսական չափի փոփոխմամբ: ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 26-ի թիվ 357-Ն որոշմամբ պատվովճարի ամսական չափը 2015 թվականի մայիսի 1-ից սահմանվել է 50000 դրամ՝ նախկին 25000 դրամի դիմաց:

Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներին տրամադրվել է շուրջ 34 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում հատկացվող գումարը նախատեսվում է փախստականների կացարանների կրած վնասի փոխհատուցման համար: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 22.1%-ով, որը պայմանավորված է աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Փախստականների կեցության խնդիրների լուծման նպատակով 2015 թվականին տրամադրվել է 22 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ժամանակավոր ապաստան հայցող փախստականների սպասարկումը՝ կացարանի, սննդի և այլ

ծառայությունների տրամադրման միջոցով: Ժամանակավոր ապաստան հայցող փախստականների սպասարկումը կատարվում է «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի միջոցով: 2015 թվականի ընթացքում սպասարկվել են 29 ապաստան հայցողներ՝ նախատեսված 40-ի դիմաց: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 15.8%-ով՝ պայմանավորված սննդամթերք ստացողների միջին թվաքանակի ավելացմամբ, ինչպես նաև աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարները կազմել են 10.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 27.8%-ով կամ շուրջ 2.4 մլրդ դրամով, որը պայմանավորված է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով, որոնց համաձայն բարձրացվել են դրամական օգնության և պարգևավճարների չափերը, բացի այդ, ընդլայնվել է պարգևավճար ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը:

Հաշվետու տարվա ընթացքում անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունների շրջանակներում 53.5 մլն դրամ պետական աջակցություն է ցուցաբերվել «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ՀԿ-ին, որի միջոցով իրականացվել է 100 անօթևանների շուրջօրյա խնամք և սպասարկում: Նշված ծախսերի 90.7%-ով կատարումը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց քանակով՝ նախատեսված 100 շահառուի փոխարեն ծրագրում ընդգրկվել են 95 շահառու, ինչպես նաև կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 3.6%-ով՝ պայմանավորված շահառուների թվաքանակի նվազմամբ: 2014 թվականին ծրագրում ընդգրկվել էին 100 շահառու:

ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 1.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ ավանդի փոխհատուցման իրավունք ունեն սոցիալապես անապահով տարեց (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «0» անապահովության միավորից բարձր անապահովության միավոր ունեցող մինչև 1931թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված), ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակից և սահմանամեծ բնակավայրերի բնակիչ ավանդատու անձինք: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին ավանդի փոխհատուցում է ստացել շուրջ 8500 ավանդատու: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայություններին տրամադրվել է 47.2 մլն դրամ՝ ապահովելով 98.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է ծրագիրն իրականացնող «Հանգրվան» ՊՈԱԿ-ի կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում կացարան է տրամադրվել սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված 1 անձի: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.1%-ով կամ 6.2 մլն դրամով, որը պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ և սոցիալական բնակարանային ֆոնդերի ավելացման հետ կապված՝ պահպանման ծախսերի աճով:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերի գծով 2015 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 20 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերի, ինչպես նաև պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ: 2014 թվականի համեմատ խմբի ծախսերը նվազել են 22.8%-ով կամ 5.9 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարման ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պահպանման ծախսերը կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով 95.8% կատարողական: Շեղումը պայամանավորված է տնտեսումներով: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 14.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը կատարվել են 89.8%-ով և կազմել 2.2 մլրդ դրամ: Ծրագրի գծով շեղումը կապված է նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների պահպանման ծախսերի տնտեսման հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 24.6%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և համալիր սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների պահպանման ծախսերի աճով:

Հաշվետու տարում շուրջ 502.8 մլն դրամ տրամադրվել է սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով, որն իրականացվել

է 99.6%-ով: 2014 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 23.3%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 125.5 մլն դրամ: Ծրագրի նպատակները ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում,
- Աշխատանքի և զբաղվածության ռազմավարություն,
- Կենսաթոշակային համակարգի արդիականացում,
- Սոցիալական աջակցության և մոնիտորինգի համակարգի բարելավում,
- Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

Ծրագրի ծախսերը կատարվել են 45.2%-ով: Ծրագրով նախատեսվել է միջոցների զգալի մասը ծախսել Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (ՀՍԾՏԿ), Զբաղվածության պետական գործակալության (ԶՊԳ) և Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (ԲՍՓԳ) կենտրոնական գրասենյակների շինվերանորոգման աշխատանքների վրա: Կնքվել են թվով հինգ պայմանագրեր, որոնց շրջանակներում իրականացվում է նշված շինվերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստումը, սակայն աշխատանքների իրականացման ընթացքում առաջացել են խոչընդոտներ, որոնք դանդաղեցրել են նախատեսված 15 շինարարական աշխատանքների (13 ՀՍԾՏԿ-ների, ԶՊԳ և ԲՍԾԳ կենտրոնական գրասենյակներ) նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման ընթացքը: Խնդիրները պայմանավորված են հիմնականում նախագծային կազմակերպությունների կողմից ներկայացրած 13 շենքերի վիճակի և սեյսմիկ եզրակացությունների հետ, որոնց արդյունքներով վերանորոգման ենթակա շենքերի գերակշիռ մասը ենթակա են ամրացման, իսկ որոշ շենքերի ամրացումն աննպատակահարմար է դիտվել, քանի որ դրանց համար կպահանջվեն ավելի շատ ֆինանսական միջոցներ, քան եթե այդ ՀՍԾՏԿ-ները կառուցվեն հիմքից: Նշված պատճառների արդյունքում հետաձգվել է նախագծերի պատրաստման վերջնաժամկետը և շինվերանորոգման մրցույթների մեկնարկը: Ի սկզբանե նախատեսված է եղել ՏՏ ապրանքների գնում Զբաղվածության պետական գործակալության և «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՍԱՊԾ-ի և ԱՍՀՆ-ի համար, բայց հետագայում պատվիրատուի որոշմամբ վերը նշված բոլոր մրցույթները միավորվել են մեկ միջազգային մրցույթի մեջ, որը պահանջում է Համաշխարհային բանկի նախնական դիտարկում: Ծրագրի իրականացման ժամկետն է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի Հայաստանյան գրասենյակի միջև կնքված ենթահամաձայնագրերի շրջանակներում հատկացվող ֆինանսական աջակցությունը կազմել է 16.9 մլն դրամ՝ ապահովելով 83% կատարողական, որը պայմանավորված է գործուղումների ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 56.8%-ով կամ 22.1 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2014 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանն ամրացված շենքերի վերանորոգման աշխատանքներով:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և Նիդերլանդների անվտանգության ու արդարադատության նախարարության միջև կնքված՝ Նիդերլանդներից վերադարձող Հայաստանի քաղաքացիներին վերաինտեգրման օգնության շրջանակներում խորհրդատվության և ուղղորդման ծառայության մատուցման մասին դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում 2015 թվականի ծախսերը կազմել են շուրջ 28.3 մլն դրամ: Ծրագրի 48.9% կատարողականը պայմանավորված է վերադարձած անձանց փաստացի թվաքանակով: Ծրագիրը նախատեսված է Նիդերլանդներից հարկադիր վերադարձող Հայաստանի քաղաքացիներին վերաինտեգրման շրջանակներում փոքր բիզնես սկսելուն կամ աշխատաշուկա մուտք գործելուն աջակցության, ուսումնական կամ մասնագիտական վերապատրաստման, սոցիալական, իրավական, բժշկական աջակցության, ժամանակավոր կացարանի տրամադրման, օդանավակայանում դիմավորման և անահատական այլ կարիքների համար: Ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցներն ուղղվել են աշխատավարձերի և նպաստների վճարմանը:

Այլ դասերին չպատկանող՝ սոցիալական պաշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայությունների դասի ծախսերը կազմել են ավելի քան 15.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.6%-ը, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 31.2%-ով՝ հիմնականում պայմանավորված պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարման ծախսերի նվազմամբ:

2015 թվականին փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակման նպատակով տրամադրված 38.4 մլն դրամն օգտագործվել է «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ից փախստականների վերաբերյալ արխիվային տեղեկատվության ձեռքբերման

նպատակով՝ ապահովելով 99.7% կատարողական: 2014 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 17.8%-ով՝ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատմամբ:

Հաշվետու տարում պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 9.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.3%-ը, որը պայմանավորված է շահառուների փաստացի թվով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 34.1%-ով կամ շուրջ 4.8 մլրդ դրամով, որը պայմանավորված է 2015 թվականին պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթի առողջապահության բաղադրիչն առողջապահության ոլորտ տեղափոխելու հանգամանքով, ինչպես նաև պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության ներդրմամբ:

Բժշկասոցիալական փորձաքննության (ԲՍՓ) ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերման և սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների (ՍԾՏԳ) ձևաթղթերի տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է համապատասխանաբար 3.4 մլն դրամ և 10.2 մլն դրամ: Նշված ծախսերը կատարվել են համապատասխանաբար 82.3%-ով և 73.6%-ով՝ պայմանավորված գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հայտարարված մրցույթի արդյունքում ձևաթղթերի միավորի գները նախատեսվածից ցածր լինելու հանգամանքով: 2014 թվականի համեմատ առաջին ծրագրի ծախսերն աճել են 2.6%-ով, իսկ երկրորդի գծով՝ նվազել 5.3%-ով՝ հիմնականում կապված ձևաթղթերի գների նվազման հետ:

Մեթոդաբանական ձեռնարկների մշակման, հետազոտությունների անցկացման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 88.8 մլն դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվել են 8 թեմաներով հետազոտություններ, մշակվել ձեռնարկներ և կազմակերպվել սոցիալական ոլորտի 700 աշխատողների մասնագիտական ուսուցում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների իրականացմանը տրամադրվել է 1.7 մլրդ դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 6.6%-ով աճը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակային ծախսերի, ինչպես նաև վճարման հետ կապված ծառայությունների ընդհանուր ծախսերում գործառնական և բանկային ծառայությունների ծախսերի տեսակարար կշռի աճով:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 21.3 մլն դրամ՝ ապահովելով 81.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հայտարարված մրցույթի արդյունքում հեռուստահաղորդումների և տպագրության նյութերի միավորի գները նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում պատրաստվել ու հեռարձակվել է 25 հեռուստահաղորդում, տպագրվել են 16500 տպագրական նյութեր՝ բուկլետներ, պաստառներ և տեղեկագիր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով:

2015 թվականին պետական բյուջեից ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարը կազմել է 2.7 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 44%-ով կամ 2.1 մլրդ դրամով, ինչը մասամբ պայմանավորված է 2013 թվականի պարտավորությունները 2014 թվականին մարելու հանգամանքով, մասամբ էլ՝ օրենսդրական փոփոխություններով. 2014 թվականի դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-206-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) փոփոխվել է ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու կարգը:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է շուրջ 17.5 մլն դրամ՝ ապահովելով 91.8% կատարողական, որը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 21.2%-ով՝ պայմանավորված գործուղումների ծախսերի աճով:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրության ծախսերը կազմել են 5.9 մլն դրամ՝ 27.4%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 15.3%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Տնտեսումը պայմանավորված է ձևաթղթերի պահանջով, իսկ նախորդ տարվա նկատմամբ ծախսերի նվազումը պայմանավորված է ձևաթղթերի պահանջով և տպագրության հետ կապված ծախսերի նվազմամբ:

Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրությանը տրամադրվել է 504 հազար դրամ՝ կազմելով նախատեսվածի 25.2%-ը և 54.2%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Տնտեսումը պայմանավորված է ձևաթղթերի մնացորդի առկայությամբ, ինչպես նաև տպագրությունն ավելի մատչելի գնով իրականացնելու հանգամանքով: Նախորդ տարվա նկատմամբ ծախսերի նվազումը պայմանավորված է որոշ ձևաթղթերի պահանջի նվազմամբ:

Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 100%-ով և կազմել շուրջ 18.3

մլն դրամ: Ծրագրի շրջանակներում սոցիալ-հոգեբանական ծառայություններ են մատուցվել 8 շահառուի: Ծրագիրն իրականացվում է «Ամքոր» ՀԿ-ի հետ համաֆինանսավորման սկզբունքով, փոխհատուցվում են 14 աշխատողների աշխատավարձերը և տարածքի վարձակալության ծախսերը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 6.5%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաշվետու տարում 7 մլն դրամ է տրամադրվել զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին, որոնք կատարվել են 99.3%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 317.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 10.6%-ով կամ 37.7 մլն դրամով, որը պայմանավորված է 2014 թվականին տեղեկատվական բազայի վրա կապիտալ ծախսերի կատարմամբ:

Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 42 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Հաշվետու տարում սոցիալական ապահովության պետական ծառայության տեղեկատվական ներքին պորտալի սպասարկման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 18.2 մլն դրամ, իսկ նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել:

«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարման հետ կապված ծառայությունների համար նախատեսված միջոցները նախատեսված ծավալով օգտագործվել են՝ կազմելով 17.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.2%-ով՝ պայմանավորված «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների արժեքի բարձրացմամբ. 2015 թվականին ծառայությունների արժեքը կազմել է 1.2%՝ նախորդ տարվա 1%-ի փոխարեն:

Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճարի վճարման հետ կապված ծառայությունների ծախսերը կազմել են 745.9 հազար դրամ կամ նախատեսվածի 47.8%-ը: Տնտեսումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 16.5%-ով նվազումը պայմանավորված է պարգևավճարների համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ

չօգտագործելու, ինչպես նաև վճարումների որոշակի մասը բանկային համակարգով (անվճար) իրականացնելու հանգամանքով:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում տրամադրվել է շուրջ 440.5 մլն դրամ՝ ապահովելով 97.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է փաստացի շահառուների տարեկան միջին թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.5%-ով, որը պայմանավորված է 2014 թվականի օգոստոսի 1-ից նպաստի բազային չափի բարձրացմամբ, ինչպես նաև շահառուների տարեկան միջին թվաքանակի աճով:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում տրամադրվել է շուրջ 37.3 մլն դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.9%-ով:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում տրամադրվել է 54.7 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Գործազրկության նպաստի վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում տրամադրվել է 88 հազար դրամ կամ նախատեսվածի 47%-ը: Շեղումը պայմանավորված է նպաստառուների փաստացի թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 99%-ով նվազումը պայմանավորված է ծրագիրը դադարեցնելու հանգամանքով:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության իրականացման ապահովմանը տրամադրվել է 16.7 մլն դրամ՝ ապահովելով 97.8% կատարողական; Շեղումը պայմանավորված է Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) հետ կնքված պայմանագրերով, ինչպես նաև այցելությունների ծախսերը նախատեսվածից պակաս իրականացնելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են մոտ 2.3 անգամ կամ 9.3 մլն դրամով, որը պայմանավորված է ԳԱՄԿ-երի հետ կնքված պայմանագրերի ավելացմամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին «Երեվանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տարածքում անկողնային խնամք ստացող անձանց սպասարկման նպատակով կառուցվելիք նոր մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացմանը տրամադրվել է շուրջ 274.9 մլն դրամ՝ ապահովելով 96.3% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով:

Կենսաթոշակային իրազեկման և ֆինանսական գրագիտության բարձրացման գործընթացին աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը, որոնք

իրականացվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են 19.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցները հատկացվել են «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամին, որն իրականացրել է հանրային իրազեկման աշխատանքներ:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի և անձնակազմի կարողությունների զարգացման նոր տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների ներդրման աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը, որոնք նույնպես իրականացվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են կազմել է 3.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նշված ֆինանսական միջոցները հատկացվել են «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին, որի կողմից իրականացվել են սոցիալական ծառայությունների համակարգի և անձնակազմի կարողությունների զարգացման նոր SS գործիքների ներդրման աշխատանքներ:

<u>Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր</u>

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից օգտագործվել է 29.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98%-ը: Տրամադրված միջոցներից 21.8 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին՝ կազմելով նախատեսվածի 97.9%-ը, 8.1 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ ապահովելով 98.3% կատարողական: 2014 թվականի համեմատ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծախսերը նվազել են 36.4%-ով:

Հույժ գաղտնի

ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեն կատարվել է շուրջ 241.3 մլրդ դրամ պակասուրդով՝ 44.9%-ով գերազանցելով տարեկան ճշտված ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին վարկերի գծով նախատեսվածից ավել ստացված միջոցներով, ինչպես նաև եկամուտների համեմատ ծախսերի առավել բարձր կատարողականի հետ կապված՝ գանձապետական պարտատոմսերի հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման բարձր ցուցանիշով: Նշենք, որ 2014 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 90.3 մլրդ դրամ պակասուրդով, այսինքն՝ 2014 թվականի համեմատ պակասուրդի մեծությունն աճել է 2.7 անգամ: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2015 թվականին կազմել է 4.8%՝ 2014 թվականի 1.9%-ի դիմաց[23]: 2014 թվականի համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել էր պակասուրդի համապատասխանաբար 77.5 և 22.5 տոկոսը, ապա 2015 թվականին նշված ցուցանիշները կազմել են 4.7 և 95.3 տոկոս:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման *ներքին աղբյուրները* կազմել են 11.2 մլրդ դրամ՝ նախատեսված 4.0 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել էր շուրջ 70 մլրդ դրամ:

Ներքին աղբյուրներում 13.9 մլրդ դրամ են կազմել փոխառու զուտ միջոցները՝ նախատեսված 1.3 մլրդ դրամի դիմաց, որը պայմանավորված է գանձապետական պարտատոմսերից մուտքերի բարձր մակարդակով: Ներքին պետական պարտքի կառավարման նպատակների շրջանակներում 2015 թվականի ծրագրով նախատեսվում էր գանձապետական պարտատոմսերի հաշվին բյուջեի պակասուրդը ֆինանսավորել 40.0 մլրդ դրամով, որը տարվա ընթացքում ճշտվեց՝ սահմանվելով 3.0 մլրդ դրամ: Պայմանավորված ՀՀ դրամի արժեզրկման հետևանքով շուկայից փոխառու միջոցներ ներգրավելու հնարավորության վերականգնման նպատակով իրականացված փոխանակումներով, ինչը միաժամանակ ուղեկցվել է 23.0 մլրդ դրամ ծավալով կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխմամբ (հասույթը՝ 21.3 մլրդ դրամ) և 18.9 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի հետգնմամբ, փաստացի շուրջ 144.9 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված 127.1 մլրդ դրամ հասույթի և 111.5 մլրդ դրամ մարման ցուցանիշների պարագայում դեֆիցիտի ֆինանսավորման ցուցանիշը կազմել է 15.6 մլրդ դրամ: Ծրագրի նկատմամբ փաստացի ցուցանիշի 12.6 մլրդ դրամով գերազանցումը պայմանավորված է պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի ծրագրային ցուցանիշից բացասական շեղման և ծախսերի՝ նախորդ տարիների միջին կատարողականից ավել իրականացման հետևանքով աճող դեֆիցիտը

[23] ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի ուղերձում պակասուրդ / ՀՆԱ կանխատեսված ցուցանիշը կազմում է 2.34%:

ֆինանսավորելու նպատակով ներքին պետական պարտքի շուկայում առաջացած ավելցուկային պահանջարկի պայմաններում իրականացված գանձապետական պարտատոմսերի լրացուցիչ տեղաբաշխումներով:

2015 թվականին թողարկվել են 1.9 մլրդ դրամ ծավալով պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր, որոնցից տեղաբաշխվել են 917.4 մլն դրամի պարտատոմսեր, մուտքը կազմել է 920.6 մլն դրամ:

2015 թվականին ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 13.99%՝ 2014 թվականի 13.49%-ի դիմաց, պարտքի ժամկետայնությունը՝ 2065 օր (2014թ.՝ 2003 օր), մարման բեռի բաշխվածությունը մինչև 2032 թվականն է: Տարեվերջին շրջանառության մեջ եղած ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 320.8 մլրդ դրամ (2014թ.՝ 289.9 մլրդ դրամ): Ընդ որում, շրջանառության մեջ գտնվող կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 21.5 մլրդ դրամ կամ 6.7% (2014թ.՝ 12.5 մլրդ դրամ կամ 4.3%), միջին ժամկետայնության պարտատոմսերինը՝ 153.9 մլրդ դրամ կամ 48.0% (2014թ՝ 150.8 մլրդ դրամ կամ 52.0%), երկարաժամկետ պարտատոմսերինը՝ 144.4 մլրդ դրամ կամ 45.0% (2014թ.՝ 125.5 մլրդ դրամ կամ 43.3%), խնայողական պարտատոմսերինը՝ 1.0 մլրդ դրամ կամ 0.3% (2014թ.՝ 1.1 մլրդ դրամ կամ 0.4%):

2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 368.4 մլրդ դրամ, այդ թվում՝

- Ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը կազմել է 320.0 մլրդ դրամ.
- Ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 47.4 մլրդ դրամ (97.9 մլն ԱՄՆ դոլար).
- ՀՀ կառավարության կողմից տրամադրված ներքին երաշխիքների ծավալը կազմել է շուրջ 1.0 մլրդ դրամ (2.0 մլն ԱՄՆ դոլար):

Մուրհակների մարման նպատակով նախատեսված 10.7 մլն դրամի վճարումներն ամբողջությամբ կատարվել են: Ամբողջ ծավալով վճարվել է նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարման գծով ծրագրված գումարը՝ կազմելով ավելի քան 1.6 մլրդ դրամ:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներքին ֆինանսական զուտ ակտիվները կազմել են -2.7 մլրդ դրամ՝ տարեկան ճշտված ծրագրով նախատեսված 2.7 մլրդ դրամի դիմաց:

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «Ընդունելությունների տուն» և «Նաիրիտ-2» փակ բաժնետիրական

ընկերությունների՝ «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության հանդեպ փոխառությունների պարտավորությունների մարման նպատակով 2015 թվականին նախատեսվել էին «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի բաժնետոմսերի իրացումից 19.6 մլրդ դրամի չափով մուտքեր և նույն չափով նշված ընկերությունների բաժնետոմսերի ձեռքբերում: Նշված գործընթացն իրականացվել է ամբողջ ծավալով: Եվս 1.2 մլրդ դրամ հատկացվել է «Սալսա Դիվելոփմենթ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի ձեռքբերմանը:

2015 թվականին ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 23.7 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 92.1%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է արտաքին աղբյուրներից ստացվող վարկային և դրամաշնորհային նպատակային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվող վարկերի գծով: Մասնավորապես՝ ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրերի շրջանակներում տրամադրվել են 3.9 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ կազմելով նախատեսվածի 74.7%-ը: Եվս 136.2 մլն դրամ տրամադրվել է «Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող Գյուղական կարողությունների ստեղծում» դրամաշնորհային ծրագրի միջոցներից՝ կազմելով նախատեսվածի 18.6%-ը: Նախատեսված ծավալով՝ 47.7 մլն դրամի չափով, տրամադրվել են Հայաստանի էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում նախատեսված վարկերը: Շուրջ 4.0 մլրդ դրամ (նախատեսվածի 100%-ը) հատկացվել է «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ՍՊԸ-ին, 4.8 մլրդ դրամ (100%)՝ «Դի ընդ Էյջ Գրուպ» ՍՊԸ-ին, 309.8 մլն դրամ (100%)՝ «Հրաշք այգի» ՍՊԸ-ին և 88.7 մլն դրամ (100%)՝ «Ավտոմատիկա» ՓԲԸ-ին: Կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է 395.3 մլն դրամ (82.8%), իսկ կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից գործակալական պայմանագրի հիման վրա ՀՀ կենտրոնական բանկի միջոցով վարկավորումը կազմել է 10.0 մլրդ դրամ:

Նախկինում տրամադրված ներքին վարկերի վերադարձից 2015 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 29.1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 101.2%-ը: Մասնավորապես՝ 10.6 մլրդ դրամը ստացվել է ՀՀ կենտրոնական բանկից՝ «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կարգավորման գրասենյակի կողմից տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի վերադարձից, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Նախատեսված 3.2 մլրդ դրամի դիմաց 3.4 մլրդ դրամ է վճարվել «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից: 3.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.8%-ը վճարվել է «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ՍՊԸ-ի կողմից:

Հաշվետու տարում պետական բյուջեի ազատ միջոցներն ավելացել են 6.9 մլրդ դրամով՝ նախատեսված 864.2 մլն դրամի դիմաց: Մասնավորապես՝ 48.7 մլրդ դրամով համալրվել են կայունացման դեպոզիտային հաշվի միջոցները, 41.1 մլրդ դրամ է օգտագործվել ելքերի ֆինանսավորմանն ուղղվող 2015 թվականի տարեսկզբի ազատ միջոցներից, 656.7 մլն դրամ՝ արտաբյուջետային միջոցների ազատ մնացորդից:

2015 թվականին պետական բյուջեի պակասուրդն *արտաքին աղբյուրներից* ֆինանսավորվել է 230.0 մլրդ դրամով՝ 41.6%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը:

Արտաքին փոխառու միջոցներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 302.9 մլրդ դրամ և 33.6%-ով գերազանցել ծրագիրը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի շրջանակներում ստացված վարկերի ծավալով:

Տարվա ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են 190.9 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ կազմելով ծրագրված գումարի 165.5%-ը: Ստացված վարկերից շուրջ 106.8 մլրդ դրամը ստացվել է նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում՝ նախատեսված 82.9 մլրդ դրամի դիմաց, որը պայմանավորված է ծրագրերի կատարման ծավալներով: Եվս 84.1 մլրդ դրամ ստացվել է ոչ նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում՝ նախատեսված 32.5 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ ՀԲ Զարգացման քաղաքականության իրականացման երրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 20.6 մլրդ դրամն ամբողջությամբ ստացվել է, ԱԶԲ ենթակառուցվածքների կայունության աջակցման ծրագրի շրջանակներում 11.9 մլրդ դրամի դիմաց ստացվել է 10.9 մլրդ դրամ: Բացի վերոհիշյալ ծրագրերից, համապատասխանաբար 47.7 մլրդ դրամ, 4.3 մլրդ դրամ և 554.4 մլն դրամ միջոցներ են տրամադրվել Եվրասիական զարգացման բանկի կողմից՝ բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում, ԱԶԲ կողմից՝ Կին ձեռներեցներին աջակցության ծրագրի շրջանակներում, և ՀԲ կողմից՝ Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների ծրագրի բյուջետային աջակցության բաղադրիչի շրջանակներում, որոնք պետական բյուջեով նախատեսված չէին:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է շուրջ 23.7 մլրդ դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 97.1%-ը: Մասնավորապես՝ 9.8 մլրդ դրամը հատկացվել է Զարգացման Միջազգային Ընկերակցության, 2.0 մլրդ դրամը՝ Արժույթի Միջազգային Հիմնադրամի, 3.4 մլրդ դրամը՝ այլ միջազգային կազմակերպությունների, 8.1 մլրդ դրամը՝ օտարերկրյա պետությունների, իսկ 251.1 մլն դրամը՝ առևտրային բանկերի նկատմամբ ունեցած պարտավորությունների մարմանը:

2015 թվականին թողարկված արտարժութային պարտատոմսերի տեղաբաշխումից պետական բյուջե է մուտքագրվել 229.9 մլրդ դրամ: 94.2 մլրդ դրամ ուղղվել է 2013 թվականին թողարկված արտարժութային պետական պարտատոմսերի մասնակի հետգնմանը:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով բյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է 113.6%-ով՝ կազմելով 72.9 մլրդ դրամ: Մասնավորապես՝ ամբողջությամբ տրամադրվել է ԼՂՀ-ի վարկը, որը կազմել է 64.6 մլրդ դրամ, որից 45.5 մլրդ դրամ կազմել է միջպետական վարկը, ավելի քան 19.0 մլրդ դրամը՝ տնտեսության զարգացման վարկը: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների մարումը նույնպես կատարվել է նախատեսված ծավալով՝ կազմելով 433.8 մլն դրամ:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է շուրջ 738.1 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը:

Հաշվետու տարում 8.0 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդը, այդ թվում՝ 8.4 մլրդ դրամով ավելացել են ծրագրերի իրականացման գրասենյակների միջոցով իրականցվող ծրագրերի միջոցները և 442.2 մլն դրամ օգտագործվել է ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների մնացորդից:

2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 2,088.5 մլրդ դրամ (4,317.3 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 41.4%-ը՝ 2014 թվականի 1,797.9 մլրդ դրամի (3,785.2 մլն ԱՄՆ դոլարի) և 37.1%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 1,858.1 մլրդ դրամը (3,841.0 մլն ԱՄՆ դոլարը) ՀՀ կառավարության պարտավորություններն են, 230.4 մլրդ դրամը (476.3 մլն ԱՄՆ դոլարը)՝ ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 391.1 մլն ԱՄՆ դոլար, որից 355.9 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության և 35.2 մլն դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 12.5%, նախորդ տարվա 8.0%-ի դիմաց, իսկ պետական բյուջեի եկամուտների նկատմամբ՝ 16.0%, նախորդ տարվա 9.7%-ի դիմաց:

Հարկ է նշել, որ վերջին երկու ցուցանիշների աճը 2015 թվականին պայմանավորված է եղել 2020 թվականին մարման ենթակա արտարժութային պետական պարտատոմսերի մասնակի հետգնմամբ: Առանց հիշյալ հեգնման ծավալի, այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 6.1% և 7.8%:

2015 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշը (ԶՆԱ) աճել է՝ 2014 թվականի 2981.4 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 3605.3 մլն ԱՄՆ դոլար: Աճել է նաև ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2014 թվականի 25.6%-ի դիմաց կազմելով 34.1%, ինչպես նաև ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2014 թվականի 89.8%-ից հասնելով 114.8%-ի: